Meknowtiwn Haytnowtean Srboy Awetaranchin Hovhannow

Andreas <Caesariensis>; Nerses <Lambronac'i>; Arethas <Caesariensis>

urn:nbn:de:hbz:5:1-10630

Bibl. Goussen 2964

Goussen 2964

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ս. ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԱՐԱՐԵԱԼ Տ. ԱՆԴՐԷԻ ԵՒ ԱՐԵՏԱՍԱՅ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ ԿԵՍԱՐՈՒ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՅՈՅՆ ԲՆԱԳՐԷ
ԵՒ ՍՐԲԱԳՐԵԱԼ Տ. ՆԵՐՍԷՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՏԱՐՍՕՆԻ ԿԻԼԻԿԵՑՒՈՅ

ՏՊԵԱԼ
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՆԵՐՍԵՍԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱՋԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՊՕԼՍՈՅ Տ. ՅԱԿՈԲԱՅ
ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1855

2964

ԱՐԱՐ ՋՍՈՑՆ ՄԱՏԹԱՆ

ՑԻՀԱՏԱԿ ԱՆՈՒԱՆ ԻՒՐՈՑ

ԵՒ ՀՈԳՒՈՑ ՅՆՈՂԱՑՆ

ՄԱՀՏԵՍԻ ՑԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՀՏԵՍԻ ԷՓԵՍԻ·

ՑԱՏՈՒԿ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԻՒՐՈՎ.

ՄԱՀՏԵՍԻ ԲԱԲԷԼ ԱՂԱՑ ԱՀՊԱՀԵԱՆ
ՍԵԲԱՍՏԱՑԻ
ՑՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ

Ի 27 ՄԱՐՏԻ, 1855։



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ զվաստակաւորացն պսակել ոք զգրաւորական երկս և զծնելասէր փոյթսն՝ երախտագէտ սրտիւ ընդ միտս հարկանիցէ, 'ի հանդէս զնոսին հանել աշխարհիս և յաւէժական դրոշմել 'ի տառս՝ անզուգական համարիցի արդեւք 'ի տուրս փոխարինութեան շնորհապարտն ոգւոյ, որով յապահովի կացցեն իսկ չարկանել 'ի նոսա ժամանակին զմատենախանձ չարաժանիսն իւր։ Ի սոյն տեսութիւն մըտաց՝ կամեցեալ կորզել 'ի բուռն յափըշտակութենէ բազմաւուրց ծերոյն՝ զառաջիկայ նշխար վաստակոց երանելւոյ Հօրն մերոյ Լամբրոնացւոյ, զՄեկնութիւն ասեմ Տեսլեան Յովհաննու, փոյթ եղեաք ընծայել 'ի լոյս՝ քան եթէ թողուլ ընդ գրուանաւ, ուր ոչ նուազ քան զեւթնեակ դարս մնաց 'ի ծածկութեան։

Արդ՝ դրչագիր օրինակք որ 'ի սոյն մեզ նպաստեցին, թէպէտ և չէին հնագիր, այլ յընտրելագոյն օրինակաց գաղափարեալ՝ ոչ սակաւ տային հաւատարմութիւն հարազատութեան դրչացն։ Երեք և եթ օրինակք էին առ ձեռն պատրաստք՝ նօտրագիր՝ առ մերով աւուրբք գաղափարեալ։ Առաջինն՝ զոր և կալաք մեզ առաջնորդ, էր գրեալ 'ի Կարին քաղաքի յումեմնէ Նուիրակէ սրբոյ Աթոռոյս, որ և համարի ընդ օրինակեալ 'ի հնագոյն ձեռագրէն Յովհաննու Երզնկացւոյ, զորոյ և զյիշատակարանն 'ի մէջ բերէ ըզկնի յիշատակարանաց սրբոյ Թարգմանչիս՝ մանաւանդ եթէ յօրինողիս։ Եւ է այս՝ ըստ որում հետևի։ "Դարձեալ յիշեսջիք 'ի Քրիստոս և զիս զտարժանեալ մեղսաներկ ոգիս զնուաստ Յոհան Եզընկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ 'ի փափագ սորին՝ գրեցի իմով իսկ տխեղծ մատամբս, 'ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ՝ և 'ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի. և 'ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ և ամենայն նախնեաց փոխեցելոց 'ի Քրիստոս, արեան մերձաւորաց և համօրէն ամենայն երախտա-

ւորաց՝ հոգևորաց և մարմնաւորաց, զի և դուք յիշեսջիք 'ի Քրիստոսէ Աստուծոյ յուսոյն մերոյ օրհնելոյն յաւիտեանըս. ամէն։ Գրեցաւ 'ի Թիւ ՉԾԵ, 'ի քսան և ինն մարտի ամսոյ"։

Իսկ միւս երկու օրինակք՝ գրեալ 'ի Պրուսայ քաղաքի յառաջնորդարանն, և որպէս երևի՝ 'ի մի և 'ի նոյն գաղափարէ, յորս ցուցանէին ուրեք ուրեք և հետք հնութեան. 'ի վերայ այսր ամենայնի՝ գտանի 'ի նոսա զանազանութիւնս ինչ ներմուծեալ 'ի գրչաց։ Զերեցուն ևս օրինակաց զտարբերութիւնսն նշանակեցաք 'ի ներքոյ. յորս Ա Օրին. իմանամք զօրինակն Կարնոյ, և Բ Օրի. զՊրուսայու. իսկ ուր գրի՝ մի օրինակ, կամ միւս օրինակ, իմանի մին 'ի Բ օրինակաց։

Զսոյն զայս ոսկէղինիկ մատեան աստուածային Վարդապետիս և սուրբ Հօրն մերոյ Լամբրոնացւոյ՝ ամենայն հաւատարմութեամբ մատուցանեմք բանասիրաց ազգիս. խոստովանեալ առ նմին զքանի մի իմաստս կեզակարծս և դժուարիմացս, որք Թուին վրիպակք նախորդ օրինակաց, զորս յակամայս արդեւք Թողաք, այլոց հնագոյն ևս գաղափարաց սաւագել՝ 'ի յաջողել ժամանակին։

Էջ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
60	25	անուա	անուն
114	22	որպէս 'ի սպորե	որպէս և 'ի սպորե
156	23	'ի վերջ գլխոյս	'ի վերջ պարբերութեանս
286	23	ասյր	այսր

Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ ԿԱՄՍ
ՈՐ ԵՂԵՒ ՅԱՍՏՈՒԱԾԱՊԱՀ ՔԱՂԱՔՆ
ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՍ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԸՆԿԱԼԵԱԼ ԵՂԵՒ.

ԱՅԼ ԵՒ ՍՈՐԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆ ՈՐ ԵՂԵՒ
ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ ԿԵՍԱՐՈՒ
ՁԵՌՆԱՐԿ ԱՐԱՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ
ՍԿԻԶԲՆ ԳՐՈՑՍ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍԻ

ԹԵՏԱԼԻՈՍ

ԿԱՄՕՔ ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅՆ
ՋԱՅՍ ԲԱՆՔ

Գիրքս այս յայտնութեանս Յովհաննու պատուեցաւ 'ի մէնջ ընդ այլ գիրս առաքելականս զոր ունի եկեղեցի՝ քննութեամբ և կամօք եղբարցս իմոց և եպիսկոպոսակցաց սրբոց. և է առանց պատճառի (և) ընդունելի: Քանզի ունի զիմաստութիւն Աստուծոյ, որ և օգուտ մեծ է հայեցողացն [1] 'ի սոյն մտաց աչօք, որպէս արդարև զտուչու-

[1] Բ Օրի. Ի հայցողացն:

թիւն սուրբ Հոգւոյն, զոր պարտ է ոչ
անտես առնել։ Այլ և ոչ սուտ է, որ-
պէս 'ի չարաց[1] ոմանց 'ի մարդկանէ հա-
մարեալ եղև. Նա և ստոյգ Որոտմանն
որդւոյ Յովհաննու է։ Զի թէ հաւա-
տամք բանիցն Աթանասի Աղէքսանդրու
մեծի հայրապետի, որ թարգմանեաց
զհին և զնոր կտակարանս, ապա նմա սոյն
ընդունելի եղև, և 'ի բազում տեղիս
զպատշաճ վկայութիւնս առ 'ի բանս իւր։
Նա և մեծն Բասիլիոս 'ի բանն որ վասն
Քրիստոսի՝ կարօտ եղև առնուլ 'ի սմանէ
վկայութիւն։ Եւ նորին եղբայրն Գրի-
գոր Նիւսացի 'ի բանն՝ զոր խօսեցաւ
յայսմ քաղաքի 'ի ժողով եպիսկոպոսացն։
Այլ և աստուածայինն Գրիգոր աստուա-
ծաբան[2] 'ի բանն՝ որ յաղագս Որդւոյ և
յիւրն հրաժարական։ Նա և երանելի ե-
պիսկոպոսն Պատարու Մեթոդիոս 'ի բա-
նըն՝ որ յաղագս յարութեան։ Եւ Կիւ-
րեղ Աղէքսանդրու մեծի[3] հայրապետն՝
'ի գիրս գանձուն 'ի բազում տեղիս պի-
տանի համարեցաւ զոր 'ի սմանէ վկայ-
ութիւնսն։ Եւ Հիպողիտոս հռովմայե-

1 Բ Օրի. Որպէսի չարաց։ բիոս ա՞ծաբանն։
2 Բ Օրի. Այլ և Գրիգոր. 3 Բ Օրի. Մեծ։

ցւոց հայրապետն՝ 'ի մեկնութիւնն զոր
արար Դանիէլի ։

Բայց ոչ բազմացուցանեմք զբանս,
թէպէտ և ունիմք այլ վկայս հաւասար
սոցա 'ի սրբոց հարցն, որք հաստատե-
ցին գոլ զայս Յայտնութիւնս՝ Յովհան-
նու աւետարանչի ։ Զի՞նչ պարտ է ա-
սել և զերանելին Իրենէոս՝ որ ինքն վը-
կայէ, և զայլս որ նախ քան զինքն՝ 'ի
մէջ ածէ ։ Այլ և երեքթշուառեանն
Որոգինէս ոչ միայն ընկալաւ զսա, այլ
և մեկնութիւնս եդ 'ի վերայ սորին ։
Արդ՝ եթէ առ այս յայտնութիւն կար-
ծեօք գնամք, զսուրբսն՝ որք մաքրեցին
զտիեզերս 'ի չար հերձուածոց և սմին
վկայեցին, արհամարհեմք ։ Զի թէ սա
անընդունելի թուի մեզ, անընդունելի
լիցին և ընդունողքն սորին, զոր մի՛ լի-
ցի զմտաւ ածել ։ Այլ հաւատամք զսա
ճշմարտապէս Յովհաննու որդւոյն Զե-
բեդեայ՝ սրբոց հարցն մեր հետևելով ։
Քանզի այս տուաւ նմա մարգարէու-
թեան շնորհք յԱստուծոյ վասն երկ-
նային խորհրդոցն, և որ յերկիրս եղև՝
և լինիցի. որում տեղեկանան քննողքն
աստուածային երկիւղիւն այսմ բանից ։
Ո՞վ, և թէ ո՞րքան անհասութիւն սովաւ

հասանելի լինի աստուածասէր ընթեր-
ցողաց, զոր ոչ ամենայն իմաստութիւն
աշխարհիս կարող է ցուցանել։ Ի սմա է
պարունակեալ մարմնով Քրիստոսի տը-
նօրէնութեանն խորհուրդ, և յերկինս
ընդ նմա մարդկան հանգստեանն և կըր-
կին գալստեանն գիտութիւն։ Կարևոր
է և զայս ասել. քանզի զի՞նչ է որ բըռ-
նադատէ զմեզ յայս հաւանութիւն,
թէ ոչ գիտէաք զսա ճշմարտութեամբ
աստուածային խորհրդոցն յայտնու-
թիւն։ Նա և ինքն աստուածաբանս
ձայնէ 'ի սկիզբն[1] բանիս, թէ ոչ 'ի մարդ-
կանէ՝ այլ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
եղև առ նմա յայտնութիւնս. որում և
Պօղոս վկայէ, թէ "Յիսուսիւ Քրիստո-
սիւ հաստատեցաւ ամենայն, եթէ՛ եր-
կնաւորքն և եթէ երկրաւորքս. որ է
գլուխ Եկեղեցւոյ, անդրանիկ 'ի մեռե-
լոց. զի եղիցի ինքն յամենայնի յառա-
ջացեալ"։

Արդ՝ ինքն Յիսուս Քրիստոս հաս-
տիչն ամենայնի՝ հաւատամք եթէ յայտ-
նեաց իւրոյ ծառային և սիրեցեալ աշա-
կերտին զերկնային խորհուրդս, և զոր

[1] Ա Օրի. Ի սկզբան։

հանդերձեալ է լինել 'ի յերկիրս։ Վասն այսորիկ և ես նուաստ արքեպիսկոպոսս Կոստանդնուպօլսի Թետալիոս, և որ ընդ ինև սուրբ և աստուածային ժողովս, ընկալաք զսա պատուով 'ի կաթուղիկէ Եկեղեցի, իբրև զարդարև Յիսուսի Քրիստոսի յայտնութիւն։ Նա և տեսութիւն մեկնութեանս՝ զոր արարեալ է սմա Անդրէի արքեպիսկոպոսին Կեսարու, հաճոյ թուեցաւ տիեզերական ժողովոյս։ Քանզի ոչ եթէ անձամբ անձին, այլ 'ի վերայ հարցն հիման է եդեալ ըզշինուածս բանից իւրոց. և զնոցա աստուածային հոգւոյն տուչութիւն՝ առեալ է իւր առաջնորդ և վկայ 'ի քննութիւնս իւր։ Ուստի և ընդունելի է այս տեսութիւն, զոր եդ[1] 'ի վերայ յայտնութեանս Յովհաննու եպիսկոպոսն Կեսարու 'ի կաթուղիկէ Եկեղեցի՝ մերոյ տիեզերական ժողովոյս հաճութեամբ և վկայութեամբ։ Եւ է ամենայն բանք գրոցս այսորիկ 'ի քսաներորդ և չորրորդ ճառս բաժանեալ և 'ի յեւթանասուն և երկու գլուխս. հայելով յայս խորհուրդ թուոցս, զի երրորդ

1 Բ Օրի. Եդեալ է։

քսան և չորան՝ լինել Հբ. և ի քսան և չորից Թիւն՝ ի խորհուրդ՝ քսան և չորս երկցանցն զոր ետես: Եւ Հբ գլուխն նշանակէ զոլ զնոսա զամենայն սուրբս, որք հոգւով և ընչով և մարմնով հաճոյք գտան Աստուծոյ նախ քան զօրէնս, և օրինօք, և չնորհօք, որք պաշտեցին յետ րեք դարս երեք մասամբք զանբաժանելի ամէնօրհնեալ[1] սուրբ Երրորդութիւնն:

ԳԼՈՒԽՔ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ

ԶՈՐ ԵՏԵՍ Ի ՊԱՏՄՈՍ ԿՂՋԻՆ ԱԽԵՏԱՐԱՆԻՉՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ընաջլին, Թէ՝ ի ձեռն հրեշտակի եղև առ նա յայտնութիւնս . . . . . Գլ. Ա:
Վասն տեսանելոյ զտէր՝ ի մէջ ոսկի ճրագարա-
նացն եւթնից . . . . . Բ:
Վասն առ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գրելոյն. Գ:
Վասն առ հրեշտակ Զմիւռնեայ եկեղեցւոյն գրելոյն. Դ:
Վասն առ հրեշտակ Պերգամոյ եկեղեցւոյն գրելոյն. Ե:
Թէ զինչ գրեաց առ հրեշտակ Թիւատիրոյ
եկեղեցւոյն . . . . . Զ:
Թէ զինչ գրեաց առ հրեշտակ Սարդիացւոց
եկեղեցւոյն . . . . . Է:
Թէ զինչ գրեաց առ հրեշտակ Փիլադելփացւոց
եկեղեցւոյն . . . . . Ը:

[1] Ա. Օրի. Բացատրեալ:

Թէ զի՞նչ գրեաց առ հրեշտակ Լաւդիկեացոց
եկեղեցւոյն . . . . . Թ։
Վասն երեւելոյ նմա գլխոյն երկնից, և քառանելոցս
երիցանցն . . . . . Ժ։
Վասն գրոցն կնքելոյ՝ զոր ոչ ոք յերկրաւորացս
բնաւին կարաց . . . . ԺԱ։
Վասն գառնին զննելոյ [1], որ առնէր զեռնին եղջիւրան
և զաշն . . . . . ԺԲ։
Լուծումն առաջին կնքոյն . . . . ԺԳ։
Լուծումն երկրորդ կնքոյն . . . . ԺԴ։
Լուծումն երրորդ կնքոյն . . . . ԺԵ։
Լուծումն չորրորդ կնքոյն, որ յայտ առնէ
զպատիժ ամբարշտացն . . . . ԺԶ։
Լուծումն հինգ կնքոյն, և գոչումն մարդկան
առ Աստուած . . . . . ԺԷ։
Լուծումն վեց կնքոյն, և վասն [2] վախճանի
հարուածոցն . . . . . ԺԸ։
Վասն վիճակոցն [2] հարուածոց չորս հրեշտակին . ԺԹ։
Վասն անթիւ բազմութեանն՝ որք [2] հեթանոս
ազգ կոչին առաջի Աստուծոյ . . . Ի։
Լուծումն եւթն [2] կնքոյն, յորում մատուցանի
ցասաւորք սրբոցն . . . . . ԻԱ։
Վասն հարկանելոյ միոյ յեւթն հրեշտակաց զիւղին . ԻԲ։
Վասն երկրորդ հրեշտակին, և աստուածմանն
որոց [2] ի ծով . . . . . ԻԳ։
Վասն երրորդ հրեշտակին և դառնութեան գետոցն . ԻԴ։
Վասն չորրորդ հրեշտակին, և խաւարման
աստեղացն . . . . . ԻԵ։
Վասն հինգերորդ հրեշտակին, և իմանալի մարտիցն . ԻԶ։
Վասն վեցերորդ հրեշտակին, որ լուծանէ զ'ի
վերոյ Եփրատայ զհրեշտակն . . . ԻԷ։

1 Մի օրի. կնաւելցոյ։ վէցերորդ . . . ե֊կնիցն
2 Բ Օրի. Հիննգերորդ . . . գնացոյն։

Վասն հրեշտակին՝ որ զգեցեալ էր զամպն և
զծիածանն . . . . . ԻԸ։
Վասն զի զգրկոյսն էառ աւետարանիչն 'ի
ձեռաց հրեշտակին . . . . . ԻԹ։
Վասն Ենովքայ և Եղիայի . . . . . Լ։
Զի սպանեալ սուրբք 'ի սուտ քրիստոսէն՝
դարձեալ յառնեն . . . . . ԼԱ։
Վասն եւթն փողոյն և գովելոյ սրբոցն զԱստուած . ԼԲ։
Վասն խռովութեան եկեղեցւոյ՝ որ 'ի սկզբանէ
և 'ի ձեռն նեռինն . . . . . ԼԳ։
Պատերազմ 'ի յերկինս հրեշտակաց, և կոր-
ծանումն դիւաց . . . . . ԼԴ։
Թէ ո՛րպէս վիշապն 'ի հալածելոյ զեկեղեցի ոչ
դադարէր . . . . . ԼԵ։
Վասն գազանին, և տասն եղջերն, և եւթն գլխոյն. ԼԶ։
Վասն սուտ մարգարէին [1] . . . . . ԼԷ։
Վասն անուան հակառակ քրիստոսին [2] . . ԼԸ։
Վասն գառինն, և որոց ընդ նմա հարիւր քա-
ռասուն և չորս հազարացն [3] . . . . ԼԹ։
Վասն հրեշտակին՝ որ լինէր երաշխաւոր հան-
դերձեալ դատաստանին . . . . . Խ։
Վասն հրեշտակին՝ որ զանկումն Բաբելոնի քարոզէր. ԽԱ։
Թէ ո՛րպէս զդուշացոյց հրեշտակն՝ ոչ ընդու-
նել զսուտ քրիստոսն . . . . . ԽԲ։
Զի նստեալն յամպս հնձէր զբոյս երկրի գե-
րանդւովն . . . . . ԽԳ։
Վասն հրեշտակին՝ որ կթէր զդառնութեան այգին [4] . ԽԴ։
Վասն եւթն հրեշտակացն՝ որք ածին զհար-
ուածսն նախ . . . . . ԽԵ։

1 Յա՛մ օրի. Մարգարէիցն։ ռասուն և չորս հազարացն
2 Ա Օրի. Վասն անուան գազանին։ որոց ընդ գառինն։
3 Ա Օր. Վ՛ն հարիւր քա- 4 Բ Օր. Զդառնութեան յայգին։

Ջի յառաջին սկսաւառակէն հեղաւ հարուածք
ապառամբայ . . . . . ԽՋ.
Ջի յերկրորդէն հարուածք՝ որոց՝ ի ծովն ընդոց . ԽԷ.
Ջի՝ ի ձեռն երրորդին՝ գետք յարիւն դարձան . ԽԸ.
Ջի՝ ի չորրորդ հարուածոցն տանջեցան մարդիկ . ԽԹ.
Ջի հինգ ¹ հարուածովքն՝ թագաւորութիւն
գազանին խաւարեցաւ . . . . . Ծ.
Ջի վեց սկսաւառակեան Ճանապարհ տայ՝ ի
վերոյ Եփրատայ արեւելից թագաւորու-
թեանցն ² . . . . . ԾԱ.
Ջի յեւթն սկսաւառակէն՝ կարկուտ և շարժ
՝ի վերոյ մարդկան լինէր . . . . ԾԲ.
Զանց ցուցանելոյ հրեշտակին զպատնիկ քաղաքն ³ . ԾԳ.
Զանց զի հրեշտակն՝ որ եցոյց զԵսայիսուրդն,
մեկնեաց . . . . . ԾԴ.
Զանց այլ հրեշտակի՝ որ զանկանել Բաբելոնի
յայտ առնէր . . . . . ԾԵ.
Զանց սրբոցն օրհնաբանութիւնէ երեքիւին ալէլուիա . ԾԶ.
Զանց խորհրդաւոր հարսանեաց և ընթրեաց
գառինն . . . . . ԾԷ.
Զանց տեսանելոյ աւետարանչին զԲրիստոս
յերիվարս հրեշտակօք . . . . ԾԸ.
Ջի՝ ի գեհենական արկաւ հսկաւոյն քրիստոնեան
և զնա ընդ նմա . . . . . ԾԹ.
Թէ սրտիկս առաքելոյ կատեցաւ՝ ի Քրիստոսէ
խաչելութենէն մինչև՝ ի վախճանին ժա-
մանակ . և զան հազար ամին . . . Ը.
Զանց բազմականացն՝ որոց մնացին անդադրեալք
՝ի Քրիստոս . . . . . ԿԱ.

¹ Բ Օրի. Հինգ եղեմտիք։ գեղոցն Եփրատայ ելից առ-
չեաս նոցա ընդ նմա։ ² Բ Օր. Զի հրեշտակ մի՝ յեր-
կուսէ հրեշտակացն կամեաւ՝ առաքեալ ի կիսոս նոգաւարդութեանց՝.
առ իւր՝ ձայնատարիցն զայս ³ Ա Օրի. յաւելու ցոն
հասանել։

Զի՞նչ է առաջին յարութիւնն, և զի՞նչ
երկրորդ մահն . . . . . ԿԲ։
Վասն Գոգայ և Մագոգայ . . . . . ԿԳ։
Վասն նստելոյն յաթոռն, և հասարակաց յա-
րութեանն . . . . . ԿԴ։
Վասն նորն երկնի և երկրի, և վերինն երուսաղէմի. ԿԵ։
Վասն ասացելոյ այնր՝ որ յաթոռն նստէր . . . ԿԶ։
Թէ ո՛րպէս հրեշտակն եցոյց նմա զսուրբ քա-
ղաքն հանդերձ դրամբքն չափեալ . . ԿԷ։
Վասն մաքուր գետոյն՝ որ յաթոռոյն արտաքս
հոսեցաւ . . . . . ԿԸ։
Զի Աստուած է մարգարէիցն Քրիստոս և
տէր հրեշտակաց . . . . . ԿԹ։
Վասն զի արժանահաւատ է տեսիլ առաքելոյս . Հ։
Զի ոչ հրամայեցաւ նմա կնքել, այլ քարոզել
զտեսիլս . . . . . ՀԱ։
Զի եկեղեցի և որ 'ի նմա հոգին ընդունի
զՔրիստոսի յայտնութիւնն. և վասն ա-
նիծիցն՝ որոց յաւելուած 'ի գիրս մուծանեն. ՀԲ։

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ[1]

Սրբոյ Հօրն մերոյ Անդրէի երանելի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ՝ համառօտ տեսութիւն[2]. Ընդ նմին և Արեթաս եպիսկոպոս նմին քաղաքի։

Յաստուածաց խորհրդական բանից անհասութիւն ոք հայելով մի՛ բամբասեսցէ զմերս համարձակութիւն, որք բուռն հարաք զսոյն իմանալ. քանզի հաւատամք 'ի Քրիստոս՝ եթէ ձեռընտու լինի մեզ[3] 'ի գործս ներգործութեամբ կենարար սուրբ Հոգւոյն։ Նա և ոչ թէ յանկուռ ճանապարհ եդաք զգարշապար իմաստիցս ընթանալ, այլ զի բազումս 'ի նախ քան զմեզ աստուածազգեստից սուրբ հարցն ունիմք 'ի սոյն առաջնորդ, որք յիւրաքանչիւր ժամանակս արարին 'ի վերայ սորա քննութիւն, և գրով մեզ աւանդեցին։ Զորս կարևոր համարեցայ զնոսա[4] 'ի միասին ժողովել, և տկարութեամբ իմով զթերին նոցա լցու-

1 Բ Օր. Յովհաննու աբբայ՝ հօր մեր... երանելւոյ։
2 Ա Օրի. Համառօտութիւն։
3 Բ Օրի. Լիցի 'ի գործս։
4 Բ Օր. պակասէ Զնոսա։

ցանել, զի մնասցէ 'ի մէջ Եկեղեցւոյ՝ ըստ կարգի հաւաքումն տեսութեան Յայտնութեանս Յովհաննու՝ 'ի շահ օգտի ընթերցողաց երկիւղիւ։

Այլ և զայս ոչ տգիտանամք՝ թէ ոմանք 'ի վարդապետացն առաջնոց կարծեօք գնացին առ սա, որպէս և պատմէ Եւսեբի Պամփիւլեայ 'ի գիրսն իւր՝ որ կոչի Պատմութիւն եկեղեցւոյ։ Սակայն պարտ է գիտել՝ թէ ոչ ամենևին արհամարհեցին զսա, այլ միայն 'ի կարծիս թերութեան ձգեցին, որպէս զթուղթն Եբրայեցւոց և զոմանս 'ի Կաթուղիկեայց թղթոցն՝ զորս այսօր ընդունի Եկեղեցի։ Բայց տեսաք երանելեաց նախ քան ըզմեզ հարցն սրբոց զայս յայտնութիւնս որպէս զարդարև առաքելական գիրս ընկալեալ[1]։ Ուստի և ոմանք մեկնեցին զսոյն[2], և այլք վկայութիւն ընկալան 'ի սմանէ՝ որպէս արդարև յառաքելական գրոց, որոց անուանքն յայտնապէս պատուի 'ի մէջ Եկեղեցւոյ։ Նոցին և մեր հետևեալ խոստովանիմք գոլ զսա ճշմարտապէս յայտնութիւն Քրիստո-

1 Բ Օրի. Իբրև զարդար գունելի։
և զառաքելական գիրս ըն- 2 Ա Օրի. Զնոյնս։

սի[1] առ երանելի աւետարանիչն Յովհան-
նէս, զոր ետես 'ի Պատմոս կղզին, որ-
պէս և հանդերձեալ բանքդ ցուցանեն։

Եւ իմանամք զսա տեսութիւն ոչ
զգալի աչաց, կամ անրջական երաղոց ե-
րևոյթ, այլ ներքին մարդոյն հայեցողու-
թեան առաջի՝ տպաւորութիւն յայտ-
նութեանս կերպարանեալ իմանալի ե-
րևմամբ։ Օ՝ի նորա միջնորդութեամբն
յայտնեսցի հաւատացելոց ծածուկ և
սքանչելի խորհուրդ Աստուածութեա-
նըն և երկնայնոցն կարգաւորութիւն
պաշտաման։ Վասն զի անհաս էր այս 'ի
մարդկանէ մինչև ցայս վայր, մանաւանդ
թէ և անկար[2] մարդիկ զայսպիսի իմաստս
տանել. ըստ որում և ասաց Քրիստոս
առ Նիկոդեմոս. "Եթէ զերկրաւորս ա-
սացի ձեզ՝ և ոչ հաւատայք, զիա՞րդ ե-
թէ զերկնաւորն ասացից՝ հաւատայցէք"։
Իսկ ապա յորժամ հաւատն ծաղկեցաւ
առ սրբովք առաքելովքն, և մանկունք
եկեղեցւոյ զամենայն խորհուրդ տնօրէ-
նութեանն Քրիստոսի՝ որ 'ի յերկրի ե-
ղև, ուսան և հաւատացին, կամեցաւ
ապա մարդասէրն Տէր և երկնային խոր-

1 Բ Օրէն. Ի Քրիստոսէ։ 2 Ա Օրէն. Անկատար։

հըրդոցն զնոսին ներհմտացուցանել 'ի ձեռն յայտնութեանս՝ որ առ սիրեցեալ աշակերտն. և ցուցանել թէ ո՞րքան է պատրաստեալ յԱստուծոյ բարիքն սըրբոցն՝ յերկնից թագաւորութիւնն. ընդ որում և զկատարածի օրն և զառաջիկայ փորձանս սուտ քրիստոսին։ Զի թէ ոչ ինչ գործէ տէր Սաբաւովթ՝ զոր ոչ յայտնէ ծառայից իւրոց մարգարէից, ապա զի՞նչ սքանչելի՝ թէ զհանդերձեալ իրացն գիտութիւն յայտնեաց սիրեցեալ աշակերտին իւրոյ Յովհաննու։

Իսկ ապա թէ պատմութիւն բանիս 'ի մէջ առնու մարմնատեսակ երևոյթըս, գազանաց կերպարանս, և քարանց պատուականաց որակութիւնս գունոց, սքանչացուսցէ մի՛ զլսողսն։ Քանզի զայս և մարգարէիցն գտանեմք 'ի բազում տեղիս արարեալ, ըստ որում ասէ ոմն. "Տեսի զՏէր՝ և ընդ ոտիւք նորա շափիւղայ"։ Եւ Եսայի յաթոռ ետես. և Եզեկիէլ 'ի կառս չորից կենդանեացն։ Նա և զհրեշտակական զօրութիւնսն գիտեն նոքա կենդանեաց նմանեցուցանել, ըստ որում Զաքարիասն ասէ։ Եւ այն թէ՝ "Կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք անջրպետեցին 'ի մէջ Եղիայի և Եղի-

սէի ՝՝ ։ Եւ ոչ թէ վասն այսորիկ անհաւատալի թուի մեզ ճառք մարգարէիցն. այլ գիտեմք եթէ խորհրդոց յայտնութիւն է մարմնատիպ զնոսա նմանեցուցանել. ըստ այսմ օրինակի և աստ է ուսանել ։ Դարձեալ՝ և որակութիւն երանգոց և գունոց՝ անմարմին է, թէպէտ և գտանին 'ի մարմինս տպաւորեալ ։ Արդ՝ յորժամ լսեմք ականց պատուականաց պէսպէս գունոց անուանս 'ի մէջ առեալ, զանմարմին որակութիւնսն իմասցուք, և մի՛ զզգալի նիւթսն գոլ 'ի յերկինս, զի զգալիքս ամենայն ուրուականք են իմանալեացն ։

Այլ և զբանսարկուէն և զսուտ քրիստոսէն որ առ երանելիս՝ զպէսպէս և զզարհուրելի յայտնութիւն մի՛ ոք վայրապար համարեսցի [1]. քանզի ունին ամենեքեան լնուլ 'ի ժամանակս իւրեանց ։ Եւ աւանդեցաւ այս եկեղեցւոյ 'ի խրատ և 'ի զգուշութիւն յառ ապա երկիւղէն [2], զի օգնեսցին սովաւ արդարքն և անպատասխանի լիցին ամբարիշտքն, իբրև զկամաւ մոլորութեանն հետևողք և զգուշութեանս արհամարհողք ։

1 Բ Օրէն. Վարկցի ։ 2 Բ Օրէ. Առ յապա երկիւղին ։

Արդ՝ քննեմք մեք զսա, ոչ թէ յոր-
քանութիւն զօրութեան որ կայ 'ի նոյնս՝
հասանելով, այլ ըստ կարի մերում տկա-
րութեանս օժանդակութեամբ հարցն
առաջնորդութեամբ՝ իմանալով։ Եւ կայ
առաջի ուսանել յաղագս եւթն եկե-
ղեցեացն, որք 'ի փորձութիւնսն համ-
բերեցին, զորս 'ի բարեգործութիւն
փութացուցանէ՝ երևեալ նմա 'ի տես-
լեանն։ Յետ որոյ յերկրէ համբարձաւ
ամենևին հոգւոյ աչօք, և զաստուածայ-
ին զփառսն յերկինս ետես։ Եւ զի ընդ
Աստուծոյ էին անմարմին սուրբ զօրու-
թիւնքն, և որք 'ի մարմնաւորացս նմին
հաճոյացան. փայլատակմունքն՝ որք ցու-
ցին զաստուածային զգալուստն։ Եւ
գիրք աստուածայինք՝ անհաս իրաւանցն
հասումն, որ էր 'ի ներքոյ եւթն կնքոյն,
զոր գառն Աստուծոյ ելոյծ և յայտնեաց
զոր ինչ 'ի գալստենէն իւրմէ մինչև 'ի
կատարած լինիցի։ Ուսուցանէ և զվը-
կայիցն քաջութիւն, և զանհաւատիցն
տանջանս։ Դնէ և զչարսն՝ որ նախ քան
զհակառակ քրիստոսն գալոց են. և զորս
'ի նոցանէ ընդդէմ քրիստոնէիցն զյան-
դըգնութիւնն։

Աստուստ է ուսանել և զորս Քրիստոսի սուրբսն, որք գերազանց գտանին ամբարշտացն տանջանաց։ Եւ զի սոքա վասն անծանօթութեան [1] կնքոյն լինին չարչարեալք։ Ուսանիմք և զեւթն հարուածսն՝ որ լինին 'ի վերայ երկրի յետոյ. և զնոցին մեծութիւնն վասն դարձի և ապաշխարութեան՝ տեսաք. ուստի և պաղատանս մատուցանեմք Աստուծոյ, ոչ փորձիլ նոքօք։ Յայտնէ և զհրեշտակացն զմարդասիրութիւն, և յերկրի ըզքարոզութիւնս նոցին։ Զի 'ի կատարածի գալոց են սուրբ մարգարէք առ 'ի յանդիմանել զսուտ քրիստոսն։ Եւ վասն Երուսաղէմի բաժանմանն, և հեթանոսաց պատերազմաւ ապականութեան, և որ ընդդէմ եկեղեցւոյ հալածանք, և զբանսարկուին կործանումն։ Եւ հակառակ քրիստոսին զգալուստն, և զսուտ մարգարէին զխաբէութիւնն, և զփրկելոցն թուոյ բազմութիւնն. և զԲաբելովնի զանկումն, և ամենալի կալին զանփոփելն, և զդառն ողկուզին ըզկթելն։ Եւ զսրբոցն մաքրագոյն զհանգիստն, և զծովուն ապակեայ զնմանու-

[1] Ա Օրէն. Եւ սոքա զի վասն ծանօթութեան կնքոցն։

թիւնն։ Եւ զյեւթն սկաւառակէն[1] աստուածային քարկութեան հեղումն յերկիր և 'ի ծով և յայլ տարերս՝ վասն չար մարդկան չարչարանացն հասելոց։ Եւ կիսոյ աթոռոյ գաղանին խաւարումն։ Առաջնորդութիւն բանսարկուին ընդ Եփրատ անցանելովն սպասաւորաց, և նոցին տկարութեանն կշտամբումն. և ամենատարած շարժումն, որ այսմ կենցաղոյ[2] զփոխադրութիւն ածէ. պոռնըկիլ քաղաքին 'ի գաղանն, այսինքն 'ի բանսարկուն հանգիստ, ուր և արժանի նորին կործանումն ցուցանի։ Վասն որոյ 'ի գերաշխարհիկ զօրութեանցն օրհնի Աստուած. և զի եկեղեցի վերինն Երուսաղէմի ընդ Քրիստոսի միաւորի զճշմարիտ միաւորութիւն[3]. և քարկութեանն կոխի հնձան։ Իմանալի ընթրիքն յերկրաւորացս պակասելն, յոր վայելեն հրեշտակք և հրեշտակատիպ մարդիկ։ Հակառակ քրիստոսին և իւր սպասաւորացն 'ի գեհեան մատնելն։ Աստուստ և զբանսարկուին կապանս, և զառ ժամ մի զնորին լուծումն է ուսանել. և ա-

1 Ա Օրէն. Եւ եւթն՝ սկաւառակքն են։

2 Բ Օրէն. Որ յայսմ կենցաղս։

3 Բ Օրէն. Ըստ ճշմարիտ միաւորութեանն։

պա զառաքումն 'ի կորուստն. զի ընդ Քրիստոսի Թագաւորեն[1] սուրբքն, որք յառաջ քան զսուտ քրիստոսին երանելիքն։ Յորում 'ի սակաւ մի լուծանել բանսարկուին՝ Գոգայ և Մագոգայ խըռովելն և ընդ նմին տանջելն։ Ըստ և գիրք դպրութեան ըստ իւրաքանչիւր գործոց, և գիրք կենացն՝ բանին։ Ոմն վերին Երուսաղէմի և Քրիստոսի հարսնութեանն[2] արժանի լինի, և այլք ընդ բանսարկուին տանջին։ Ուսանի 'ի հըրեշտակէն և զիմանալի բանական քաղաքին բացայայտութիւն. զթիւ դրանցն և զչափ պարսպաց. և զուխս Հոգւոյն սրբոյ՝ որ զնա ոռոգանէ. զծառն կենաց և զանապական նորին պտուղն։ Եւ զի՝ բանիւ ոչ ոք կարէ վերին վայելչութեանցն հասու լինել[3], և զպատրաստեալն 'ի Քրիստոսէ զսրբոցն զբարիսն ճառել, զոր 'ի հանդերձեալն գալուստ պարգևէ սիրելեաց[4] իւրոց։

Այս ամենայն առաջի կայ մեզ իմանալ յաստուածային յայտնութեանս[5], կերակուր բանի կատարեալ հոգւոց ճա-

1 Բ Օրէն. Թագաւորեսցեն։
2 Ա Օրէն. Հարսանեացն։
3 Ա Օրէ. Արժանի լինել։
4 Ա Օրէն. Սրբոց։
5 Բ Օրէ. Յայտնութենէս։

շակելի, և ոչ տղայոցն մտօք և կաթըն-
կեր հոգւոց հասակաց. այլ որք կարեն
յընդարձակութիւն հաւատոցն իւր-
եանց զսոյն ամփոփել, և զգալի ձևովքն
ճանապարհ առնել յիմանալեացն հայե-
ցողութիւն։ Քանզի անմարմնոց իրք՝
մարմնաւորացս ոչ միայն դժուարահա-
սանելի է, այլ և դժուարահաւատալի,
ըստ այնմ. "Շնչաւոր մարդ՝ ոչ ընդու-
նի զհոգւոյն Աստուծոյ, զի յիմարու-
թիւն է նմա. և ոչ կարէ գիտել թէ հո-
գեպէս քննիցէ"։ Օ՛այնպիսիսն արտա-
քոյ բանիս քննութեան 'ի սկզբանս 'ի
բաց առաքեմք, զի մի՛ յոչ տանելն[1] ըզ-
սոյն յաման հաւատոցն՝ դատապարտես-
ցին։ Եւ մեզ եկեալ շուրջ կայցեն հո-
գևորքն, զի զհոգւոյն Աստուծոյ յայտ-
նութիւնս ըստ կարի միջնորդութեան
բանի մեկնութեանս՝ ընդ ոգիս նոցա
համեմատեսցուք. որպէս զի յայսպիսի
բանական սեղանոյս յագեցեալ՝ զուար-
ճասցին գոհութեամբ 'ի պարգևիչն Քը-
րիստոս. թէ որպէս նա՝ որ խաղաղու-
թեանն է միջնորդ, ըստ որում եկե-
ղեցեաւ յայտնեաց զտնօրէնութեանն

1 Բ Օրէն. Տեսանելն։

խորհուրդ՝ իշխանութեանց և պետու-
թեանց որ յերկինս, այսպէս և՝ ի ձեռն
նոցին սրբոց զօրութեանցն զիւր փառան
և զպաշտօնն՝ ի նոցանէ և զմիութեամբ
զպատեան ահաւոր խորհուրդ յայտ-
նեաց եկեղեցւոյ։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թէ 'ի ձեռն հրեշտակի եղև առ նա յայտնութիւնս։

ՃԱՌ ԱՌԱՋԻՆ

"ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յիսուսի Քրիստոսի, 'ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ լինելոց է վաղվաղակի"։ Յայտնութիւն ասի ծածուկ խորհրդոցն երևումն, 'ի ձեռն որոյ պայծառանայ իշխանականն եթէ՛ աստուածային տեսլեամբ և եթէ աստուածային երևմամբ[1]. զոր եղեալ առինքն 'ի Քրիստոսէ ասէ. և զայս՝ տնօրինական անուամբքն, զի 'ի Քրիստոսէ, ասէ, և ոչ սոսկ յԱստուծոյ։ Այլ թէ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ետ Աստուած զգիտութիւնս

1 Բ Օրէն. Իմացմամբ։

յայտնել, յայտ է՝ թէ հոգւովն, այսինքն՝ զի Քրիստոսիւ իջանէ 'ի մեզ ներգործութեան հոգւոյն շնորհ[1]։ "Ցուցանել ծառայից իւրոց որ լինելոց է"։ Օ՝ի ոչ է այս որպէս զաւետարանն՝ աստուածաբանական ճառք բարձրագոյնք, այլ առ ծառայս իւր և վերակացուս եկեղեցեացն՝ 'ի ձեռն ծառայակցիս իւրեանց[2] Յովհաննու եցոյց զոր հանդերձեալ է լինել վաղվաղակի։ Օ՝վաղվաղակիս լուեալ ոմանք՝ առ ոտն կարծեցին լինել զսորա կանխասացութիւնն. բայց հազար ամն յաչս Տեառն որպէս օր երեկի զի անց՝ համարեալ է։

"Եւ նշանակեաց առաքելով 'ի ձեռն հրեշտակի իւրոյ առ Յովհաննէս ծառայ իւր, որ վկայեաց զբանէն Աստուծոյ, և զվկայութիւնն[3] Յիսուսի Քրիստոսի զոր ետես, և որ էր, և որ լինելոցն էր յետ այնորիկ"։ Քրիստոսն իմ, ասէ, որպէս տէր իւրոյ ծառայի՝ արար զյայտնութիւնս. զի առաջի խոստովանողաց իւրոց զայս վկայեցից, որով դարձ և ապաշխարութիւն լինելոց էր լսողացն։

1 Ա Օրին. Ներգործութեան շնորհն։ Բ Օր. Ներգործութի հոգւոյն և շնորհ։

2 Բ Օրին. Իւրոյ։

3 Բ Օրին. Զվկայութէն։

“Որ էր”, այսինքն՝ որ ծածկեալ էր ’ի մարդկանէ խորհուրդն՝ որ էր յերկինս, զոր յաջորդ բանիւքն պատմէ։ “Եւ որ լինելոցն էր”. որպէս կատարած աշխարհի և սուտ քրիստոսին երևումն. զի զերկուս զայսոսիկ ետես երանելիս հոգւոյ ակամբ, զոր ինչ յերկինս, և զոր ինչ լինելոց էր յետոյ ’ի յերկրիս։

“Երանի որ ընթեռնու զբան մարգարէութեանս այսորիկ, և որ լսէ և պահէ զոր ինչ ’ի սմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է”։ Երանէ զայնոսիկ որք ’ի ձեռն գործոց ընթեռնուն զասացեալսս ’ի մերձակայ ժամանակիս, յորմէ երանութեանս հանդիպեալ։ Քանզի ամենայն գործք առաջի կայ, ըստ որում ասաց Տէր. “Գործեցէք մինչդեռ աւուր կայ”։ Եւ զի ասէ, ժամանակս մերձեալ է, զհատուցման վարձուց ժամանակն ասէ՝ գործողացն զբան մարգարէութեանս։ Իսկ մերձեալ՝ վասն ժամանակիս կենցաղոյս փոքրկութեան ասէ[1], ըստ առաքելոյ՝ “Այժմ մերձ է մեզ փրկութիւն”։

“Յովհաննէս առ եւթն եկեղեցիս՝

[1] Բ Օրինակն չունի Ժամանակիս ... ասէ։

որ յԱսիա, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յէէն, և որ էն, և որ գալոցն է. և յեւթն զօրութեանց հոգւոյն՝ որ է առաջի աթոռոյն իւրոյ »։ Բազմաց գոլով եկեղեցեաց շուրջ զնովաւ, այլ յեւթն միայն առաքեաց. վասն զի եւթնեակ թիւն խորհրդաբար զամենայն եկեղեցիսն նշանակէ. և զի ըստ եւթնեակ թուոյս համարու ամենայն էիցս ընթացք լինի։ Եւ զեւթն եկեղեցւոյն հրեշտակսն՝ եւթն հոգի անուանէ առաջի աթոռոյն Աստուծոյ, ուստի և ասէ. « Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն » յերից անձնաւորութենէ աստուածութեանն։ Քանզի էն՝ զՀայր յայտ առնէ, որ խօսեցաւ ընդ Մովսէսի և ասաց. « Ես եմ որ էն »։ Եւ որ էն՝ զբանըն, զորմէ գրեաց յաւետարանն. « Էր 'ի սկզբանն առ Աստուած »։ Եւ որ գալոցն է՝ զմխիթարիչն, որ միշտ գայ առ որդիսն եկեղեցւոյ սրբոյ 'ի ձեռն մկրտութեանն. զորում տիրապէս գիտութիւնն 'ի հանդերձեալն հաւատամք առնուլ։ Եւթն հոգի՝ զեւթն հրեշտակսն դնէ, որ յեկեղեցեացն վիճակեցան վերակացութիւն, որք և թուակից յիշին աստուածայնոյ և թագաւորականի Եր-

րորդութեանն. այլ որպէս ծառայք յի-
շին ընդ նմա, որպէս աստուածայինն
գրէ առաքեալ. "Վկայութիւն դնեմ
առաջի Աստուծոյ և ընտրելոց հրեշ-
տակաց"։

Դարձեալ և այլ ինչ զմտաւ ածեմք
'ի վերայ կանխասաց բանիս. "Եւ է, և
որ էն, և որ դալոցն է". կարծեմք ըզ-
հայր նշանակել, որ գերագունակապէս
ունի առ ինքն զամենայն, այսինքն՝ զան-
ցեալն և զներկայն և զապառնին։ Իսկ
եւթն հոգի՝ զներգործութիւն կենարա-
րի Հոգւոյն[1], որ վարէր զՔրիստոս Ա-
ստուած՝ որ վասն մեր մարդացաւ[2]։ Զի
այսպէս առնլով՝ ըստ կարգի գայ յաւե-
լուած բանիս զոր ասելոց է, թէ "Եւ
Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայ-
էն"[3]։ Իսկ եթէ նախ զՀոգին դնէ քան
զՔրիստոս, մի՛ սքանչանար. քանզի ան-
խըտիր են 'ի բազում տեղիս այսպէս դը-
նել առաքեալքն։

"Եւ Յիսուսէ Քրիստոսէ հաւատա-
րիմ վկայէն, որ է անդրանիկ 'ի մեռեալս
և իշխան թագաւորութեանց երկրի"։

1 Բ Օրէն. Հոգւոյն կեն-
դանարարի։

2 Ա Օրէն. Մարմնացաւ։

3 Ամենայն օրինակ ունին.
Եւ Յն Քն հաւատարիմ
վկայէն կամ վկային։

Սա որ հաւատարիմ է յամենայն բանս
իւր, վկայեաց առաջի պոնտացւոյ Պի-
ղատոսի գոլ զինքն Թագաւոր ամենայնի։
Դարձեալ՝ հաւատարմապէս վկայեաց ա-
ռաջի Հօր՝ մարմնոյ իւրոյ կրիւք զբնու-
թեանն[1] անմեղութիւն, որով և զսատա-
նային եհան 'ի գլուխ զդատապարտու-
թիւն 'ի խաչին, եղեալ 'ի մեռելոց ան-
դրանիկ՝ որպէս կեանք և յարութիւն։
Այլ և անդրանիկ, զի ոչ է որպէս յառա-
ջագոյն մեռեալքն՝ և յարուցեալք և
վերստին մեռեալք. այլ սա յաւիտեան
կացեալ անմահ՝ մարմնովն որ մեռաւ։
Իշխէ Թագաւորաց՝[2] որպէս Թագաւոր
Թագաւորաց և տէր տերանց, հաւա-
սար գոլով Հօր և համագոյ։ Նոյն իշ-
խէ և Թագաւորաց[3] երկրի, յայտ է՝ թէ
երկրաւոր ցանկութեանց և սերմանո-
ղաց նոցին դիւաց. և այս՝ մարմնովն,
զի զբնութիւնս զոր նոքա կոխան արա-
րին՝ ա՛ռ և իշխան նոցին արար, որոց և
սաստէր որպէս ծառայից և հալածէր.
զի յորժամ հաւատարմացոյց զմարմնոյն

1 Ա Օրէն. Զբնութեանս։
2 Բ Օրէն. Իշխան Թագաւորութեանց։
3 Ա Օրէն. Քանզի իշխէ. Իսէ 'ի լուսանցս համաչայնի Բ. էն։ Բ Օրէն. Իշխէ և Թագաւորէ։

անմեղութիւնն 'ի ջուրսն Յորդանանու առաջի Հօրն և հրեշտակաց, կոխեաց զայն որ ասէր. "Ինձ տուեալ է այս ամենայն"։

Բայց երանելին Գրիգոր և իմաստունն Կիւրեղ՝ "զէն, և որ էն, և որ գալոցն է ամենակալ", 'ի վերայ Քրիստոսի առնուն, անփոյթ արարեալ զայս՝ զոր յետ այնորիկ ասէ. "և 'ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն". այլ միայն յայն հային՝ թէ "որ գալոցն է ամենակալ"։ Քանզի առաջի ունէին սոքա, ոչ ըստ կարգի զբանիցս քննութիւն, այլ միայն զբանին Աստուծոյ զէութիւն և զանձնաւորութիւն հաստատել, զի երեւեսցի համապատուութիւն Երրորդութեանն, ըստ իւրաքանչիւր անձնաւորութեանցն բաժանման։ Եւ ոչ է սքանչելի, զի ահա և ինքն աստուածաբանն՝ զոր յաւետարանն զերեքսրբասացութիւնն սերոբէիցն՝ Որդւոյ ուսաք վերադրեալ, և 'ի գործս առաքելոցն՝ 'ի հրապարակախօսութեանն Պօղոսի՝ Հոգւոյն սրբոյ, և 'ի սոսկալի խորհուրդ առաջադրութեանն՝ Հօր, առ որ և սովոր եմք զաղօթսն առնել, սա 'ի ծննդեանն ճառի՝ Երրորդութեանն առնու։ Եւ այս ցուցանէ զհայրենի ձայնն ոչ հակառակ

գոլ մեր կարծեացս, որպէս զի Աստուծով զբանս կատարեսցուք։

"Որ սիրեացն զմեզ և ելոյծ զկապանըս մեղաց մերոց արեամբն իւրով. և արար զմեզ Թագաւորս և քահանայս Աստուծոյ Հօր իւրոյ. նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից"։ Զի սիրով խոնարհեցաւ 'ի փրկելն՝ և ոչ ըստ արժանեաց. ելոյծ զկապանս մեղաց խաչիւն, զի զմահն՝ զոր մեք պարտ էաք յանցուածով օրինացն, ինքն մեռաւ և ըզմեզ արձակեաց։ Եւ արար զմեզ Թագաւոր՝ յուսով ըստ անսուտ խոստմանն. զի եթէ համբերեմք՝ ընդ նմին և Թագաւորեմք։ Իսկ քահանայք եմք Աստուծոյ Հօր, ըստ որում և հանապազ մատուցանեմք նմա զբանաւոր պատարագ գոհութեան և օրհնութեան, հաւանեալք խրատուն, "Մատո Աստուծոյ պատարագ օրհնութեան" փոխանակ անբան զոհից. և "Գոհացօղք լինիջիք զԱստուծոյ և զՀօրէ նովաւ", յայտ է թէ Քրիստոսիւ։ Ապա վայելչական է նմա փառքս 'ի վախճան բանիս, որ եհան ըզմեզ յայս պատիւս, և արար զայսքան շնորհս։ Քանզի և ոչ այլ ինչ ունիմք տալ փոխարէն՝ բայց միայն զփառս։

"Ահաւասիկ գալոց է ընդ ամպս երկնից. և տեսցեն զնա ամենայն աչք, և որք խոցեցինն, և կոծեսցին 'ի վերայ նորա ամենայն ազգք երկրի, այո՝ ամէն"։ Զոր աստ տեսաք իբրև զգառն զենեալ, հայրական փառօքն դատաւոր ընդ ամպս եկեսցէ։ Իմանամք ամպ՝ զանմարմնոցն զօրութիւնս, որովք գալոցն է. իսկ փառք՝ զգալստեանն[1], զոր 'ի Թափօր լեառն առաջի աշակերտացն յայտնեաց, զոր տեսանեն յայնժամ ամենայն աչք՝ և որք խոցեցինն։ Եւ ազգ՝ որ յանհաւատութեան մնացին, կոծեսցին 'ի վերայ նորա ասէ, այսինքն՝ ցանկութեամբ[2] վայելչութեան փառաց նորա, յորմէ տեսանեն զինքեանս վրիպեալս։ "Այո՝ ամէն". այսինքն՝ ամենևին, զի այս է միտք ամենի եթէ 'ի Հելլենացի, և եթէ Ժբրայեցի լեզու. քանզի առ նոսա ամէնն՝ թարգմանի եղիցի, և աստ առնու զամէնս՝ հաստատութեան լրումն, զի ամենևին լինելոց է կրկնակի ահաւոր գալուստն։

"Ես եմ Ալֆա, և Օ[3], ասէ Տէր Ա-

1 Ա Օրին. Գալստեանն։
2 Բ Օրին. Ցնծութեամբ։
3 Բ Օրին. Յառելոս 'ի փա-
կագծի և զյայնպատս α և ω։

տուած, որ էն, և որ է, և որ գալոցն է՝ Տէր ամենակալ"։ Օ՝ Քրիստոսէ աստ յայտ առնէ գոլ Աստուած և իշխան ամենայնի, անսկիզբն՝ միանգամայն և անվախճան. զի որպէս Ալֆայն նախ քան զայլ տառսն, այսպէս նա՝ նախ քան զեղեալքս. այլ և ըստ Օի՝ ամենայն 'ի նոյն կատարի, որ էն, և է, և գալոց է հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց ամենակալ տէրութեամբն։

"Ես Յովհաննէս եղբայր ձեր, և հաւասարակից վշտաց և արքայութեան և համբերութեան որ 'ի Քրիստոս Յիսուս։ Եղէ ես 'ի կղզիս որ կոչի Պատմոս՝ վասն բանին Աստուծոյ և վկայութեանն Յիսուսի Քրիստոսի"։ Եղբայր ձեր ասէ, և հաւասարակից որ 'ի Քրիստոս նեղութեանցն, զի արժանահաւատ լինիցի՝ թէ "ընդ ձեզ եմ". և վասն կցորդ ձեզ լինելոյ 'ի Քրիստոս նեղութեամբն՝ եմ 'ի Պատմոս սակս սիրոյ. և իբր խորհրդակից եղբարց պատմեմ ձեզ՝ զոր աստ երևեցաւ ինձ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Վասն տեսլեան՝ [1] յորում ետես զՏէր 'ի մէջ ոսկի ճրագարանացն՝ զգեցեալ պճղնաւոր։

"Եւ եղև յիս Հոգի յաւուր կիւրակէի. և լուայ զկնի իմ ձայն մեծ իբրև զփողոյ՝ ասելով. ես եմ Ալֆա և Օ, առաջին և վերջին. զոր տեսանեսդ՝ գրեա 'ի գիրս, և տուր տանել առ եւթն եկեղեցիս, յԵփեսոս, և 'ի Զմիւռնիա, 'ի Պերգամոմն, և 'ի Թիւատիր, և 'ի Սարդիկեա, և 'ի Փիլադեղփն և 'ի Լաւոդիկեա"[2]։ Հոգւոյն սրբոյ եղէ ես ընդունակ և Հոգիական միտս ստացայ յաւուրս կիւրակէի, որ է պատուական վասն յարութեանն։ "Ձայն լուայ իբրև զփողոյ"։ Ա յսմ նմանեցուցանէ վասն մեծաձայնութեանն, որպէս զի ցուցցէ թէ զհանուր[3] վայրն ելից բարբառ նորա։ Այլ Ալֆայն և Օն յայտ առնէ դարձեալ զԱստուծոյ անսկիզբն և անվախճան զլինելն. և զի ինքն է սկիզբն ամենայնի և վախճան. "Ամենեքին մաշին, և դու նոյն ես" ասացաւ։

1 Ա Օրէն. պաչասէ Վասն տեսլեան։

2 Բ Օրէն. Ի սարդիս և 'ի փիլադեղփիա և 'ի լաւոդիկ։

3 Բ Օրէն. Զընդհանուր։

Հրաման առնու 'ի ձայնէն գրել զտեսիլն, և ըստ կարգի դնէ զեւթն եկեղեցեացն անուանս առ որս առաքէ, 'ի վերայ որոյ առնումք տեսութիւն ըզնախասացեալն. զի եւթն է թիւ աւուրց շաբաթուն, որով կարգի գայ ներկայ յաւիտեանս։ Նա և եւթն երկինս և եւթն հրեշտակաց դաս ասաց մեծն Իրենէոս գոլ։

"Եւ դարձայ ես տեսանել զձայնն որ խօսէր ընդ իս. և 'ի դառնալն իմ տեսի եւթն ճրագարան ոսկի. և 'ի մէջ ճրագարանացն նման որդւոյ մարդոյ, զգեցեալ պճղնաւոր, և գօտևորեալ առ ըստեամբքն գօտի ոսկեղէն"։ Յայտ առնէ ոչ զգալի գոլ ձայնս, զի դարձայ ասէ՝ տեսի, և ոչ թէ լուայ, որ մարմնականս ոչ է, այլ հոգևոր[1]. քանզի առ հոգի նոյն է՝ լսողութիւն և տեսութիւն։ "Եւ 'ի դառնալն տեսի եւթն ճրագարան ոսկի". զեկեղեցիսն գոլ զսոսա ըզմտաւ ածեմք։ "Եւ 'ի մէջ նոցա զՔրիստոս նման որդւոյ մարդոյ"։ Ոսկի են ճրագարանքն, զի մաքուր և անապական է 'ի նոսա[2] հաւատն։ Եւ զի նման ասէ

1 Բ Օրէն. Առ հոգւոյն է։ 2 Բ Օրէն. չէ Ի նոսա։

զՔրիստոս որդւոյ մարդոյ. քանզի ոչ սոսկ մարդ է, այլ և Աստուած համանգամայն. շրջի 'ի մէջ եկեղեցեացն, այսինքն բնակէ 'ի սիրտս նոցա. "Փորձեցէք ասէ՝ զանձինս ձեր, զի Քրիստոս 'ի ձեզ է" ։ Իսկ զգեցեալ է պճղնաւոր, զքահանայականն զգեստ, որպէս 'ի հնումն հրամայեցաւ. զի և նա քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի, և քահանայապետ միշտ մատուցանող զինքն պատարագ յեկեղեցիսն առաջի Հօր ։

Գօտի ոսկեղէն ունէր, ոչ ընդ մէջսն՝ որպէս այլք 'ի մարդկանէ ընդունողք հեշտութեան, քանզի յայսմանէ աստուածային մարմինն անկոխելի էր. այլ առ ստեամբքն 'ի սիրտն, որ նշանակէ զըստ արդարութեան բարկութիւնն՝ արգելեալ մարդասիրութեամբն առ 'ի ոչ հեղուլ 'ի մարդիկ ։ Նաև երկու ստինքն ընդ գօտեաւն՝ զտէրունական նոր ուխտն ճշմարտապէս ցուցանէ մարդասիրութեամբն պնդեալ, ուստի հաւատացեալք կերակրին ։ Ոսկի գօտին՝ զի պատուական է սէրն, մաքուր և առանց ժանգոյ ։

"Եւ գլուխ նորա և հեր իբրև զասր սպիտակ և որպէս զձիւն, և աչք նորա

իբրև զբոց հրոյ »։ Սպիտակ հերն ցու-
ցանէ, զի Թէպէտ և յետոյ երևեցաւ
առ մեզ գլուխ եկեղեցւոյ, այլ 'ի սկզբ-
բանէ էր նախ.քան զյաւիտեանս։ "Եւ
որպէս զձիւն ». զի որպէս հեր 'ի գլխոյ
աճէ, այսպէս և խորհուրդք 'ի մտաց.
արդ՝ ամենայն խորհուրդք Տեառն մերոյ
սուրբ են և պարզ և առանց շամանդաղի։
"Ըչքն իբրև զբոց հրոյ ». զի զսուրբս
լուսաւորէ, և զաղտեղիս բոցակիզէ։

"Եւ ոտք նորա նման պղնձի ծխելոյ 'ի
մէջ հնոցի հրաշէկ »։ Ոտսն և աստուա-
ծայինն Գրիգորիոս մարմնով տնօրէնու-
թեանն գոլ ասէ նշանակ, որով զմեր
փրկութիւն Աստուածութիւնն[1] եկեալ
ներգործեաց։ Այս ոտք է հիմն եկեղե-
ցեաց, որպէս ասէ առաքեալ։ Այլ նմա-
նեցուցանէ զնա պղնձի ծխելոյ՝ վասն ա-
նուշահոտութեանն որ 'ի նմանէ բու-
րէ ծխեալ կնդրուկն։ "Ի մէջ հնոցի հր-
աշէկ ». յայտ է թէ հողեղէնն մարմին 'ի
մէջ աստուածային հրեղէն բնութեանն
հրացեալ, ուստի բուրեաց անուշահո-
տութիւն յանշփոթ միաւորեցելոյն 'ի
հոտոտելիս մտաց հաւատացելոց։ Ոտք

[1] Բ Օրէն. Աստուածութեանն։

դարձեալ՝ իբրև զպղնձի ծխելի 'ի գլու-
խըն Քրիստոսի յօդեալ առաքեալքն, որք
'ի մէջ հրոյ փորձութեանցն փորձեցան
ըստ նմանութեան վարդապետին. և ըղ-
քարոզութիւնն քաղցրաբարբառ իբրև
զկնդրուկ 'ի փորձութիւնսն վերածխե-
ցին, որով զհեթանոսս 'ի հաւատս կո-
չեցին, ըստ այնմ. "Հոտ անոյշ եմք 'ի
մէջ փրկելոցն և 'ի մէջ կորուսելոցն"։

"Եւ ձայն նորա իբրև զձայն ջուրց բազ-
մաց"։ Իրաւապէս համանուն[1] Հոգւոյն
սրբոյ ձայն նորա անուանի, որ գետս յո-
րովայնէ հաւատացելոցն զկենդանի ջը-
րոցն բղխէ, և ընդ ամենայն երկիր հըռ-
չակի վայելչութեամբ։

"Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում
աստեղս եւթն. և 'ի բերանոյ նորա սուր
երկսայրի սրեալ ելանէր. և երեսք նո-
րա իբրև զարեգակն ճառագայթեալ ե-
րևէր"։ Աստեղս եւթն՝ զոր բարձեալ
ունէր, զեկեղեցեացն ասէ զհրեշտակս,
այսինքն՝ զվերակացու քահանայապետսն։
Սուր երկսայրի՝ ընդդէմ ամբարշտացն
զբացախօսութիւնն, որ որոշող է և հա-
տու քան զամենայն սուր երկսայրի, որ

[1] Բ Օրէն. Համանուն։

կտրէ և հատանէ և քննէ զներքին մեր մարդս։ "Եւ երեսք նորա իբրև զարեգակն"։ ոչ եթէ զգալի էր ճառագայթն, այլ իմանալի։ Արեգակն է արդարութեան Քրիստոս, ըստ որում ասաց Զաքարիաս, որ լուսաւորեաց 'ի մեղաց խաւարէ զաշխարհս, և ուսոյց զգիտութիւն բարեպաշտութեան։

"Իբրև տեսի զնա, անկայ առ ոտս նորա իբրև զմեռեալ. և եդ 'ի վերայ իմ զաջ իւր և ասէ. մի՛ երկնչիր, ես եմ սկիզբն և ես եմ վախճան. ես եմ կեանք և ես եմ որ մեռայ, և ահաւասիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից"։ Օ՛նոյն կիրս կրեն զառաքելոյս Յեսու Նաւեայ և Դանիէլ՝ սակս տկարութեան մարդկային բնութեանն, առ որ ասաց Քրիստոս, մի՛ երկնչիր. այսինքն՝ թէ ոչ 'ի սպանանել եկի զքեզ ես՝ որ անսկիզբն եմ և անվախճան, և եղէ վասն քո մեռեալ։

"Եւ ունիմ զփականս մահու և դըժոխոց"։ Այսինքն՝ իմ է իշխանութիւն զմարմին և զհոգի սպանանել։

"Գրեա զոր տեսանեսդ, որ էն, և որ հանդերձեալ է լինել յետ այնորիկ։ Օ՛խորհուրդ եւթն աստեղն զոր տեսեր յաջոյ իմ, և զեւթն ոսկի ճրագարանա-

ցըն. եւթն աստեղքն՝ եւթն եկեղեցեացն հրեշտակքն են, և եւթն աշտանակքն՝ եւթն եկեղեցիքն են ,, ։ Քանզի լոյս ճըշմարիտ Քրիստոս է, յորմէ ճրագարանքն՝ այսինքն եկեղեցիքն ընկալեալ զհոգին լուսաւորեցան, և 'ի գիշեր կենցաղոյս պայծառացան ։ Այլ ճրագարանք վայելչապէս եկեղեցիքն ասին, զի որք զլուսաւորիչն ունին զբանն կենաց, ըստ որում առաքեալքն 'ի նոսին հանգչին որպէս յաշտանակ ։ Բայց զի ոսկի է, եթէ՛ ճրագ և եթէ ճրագարան՝ վասն անաղտըն որ 'ի նոսա հաւատոցն իմանամք. սոցա զիւրաքանչիւրոցն հրեշտակս լուսաւորեաց իւրոյ գիտութեամբն՝ լուսով, և պահապանս 'ի վերայ կացոյց նոցա, որպէս և ասաց ինքն Տէրն ։ Իձեռս բարձեալ էր զնոսա, յայտ է՝ թէ կրելով նախախնամութեամբն ։ Զայս գլուխս և աստուածաբանն Գրիգորիոս զմտաւ ածեալ, և զաստեղսն՝ ապացոյց լուսաւորութեանն և մաքրութեանն անուանեաց ։

1 Ա Օրէն. Գիտութեանն ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Յայտարարութիւն գրելոցն առ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն ։

"Առ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ որ ունի զեւթըն աստեղս յաջ իւր, և շրջի 'ի մէջ եւթն աշտանակաց ոսկւոյ"։ Ի ձեռն հրեշտակին ընդ եկեղեցին խօսի, որպէս 'ի ձեռն դաստիարակին՝ առ դաստիարակեալն. նաև ընտանեցուցանէ ուսուցանողին զաշակերտեալսն, զի թէ սոքա զանձն օրինակ տան և զբանս 'ի խրատ, ջանան ամենայն իրօք նմանել վարդապետին։ Եւթն աստեղս դարձեալ զոր ասէ, զնոսին իմանամք զառաջնորդսն, զորս հրեշտակս կոչէ ըստ մարգարէին, զորս աջն Քրիստոսի և զօրութիւնն բարձեալ ունի, որ կրէ զծագս երկրի և 'ի մէջ եկեղեցեաց շրջի ընդ աշտանակացն, որպէս խոստացաւ. "Ես ընդ ձեզ եմ յաւիտեան"։ Այլ զեւթն թիւս և Եպիփան առնու երանելին ըստ Իրենէոսի առնլոյն. և եւթն երկին՝ բանաւոր կարգացն յայտ առնէ զարդուցն, յորոց չափ կարգի և ստորինս եկեղեցի, քանզի 'ի մէջ երկոցունց սոցա հաւասարապէս շրջի

Քրիստոս և իւրն գիտութիւն։

"Տեսի զգործս քո և զվաստակս և զհամբերութիւն. և զի ոչ կարես բառնալ զչարսն. և փորձեցեր՝ զի ասէին զանձինս առաքեալս գոլ՝ և ոչ էին. և գտար զնոսա սուտս, և բարձեր զնոսա։ Եւ համբերեցեր վասն անուան իմոյ, և աշխատեցար։ Այլ ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջին թողեր. յիշեա ուստի անկարն և ապաշաւեա, և զառաջին գործսն քո արա"։ Բստ երկուց կերպարանաց առ եկեղեցիս խօսի. մին այս՝ զի մեղադրէ, իսկ միւսն՝ զոր 'ի մէջ ածէ զուղղութիւնսն, ուստի և գովէ զաշխատանսն և զհամբերութիւն. և զի 'ի չարացն[1] հեռացան, որպէս խրատեցան 'ի թղթի անդ՝ ոչ ամենայն հոգւոյ հաւատալ։ Արդ՝ ասէ թէ յանուանէն ընկալար զնոսա որպէս զառաքեալս, սակայն յորժամ 'ի գործն հայեցար, գտար զնոսա սուտս՝ և հեռացար, զի զզազրութիւն Նիկոլայեցւոցն ունէին։ Բայց ածէ ընդ այսմ և զթիւրութիւնն[2], զի յառ ընկերն սիրոյ և 'ի բարերարութենէն թուլացան, և յԱստուծոյ մաքուր

1 Բ Օրէն. Ի չարեացն։ 2 Ա Օրէն. Զթերութիւնն։

սիրոյն՝ զոր ուսան յաւետարանչէս, 'ի ստորև քարշէին երկրաւոր զբաղմամբք, վասն որոյ ասէ՝ յիշեա։ Քանզի ափշին միտք մեր 'ի մոլորելն 'ի մեղս, ուստի զարթուցանէ յապաշխարութիւն և յառաջինն դառնալ յուղղութիւն։

"Ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի, և շարժեցից զաշտարակս քո 'ի տեղւոջէ իւրմէ, եթէ ոչ ապաշխարեսցես։ Արդ՝ զայս արա՝ զի ատեսցես զգործս Նիկոլայոսի զոր ես ատեամ"։ Շարժումն եկեղեցւոյ՝ է աստուածային շնորհացն մերկութիւնն, յետ որոյ 'ի սասանումն և 'ի տատանումն մատնի. զի չար հոգիքն լնուն զչարսն 'ի մարդկանէ, և 'ի վերայ նոցա յարուցանեն ներողութեամբն Աստուծոյ։ Գործ Նիկոլայեցեացն՝[1] ատեցեալն յԱստուծոյ զաղրագործութիւնն է՝ որպէս ծանեաք։

"Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ, զի՛նչ ասէ Հոգին առ եկեղեցիս. որ յաղթէ՝ տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց որ է 'ի մէջ դրախտին Աստուծոյ"։ Մարմնական ունկն ամենայն մարդոյ է, հոգևոր՝ հոգևորքն միայն ստացան, որպէս

1 Ա Օրէն. Նիկոլայեցւոցն։

և Յեսայի գրեցաւ, այսպիսի յաղթո-
ղացս որ առ դևս պատերազմին՝ տալ
խոստացաւ ուտել[1] 'ի փայտէն կենաց,
այսինքն՝ հաղորդել 'ի հանդերձեալ յա-
ւիտենին բարութեանցն։ Յայտնէ փայ-
տին անուամբ զյաւիտենական կենացն
ճաշակ. և է մեզ փայտ կենաց Քրիստոս,
որպէս Սողոմօն և սոյն առաքեալ այլ-
ուր. զի նա զիմաստութիւնն Աստուծոյ
անուանէ՝ փայտ կենաց, և սա զնոյն Ա-
ստուած և կեանք յաւիտենական՝ ճաշա-
կողաց կենարար իւր մարմնոյ. նմա ե-
թէ փափագեմք՝ ընդդէմ ախտից[2] զյաղ-
թութիւնն ուղղեմք, ուստի և ըստ եր-
կուցն հատուցումն է պատրաստեալ, շը-
նորհօք և մարդասիրութեամբ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում
Հօր փառք, միանգամայն և Հոգւոյն սըր-
բոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

1 Բ Օրէն. Չիք Ուտել։ 2 Բ Օրէն. Յաղթից։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Յայտարարութիւն առ Զմիւռնացւոց եկեղեցւոյն հրեշտակն ասացելոց ։

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

“Եւ առ հրեշտակ Զմիւռնացւոց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ անըսկիզբն և անկատարածն, որ եղև մեռեալ՝ և կենդանացաւ” ։ Անսկիզբն՝ որպէս Աստուած, և անկատարած՝ մշտընջենակից մարմնովն զոր 'ի մէնջ ընկալաւ, և 'ի ձեռն մեռելութեանն իւրոյ եբաց մեզ զկեանսն յաւիտենից ։

“Տեսի զգործս քո և զնեղութիւն և զաղքատութիւն, այլ աղքատութիւն քո մեծութիւն եղիցի” ։ Նեղութիւն և աղքատութիւն զմարմնականս ասէ, որում համբերեցեր ասէ վասն իմ, լըլկեալ[1] յիշխանաց անհաւատից ։ Իսկ մեծասցիս՝ այսինքն հոգւով, զի ունիս ըղդանձն թագուցեալ յագարակի սրտի քում ։

“Եւ զհայհոյութիւնն՝ որ ասէին զինքեանս հրէայս գոլ, և չէին ինչ, այլ ժո-

[1] Բ Օրէն. Ասէ, վասն իմ լկեցար ։

ղով սատանայի »։ Ա՛ռ հասարակ որպէս կարծեմ՝ զհայհոյիչսն ժողով սատանայի կոչէ. և զի ասէ՝ թէ ոչ են հրէայք, այսինքն ոչ 'ի ծածուկ հրէայք, որպէս առաքեալն պահանջէ. քանզի հրէայն խոստովանութիւն թարգմանի, յորմէ նոքա հեռի էին։

"Մ՛ի երկնչիր վասն որոյ կամիս չարչարել. ահա հանդերձեալ է բանսարկուն արկանել 'ի ձէնջ 'ի բանտ՝ զի փորձիցիք, և ունիք նեղութիւն աւուրս տասն. լեր հաւատարիմ մինչև 'ի մահ, և տաց քեզ զպսակն կենաց »։ Մ՛ի երկընչիր ասէ, ո՛վ դու, որ յաստուածամարտ հրէիցն գանելոց ես և փորձելոց նեղութեամբ. գիտեմ[1] զի զաւուրս տասըն է և ոչ ընդ երկար ժամանակ, վասն որոյ արհամարհելի է մահ, որ յետ սակաւու առիթ լինի կենաց և անթառամ պսակաց։

"Որ ունի ունկն լսելոյ՝ լուիցէ, զի՛նչ Հոգին ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ՝ ոչ անիրաւի յերկրորդ մահուանէն »։ Բստ կարգի զայս 'ի վերայ բերէ, զի ցուցցէ՝ թէ նո՛յն է որ զաւետարանն խօսե-

1 Ա Օրին. պակասէ գիտեմ։

ցաւ Տէրն՝ և զայս, քանզի զիւրն պա-
հէ[1] սովորութիւն և ասէ. "Զինչ ասէ
Հոգին". զի 'ի ձեռն Հոգւոյն խօսի Որ-
դի ընդ եկեղեցիս հաւատացելոց՝ զայս,
թէ որ յաղթէ սերմանց բանսարկուին,
թէպէտ և յայս առաջին մահուանէս
ճաշակէ, յերկրորդէն որ 'ի գեհենին է
տանջանք՝ ոչ անիրաւի և յաղթահարի։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յայտարարութիւն հրեշտակին որ 'ի Պերգամոյ
եկեղեցին։

"Եւ առ հրեշտակն որ 'ի Պերգա-
մոյ եկեղեցին՝ գրեա. այսպէս ասէ՝ որ
ունի զսուրն երկսայրի սրեալ։ Տեսի ըզ-
գործս քո, և զի բնակեալ ես ուր աթո-
ռըն է սատանայի"։ Կռոց էր քաղաքս
այս՝ ուր զայս խօսի, և որ 'ի նա հաւա-
տացեալք՝ համբերութեամբ զփորձու-
թիւնն ընդունէին։ Եւ սուր երկսայրի՝
զաւետարանականն ասէ բան, որ զսիր-
տըս հատանէ, և զհաւատացեալսն յան-
հաւատից որոշէ. և երկսայրի՝ զի զէն

[1] Բ Օրէն. Պահանջէ։

է արդարութեան, ոչ միայն զոր 'ի ձախ-
մէն, այլ և զոր ընդաջմէն է զամբարիշտ
խորհուրդս՝ կտրէ[1]։

"Եւ ունիս զանուն իմ, և ոչ ուրա-
ցար զհաւատս իմ յաւուր յորում Ան-
թիպաս վկայն իմ հաւատարիմ եղև. զի
վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւա-
տացեալ, որ սպանաւ 'ի ձէնջ որ կայք՝
ուր սատանայ է բնակեալ"։ Ընթիպաս
ոմն անուն մանուկ բարի՝ վկայ եղև 'ի
Պերգամայ, զորոյ ընթեռնումք զվկայ-
ութիւնն, առնու ապացոյց ամենեցուն
առաքինութեան զնորա վկայութիւնն,
և զմոլորելոցն անմտութիւն վերստին
յիշէ։

"Այլ ունիմ ասել առ քեզ սակաւ.
զի կայ առ քեզ վարդապետութիւնն Բա-
ղտամայ, որ ուսոյց զԲաղտակ դնել գայ-
թակղութիւն առաջի որդւոցն Իսրայէ-
լի, ուտել նոցա զոհեալ և պոռնկել.
այսպէս և դու ունիս զվարդապետու-
թիւնն Նիկոլայեցեաց՝ զոր ես ատեամ"։
Երկուս մարտս դժնդակս այս քաղաքս
ունէր, արտաքին և ներքին. մի՝ զվիշտսն
Հելլենացւոցն, և միւս՝ յայնցանէ որ առ

1 Բ Օրէն. Կոտորէ։

իւրեանսն էին սոսկ անուամբ հաւատացեալք, և կործանեալք 'ի զազրագործութիւն Նիկոլայեցեացն. և սերմ չար էր 'ի մէջ բարի ցորենոյն, վասն որոյ և զԲաղաամ՝ որ ուսոյց զԲաղակ՝[1] 'ի մէջ առնու օրինակ, որով յայտ առնէ զիմանալին Բաղաամ զբանսարկուն, որ զզգալի Բաղակս[2] զչար հերձուածողս ուսոյց գայթակղութիւն դնել հաւատացելոցն՝ զինքեանց պոռնկութիւն և ըղկռապաշտութիւն. զի այս էր նոցա մեղքն 'ի Բելբեգովր՝ զոր կատարեցին և շաղախեցան։

"Արդ՝ ապաշխարեա, ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի, և պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ"։ Գալ ասէ իւր՝ զվրէժխնդրութիւն պատուհասին, զոր սովոր է Աստուած ածել 'ի վերայ անապաշխար յանցուցելոցն։ Եւ սուր՝ զի բանն զոր խօսեցաւ, նա դատի զնոսա, թէ ոչ բժշկին ապաշխարութեամբ։

"Որ ունի ականջս՝ լուիցէ, զի՞նչ Հոգին ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ՝ տաց նմա ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ,

1 Բ Օրէն. Վասն որոյ և զբաղումն՝ որ ուսոյց զբաղակ։ Ա Օրէն. Վասն որոյ և զբաղակ 'ի մէջ առնու։

2 Ա Օրէն. Որ զգալի բաղակայ։

և տաց նմա զգիրն սրբութեան. և գը-
րեալ անուն նոր 'ի գիրն, զոր ոչ ոք գի-
տէ, բայց միայն որ առնուն»։ Մանա-
նայն թաքուցեալ՝ հացն կենաց է որ 'ի
յերկնից վասն մեր իջեալ, և կերակուր
եղև մտացն սիրոյ սրբոց[1]։ Դարձեալ և ս
օրինակաւ մանանայիս զհանդերձեալ
բարութիւնսն որ յերկինս է՝ ասէ, 'ի վե-
րինն Երուսաղէմ, որում՝ որք յաղթեն
բանսարկուին՝ արժանասցին։ Ասցեն,
ասէ, և գիր սրբութեան, այսինքն՝ զա-
ջակողմանն կոչումն. և անուն նոր՝ զաս-
տի կենացս տարժանմանն անգիտու-
թիւնն ասէ, և զայն կեանսն ժառան-
գել՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լը-
ւաւ, զհանդերձեալ բարութիւնն, ուր[2]
նոր անուն 'ի նոր կեանսն սուրբքն ժա-
ռանգեսցեն։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Յայտարարութիւն հրեշտակին Թիւատրոյ եկեղեցւոյն։

«Եւ առ հրեշտակն որ 'ի Թիւատրոյ
եկեղեցին՝ գրեա. այսպէս ասէ որդին

1 Ա Օրէն. պաշտոյ Սրբոց։ 2 Ա Օրէն. Որ։

Աստուծոյ, որոյ աչք իւր են իբրև ըզ-
բոց հրոյ, և ոտք նորա նման պղնձի ծը-
խելոյ"։ Ասացաք զհրակերպ աչսն՝ լու-
սաւորելոյ վասն զարդարս և կիզելոյ ըզ-
մեղաւորս։ "Եւ ոտքն պղնձի ծխելոյ",
նշանակէ զանդամոցն Քրիստոսի զանու-
շահոտութիւնն. այլ և զիմանալի անու-
շահոտութիւնն յանբաժանելի և յան-
շրփոթ աստուածամարդոյն 'ի մեզ բու-
րեալ, 'ի յոր[1] մարմինն հողեղէն հրացաւ
աստուածային խառնմամբն, զի մարդ-
կային[2] խորհրդոց եղիցի անշօշափելի։

"Տեսի զգործս քո, և զսէր, և զհա-
ւատ, և զպաշտօն քո համբերութեամբ.
զի բազում է վաստակ քո վերջինն քան
զառաջինն. այլ ասեմ առ քեզ բազում,
զի թողեր զկինն զՅեզաբէլ, որ ասէր
զինքն մարգարէ, և ուսուցանէր մոլո-
րութիւն՝ զծառայս իմ պոռնկել և ու-
տել զզոհեալ"։ Քանզի զհաւատս համ-
բերութեամբ և զվաստակս առաքինու-
թեան յօժարութեամբ ընդունիմ ասէ,
այլ իրաւամբք մեղադրեմ և ձեզ վասն
հերձուածոյն Նիկոլայ[3], զոր անուամբ

1 Բ Օրէն. Եւ յոր։
2 Բ Օրէ. Զի 'ի մարդկային։ կողեայ։
3 Բ Օրէն. Հերձոյն Նի-

Յեզաբելայ կոչէ վասն ամբարշտու-
թեանն և անառակութեանն. զի թոյլ
ետուք, ասէ, զծառայսն իմ զպարզամի-
տըս՝ գայթակղեցուցանել նոցա, և ձը-
դել 'ի զոհեալ և 'ի պոռնկութիւն՝ ուս-
տի պատուիրանն իմ հրաժարեցոյց։

"Եւ ետու նոցա ժամանակ ապաշ-
խարել զպոռնկութիւնն իւրեանց՝ և ոչ
ապաշխարեցին"։ Զչար հերձուածն ա-
սէ, ժամանակ ա՛ռ ապաշխարութեան[1],
և ոչ արկ 'ի կիր զգործս բարիս[2]։

"Ահաւասիկ ես արկանեմ զնա 'ի
հնոց, և զգործակիցս իւր ընդ որս շնա-
ցաւ՝ 'ի նեղութիւնս մեծամեծս, եթէ
ոչ ապաշխարեսցեն 'ի գործոց իւրեանց.
և զորդիս նոցա սպանից մահուամբ"։
Եթէ ոչ ապաշխարութեամբ դարձցին,
օրինակաւ հնոցի սպառնայ արկանել ըզ-
նոսա յախտ հիւանդութեան։ Գործա-
կից շնութեան ասէ՝ զորս յեկեղեցւոյն
գայթակղեցուցին, զորս թէ ներողու-
թիւնն ոչ ածէ յապաշխարութիւն, ըզ-
հոգւով մեռեալսն և մարմնով սպանա-
նէ[3], և զախտն կարճէ։

1 Ա Օր. Չար հերձուածոյն ասէ, ժամանակ ապաշխարութ։
2 Բ Օրէ. Եւ ոչ առ 'ի կիր։
3 Բ Օրէն. Ապականէ։

"Եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս. և տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։ Այլ ձեզ ասեմ որք 'ի Թիւատիր էք, և ոչ ունիք զվարդապետութիւնս զայս. որ ոչ ծանեայք զխորս սատանայի զոր խօսին. ոչ արկից զձեւք ծանրութիւն, այլ զոր ունիք պահեցէք մինչև ես դամ"։ Ճանաչեն եկեղեցիքն յորժամ զպատիժ հիւանդութեանն 'ի վերայ ձեր ածեմ, և զգուշանան 'ի չար հերձուածոյդ։ Զայս ասէ առ ստութեանն վարդապետս, իսկ առ պարզմտութեամբ պատրեալսն՝ ըղյաջորդ բանիս. "Այլ ձեզ ասեմ", թէ ոչ զչար խորհուրդսն ծանեայք, այլ տըգիտութեամբ խոտորեցայք. քանզի նոքա զինքեանս առաքեալս ասէին, և այնպէս պատրեցին, 'ի վերայ որոց, ասէ, ոչ բերել պատուհաս 'ի պարզամըտութեամբ յանցուցելոց, այլ միայն ճանաչել զչար ախտն և դառնալ յառաջին հաւատսն, և զնոյնն պահել մինչև 'ի յիւր գալուստն հանդերձեալ։

"Եւ որ յաղթէ և պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխանութիւն 'ի վերայ ազգաց. և հովուեսցէ

զնոսա գաւազանաւ երկաթեաւ, և իբ-
րև զանօթ բրտի փշրեսցէ զնոսա, որ-
պէս և ես ընկալայ 'ի Հօրէ իմմէ »։ Որ
գործակից լինի, ասէ, ինձ և արասցէ
զկամս իմ, տաց նմա իշխանութիւն 'ի
վերայ հինգ քաղաքաց՝ կամ տասն, որ-
պէս յաւետարանն սուրբ գրեալէ։ Եւ
կամ զորս՝ որպէս գաւազանաւ դատես-
ցէ և փշրեսցէ 'ի ձեռն նոցա՝ որք 'ի
Քրիստոս հաւատացին, ըստ այնմ. "Արք
նինուէացիք յարիցեն և դատեսցեն զազ-
գըս »։ Այլ զի ասէ. "Որպէս ես առի
'ի Հօրէ », ըստ մարդկութեան զառ-
նուլն իմաստուք։

"Եւ տաց նոցա զաստղն առաւօտուն.
որ ունի ականջս՝ լուիցէ, զի՛նչ Հոգին
ասէ առ եկեղեցիս »։ Աստղ առաւօտու՝
զառ 'ի յԵսայեայ ասացեալն նշանակէ.
"Զիա՞րդ անկաւ յերկնից արուսեակն՝ որ
ընդ առաւօտս ծագէր »։ Զսա տայ սըր-
բոցն փշրել առ ոտս՝ որպէս խոստա-
ցաւ, յորոց սիրտն արուսեակն լուսա-
բեր ծագեցաւ, որպէս գրեացն Պետ-
րոս։ Նաև մկրտիչն Յովհաննէս և Եղիա
Թեզբացի արուսեակ 'ի գրոց անուա-

նին, ոմն առաջին գալստեանն կարապետ Արեգականն արդարութեան եղեալ, և ոմն երկրորդին։ Եւ մի դու սքանչանար, թէ զամենևին ներհակսն համանունաբար գրոց կոչէ սովորութիւն. քանզի առիւծ 'ի Յուդայէ իմացաք զՔրիստոս, և 'ի յանդնդոց զհակառակ քրիստոսն աստուածային գիրն կոչէ։ Նոյնպէս ասաղ էր սատանայ նախքան զկործանելն, և այժմ սոսկ ունի զանունն միայն։ Իսկ արուսեակ է և Եղիա հանդերձեալ աւուրն, որ զխաւար կենցաղոյս իւրով ճառագայթիւքն ծածկէ, յորում երևի արդարութեան Արեգակնն, որ զմառախուղ մեղացն ցրուէ և զսուրբս իւր լուսաւորէ նշոյլիւքն իւր. և զմեզ լուսաւորեսցէ հաճութեամբ անսկիզբն Հօր և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յայտարարութիւն հրեշտակին որ 'ի Սարդիացւոց եկեղեցին ։

ՃԱՌ ԵՐՐՈՐԴ

"Եւ առ հրեշտակ Սարդիացւոց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ՝ որ ունի զեւթն հոգին Աստուծոյ և զեւթն աստեղս. տեսի զգործս քո, զի անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ ես"։ Եւթըն աստղ՝ զոր և հրեշտակս կոչէ, ըզվերակացուս եկեղեցեացն նախ իմացաք. և եւթն հոգի 'ի նոսին՝ զներգործութիւն կենարար Հոգւոյն։ Արդ՝ զհրեշտակսն ունի Քրիստոս տէրութեամբն, և զՀոգին համապատուութեամբն, զոր և բաշխէ նոցին հանապազ։ Դսրովէ զեկեղեցին, իբր թէ սոսկ ունի զանուն կենաց հաւատոյն, մեռեալ գոլով 'ի գործըս[1] բարեաց։

"Լեր արթուն, և հաստատեա այսուհետև՝ զի հանդերձեալ ես մեռանել. քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ"։ Քուն ասէ՝ ըզ-

[1] Բ Օրէն. Ի գործոց։

հեղգութիւնն, զոր խրատէ 'ի բաց հալածել, և ոչ մեռանել անհաւատութեամբն. քանզի ոչ գտի զքեզ որպէս հաւատով՝ նոյնպէս և գործով կատարեալ առաջի Աստուծոյ։

"Արդեւք յիշեա՝ թէ որպէս լուարն, և պահեա, և ապաշխարեա"։ Զաւանդութիւնն զոր յառաքելոցն լուար՝ պահեա, և զքո հեղգութիւնդ ապաշխարեա։

"Ապա թէ ոչ զուարթանաս՝ գամ որպէս գող, և ոչ ոք իմանայ զգալուստ իմ առ քեզ"։ Զիւրաքանչիւր զմահն ասէ, որ ամենեցուն անգիտելի է, պատահէ պատրաստելոցն հրաւիրակ 'ի հանգիստն, իսկ դանդաղելոցն որպէս գող յափշտակիչ 'ի տանջանս։

"Ունիս սակաւ մի զանուն Սարդիացւոցն, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց. և շրջին 'ի սպիտակս՝ որում արժանի եղեն"։ Որք նախ քան զնոսա սուրբքն առաքինութեամբ կացին, և զանստուեր լոյսն փոխեալ յաշխարհէ զգեցան, զսոցա շաւիղն և ըզնմանութիւնն սակաւ մի ունին աշակերտեալքն. քանզի լքան 'ի հարցն ճանապարհէ։

"Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպի-
տակս, և ոչ ջնջեսցի անուն նորա 'ի դըպ-
րութենէն կենաց. և խոստովանեցայց
զանուն նորա առաջի Հօր իմոյ և առաջի
հրեշտակաց։ Որ ունի ականջս՝ լուիցէ
զի՛նչ ասէ Հոգին առ եկեղեցիս"։ Որպէս
կանխաւ ասացաւ, որ յաղթէ իւրով ա-
ռաքինութեամբն՝ պայծառ ազգեաց լի-
ցի, ըստ որում ասաց Քրիստոս՝ որպէս
զարեգակն։ Եւ անուան գրելն՝ զյիշա-
տակել բարեգործին առաջի Աստուծոյ
ցուցանէ, որ և խոստովանեսցի 'ի Քրիս-
տոսէ առաջի Հօր և սուրբ զուարթնոցն,
ըստ որում և բարեյաղթ մարտիրոսքն։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Յայտարարութիւն ասացելոցն առ հրեշտակն Փիլադել-
փեաց եկեղեցւոյն։

"Եւ առ հրեշտակն Եղբայրասիրաց
եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ սուր-
բըն, Ճշմարիտն, որ ունի զփականս Դաւ-
թի. բանայ՝ և ոչ ոք է որ փակէ, և փա-
կէ՝ և ոչ ոք է որ բանայ"։ Փականս Դաւ-
թի՝ զարքայութիւնն իւր կոչէ, որում
թագաւորութիւնն Դաւթի ապացոյց

էր։ Իսկ փակէ և բանայ՝ զգիրս սաղմոսացն և զամենայն մարգարէութիւնսն, զոր փակեալ էր նախ քան զմարմնաւորութիւնն, և ոչ ոք կարաց կատարել և բանալ. եկն և եբաց և ելից զնոսին, և ոչ ոք կարէ զնոյն ունայնացուցանել։ Այլ ոմանք փոխանակ Դաւթի՝ փականս դժոխոց գրեցին. իմանամք և զայս 'ի ձեռն Քրիստոսի, քանզի մահու և կենաց իշխան է նա, սուրբն և բնութեամբ ճշմարիտն։

"Տեսի զգործս քո. ահա ետու առաջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի սակաւիկ ունիս զօրութիւն[1], և պահեցեր զբանս իմ և ոչ ուրացար զանուն իմ"։ Ի գրելոցս փոքր 'ի շատէ ուսաք մեծ գոլ զհաւատ այսր քաղաքի, առ որ ասէ. "Տեսի զգործս քո", այսինքն ընկալայ. որպէս և առ Մովսէս խօսի. "Տեսի զքեզ առաւել քան զամենեսին"։ Եւ դուռն առաջի նորա՝ զվարդապետական քարոզութիւնն ասէ բացեալ, զոր փակել փորձութիւնքն ոչ կարացին։ Նախադրութիւնս բաւական

[1] Երկու օրին. Սակաւազօ- կաւ է զօրութիւն քո։ րութիւն գու։ Մի օրին. Սա-

է, և ոչ պահանջեմ առաւել քան զզօ-
րութիւն։

"Ահաւասիկ տամ քեզ զժողովն սա-
տանայի, որք ասեն զինքեանս հրէայս գոլ՝
և ոչ են, այլ ստեն. արարից զնոսա՝ զի
եկեսցեն և երկիր պագցեն առաջի ոտից
քոց, և ծանիցեն զի ես սիրեցի զքեզ"։
Վարձ քեզ խոստովանութեան անուան
իմոյ, ասէ, տաց զհրէիցն դարձ և զա-
պաշխարութիւն, որք անկցին առ ոտս
քո, և խնդրեսցեն ունել 'ի ձեռն ձեր
զշնորհսն Քրիստոսի, որք և ծածուկ այ-
նուհետև և ոչ յայտնի հրէայք լինիցին։

"Զի պահեցեր զբան համբերու-
թեան իմոյ, և ես պահեցից զքեզ 'ի ժամ
փորձութեան քո, որ հանդերձեալ է գալ
յամենայն տիեզերս՝ փորձել զամենայն
բնակեալս յերեսս երկրի։ Ահա գամ
վաղվաղակի. կալ զոր ունիսդ՝ զի մի՛ ոք
առցէ զպսակ քո"։ Ժամանակ փորձու-
թեան ասէ զայն՝ որ փութով և վաղ-
վաղակի լինելոց էր յամբարիշտ թա-
գաւորացն[1] Հռովմայեցւոց ընդդէմ քր-
իստոնէից, յորմէ փրկել զնոսա խոս-
տանայ։ Եւ զի այսմ երաշխաւոր լինի,

[1] Ա. Օրէն. Թագաւորութեանցն։

յորդորէ անշարժ պահել զդանձս հաւատոցն, զի մի՛ կորուսցէ վասն կարճամտութեանն զհամբերութեան պսակն։

"Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս այլ մի՛ ևս ելցէ"։ Աստուած իւր՝ ըստ տնօրէնութեանն բանի կոչէ, իսկ տաճար նորա՝ եկեղեցի սուրբ ըստ Պօղոսի[1]։ Սիւն լինի աստ և հաստատիչ հաւատոցն, որ մրցելովն ընդ թշնամւոյն յաղթէ, և անշարժ պահէ զշինուած առաքելական հիմանն։

"Եւ գրեցից 'ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմի, որ իջանելոց է յերկնից Աստուծոյ իմոյ, և անուն նորա նոր"։ Ի սիրտ այսպիսի սեանս գրել խոստանայ զայս անուն ըսքանչելի, այսինքն՝ զի տայ նմա զհոգի հաւատոց և գիտութեան վերին քաղաքին և որ 'ի նմա վայելչութեան, որպէս զի կարող լիցի ասել. "Տէր սիրեցի ըզվայելչութիւն տան քո". և զի՝ տեսանէ զոր 'ի նմա գեղեցկութիւն՝ հոգւոյ աչաց հայեցողութեամբ։ Իսկ նոր անուա-

1 Բ Օրէն. Քրիստոսի։

է՝ ծանօթութիւն Քրիստոսի խորհրդոցն, զոր տպաւորէ հոգւովն 'ի սիրտս նոցա։ Աստուծոյ իմոյ՝ ինքն զՀօրէ ասէ. որոյ բանն վասն իմ մարմնացաւ, և միջնորդեաց ընդունել յանձն զանունն Աստուծոյ, ըստ այնմ. "Եթէ զիս գիտէիք, և զհայրն իմ գիտէիք, և այսուհետև գիտասջիք զնա"։ Իսկ վերինն Երուսաղէմ և նոր՝ զառ 'ի հրեշտակաց սկսեալ աստուածային գիտութիւնն, և մինչև 'ի մեզ իջեալ, ըստ այնմ. "Գիտել ձեզ զի՛նչ է մեծութիւն փառաց ժառանգութեան նորա 'ի սուրբս"։

"Որ ունի ականջս՝ լուիցէ զի՛նչ ասէ Հոգին առ եկեղեցիս"։ Օ՛այս ունկն և մեք աղօթեսցուք ունել։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Յայտարարութիւն ասացելոցն առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն։

"Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ ամէնն՝ վկայն հաւատարիմ և ճշմարիտ"։ Վ՛կայ է Քրիստոս հաւատարիմ իւրոյ Աստուածութեանն՝ զօրութեամբն զոր կատա-

քեաց յաշխարհի. և զի ասէր. "Ես եմ որ վկայեմ վասն իմ". և ճշմարիտ է, զի և վկայեաց[1] 'ի վերայ նորին որ առաքեացն ղնա Հայր։

"Սկիզբն սկզբան արարածոցս Աստուծոյ"։ Սկիզբն է արարածոցս անըսկիզբն, անսկիզբն Աստուած՝[2] Թագաւոր արարածոցս, և՛ սկիզբն և անսկիզբն ամենեցուն Աստուած՝ տիրէ։ Սկիզբն արարածոցս ասէ, զ'ի սկզբանէ արարիչն սոցա զանստացական բանն։

"Գիտեմ զգործս քո, զի ոչ ցուրտ ես և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել և կամ ջերմ. այլ դու գաղջ ես, և ոչ ցուրտ և ոչ ջերմ"։ Աստուածաբանն ասէ Գրիգորիոս, ստոյգ և իրաւացի է ցուրտն՝ 'ի կենաց հաւատոյն անճաշակն լինել, և յոյս կայ նորա առաջի՝ 'ի ձեռն մկրտութեանն հանդիպել նմին։ Իսկ ջերմն՝ որ էառ զկենդանութիւն 'ի ձեռն վերստին ծննդեանն՝ հաւատովն. յետ որոյ թէ անգիտանայ ըստ հաւատոցն և զգործն, ունայնացոյց զշնորհն, և ոչ ցուրտ է և ոչ ջերմ, այլ ծանրա-

1 Բ Օրէն. Վկայեացէ։ անսկիզբն Աստուած։
2 Ա Օրէն. Արարածոցս

տաղտուկ և գարշելի։ Արդ՝ ասէ առ
սա, թէ պարտ էր քեզ լինել հաւատա-
ցեալ կամ անհաւատ. իսկ այժմ ես ան-
ուամբ հաւատացեալ, և բարուք ան-
հաւատ ըստ չար գործոց. զի զգործս
հաւատոցն հաւասարել՝ ո՛չ անգիտանա-
լոյն է միջնորդ, իսկ ոչ հաւասարել՝ տը-
գիտութեան։ Օ՝ի որպէս օրինաւոր ա-
մուսնութիւնն և կուսութիւնն ոչ է ան-
գոսնելի, իսկ որ 'ի մէջ նոցա պոռնկու-
թիւնն՝ տաղտկալի. այսպէս և 'ի ագի-
տութեանն ցրտութիւն գոլով՝ և 'ի գի-
տութեանն ջերմութիւն, յուսովն բա-
րեյոյս կայ. իսկ ապա առեալ զշնորհս
գիտութեանն, և ո՛չ որպէս պարտն է
պաշտել, գաղճ և տաղտկալի։

"Հանդերձեալ ես փսխիլ 'ի բերա-
նոյ իմմէ. զի ասես՝ մեծատուն էի և մե-
ծացայ, և ոչ իմիք կարօտ եմ. և ոչ գի-
տես՝ եթէ դու ես ողորմելի և հեղգ,
և աղքատ, մերկ և կոյր"։ Անուանեաց
զնա գաղճ՝ որ 'ի փսխել շարժէ զըմպօղ-
սըն, այսպէս ասէ՝ և ես զքեզ փսխեմ
որպէս զգարշելի կերակուր 'ի ձեռն բա-
նի բերանոյ իմոյ 'ի յաւիտենական տան-
ջանսն, զի փշով աշխարհի մեծութեան
զսերմն աստուածային բանին հեղձու-

ցեր. և նոյնդ դու զհոգևորն քո անգի-
տանաս զաղքատութիւն, զիմանալի ա-
չիցդ զկուրութիւն, և 'ի քարի գործոց
զմերկութիւնն։

"Արդ ես խորհրդակից եղէց քեզ,
ա՛ռ գնեա յինէն ոսկի փորձեալ 'ի հրոյ՝
զի մեծասցիս. և հանդերձս սպիտակս՝
զի զգեցցիս, զի մի՛ երևեսցի անվայել-
չութիւն մերկութեան քո. և դիր դեզ
յաչս քո՝ զի տեսցես"։ Թէ մեծանալ
կամիս ասէ, զիմս գնեա ոսկի՝ երկովք
առաքինութեան գնոց, որ է անապա-
կան աստուածային սիրոյն ջերմութիւն։
Իսկ փորձեալ ասէ զնա հրով, զի յետ ա-
մենայն ջերմութեան խորհրդոց յաղթե-
լոյ, ապա այն 'ի մեզ պայծառանայ։ Եւ
զգեցցիս զպատմուճան սրբութեան ըզ-
գերապայծառն, զոր հեշտախտութեան
կամօք մերկացար։ Եւ դեզ աչաց՝ զան-
ընչութիւնն ստացիր, քանզի կաշառք՝
կուրացուցանէ զաչս տեսողաց իւրոց,
և սա՝ անստացուածութիւնս լուսաւո-
րէ զաչս ատեցողացն զարծաթ։

"Եւ զոր սիրեմ՝ յանդիմանեմ և խը-
րատեմ. Նախանձեա այժմ և ապաշխա-

բեա ։ Բա՛բէ մարդասիրութեանն, թէ որպիսի՛ բարերարութեամբ զյանդիմանութիւնս ձայնէ ։

"Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում և բանայցէ զդրունսն, մտից առ նա և ընթրիս արարից առ նա, և նա ընդ իս"։ Անբռնադատելի է, ասէ, իմ գալուստ, զդրունս սրտին հարկանեմ օր ըստ օրէ ստգտանօք մտացն խղճի. եթէ ոք ոչ անփոյթ առնէ, այլ 'ի բաց առնու 'ի նըմանէ զծանրութիւն ախտիցն, մտանեմ առ նա և ուրախակից լինիմ։ Իսկ ընթրիս և կերակուր վարկանիմ զայն՝ որով ինքն կերակրէ զսովեալսն 'ի լսելոյ զբանն Աստուծոյ. և սա կերակրէ զՏէրն աղօթիւքն և գոհութեամբն, 'ի մատուցանելն Աստուծոյ պատարագ զօրհնութիւնն ։

"Որ յաղթէ՝ տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս ես յաղթեցի և նըստայ յաթոռ Հօր իմոյ։ Որ ունի ականջս՝ լուիցէ, զի՞նչ ասէ Հոգին առ եկեղեցիս"։ Աթոռ և թագաւորութիւն՝ ըզհանդերձեալ անճառ հանգիստն իմանամք, յոր վայելեն սուրբքն ընդ Քրիստոսի, որպէս ասէ. "Եթէ համբերեմք՝

ընդ նմին և թագաւորեսցուք»։ Իսկ իւր յաղթել և նստել ընդ Հօր՝ ըստ մարդանալոյն բանի է. զի ոչ եթէ ջանիւ առաքինութեան զթագաւորութիւնն Աստուծոյ Բանն ստացաւ, որ ունի զայս ինքնութեամբ և մշտնջենաւոր. զի թէ ոչ էր այսպէս, ոչ և այլոց կարող էր տալ. սակայն ըստ աստուածաբանիս որդւոյ Որոտման, "Ի լրութենէ նորա մեք ամենեքին առաք շնորհս". ըստ որում՝ և առեալ առաքեալքն սուրբք՝ որ նըստին յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգսն Իսրայէլի։ Այլ զի վասն մեր մարդ եղև Աստուած, և զամենայն զմերս բաց 'ի մեղաց կրեաց, մերոյ մարմնոյս հակառակամարտին յաղթեաց մարմնովն, և նովաւ ել յաթոռն Հօր բազմեցաւ. որ և ամենեցուն մեզ անկառք յերկինս ճանապարհ եղև, մտանել 'ի ներքին կողմն վարագուրին ընդ կարապետին մերոյ Յիսուսի։

Զայս յոյս ունելով 'ի մտի, որք խըրախուսեցաք 'ի զօրագլուխն, քաջալերեսցուք յաղթել աշխարհի՝ բարեկարգութեան վարուցն փութով, հաւանեալք Սողոմօնի՝ որ ասէ. "Յամենայն ժամ եղիցի հանդերձ քո սպիտակ", այս

ինքն՝ ոչ չար գործովք աղտեղացուցա-
նել զպատմուճանն հոգւոյ զմարմին. զի
զանձինս պճնեալ հարսնացուսցուք մե-
ծի թագաւորին, թերևս և միաւորու-
թեանն լիցուք արժանի 'ի յաւիտենա-
կան բարեացն օթևանս 'ի Քրիստոս Ա-
տուած մեր. ընդ որում Հօր փառք, մի-
անգամայն և Հոգւոյն սրբոյ, այժմ և
միշտ և յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Վասն երևելոյ նմա դրանն երկնից, և քսան և չորս ե-
րիցանցն, և որ 'ի կարգին է:

ՃԱՌ ՉՈՐՐՈՐԴ

"Եւ յետ այսորիկ տեսի, և ահա դը-
րունք երկնից բացեալ էին. և ձայն փո-
ղոյն զոր լուայ զառաջինն՝ խօսէր ընդ իս
և ասէր. ել այսր և ցուցից քեզ զի՛նչ
լինելոց է առ յապայն": Բանալ դրանցն՝
զծածուկ խորհուրդ Հոգւոյն նշանակէ
յայտնեալ, և փողն՝ զի յայտնեալն ոչ է
աղօտ՝ այլ սաստիկ: Իսկ զի ասէ. ել այ-
սր, 'ի յերկրաւորացս ամենևին 'ի բաց
կալ, և յերկինս լինել զմիտս լսողին:

"Եւ վաղվաղակի եղէ ես հոգւով. և ահա աթոռ անդ 'ի յերկինս, և յաթոռն նստեալ նմանութիւն տեսութեան ականց յասպոյ և սարդիոնի. և քահանայք շուրջ զաթոռովն նմանք տեսլեան զմրխտի"։ Ձայնն ասէ յորժամ լուայ, վաղվաղակի հոգւովն տպաւորեցաւ յիշխանական մտացս ներգործութիւն՝ աթոռոյն տեսակ, որ յայտ առնէ Աստուծոյ 'ի սուրբս զհանգչելն։ Իսկ զի տեսիլս առ Հայր ակնարկէ, մարմնաւոր ձև ոչ առնու 'ի վերայ նորա,[1] որպէս 'ի սկզբանն զՈրդւոյ զտեսակն՝ եցոյց որդւոյ մարդոյ նման, այլ ըստ պատուական քարանցն զնա նկարագրէ։ Եւ է որակութիւն տեսակութեանն յասպոյ, կանաչ՝[2] միշտ կենդանութեանն Աստուծոյ նշանակ, որ և կերակրոյն է նշանակ[3] իմանալւոյն և զգալւոյ՝ ըստ ամենայն սերմանց կանաչութեան։ Ասեն և զսարդիոն ըզգեցողսն ահաւոր լինել 'ի վերայ գազանաց, որպէս և Աստուած 'ի վերայ յանցաւորաց։ Ա յս քարս, որպէս գրէ մեծն Եպիփանոս, բժշկութեան առիթ է

1 Ա Օրէն. Ձևով ոչ առնու 'ի վերայ, որպէս։

2 Բ Օրէն. Տեսութեանն...

կանաչ գոյնն։ Այլ օրէ. Կանաչանալն։

3 Բ Օրէն. Պարգևիչ։

այնոցիկ որք 'ի սրոյ խոցոտին, զի և Աստուած՝ ամենեցուն որք յիմանալի թըշնամւոյն նետից վիրաւորին։ Եւ զքահանայսն զմրխտեայս որ շուրջ զնովաւ՝ զբազմութիւն հրեշտակական դասուցն ծանեաք. և 'ի զմրխտոյն տեսակ՝ որ է կանաչ, նմանին վասն յաւէտ կենդանութեանն։ Եւ զի ոչ կանաչ են նոքա որպէս յասպիս[1], այլ որպէս զմրուխտ. զի այլ է բնութիւնն Աստուծոյ և այլ նորին պաշտօնեայ հոգւոցն, թէպէտ և զմիշտ կենդանութիւնն ունին և սոքա ընդ Աստուծոյ։

"Եւ շուրջ զաթոռովն՝ աթոռք քըսան և չորք, և 'ի վերայ աթոռոցն նըստէին երիցունք քսան և չորք, զգեցեալ հանդերձս սպիտակս, և 'ի գլուխս իւրեանց պսակս ոսկեղէնս"։ Սոքա 'ի մարդկայինս ազգէ երևին գոլ՝ և ոչ յանմարմնոցն, քանզի զնոսա ասաց նման զմրխտի, և ոչ զգեցեալ զնոյն, այսինքն՝ զի բնաւորական ունին զփառս և զանմահութիւն։ Իսկ մարդիկ զոր կորուսին՝ վերըստին զգեցան 'ի վերայ մահկանացու

1 Ամենայն օրինակք ունին ցըս, այսինքն յասպիս։ Սարդիոն։ Մի օրի. Ի լուսան

բնութեանս զանմահութիւնն, որպէս ասէ առաքեալն. "Զայն 'ի վերայ այսր կամիմ զգենուլ". վասն այսորիկ զսոսա տեսանէ, զոր ոչ ունին[1] բնաւորապէս՝ շընորհօք զգեցեալ, այսինքն հանդերձս սպիտակս, որ է մաքրութեան և անաղտութեան նշանակ։ Բայց թէ ոյք էին սոքա 'ի մարդկանէ, տիրապէս անկար եմք հաստատել. այլ նախ ասեմ՝ ոչ ըզքսան և չորս թիւդ սահման և կէտ դընել ասա, այլ որպէս չորիւք կենդանեօքն զբոլոր զօրս երկնից ակնարկեաց, այսպէս և այս. զի սովորութիւն է գըրոց ամենայն ուրեք փոքրագոյն թուովն զբազումն ակնարկել։ Արդ՝ որպէս երկոտասան բիւր հրեշտակքն, և եւթանասնիցս եւթն թողուլն, և ամլոյն եւթըն ծնանելն՝ ոչ է վճիռ, այսպէս և այս թիւս խորհրդաբար եդաւ՝ և ոչ սահման, կամ ըստ թուոյ աւուրցն ժամուց՝ յորում սոքա վաստակեցին, կամ ըստ համարոյ քսան և չորս տառից[2], որովք 'ի գիտութիւն ճշմարտութեանն իմաստնացան։ Արդ՝ թուովդ զբոլոր դասս

1 Բ Օրին. Ունէին։

2 Զքսան և չորս տառս յունական ալփաբետացն՝ որք 'ի սոյն թիւ բովանդակին, իմանամք ասատէն։

սրբոցն ակնարկէ, և քսան և չորիւքն
զնախամեծարս 'ի նոցանէ, որք աստի-
ճանաւ վեհագոյն են քան զվեհագոյնսն,
ասել զայս՝ զԱբէլ և զորս նախ քան ըզ-
մեզ. կամ զի երկոտասան ցեղապետք է-
ին հնոյն՝ և երկոտասան առաքեալք 'ի
նորումս, զնահապետսն դնելով 'ի թիւս
նոցա՝ բովանդակէ զամենայն ազգսն։

Պսակն ոսկեղէն 'ի գլուխսն, փոխա-
րէնն է յաղթութեանն՝ որ ընդդէմ անե-
րևոյթ թշնամւոյն ուղղեցին արիաբար։

"Եւ յաթոռոյ անտի ելանէին փայ-
լատակմունք, և ձայնք, և որոտմունք"։
Այսու զահեղ և զզարհուրելի՝ Աստու-
ծոյ 'ի վերայ անարժանիցն զերկայնա-
մտելն ցուցանէ, զի անչափ[1] ունի ուժ-
գնութիւն և նահանջէ մարդասիրու-
թեամբն։ Իսկ որոց 'ի բաց է մտաց ուն-
կլն և արթուն աչքն, տեսանեն զայս
և լսեն, և երկիւղիւն դաստիարակեալ
զինքեանս՝ փրկին։

"Եւ եւթն զամբարք հրոյ բորբո-
քելոյ առաջի աթոռոյն, որ են եւթն
հոգիքն Աստուծոյ։ Եւ առաջի աթոռոյն
ծով ապակեղէն 'ի նմանութիւն սպիտա-

[1] Ամենայն օրինակ ունին Այնչափ։

կութեան սառին ». Օ հոգիսն՝ որպէս
ասէ Իրենէոս, զեւթն հրեշտակսն որք
զայլսն ունին՝ պարտ է զմտաւ ածել,
կամ զներգործութիւն կենարար Հո-
գւոյն՝ զոր Եսայի յիշէ. ոչ այլազգ ինձ
թուի։ Իսկ ապակեայ ծովն՝ բազմութիւն
է սուրբ զօրութեանցն, այսինքն՝ զի մա-
քուր են և անաղտ ըստ նմանութեան
սառին. այսու և զմեր յերկինս կենացն
ուսանիմք զանաղտութիւն։ Այս ծովս
առաջի կայր աթոռոյն, և եւթն բոր-
բոքեալ հոգւոյն. զի 'ի հրեշտակական
դասակարգութիւնսն միշտ լուսափայ-
լութիւն գիտութեանն Հոգւովն սրբով
իջանէ յԱստուծոյ, որպէս գրէ աստուա-
ծաբանն Գրիգորիոս։ Այլ զի ծով զնոսա
անուանէ՝ վասն բնաւորական մշտաբուխ
գիտութեանն, զորս գետն Աստուծոյ լը-
ցեալ ջուրբ՝ կերակրէ ըստ սաղմոսին։
Իսկ զի սառնատեսակ ասաց 'ի ներքոյ
գոլ ապակեայ ծովուն, միտ դնել պարտ
է ասացելոցն, "Ձգեցեր զերկինս որպէս
խորան". զի գոյութիւն ինչ աստուա-
ծային վայր է երկնաւոր զօրութեանցն
էութեանց։ Եւ սառնատեսակն՝ յայտ
առնէ զպայծառութիւն նոցա, միանգա-
մայն և զճառագայթել։ Այս թէ որ քան

զայս նուազ[1] միտս տեսանէ, ծիծաղելի է։

"Եւ 'ի մէջ աթոռոյն և շուրջ զաթոռովն չորք կենդանիք լի աչօք յետոյ և առաջոյ"։ Այսու նշանակէ յայտնապէս աթոռ գոլ Աստուծոյ զթագաւորութիւնն և զփառսն, որում սերովբէքն տեսանին անընդմիջաբար հաղորդք, որպէս գրէ մեծն Դիոնեսիոս։ Այլ զի՝ լի էին աչօք, քանզի զաստուածային իմաստութեանն ճառագայթս առատապէս տեսանեն քան զամենայն դասսն, յինքեանըս ընդունին և այլոցն բաշխեն, վասն այսորիկ ասաց՝ առաջոյ և յետոյ։

"Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, և երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ կենդանին ունէր երես մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ թռուցելոյ"։ Ոչ եթէ չորս կենդանի միայն կային 'ի պաշտօն Աստուծոյ, և կամ նոքա այսպիսի անասնեղէն ձևով, այլ այսու զբնական որակութիւն զօրութեան ամենայն երկնաւորացն[2] ցուցանէ, որով ունակացեալք են՝ բան ունելով և ցասումն և ցանկութիւն,

1 Բ Օրէն. Նուաստ։ զօրացն ցուցանէ։
2 Բ Օրէն. Երկնաւոր

և 'ի վերայ նոցին զարդարութիւնն վերաթևեալ կառավար ըստ արծուոյն թըռուցելոյ։

Դարձեալ՝ չորք կենդանիքն 'ի ներքոյ աթոռոյն, զերկնի և զերկրի և զծովու տէրութիւնն, կամ զչորս աւետարանն՝ որպէս այլք գեղեցկապէս իմաստասիրեցին։ Արծիւ՝[1] որ ըստ Յովհաննու աւետարանն, ըստ որում ասէ Իրենէոս, որ զնախ քան զյաւիտեանս զթագաւորութիւնն մեզ աւետարանեաց, 'ի ըսկըզբանէ զբանն քարոզելով։ Եւ զուարակն՝ որ իւրովն բաւականանայ աշխատութեամբ, արդարապէս աւետարանին Ղուկայ լինի մեզ ապացոյց, իբր օրինաւոր և քահանայական Քրիստոսի ազգատոհմին պատմող։ Այլ առիւծն՝ որ զզօրեղութիւն վկայեցաւ ունել 'ի գազանըս, ըստ Մարկոսի զաւետարանն նշանակէ 'ի մարգարէական հոգւոյն զսկիզբն արարեալ[2]։ Եւ մարդն՝ ըստ Մատթէի աւետարանն, իբրև զբնութեամբ և օրինօք քարոզող Քրիստոսի ծննդեանն։ Հաւասար այսոցիկ և 'ի տնօրէնութիւնն

1 Ա Օրին. Առիւծն։ որ զերագութի̅ն... 'ի թըռ-
2 Ա Օրին. Այլ արծիւն չունս... սկզբնաւորեալ։

Քրիստոսի տեսանի, ըստ առիւծուն՝ որ-
պէս թագաւոր, ըստ զուարակին՝ որպէս
քահանայ՝ եւ և պատարագ[1], ըստ մար-
դոյն՝ որպէս վասն մեր այրացեալ, իսկ
ըստ արծուոյն՝ իբրև զպարգևիչ կենա-
րար Հոգւոյն ամենեցուն մեզ 'ի վե-
րուստ։

"Եւ չորից կենդանեացն էին միոյ
միոյ 'ի նոցանէ վեց թևք շուրջ լցեալ
աչօք"։ Օ՝ մարգարէին տեսիլն տեսանէ,
զի ծանիցուք եթէ նոյն հոգի է[2] 'ի մար-
գարէսն և յառաքեալսն։ Այլ զթևոցս
խորհուրդ՝ մեծն ուսուցանէ մեզ Դիո-
նեսիոս, վասն բարձրագունին և խորա-
գունին Աստուծոյ անհասութեանն 'ի նո-
ցանէ ծածկութեանն ծածկել զերեսս և
զոտս. և միջովքն՝ հասանել 'ի նա պար-
կեշտութեամբ, զի ըստ չափոյ կշռու-
թեան զաստուածային գիտութեանն ա-
ռին զօրութիւն տանել, և ոչ յորքանն
հասանել։

"Եւ ոչ հանգչէին ոչ զտիւ և ոչ ըզ-
գիշեր յասելոյ. սուրբ, սուրբ, սուրբ
տէր Աստուած ամենակալ, որ էն, և ես,

1 Բ Օրին. Որպէս պատա-
րագ, եւ և քահանայ։

2 Բ Օրին. Էր։

և որ գալոց ես »։ Հանգիստ է աստուա-
ծայնոց և սուրբ զօրութեանցն յօրհնա-
բանութենէ[1] ոչ դադարելն, որպէս հան-
գիստ է ծառայի ընդ քաղցր տեառն խօ-
սելն։ Եւ երեքսրբենիւն՝ զերեքանձ-
նաւորութիւնն բերեն զԱստուածու-
թեանն. և որ էնն և է և գալոց է, ըզ-
սուրբ Երրորդութեանն յայտ առնէ ըզ-
գոյութիւն՝[2] որպէս վերագոյն ցուցաք.
կամ զտնօրէնութիւն Բանին՝ որ էր յա-
ռաջ, և է այժմ մարմնով, և գալոց է 'ի
դատել, ոչ նուազեալ և կամ յաւելեալ
ըստ առաքելոյ՝ "Յիսուս Քրիստոս երէկ
և այսօր, նոյն և յաւիտեան"[3]։

"Եւ յորժամ տային կենդանիքն ըզ-
պատիւ և զգոհութիւն նստելոյն 'ի վե-
րայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս
յաւիտենից"։ Պատիւ ոչ թէ կարէ ոք
տալ Աստուծոյ՝ որ ծայր է փառաց, այլ
պատիւ է նմա գոհութիւնն և պաշտօնն
ինքնիշխան կամօք 'ի բանականացս, որ-
պէս և յոչ առնելն զայս՝ անարգանս իւր
համարեցաւ. "Նոքա զիս անարգեցին"
ասէ։ Արդ՝ տան զփառաւորութիւնս Ա-

1 Բ Օրի. Յօրհնաբանելոյ։ սկսեալ կամ զտնօրէնութիւն
2 Բ Օրի. Զպայծառութիւն մինչև յաւիտեան, պակասէ
3 Վերջին պարբերութիւնս 'ի Բ օրինակն։

տուծոյ անմարմինք, տան և մարմնաւորք՝ ձայնակից եղեալ նոցա իմացականս մը-տօք, ըստ այնմ. "Շուրջ եղէց և մատու-ցից 'ի խորանի նորա պատարագ օրհ-նութեան"։

"Եւ դնելով զպսակս իւրեանց ա-ռաջի աթոռոյն՝ ասէին. արժան է քեզ տէր Աստուած առնուլ զփառս և զպա-տիւ, զի դու ստացար զամենայն. և 'ի քո կամելդ ստեղծան, և կան հաստա-տուն"։ Դու, ասէ, տէ՛ր՝ պսակացն և յաղթութեանն պատճառ և պարգևիչ եղեր, և քեզ ամենայն քո արարածքս դոհաբանութիւն պարտին։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վասն գրոցն կնքելոյ, զոր ոչ ոք բանալ յեղականացս բնութենէ կարաց։

"Եւ տեսի յաջոյ ձեռինն որ նստէր յաթոռն, զի ունէր գիրք՝ գրեալ ներ-քոյ և արտաքոյ, կնքեալ եւթն կնքով"։ Գիրք՝ զամենիմաստ յիշողութիւնն Ա-ստուծոյ կարծեմք, յորում ամենեքեան ըստ Դաւթի գրին, և զաստուածային իրաւանցն զխորս։ Արդ՝ 'ի ձեռն սորա

յաջ, այսինքն 'ի ներքոյ զօրութեան և գիտութեանն՝ ամենայն խորհուրդ Աստուածութեանն փակեալ էր 'ի գիրս մարգարէիցն, զի ոչ ինչ գործէ տէր՝ զոր ոչ յայտնէ ծառայից իւրոց մարգարէից. և զոր առ նոսա ազդեաց՝[1] կնքեաց, որպէս ասաց առ Դանիէլ՝ հրեշտակն. "Կնքեա զտեսիլդ մինչև 'ի ժամանակ իւր". և բացաւ այս 'ի ձեռն բանին Աստուծոյ, որպէս հանդերձեալ բանն ցուցանէ: Իսկ զի արտաքոյ էր գրեալ գիրն և ներքոյ, զմարգարէիցն ասէ զճառս, որ ըստ արտաքին բանիցն[2] պարզ են, և ըստ ներքին խորհրդոյ՝ կնքեալ և դժուարահասանելի: Այլ զի եւթն են կնիքն, ըստ ներկայ յաւիտենիս՝ անհաս, զի ոչ ոք կարաց զխորս Աստուծոյ հոգւոյն յանդիման կացուցանել, բայց միայն Քրիստոս՝ որ ելից և կատարեաց, ըստ որում վըկայեաց՝ պարտ էր լնուլ այսպէս գրելոցն վասն իմ. և թէ որպէս ելից, որքանն 'ի մէնջ անհաս[3] է:

"Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր, զի քարոզէր ձայնիւ մեծաւ և ասէր. ո՛վ

1 Բ Օրէն. Ասաց:
2 Բ Օրէն. Բառիցն:
3 Բ Օրէն. Անյայտ է:

է արժանի բանալ զգիրքդ և լուծանել
զկնիք դորա. և ոչ ոք կարէր ո՛չ յերկինս
և ոչ յերկրի, և ոչ 'ի ներքոյ երկրի՝ բա-
նալ զգիրքն, զի ոչ տեսին զնա"։ Յայտ
առնէ՝ ոչ հրեշտակաց և ոչ մարդկան որ
'ի մարմնի են, և ոչ որոց ելին 'ի մար-
մնոյս սուրբք՝ 'ի ստուգութիւն աստուա-
ծային բանիցն գիտութեան հասանել,
բայց միայն գառն Աստուծոյ, 'ի վերայ
որոյ մարգարէացան կանխաւ, որ գա-
լըստեամբն իւրով ելոյծ զանճառսն։

"Եւ ողբային բազումք, զի ոչ ոք գը-
տաւ արժանի բանալ զգիրքն և ընթեռ-
նուլ զնա, կամ տեսանել զնա"։ Ողբայ-
ին ամենեքեան որք 'ի տգիտութիւն կոր-
ծանեցան՝ 'ի մաքրագոյն և հրեշտակա-
կան դասուցն կարգաց մարդիկ, ըստ
այնմ. "Վա՛յ ինձ՝ զի ընդերկար եղև պան-
դըխտութիւն իմ". և դարձեալ, "Վա՛յ
ինձ, զի կորեաւ յերկրէ այն՝ որ իմանայ"։

"Եւ մի ոմն յերիցանցն ասէ. մի՛ ող-
բայք, ահաւասիկ յաղթեաց առիւծն
յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի,
բանալ զգիրն և զեւթն կնիքսն նորա"։
Զի և հրեշտակաց ասէ՝ գիրն այն ան-
հասանելի էր, բայց և ոչ Աստուծոյ՝ որ
վասն մեր մարդացաւ, որ արարիչ էր

Դաւթի ըստ աստուածութեանն՝ և յարմատոյ նորին ըստ մարդկութեանն ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վասն կնքեալ գառինն՝ և որ 'ի կարգին ։

"Եւ 'ի մէջ աթոռոյն և 'ի մէջ չորից կենդանեաց, և 'ի մէջ երիցանցն դառն կայր զենեալ, որոյ էր եւթն եղջիւրս և եւթն աչս, որք են եւթն հոգիք Աստուծոյ՝ առաքեալ ընդ ամենայն երկիր"։ Եւթն աչք և եւթն եղջիւրք գառինն՝ յայտ առնէ զՔրիստոսի եւթն հոգիսն, զորս յիշեն Եսայիաս և Զաքարիաս մարգարէքն ։ Եւ զի զենեալ էր, յայտ առնէ՝ թէ յետ զենմանն զկեանս ունէր, յորում ցուցանի չարչարանացն ապացոյց. քանզի զենեալ էր ճշմարտապէս որ 'ի մեռելոցն յարեաւ, և ունէր զնշան խոցուածոցն ։

"Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստէր 'ի վերայ աթոռոյն ։ Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկանէին առաջի գառինն. և ունէին իւրաքանչիւր քընար՝ և բուրվառ ոսկի լի խնկով, որ է

աղօթք սրբոցն»։ Քնարն՝ զբարիոք պատ-
կանումն յայտ առնէ քաղցրաձայն երգոց
փառաբանութեանն Աստուծոյ. և խուն-
կըն՝ զանուշահոտ պատարագ աղօթից և
գոհութեան վերածխեալ՝[1] 'ի մտաց հա-
ւատացելոց, որ արծարծեալ բուրի 'ի
հրոյ սիրոյն Աստուծոյ։ Իսկ բուրվառն
ոսկի՝ է մաքրութիւն մտաց բարեգոր-
ծացն, ուստի անուշահոտ աղօթքն վեր-
առաքի։ Այլ զի զայս չորք կենդանիքն և
երիցունքն նուիրէին, քանզի հրեշտակք
են և արք սուրբք՝ որ զաղօթս երկրա-
ւորաց առաջի Աստուծոյ տանին, որպէս
զկուռնեղիոսին լուաք։

«Եւ օրհնէին երգս նորս և ասէին.
արժանի ես առնուլ զգիրսդ և բանալ
զկնիք դորա, զի զենար և գնեցեր զմեզ
Աստուծոյ արեամբդ քով յամենայն ազ-
գաց և 'ի լեզուաց և 'ի ժողովոց հեթա-
նոսաց, և արարեր զսոսա Աստուծոյ մե-
րոյ թագաւորս և քահանայս՝ թագա-
ւորել 'ի վերայ երկրի»։ Այս ցուցանէ
զորս 'ի հնումն և 'ի նորս հաճոյք եղեն
Աստուծոյ, որք վասն ամենայն աշխար-
հի զենեալ գառինն Աստուծոյ և դնո-
ղին զմեզ գոհաբանութիւն մատուցա-

[1] Ա. Օրին. Վերածեալ։

նեն ։ Նոր ասելով զերգսն, 'ի հնութեն
նէ գրոյն զզերծանելն մեր 'ի հոգևոր շը-
նորհն ասէ. իսկ 'ի յերկիր թագաւո-
րեն յայն՝ զոր տէր հեղոցն խոստացաւ,
այսինքն՝ յազատեալն 'ի ծառայութենէ
ապականութեան ։

"Եւ տեսի և լուայ զձայն հրեշտա-
կաց բազմաց, որք կային շուրջ զաթո-
ռովն և զչորիւք կենդանեօքն և զքա-
հանայիւքն. և էր թիւ նոցա բիւրք բիւ-
րուց՝ և հազարք հազարաց. ասէին ձայ-
նիւ մեծաւ. արժան է գառնդ զենեալ
առնուլ զմեծութիւն և զիմաստութիւն,
և զզօրութիւն և զպատիւ և զփառս և
զօրհնութիւն ։ Եւ ամենայն արարածք՝
որ են յերկինս և յերկրի և 'ի ծովու և
որ 'ի նոսա, լուայ զի ասէին. որ նստի
յաթոռն և գառն՝ օրհնեալ բարձրա-
ցեալ և փառաւորեալ յաւիտեանս յա-
ւիտենից" ։ Յամենայն իմանալեաց ա-
սէ և 'ի զգալեաց կենդանեաց, և առ
հասարակ յամենայն բանաւորաց Ա-
ստուած փառաւորի[1], որպէս ամենեցուն
լինելութեան սկիզբն, նոյն և միածինն
և համագոյն իւր Որդի՝ մերոյ համագոյ-
ակ մարմնովն, որպէս գրեաց և առա-

1 Բ Օրին. փառաբանի ։

քեալն, զի զնա ամենայն լեզու փառա-
քանէ 'ի փառս Աստուծոյ հօր, որպէս[1]
զկրկին նորոգիչ ստեղծուածոյս, և իբ-
րև զիշխան երկնի և երկրի։

"Եւ չորք կենդանիքն ասէին, ամէն.
և երիցունքն անկանէին առաջի նորա և
երկիր պագանէին"։ Ի երկնային դասու-
ցըն բարեկարգութիւն ուսանի ատ,
զի նախ չորք կենդանիքն և երիցունքն
եաւն զօրհնութիւն՝ որք առաջին են[2]
պատուով, և ապա դասք հրեշտակացն
և երկրաւորացս, որով ցուցանի մի հօտ
և մի եկեղեցի լինել հրեշտակաց և մարդ-
կան 'ի ձեռն Քրիստոսի և Աստուծոյ[3],
որ զմիջնորմն ցանկոյն քակեաց, և մի-
աւորեաց իւրով զենմամբն զամենայն.
զի ահա հաւասար ձայնի երկնաւորացն
և երկրաւորացս օրհնութիւն։ Որում
և մեք լիցուք[4] արժանի՝ շնորհօք խաղա-
զարարին Քրիստոսի. ընդ որում Հօր՝
միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք,
իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ
և յաւիտեանս. ամէն։

1 Բ Օրէն. Իբր։
2 Բ Օրէն. Զօրհնաբա-
նութիւն, որք առաջինք էին։
3 Բ Օրէն. Քրիստոսի Ա-
ստուծոյ։
4 Բ Օրէն. Լինիմք։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լուծումն առաջին կնքոյն։

ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

"Եւ տեսի զի եբաց զմին 'ի կնքոցն, և լուայ 'ի միոյ 'ի չորից կենդանեացն իբրև զձայն որոտման, զի ասէր՝ թէ գամ"։ Աստուստ զերկնայնոցն զբարեկարգութիւն ուսուցանէ, յառաջին դասուցն յերկրորդսն զգիտութեանն հեղումն. ուստի և մի ասել 'ի չորից կենդանեացն՝ կարծեմ զառիւծն նշանակել, ուստի ըզձայնն լուաւ։ Այլ տեսիլ առիւծուն հրեշտակացն է պատկերի և էութեան յարացոյց, որով նշանակել ինձ թուի զթագաւորական իշխանութիւն առաքելոցն ընդդէմ դիւացն խորամանկութեան, որպէս ասացաւ վասն նոցա. "Կացուսցես զնոսա իշխան ընդ ամենայն երկիր"։

"Եւ տեսի՝ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր 'ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և եկն յաղթողն զի յաղթեսցէ"։ Զայս կնքոյս լուծումն և զորոց 'ի կարգին է զամենեցուն, ոմանք 'ի մարմնոյ տնօրէնութիւն Աստու-

ծոյ բանին կարծեցին. զառաջինն՝ 'ի ծը-
նունդն, և զերկրորդն՝ 'ի մկրտութիւնն,
և զերրորդն՝ յաստուածային նշանսն, ըզ-
չորրորդն՝ յառաջի Պիղատոսի կանգնելն,
զհինգերորդն՝ 'ի խաչն, և զվեցերորդն՝
'ի գերեզմանի զդնելն և զդժոխս՝ աւե-
րելն։ Սակայն և մեք հանդիպեցաք Մե-
թոդիու ասացելոցն այսպէս. ոչ է պարտ
առ 'ի Քրիստոս կարծել զայս, որ նախ
էր քան զյայտնութիւնս կատարեալ ըզ-
խորհուրդս իւրումն մարդանալոյ. այլ
Յովհաննէս զայս վասն մերձակայ ժամա-
նակիս և հանդերձելումն ետես, ընդ
որս և զհրաբերանն կարգէ զվիշապն.
վասն որոյ և մեք այսպէս առաք զկնքոյս
լուծմանցն զտեսութիւն։ Գիրք դրեալ
ներքոյ և արտաքոյ՝ ասեմք զխորհուրդ
կամացն Աստուծոյ. և կնքեալ եւթն կըն-
քով, զի անհաս է յերկնաւորաց և յեր-
կրաւորացս. 'ի սա սահմանեալ էր անցք
նեղութեանցն՝ զոր հանդերձեալ էր կը-
րել եկեղեցի։ Իսկ հրեշտակն ձայնէր,
թէ ո՛վ է արժանի ուսանել զայս և ազ-
դել նոցա. և զի ոչ ոք դտաւ, լային սուրբ
հրեշտակքն և մարդիկ ընդ անղգուշա-

1 Բ Օրէն. Զդժոխոցն։

բար գալոյ 'ի Ճերայ մեր նեղութեանցն։ Յայնժամ Քրիստոս որ քահանայապետն էր մեր և բարեխօս ընդաջմէ Հօր, գլ-թացաւ և եկն՝ ուսաւ 'ի Հօրէ զառ յա-պա խորհուրդն, և ազդեաց մեզ։ Յոր-ժամ զայս արար[1], հրեշտակքն՝ որոց ու-րախութիւն է փրկութիւն մարդկան, օրհնութիւն և փառս նմա մատուցին։ Եւ յորժամ եբաց զմի 'ի կնքոցն՝ ասէ, թէ մի 'ի կենդանեացն ասէր՝ թէ գամ։ Քանզի շնորհք գիտութեանն առ մեզ յԱստուծոյ՝ սրբոցն հրեշտակաց սպա-սաւորութեամբն[2] իջանէ. վասն այնորիկ նոքա առին զխորհրդոյն զօրութիւն, և մեզ ասացին գալ և յայտնել։

"Եւ տեսի՝ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր 'ի վերայ նորա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և եկն յաղթողն զի յաղթեսցէ"։ Սկսեալ յին-քենէ մինչև 'ի կատարած աշխարհի ըզ-լինելոցն ասա ուսաւ աւետարանիչս. վասն այսորիկ և ձի սպիտակ զհեծեալն՝ զառաքելոցն կարծեմ զգունդ. ձի՝ հոգ-ւոյն շնորհ որով զօրացան։ Իսկ աղեղն՝

[1] Բ. Օրէն. Զայս արարին հրեշտակքն։

[2] Բ. Օրէն. Քանզի շնորհն Աստուծոյ առ մեզ գիտու-թեանն հրեշտակացն սպա-սաւորութեամբն։

DIE ZWEITE SCHULE.

Von der Sprache überhaupt.

„Die Sprache ist ein Werkzeug, dessen sich der Mensch bedient, seine Gedanken und Empfindungen andern Menschen zu entdecken. Diejenigen Laute, welche ein Mensch hervorbringen kann, sind entweder solche, die nur einmal gehört werden können, oder solche, die man öfters hören kann. Jene sind diejenigen, welche durch die Bewegung der Lippen, der Zähne, der Zunge und des Gaumens hervorgebracht werden.

„Ein jeder Laut, der durch die Bewegung der Lippen hervorgebracht wird, heißt ein Lippenlaut. Diejenigen Laute, welche durch die Bewegung der Zähne und der Zunge hervorgebracht werden, heißen Zahnlaute. Diejenigen Laute, welche durch die Bewegung der Zunge und des Gaumens hervorgebracht werden,

և վարդապետք և մարտիրոսք բազմացան, աշխարհի խաղաղութիւն լուծաւ, առ ինքեանս բաժանեցան մարդիկ յընտանութենէ՝ ըստ ասացելոցն 'ի Տեառնէ. "Ոչ եկի արկանել խաղաղութիւն յերկիր՝ այլ սուր". որոց և վկայական զենմունքն 'ի վերինն սեղան արքութեան ընծայեցան: Իսկ կարմիր ձի հրակերպ՝ զհեղումն արեանց բորբոքելոցն և վառելոց սիրովն Քրիստոսի տայ զնշանակ: Եւ զի գրեալ է. "Տուաւ նստելոյն 'ի վերայ նորա զխաղաղութիւն առնուլ". զամէնիմաստն ցուցանէ Աստուծոյ զներողութիւն, որ կամեցաւ զհաւատացեալ ծառայսն իւր 'ի ձեռն նեղութեանցն փորձ գտանել:

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լուծումն երրորդ կնքոյն:

"Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յերրորդ կենդանւոյն զի ասէր՝ թէ գամ": Երրորդ կենդանի ինձ ասա թըւի զմարդն ասել: Սա զմարդկանն յայտ

արար մեզ[1] զգլորումն՝ որ առ չար թագա-
ւորօքն եղև ։

“Եւ տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ
նստեալն էր 'ի վերայ նորա՝ ունէր կը-
շիռք 'ի ձեռին իւրում”։ Սեաւ ձի՝ ըղ-
մրրիկ խռովութեան հալածանացն է ի-
մանալ որ առ Դեկեաւ թագաւորաւ ։
Քանզի սա երրորդ եղև քրիստոնէից
հալածիչ, առ որով բազումք 'ի հաւա-
տոց[2] գլորեցան՝ որպէս պատմէ Եւսե-
բի ։ Իսկ կշիռքն զայն յայտ առնէ՝ թէ
'ի մէջ հաւատոյ և անհաւատութեան
վտանգի կալոց է եկեղեցի ։

“Եւ լուայ զձայն 'ի միջոյ չորից կեն-
դանեացն. կապիճ մի ցորեան դենարի
միոջ, և երեք կապիճ գարի դենարի միոջ.
և ձէթ և գինի մի՛ վնասեսցես”։ Թէ-
պէտ և 'ի խորհրդոյ տեսութի՝ առնումք
զասացեալս, սակայն և զգալի առ այսու
ժամանակաւ ընթերցաք եղեալ սով. որ-
պէս և առնու Եւսեբի զասացեալ նե-
ղութիւնն Աղեքսանդրիայ 'ի Դիոնէսիս-
սէ 'ի կարգի իւրոյ պատմութեանն ։ Արդ՝
թէպէտ և այս այսպէս է, սակայն զլ-
րումն ոչ սակաւ յայնժամ եղև քրիստո-

1 Բ Օր. Յայտ արարեալ։ 2 Ա Օրի. Ի հաւատացելոց։

նէից, որպէս և ինքն Եւսեբի ցուցանէ։ Զայս սուգս և ձին նշանակէ[1]. և կշիռքն՝ զփորձութիւն եկեղեցւոյ որպէս ասացաք, յորմէ բազումք տկարացեալք խոտորեցան 'ի հաւատոցն, և սուգ մեծ թողին հաւատացելոցն։

Իսկ զի՝ մի կապիճ ցորեանն դենարի միոջ՝ էր արժան, և երեք կապիճ գարին՝ դենարի միոջ, յայտ առնէ ցորեանն՝ զորս օրինօք նահատակեցան, բանիւ և իմաստութեամբ՝ և ոչ անասնապէս գլլորեցան, զի անաղտ պահեցին նովաւ և զպատկերն արքունի՝ որով և զփառսն ժառանգեն։ Իսկ երեք կապիճ գարին՝ կարծեմ զնոցա գործն գոլ, որք անասնապէս[2] գայթակղեցան 'ի հալածչացն, և յետոյ դարձան և զաղտեղացեալ պատկերն արտասուօք լուացին. զի հաւատն և յոյսն և սէրն՝ որ յանասնաբարոյ մրտացն ընծայի, ոչ լինի անտես, այլ ատանայ[3] զպատկերն արքունի։

"Եւ ձէթ և գինի մի՝ զնասեսցես"։ Կարծեմ զայս առ վերակացուս եկեղեցեացն ասացեալ, որք զհոգին և զիմաս-

1 Ա Օրէն. պահասէ Զայս սուգս և ձին նշանակէ։

2 Ր Օրէն. Զնոցա գործն գոլ, որ գլորեալ անասնապէս։

3 Ա Օրէն. Ատանայ ոյ զպատկերն։

տութիւն բաշխեն ժողովրդեանն. զի
միշտ ձէթն՝ հոգւոյն, և գինին՝ իմաստու-
թեանն է յարտցոյց[1]. մի՞ ասէ դուք վնա-
սէք զոք յանասնեղէն բարուցն դարձ-
եալս յապաշաւանս, այլ ընկալարուք սի-
րով 'ի գաւիթս եկեղեցւոյ: Յայսմա-
նէ Նաւատիոս յետնեալ դատաւ, և զբա-
ղումս վնասեաց[2] 'ի Հռովմայեցւոյ եկե-
ղեցւոյն: Իսկ մեք ջանասցուք ոչ վնա-
սել զեղբարս մեր, այլ բժշկել շնորհօք
սուրբ Հոգւոյն, և իմաստութեամբ ա-
ւետարանին Քրիստոսի, զի մի՞ 'ի կա-
ղալն գայթակղեսցի՝ այլ բժշկեսցի. ո-
րով ըստ աստուածայինն առաքելոյ գոր-
ծակիցք լիցուք Աստուծոյ, և 'ի նորին
բարութիւնն յաւիտեան վայելեսցուք,
շնորհօք մարդասիրին Քրիստոսի, որ է
օրհնեալ յաւիտեանս. ամէն:

1 Բ Օրին. Ապացոյց: 2 Բ Օրին. Դարձոյց:

ԳԼՈՒԽ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Որ ցուցանէ զչորրորդ կնքոյն զլուծումն, որով յայտ առնի պատիժ ամբարշտացն։

ՃԱՌ ՎԵՑԵՐՈՐԴ

"Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն 'ի չորրորդ կենդանւոյն զի ասէր՝ թէ գամ"։ Չորրորդ կենդանի է արծիւն, որ ցուցանէ մեզ զաստուածային բարկութեանն զպատուհասն 'ի վերայ ամբարշտացն՝ որք հալածեցին զեկեղեցին։

"Եւ տեսի՝ և ահա ձի շլոռոս. և որ նստէրն 'ի վերայ նորա՝ ունէր զմահ, և դժոխք երթային զհետ նորա. և տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի սատակել սրով և սովով և մահուամբ և գազանօք երկրի"։ Ըստ կարգի առաջին ասացելոցդ և այս բերի, որպէս ասէ 'ի յուժ գլուխ ինն դպրութեան եկեղեցական պատմութեանն[1] Եւսեբի՝ զխռովութիւնն որ 'ի Մաքսիմիանոսէ Հռովմայեցւոց թագաւորելո-

[1] Ա Օրինն. Որպիսի յուժ գլխի դպրութեան եկեղեցական պատմութեան։ Ա Յլօրի. Որպէս ասէ Եւսեբի (Եկ. Հ. պատմ. Թ. 8) զխռովութիւնն, և այլն։

վքն եղև 'ի վերայ քրիստոնէից։ Եւ զի
ոչ եկաց խաղառ՝ այլ դադարեաց, զոր
նշանակէ ձիոյն տեսակ 'ի սևոյ և 'ի սպի-
տակէ, զի մառախուղ նեղութեան և
ընդ նմին լոյս խաղաղութեան։ Իսկ զի
մահ և դժոխս ունէր հեծեալն, և սատա-
կելոյ[1] իշխանութիւն, յայտ է թէ մահ[2]
սահմանեցաւ 'ի վերայ հեթանոսացն
յայնժամ յԱստուծոյ, և դժոխք հետե-
ւէր զկնի մահուն ընդունել զնոսա վասն
անհաւատութեանն։ Եւ չորրորդ մասն
աշխարհի սատակեցաւ ընդ այն ժամա-
նակս սրով և սովով և գազանօք, որպէս
և ընդարձակ պատմէ Եւսեբի՝ 'ի նոյն
յութերորդ բանն, թէ 'ի վերայ Հոռո-
մոց[3] յարեան Հայք, և զբազումս սատա-
կեցին, և զսակաւ կերակուր բազում
ոսկւոյ 'ի սաստկութենէ սովոյն գնէին.
էր և մարդամահն այնչափ, մինչ զի ոչ կա-
րելովն թաղել զմարմինսն՝ շունք ուտէին։
Եւ յայնժամ ասէ՝ թէ քրիստոնեայքն
պատուասիրաբար թաղման պարապէին.
և զբազումս 'ի մոլորելոցն մարդասիրու-
թեամբն զդօնացուցանէին, մինչև յազ-

1 Բ Օրէն. Սատակման։ 3 Բ Օրէն. Հռովմայեցւոց։
2 Բ Օրէն. Մահու։

[illegible]

[illegible]

“[illegible] ՚ի [illegible] ի [illegible] ՚ի [illegible] ի [illegible] ՚ի [illegible] ի [

ինքն զի բազմութիւն վկայիցն՝ որք վասն Քրիստոսի զենան և բարձրացան հոգիք նոցա ընդ հովանեաւ սեղանոյ աստուածային նորա մարմնոյ 'ի յերկինս, զայս աղաղակեցին առ Աստուած՝ թէ վրէ ժխնդրութիւն արա եկեղեցւոյ, և դադարեցո զհալածանս. որ եղև իսկ, ըստ որում զայս ցուցանէ Եւսեբի 'ի գիրըս պատմութեանն եկեղեցւոյ. զի յետ Մաքսիմիանու և Դիոկղետիանոսի սաստիկ հալածանացն և լինելոյ սովոյն, դադարեաց հալածումն եկեղեցւոյ, և թագաւորեաց մեծն Կոստանդիանոս:

"Եւ տուաւ նոցա արկանելիս սպիտակս, և ասացաւ նոցա զի հանդիցեն փոքր մի ժամանակ, մինչև լցցին ծառայակիցք նոցա և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ էին կատարիլ իբրև զնոսա"։ Սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին, որոց ցուցանէ զպատճառս երկայնամբտելոյն, զի լաւագոյն համարեցաւ Աստուած՝ մի առանց մեր՝ նոցա պատկիլ։ Այլ արկանելիքն սպիտակք՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն՝ յետ 'ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն, զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն. և

են առ 'ի յԱստուած[1] 'ի հանգիստ՝ որպէս լուաք. և ճշմարիտ է հանգչելն 'ի թանձրութենէ ախտաւոր կրից զերծելոցն[2], և առ Աստուած եղելոցն. սակայն զկատարեալ զփառսն չև և ս են ընկալեալ[3], մինչև 'ի սքանչելի երկրորդն գալուստ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Լուծումն վեցերորդ կնքոյն, որ զհարուածն որ 'ի վախճանի լինելոց է՝ նշանակէ[4]:

"Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղև շարժումն մեծ, և արեգակն եղև սեաւ իբրև զկապերտ այծեայ, և լուսինն բոլորովին եղև արիւն, և աստեղք երկնից թօթափեցան 'ի յերկիր, որպէս տերև թզենւոյ զի ուժգին շարժիցի 'ի հողմոյ": Ոմանք և զայս ըզՎեսպիանոսի զհարուածսն ասացին նշանակել, սակայն մեր 'ի կարդ նախակարգելոցդ յառեալ՝ զիւռովութիւն ա-

1 Բ Օրէ. Առ աստուած: որն չև է ասեն ընկալեալ:
2 Բ Օրէ. Զերծանելոցն: 4 Բ Օրէն. Նշանակեաց:
3 Բ Օրէ. Սակայն զփառ-

մացն որ նախ քան զնեռինն դալ՝[1] ծա-
նեաք գոլ զմարգարէութիւնս. քանզի
յորմէ հետէ մեծն Կոստանդիանոս թա-
գաւորեաց և հաստատեցաւ եկեղեցին,
ոչ եղև այլ տիրապէս խռովութիւն նը-
մին, բայց թէ լինելոց է յայն ժամա-
նակսն՝ որպէս ուսանիմք, և այս է նե-
ղութեանն՝ որ զնորա գալուստն կարա-
պետէ՝ նշանակ[2]: Շարժ ասեմք զեղե-
լոցն փոփոխումն՝ որպէս գրէ առաքեա-
լն. նաև 'ի հնումն վասն ելիցն Իսրայ-
էլի յԵգիպտոսէ՝ այս գրեցաւ, թէ եր-
կիր շարժեցաւ և երկին ցօղեաց. սա-
կայն նոքա յանկարգութենէ 'ի բարե-
կարգութիւն շարժեցան, իսկ այս նշա-
նակէ 'ի բարեկարգութենէ յանկարգու-
թիւն զփոփոխելն: Այլ սեաւ լինել ա-
րեգական՝ իմանամք զխաւարելն աշխար-
հի բնակչաց 'ի ճշմարիտ գիտութենէն,
'ի յոր լուսաւորեաց զնոսա ծագեալ ա-
րեգակն 'ի բարձանց: Եւ լուսնի ար-
իւնն՝ զարեանց հեղմունքն 'ի խռովու-
թենէն: Բայց զի և աստեղք թօթափէ-
ին ուժգնակի, քանզի յայլայլել բարե-

1 Բ Օրին. Նախ քան ըղ-
նեռնն, ծանեաք:

2 Բ Օրին. Նեղութիւնն՝
որ զնոր գալուստն նշանակէ:

կարգութեանն և 'ի խաւարել գիտութեանն և 'ի յաճախել նեղութեանն, նոքա որք իբրև լուսաւորք են յաշխարհի՝ գայթակղեալ կործանին, որպէս ասէ ինքն Տէրն. "Մոլորեսցին թէ հնար իցէ՝ և ընտրեալքն"։ Քանզի և երանելւոյն Կիւրղի զայս այսպէս գտաք առեալ[1] 'ի տեսութիւն մարդարէիցն, որոց և ըզթզենին ածէ օրինակ, զի որպէս զնորա անկատար պտուղն՝ ոչ կարեն տանել փորձութեան տօթոյն[2] զոր 'ի վերայ յարուցանէ հողմն բանսարկուին. բայց ճըշմարիտն Քրիստոսի գիտելի է, որ ունի ղամենայն գանձս իմաստութեան և գիտութեան։

"Եւ երկին իբրև զմագաղաթեայ գիրս գալարէր"։ Երկնից գալարելն որպէս գիրք՝ զգալուստն Քրիստոսի որ յետ այսորիկ՝ նշանակէ, զի գիրք այնր գիտութեանն բանի։ Դարձեալ գալարելն երկնի՝ զերկնային զօրացն[3] վշտանալն ուսուցանէ 'ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին, և ընդ իմ կործանումն տրրտմութիւն զգենուն։ Բայց զայս մի՛ ոք

1 Բ Օրէն. Յեռեալ։
2 Բ Օրէն. Տանել 'ի փորձութեան տօթոյն։
3 Բ Օրէն. Զօրութե՛ցն։

կարծեսցէ թէ յոչէութիւն դառնայ երկին, այլ մանաւանդ 'ի լաւագոյնն[1] յեղաշրջումն ընդունի, ըստ որում գրէ Իրենէոս 'ի հինգերորդ ճառն իւրոյ յանդիմանութեանն զսուտանուն գիտունսն, որ է այսպէս. "Ոչ եթէ էութիւն և գոյութիւն արարածոցս ապականի, զի սերտ և հաստատուն եդ զսա Արարիչն, այլ կերպարանն փոխի աշխարհիս այսմիկ՝ որպէս երիցունքն ասեն"։ Եւ զայս մեծն Իրենէոս ասաց, 'ի կիր արկեալ ընդ բանս իւր և զառաքեալսն ընդդէմ Եբրայեցւոցն, որք զգրեալսն պարզաբար առնուին։

"Եւ ամենայն լերինք և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան։ Եւ թագաւորք երկրի և իշխանք, հազարապետք և մեծամեծք և զօրաւորք և ամենայն ծառայք, և ամենայն ազատք՝ թագուցին զինքեանս յայրս և 'ի ծերպս վիմաց, և ասէին լերանց՝ թէ անկերուք 'ի վերայ մեր, և ցբլուրս՝ թէ ծածկեցէք ըզմեզ. զի եկն օր մեծ բարկութեան նորա, և ո՛վ կարէ կալ առաջի նորա"։ Ցտէրն մեր հարցին առաքեալքն վասն

1 Բ Օրին. Եւ լաւագոյն։

տաճարին կործանման և վախճանի աշ-
խարհիս, և որպէս կարող էին տանել՝
ասաց նոցա, նախ զհանդերձեալսն՝ զորս
և տեսաք յաւուրսն Վեսպիանոսի և Տի-
տոսի պատահեալ աստուածասպան հը-
րէիցն, ըստ որում՝ պատմէ եբրայեցին
Յովսեպոս։ Որ և նոյն հրամանք Տեառն
կրկին դարձեալ կատարելոց է 'ի ժամա-
նակս նեռինն, ըստ որում ցուցին վար-
դապետք։ Ա՛ռ նոյն է և այսր խորհրդոյ
ակնարկումն, քանզի օր բարկութեան
Աստուծոյ՝ է դատաստանին, որպէս գը-
րէ առաքեալն. "Յաւուր բարկութեան
և յայտնութեան արդար դատաւորու-
թեանն Աստուծոյ"։

Իսկ զի 'ի մերձիլ այսր աւուր՝ շար-
ժին լերինք և բլուրք. քանզի ամենայն
քաղաքական բարեկարգութիւն որ 'ի
ձեռս թագաւորաց և եկեղեցւոյ՝ այլ-
այլի, զի և զեկեղեցի՝ կղզի ուստք ըստ
Եսայեայ՝ յԱստուած[2] նորոգեալ։ Իսկ
թագչելն 'ի ծերպս վիմաց մեծամեծաց
և փոքունց՝ լինի 'ի նեռինն երկիւղէ,
որպէս ասաց Քրիստոս. "Որ 'ի հրէաս-
տանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս". քանզի

1 Բ Օրէն. Որպէս։ 2 Բ Օրէն. Ա՛ռ. աստուած։

դալստեամբն նորա ամենեքեան 'ի փոր-
ձութիւն մատնեսցին. յորմէ Քրիստոսի
ծառայքն յայրս և 'ի ծերպս փախչին ա-
ղօթել, զի այսու նեղութեամբս որ ցօ-
ղէ 'ի ներողութենէն Աստուծոյ՝ զերծ-
ցին յանվախճան տանջանացն. իսկ որք
իբրև զփայտ և զխոտ և զեղէդն 'ի վե-
րայ հաւատոյն հիման շինեցան, կերա-
կուր եղեալք նմին՝ ծախեալ այրեսցին:
Ուստի մարդասէրն Աստուած փրկես-
ցէ զմեզ, և սրբոցն պատրաստեալ բա-
րեացն մասնակիցս արասցէ, լնուլ ըղ-
թիւ փրկելոցն[1] լրման, շնորհօք Միա-
ծնին իւրոյ և ամենասուրբ Հոգւոյն[2].
որում վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ, այժմ և յաւիտեանս. ամէն:

1 Բ Օրէն. Ընտրելոցն: սուրբ Հոգւոյն:
2 Բ Օրէն. Ամենաղօր

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Վասն փրկելոցն 'ի հարուածոց չորս հրեշտակին, և հարիւր քառասուն և չորս հազարացն։

ՃԱՌ ԵՕԹՆԵՐՈՐԴ

"Եւ յետ այսորիկ տեսի չորս հրեշտակս զի կային 'ի չորս անկիւնս երկրի. և ունէին զչորս հողմս երկրի՝ զի մի՛ շընչեսցէ հողմ 'ի վերայ երկրի և մի՛ 'ի ծովու և մի՛ 'ի ծառս"։ Եղև և այս դարձեալ 'ի Հռովմայեցւոցն 'ի վերայ հրէիցն։ Արդ՝ զչորս աստուածային հրեշտակսն իմանամք որ ունէին զհողմսն՝ արդելումն խնամոցն, զի որք 'ի վերայ երկրի և ծովու՝ զնեռինն զփորձ առնուցուն. և այս ոչ լինի նեղութիւնս մասնաւոր որպէս յերկիրն Հրէաստանի, այլ ընդ ամենայն տիեզերս, զի 'ի չորս անկիւնս հրամայէ կալ հրեշտակացն և լընուլ զաստուածային սպասաւորութիւնն։ Իսկ եթէ այս ո՛րպէս լինի, տգէտ եմք. բայց հողմոցն ոչ շնչելն յայտ առնէ զլուծումն բարեկարգութեանն, զի հողմովն՝ երկրի տունկք կերակրի, և ծով շարժի, և բարեկարգութեամբն մարդիկ։

«Լ;ւ տեսի այլ հրեշտակ զի ել յա-
րև ելից, և ունէր զկնիք Աստուծոյ կեն-
դանւոյ, և աղաղակեաց ձայնիւ մեծաւ
առ չորս հրեշտակսն՝ որոց առեալ էր
իշխանութիւն ապականել զերկիր և ըղ-
ծով. և ասէր. մի՛ վնասէք երկրի՝ մի՛ ծո-
վու՝ մի՛ ծառոց, դադարեցէք մինչև կըն-
քեցից զծառայս Աստուծոյ իմոյ»։ Որ-
պէս Եզեկիէլի 'ի հնումն յայտնեցաւ՝ որ
ղգեցեալն էր զպճղնաւորն, և կնքէր ըղ-
ճակատսն զի մի՛ կորիցեն արդարքն ընդ
անիրաւսն, այսպէս և այս։ Քանզի թա-
քուցեալ է սրբոցն առաքինութիւն, նա
և հրեշտակաց գոլով անհաս, ուստի և 'ի
գերաբունէն[1] սրբոց զօրութեանցն տան-
ջող հրեշտակացն հրամայեցաւ այս, թէ
մի՛ երթայք դուք առ յանցաւորսն յա-
ռաջ քան զկնքելն իմ, զի 'ի մէջ դատա-
պարտելոցն ծանիցեն զճշմարիտսն տան-
ջողութեանն սպասաւորք։ Եղև և այս
ըստ մասին առ Վեսպիանոսիւ. զի որ
Քրիստոսի պաշտօնեայքն էին յԵրուսա-
ղէմ՝ 'ի Հռովմայեցւոցն փախստական
եղեն 'ի ժամ աւերման քաղաքին. և զի
թիւ նոցա բազում էր, 'ի մեծէն Յա-

[1] Բ Օրէն. Ի գերագունէն։

կոբայ լուաք առ երանելին Պօղոս ասա-
ցեալ։ Բայց մանաւանդ 'ի ժամանակս
անտիքրիստոսին կատարի, զի որք զկնիք
կենարար սրբոյ Խաչին ունին՝ բաժանին
յանհաւատիցն, և անամօթ զնշանակ
ճշմարիտ հաւատոցն առաջի ամբարըշ-
տացն յանձինս բերեն. վասն սոցա ասէ
հրեշտակն՝ մի՛ անիրաւէք զերկիր, և մի՛
զծով և մի՛ զծառս, մինչև կնքեցից ըղ-
ճակատս ծառայից[1] Աստուծոյ իմոյ։ Ա՛յս
վասն մեր[2] է ասացեալ հաւատացելոցս,
և կնիքն ոչ եթէ զդալի՝[3] այլ իմանալի,
ըստ որում յԵզեկիէլէն[4] ուսաք, այսինքն
շնորհ և զօրութիւն օծմամբ սուրբ Հո-
գւոյն ընդունել. զի 'ի մէջ նեղութեան
անկարգութեան՝ որ գայցէ 'ի չորս հր-
եշտակէն, անփորձ մնասցեն։ Իսկ որք
մնացին առանց կնքոյ՝ յայտ է թէ և օգ-
նութեանն[5] արտաքոյ, քանզի ոչ կամեցան
զնոյն յօժարութեամբ իշխանականին։

"Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարիւր
քառասուն և չորք հազարք կնքեալք
յազգէ որդւոցն Իսրայէլի"։ Յայտ է՝

1 Բ Օրէն. Կնքեցից ըղ-
ծառայս։
2 Ա Օրէ. Իմոյ, որ վն մեր։
3 Բ Օրէ. Ոչ է զդալի։
4 Ա Օրէն. Յեզեկիէլին։
5 Բ Օրէն. Կնքելոյ . . .
օգնականութեանն։

թէ 'ի նոր Իսրայէլէ, որք 'ի հոգևոր ե-
կանց սրբոց առաքելոցն ծնան։ Քանզի
որպէս առ Վեսպիանոսիւ մարմնաւորն
Իսրայէլ 'ի մարմնաւոր պատուհասէն[1]
զերծաւ ըստ նախակարգեալ Թուոյս հա-
մարոյ, այսպէս և 'ի հոգւոյ ընդդիմամար-
տէ 'ի սուտ քրիստոսէն հոգևորն Իսրայ-
էլ 'ի հոգևոր[2] պատուհասէն զերծանի.
քանզի պատկեր իմացաք զՎեսպիանոս
նեռինն հարուածոց։

"Յազգէն Յուդայ՝ երկոտասան հա-
զար կնքեալ"։ Յուդայ՝ խոստովանու-
թիւն թարգմանի, յորմէ ուսանիմք՝ թէ
վասն խոստովանելոյն զՔրիստոս որ 'ի
Յուդայէ ծագեցաւ, կացին փրկեալք։

"Յազգէն Ռուբենի՝ երկոտասան հա-
զար կնքեալ"։ Ռուբէն՝ տեսութիւն ա-
սի, փրկեցան՝ որք մաքուր սրտիւ 'ի հո-
գևոր տեսութիւնս վարժեցան։

"Յազգէն Գադայ՝ երկոտասան հա-
զար կնքեալ"։ Գադ՝ փորձութիւն ան-
ուանի. ցուցանէ՝ թէ համբերողքն փոր-
ձութեան ըստ Յոբայ պսակեսցին։

"Յազգէն Ասերայ՝ երկոտասան հա-
զար կնքեալ"։ Ասեր՝ երանութիւն լսի,

1 Բ Օրէն. Պատերազմէն։ 2 Ա Օրէն. Ի հոգւոյ։

զի յերանութեան մասին վիճակին որք ամբիծ քաղաքավարութիւն ունիցին, և որդիք լուսոյ և որդիք տունջեան եղիցին։

"Յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ"։ Նեփթաղիմն՝ աղօթք ասի, նկարագրէ զորս անդադար աղօթիւք առ Աստուած յարին։

"Յազգէն Մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ"։ Մանասէ՝ մոռացումն լսի. նոքա են որ զյետոյսն մոռացան, և 'ի հայրենի տանէն 'ի բաց գնան վասն աստուածային սիրոյն ցանկութեան։

"Յազգէն Շմաւոնի՝ երկոտասան հազար կնքեալ"։ Շմաւոն՝ հնազանդութիւն է, զի որ զհնազանդութեան պատուիրանն պահէ՝ արդարանայ։

"Յազգէն Ղևեայ՝ երկոտասան հազար կնքեալ"։ Ղևի՝ մնացորդ կոչի, ըզմտաւ ածեմք զորս 'ի ձեռն քահանայական վայելուչ քաղաքավարութեանն Քրիստոսի մնասցեն։ Յութերորդ թիւն Ղևի կարգեցաւ, զի յութերորդ երեկի աւուր յարութեանն վայելչութիւն քահանայութեանն իւրեանց պայծառ փայլեսցէ։

"Յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ"։ Իսաքար՝ վարձ ան-

ուանի, այսինքն՝ զի վարձս ընդունին որք առաքինութեամբ քաղաքավարին։

"Յաղգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ"։ Զաբուղոն՝ բնակարան անուանի զօրութեան և անուշահոտութեան. իմանին բնակարանքն Քրիստոսի անուշահոտութեանն ընդդէմ ամենայն ախտից զօրաւորք, որպէս գրէ առաքեալ։

"Յաղգէն Յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ"։ Յովսէփ՝ առաւելադրութիւն ասի, որ յայտ առնէ զառաւելութիւն երկնային փառացն փափագողացն։

"Յաղգէն Բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ"։ Բենիամին՝ որդի երկանց ասի, կամ որդի տունջեան, կամ որդի աջոյ. զի յաներէկ տիւն յաջակողմանն դասին, որք երկնեցին և ծնան ըզհոգի փրկութեան իւրեանց։

Արդ՝ թիւս մարմնապէս կատարեցաւ 'ի վերայ փրկութեան այնոցիկ՝ որք ապաւինեցան 'ի Տէր յաւերն Երուսաղէմի հաւատացեալքն 'ի տէրութենէն Հոռոմոց. և հոգեպէս կատարի առ այնոսիկ՝ որք 'ի սուտ քրիստոսին պատրանաց զերծանին շնորհօքն Քրիստոսի. կամ

թէ յառաքելոյ ասելն հայի. “Ցորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ապա ամենայն Իսրայէլ կեցցէ”. և ոչ զոք 'ի տեսութեանցս անգոսնեմք. երևեցուցանէ այս՝ ինձ թուի և զբազմապատկել առաքելական սերմանց, զի երկոտասանքն 'ի կատարածի երկոտասան հազար թըւին, այսպէս զթիւ հազարացդ ծանեաք։ ԶԴան ոչ կարգեաց ընդ այլսդ, որով 'ի կարծիս ձգիմք՝ թէ 'ի նորա ազգէն անտիքրիստոսն[1] ծնանելոց է, ըստ որում անուանեաց զնոյն նահապետն յօրհնութիւնսն։ Այլ և զՅովսէփ փոխանակ որդւոյ իւրոյ Եփրեմի եդ, և զորդի նորին Մանասէ՝ փոխանակ Դանայ։ Արդ՝ որպէս սոքա Իսրայէլի նահապետք, նոյնպէս ծնօղք տիեզերաց հոգևոր երկամբք երկոտասան առաքեալքն։ Եւ Յուդա ոչ եմուտ 'ի համարն, այլ փոխանակ նորին Մատաթիա. վասն որոյ՝ որպէս առ Վեսպիանոսիւ 'ի հրէիցն[2] հաւատացեալքն փրկեցան, այսպէս և 'ի նեռանէն[3] փրկեսցին ընդ ամենայն տիեզերս հոգևոր ծնունդք առաքելոցն սրբոց։

1 Բ Օրէն. Անտի սուտ քրիստոսն։

2 Բ Օրէն. Հրէից։

3 Բ Օրէն. Ի նեռէն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Վասն անթիւ բազմութեանն որք 'ի հեթանոսաց պայ-
ծառազգեցեալ կային առաջի Աստուծոյ [1]։

"Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժո-
ղովուրդ բազում որոց ոչ գոյր թիւ, յա-
մենայն հեթանոսաց և յամենայն ազգաց
և յամենայն լեզուաց և յամենայն ժո-
ղովրդոց, որք կային առաջի աթոռոյն
և առաջի գառինն՝ արկեալ զիւրեամբք
հանդերձս սպիտակս, և արմաւենիս 'ի
ձեռս իւրեանց, աղաղակէին 'ի ձայն մեծ
և ասէին. փրկութիւն Աստուծոյ մերոյ՝
որ նստի 'ի վերայ աթոռոյն և գառինն"։

Սոքա այնոքիկ են՝ վասն որոյ ասաց
յառաջնումն, թէ տուաւ նոցա արկա-
նելիս սպիտակս, և այժմ թէ՝ արկեալ
զիւրեամբք սպիտակ պատմուճանս [2], ո-
րով յայտ է թէ 'ի մարմնաւորացս են,
զի զոր ոչ ունէին՝ ընկալան. և իմանամք
գոլ զսուրբսն, որք 'ի սկզբանէ աշխար-
հի հաճոյք եղեն Աստուծոյ յամենայն
ազգաց։ Զսոսա ասէ Պօղոս՝ ոդիս ար-
դարոց կատարելոց, քանզի որք կատա-
րեալք են՝ ոչ մտանեն 'ի դատաստան,

1 Ա Օրէ. Գառինն։ 2 Բ Օր. Հանդերձս սպիտակս։

այլ ընդ Քրիստոսի դոլով յերկինս՝ ընդ նմա գան[1] դատել զհրեշտակս և զմարդիկ։ Եւ 'ի սոցա ժողովն Անտոնիոս երանելին ելանէր, յորժամ քանսարկուն ընդ սուրբսն յօդս մրցէր։

Այլ սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն Քրիստոսի մաքրութիւնն է, յորմէ[2] ամենեքին վայելեցաք՝ որպէս ասէ առաքեալն, քանզի յորժամ սրբի հոգին՝ բնական ունի զպայծառութիւնն։ Իսկ արմաւենեօքն զոր բարձեալ են 'ի ձեռս՝[3] զյաղթութիւնն նկարագրեն, որով զաստուածային աթոռովն պար բոլորէին, և իբր բարեմիտ ծառայք՝ զյաղթութիւնն նմա վերընծայէին. փրկութիւն ասեն մերս՝ շնորհացն Աստուծոյ է, և ոչ մերում զօրութեանս։ Եւ զայս վասն այնր այժմ տեսանէ, քանզի հանդերձեալ է յառաջակայս զկատարածի աշխարհի զխորհուրդն ուսուցանել, և զՏեառն երկրորդ գալուստն, որպէս զի ցուցցէ՝ թէ հոգիք սրբոցն նախ քան զգալուստն չեն անմխիթար, այլ յերկինս են շուրջ զա-

1 Բ Օրէն. Գալոց են։
2 Բ Օրէն. Յորում։
3 Բ Օրէն. Բարձեալ ունին, զյաղթութիւնն։

թոռովն Աստուծոյ, այսպիսի յարազը-
ւարճ բերկրութեամբ։ Իսկ 'ի գալըս-
տեանն եկեալ զգենուն զմարմինսն, և
փոխանակ սպիտակ պատմուճանին՝ որ-
պէս զարեգակն ծագեն։

"Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ
զաթոռովն և զերիցամբքն և զչորիւք կեն-
դանեօքն, և անկանէին յերեսս առա-
ջի աթոռոյն, և երկիր պագանէին Ա-
ստուծոյ, ասելով. ամէն. օրհնութիւն և
փառք և իմաստութիւն և գոհութիւն և
պատիւ և զօրութիւն և շնորհք Տեառն
Աստուծոյ մերոյ՝ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն"։ Ահա մի եկեղեցի հրեշտա-
կաց և մարդկան, վասն այսորիկ՝ "Մա-
տուցեալ էք, ասէր Պօղոս, յԵրուսա-
ղէմ՝ յերկինս, և 'ի բիւրաւոր բանակս
հրեշտակաց". քանզի զոր նա բանիւ ա-
սաց, սա արդեամբք ետես զհրեշտակս
և զմարդիկ 'ի յերկինս ձայնակից։ Եւ որք
'ի հնումն հրեշտակք մարդկան թշնամիք
երևեցան, որպէս առ Դանիէլիւն իմա-
ցաք[1], այժմ պաշտօնակից եղեն շուրջ
քերովբէիցն և զերիցամբք։ Օ՝ի կանգ-
նեալ կան՝ զնախապատուութիւն նոցին

1 Բ Օրէն. Իմացարուք։

ցուցանեն, և աթոռովն՝ զառաւել պա-
տիւ նստելոց երիցանցն։ Ընկանէին յե-
րեսս, զի յանուն Յիսուսի Քրիստոսի
ամենայն ծունր կրկնեսցի, որք և 'ի խո-
նարհելն գոհութիւն նմա վասն աս-
տուածավայելուչ տնօրէնութեանն ըն-
ծայեն։ Յայս սահմանս վարժէ զմեզ ա-
ռաքեալն ասելով. "Օրհնեցէք զԱստ-
ուած, և յամենայն ժամ գոհացարուք"։
ըստ որում երկնայնոցն է սովորութիւն։

"Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի.
սոքա որ զգեցեալս են զհանդերձս սպի-
տակս՝ ո՞յք են, և կամ ուստի՞ գան։ Եւ
ասացի ցնա. տէ՛ր՝ դու գիտես"։ Յա-
րուցանէ 'ի վեր զերանելին հարցմամբն,
զի զանգիտութիւնն՝ բարիոք տեղեկա-
ցուսցէ յերևելոցն՝[1] յիմաստս։ Ո՛յք են
և կամ ուստի՞ գան, զի ծանիցէ թէ չէ
նոցա բնական կայան այն վայր երկնից
ուր տեսանին, այլ 'ի յերկրէ եկեալ ան-
դըր մտին։

"Եւ ասէ ցիս. սոքա են որ գան 'ի
վշտաց մեծաց, և լուացին զարկանելիս
իւրեանց և սպիտակացուցին արեամբ
գառինն"։ Արդարև 'ի մեծ վշտաց՝ որ-

[1] Ա Օրէն. Յերևեցուցանելոյն։ Այլ օրէ. Յերևելւոյն։

պէս գիտեմք 'ի բնութեանս ակարու-
թեանն փորձոյ. նաև վիշտ՝ մարտ անե-
րևոյթ և երևելի թշնամեացն. սակայն
լուացան յաղտոյ վշտացեալքն ոչ իւր-
եանց ջանիւ՝ այլ Քրիստոսի շնորհօքն.
"Քանզի ոչ 'ի գործոյ՝ զի մի՛ ոք պար-
ծեսցի": Եւ դարձեալ ասէ առաքեալն.
"Ոչ զիմ արդարութիւնն ունիմ, այլ
զհաւատոցն Քրիստոսի՝ որ յԱստուծոյ
արդարութիւնն, քանզի զշնորհ արեանն
նորա հեղման ընկալեալ սրբեցաք":

"Վասն այնորիկ են առաջի աթոռոյն
Աստուծոյ, և պաշտեն զնա զտիւ և ըզ-
գիշեր 'ի տաճարի նորա. և որ նստի 'ի
վերայ աթոռոյն՝ բնակեալ է 'ի նոսա":
Երանի է նոցա որք առժամանակեայ եր-
կոցս՝[1] զայն վայելուչ զհանգիստն պը-
տուղ բուսուցին, և չարչարակից լինե-
լով Քրիստոսի՝ ընդ նմա թագաւորեցին
'ի վայր՝ ուր գիշեր ոչ է. այլ զմտաւ
ածելի է գիշեր՝ զխորս անգիտութեա-
նըն, իսկ զարևապէս հասումն՝ տիւ:

"Ոչ քաղցիցեն և ոչ ծարաւեսցին".
Ճշմարտապէս որք զհացն երկնաւոր և
ղջուրն կենաց ունին. զի կերակուր բա-

1 Ա Օրին. Երկանցս: Մի՛ա օրի. Երկուցս:

նական հոգւոյ՝ բան և իմաստ, որով նոքա անյագ զուարճանան։

"Եւ ոչ ոք մեղիցէ նոցա, ոչ արեգակն[1] և ոչ տօթ"։ Ոչ 'ի փորձութենէ յաղթահարին յառժամանակեայ մրցանացս որ 'ի դիւաց, և ոչ մեղիցէ նոցա արեգակն՝ որ խեթիւ հայեցաւ ընդ նախահայրն նոցա։

"Եւ գառնն 'ի միջոյ աթոռոյն հովուեսցէ զնոսա, և առաջնորդեսցէ նոցա 'ի կենաց աղբիւր ջրոյ կենդանւոյ. քանզի եհատ Աստուած զամենայն արտօսր յաչաց նոցա"։ Որք յայն անդաստան հովուին՝ յարշաւանաց գայլոցն ոչ երկնչին, այլ 'ի Հոգւոյն սրբոյ գիտութեանն հեղումն հանապազ զմայլին, որ է աղբիւր կենդանի ջրոյ՝ ըստ որում լուաք 'ի Քրիստոսէ. աստի ըմպելով 'ի յարազուարճ ուրախութիւնն ցնծան սուրբքն, որ ըզմասնաւ որ գիտութիւնս թողեալ՝ 'ի ծայրագոյնն վայելեցին։

[1] Ա Օրին. Արև, որպէս 'ի սպորև։

ԳԼ. ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Որ յայտ առնէ զլուծումն եւթն կնքոյն, յորում մատուցաւ Աստուծոյ 'ի հրեշտակացն աղօթք սրբոցն որպէս զխունգ։

"Եւ յորժամ եբաց զկնիքն եւթներորդ, եղև լռութիւն յերկինս որպէս կէս ժամու. և տեսի հրեշտակս եւթն, որ առաջի Աստուծոյ կային. և տուաւ նոցա եւթն փողս"։ Թիւս այս վայելչապէս բերի 'ի վերայ յաւիտենիս այսմիկ կատարման, յետ որոյ շաբաթանալն 'ի հանգիստ[1] սրբոցն լինիցի. ուստի և 'ի լուծման եւթներորդ կնքոյն՝ լուծումն եղև երկրաւորացս քաղաքավարութեան։ Եւ եւթն հրեշտակացն սպասաւորելն՝ նշանակէ զտանջանս և զչարչարանս մարդկան 'ի կատարածի։ Իսկ լուռ լինել՝ կամ[2] լռութիւն, յայտ առնէ զհրեշտակական բարեկարգութիւնն, զի երկիւղիւ կան 'ի պաշտօնն՝ մինչև լսեն զհրամանն Աստուծոյ. քանզի այս խորհուրդս՝ որ բացաւ յեւթն կնքոյս վասն Քրիստոսի գալստեանն, և նոցա է

1 Ա Օրին. Շաբաթանալն և հանգիստ։

2 Բ Օրին. պակասէ Լուռ լինել կամ։

անգիտելի։ Իսկ եւթն փողն որ տուաւ հրեշտակացն, պաշտօն սպասաւորութեանն է, զոր կատարելոց են յերկիր՝ որպէս ցուցանէ։

"Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի"։ Տպաւորեաց վերագոյնն զձև և զկերպարան սրբոցն՝ որ երևեցան նմա, և այժմ սեղան ասէ՝ խունկ և խնկանոց, սակայն աներևոյթք են՝ արտաքոյ զգալի նիւթոց՝ և իմանալի։ Արդ՝ սեղանն ոսկի՝ է մարմինն Քրիստոսի, 'ի վերայ որոյ ամենայն հոգևոր պատարագք մատուցանին։ Առ նմա եկաց հրեշտակն զաղօթս սրբոցն մատուցանել, զի հրեշտակք որպէս միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ տանին 'ի Քրիստոս զաղօթս մեր, և նա նուիրէ Աստուծոյ և Հօր և բարեխօսէ. ուստի և առնու զամ աշխարհի վախճան, ոմանց տանջանք և հարուածք՝ և ոմանց վարձս բարեաց, որպէս 'ի կարգիս ցուցանէ։

"Եւ տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն սրբոց 'ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն"։ Տուաւ՝ յայտ է թէ յերկրէ, և զի երագահայեաց[1] են գիտութեամբ,

[1] Ա. Օրին. Երագահաս։

ոչ ասաց թէ եկն և էառ. և խունկ՝ է աղօթք սրբոցն անուշահոտ Աստուծոյ՝ նուիրեալ Քրիստոսի 'ի սրբոց զօրութեանցն. իսկ խորհուրդ աղօթիցն՝ կարծեմ զնեղութեանցն[1] զոր յամբարշտացն կրեն արք արդարք 'ի յետին ժամանակս, որոց և զհարուածս եբեր հրեշտակն։

"Եւ ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն 'ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ. և ելից հրեշտակն զխնկանոցն 'ի հրոյ սեղանոյն, և արկ զնա յերկիր"։ Ծուխ՝ է Քրիստոսի արծարծելն զգոհութեան մեր պատարագ, և անուշահոտ առնել Հօր՝ իբր զվշտակից և ըզփորձ քահանայապետ և զբարեխօս։ Իսկ խնկանոց՝ է հրեշտակին պաշտպանութիւն, զի որ զմերն իբր զբարեկամ նըւիրեաց, 'ի հաճոյ լինել աղօթիցն՝ ըզբարկութեան հուրն առեալ արկանէ 'ի վերայ թշնամեաց։ Հուր սեղանոյն՝ է զօրութիւն և կամքն Քրիստոսի, 'ի ձեռն որոյ իջանէ սաստն յերկիր սպասաւորութեամբ հրեշտակին։ Այսպէս երևեցաւ և 'ի հնումն Եզեկիէլի. զի ոմն 'ի քերովբէիցն 'ի հրոյն առեալ ետ հը-

[1] Բ Օրէն. Զնեղութիւնն։

րեշտակին, որ առաքեցաւ զբնակիչսն Երուսաղէմի զամբարիշտսն խորտակել։ Եւ հրեշտակիս այսմիկ[1] գործ տպաւորէ զքահանայականն պաշտօն, զի ոմանց ըղ-պաղատանս 'ի վեր հանէ, և ոմանց ըղ-քաւութիւն 'ի ստորինս ածէ, և մեղու-ցելոցն զդարձ պարգևէ, ոմանց բանիւ և ոմանց խրատու խստութեան։

"Եւ եղև որոտումն և ձայնք և փայ-լատակումն և շարժումն մեծ. և եւթն հրեշտակքն որ ունէին եւթն փողս, պատրաստեցին զինքեանս առ 'ի հար-կանել"։ Այսու ամենայնիւ զվախճանին նշանակէ զերկիւղ, զոր օրինակ 'ի Սի-նեայ լեառն աստուածային գալստեանն ծանուցաւ օրինակն, զի զամենեսեան զարհուրեցուցանէր, և երկիւղիւն 'ի բա-րեմտութիւն ածէր. այսպէս և հրեշ-տակացն այժմու սպասաւորութիւն՝ որ-պէս իմաստուն բժշկաց այրելովն և հա-տանելով զդժնդակ մեղացն ցաւ յախ-տացելոցն սրբել։ Այլ որոտումն և փայ-լատակումն՝ է աստուածային ազդումն առ հրեշտակսն, որով նշանակի[2] բար-կութեան գոլ հրամանն զոր պատրաս-

[1] Բ Օրէն. Այս։ [2] Ա Օրէն. Որ նշանակէ։

տեցան կատարել, որպէս զի մարմնաւոր
պատուհասիւն 'ի դանդաղելոցն կար-
ճեսցեն ղհանդերձեալ տանջանսն։ Որով
և[1] մեք որ այնմ փառաց տենչամք, մաղ-
թեսցուք այժմ սրբիլ, զի խրատով մար-
դասէր Տեառն 'ի յաւիտենական մահ-
ուանէն ապրեսցուք, և ուրախութեամբ
սպիտակազգեաց սրբոցն մասնակից գըտ-
ցուք, շնորհօք փրկչին մերոյ Քրիստո-
սի, ընդ որում Հօր և սուրբ Հոգւոյն
փառք իշխանութիւն և պատիւ, այժմ
և միշտ և յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վասն հարկանելոյ միոյն յեւթն հրեշտակացն զփողն,
որով հուրն և կարկուտն՝ և արիւնն հեղաւ յերկիր։

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

"Եւ առաջին հրեշտակն եհար ըզ-
փողն, և եղև կարկուտ և հուր, և ա-
րիւն խառնեալ՝ և անկաւ յերկիր, և
ղերրորդ մասն երկրի այրեաց, և ղեր-
րորդ մասն ծառոց այրեաց, և զամե-

1 Ա Օրէն. Որ և մեք։

նայն դալար խոտոյ այրեաց»։ Այս հարուածքս զոր նշանակեցին հրեշտակքս՝ նախ քան զկատարածն գալոց է 'ի վերայ աշխարհիս, մանաւանդ թէ և գայ։ Իսկ կարկուտ և հուր թէպէտ և լինի ըստ անկարգութեան տարերացդ՝ մեղաց մերոց պատուհաս յԱստուծոյ, սակայն իմացականապէս առնումք՝ զի և արիւն է ընդ հուրն խառնեալ, որ ոչ է բնութեան տարերացս[1]։ Արդ՝ կարկուտ կարծեմ զբարբարոսական յարձակումն 'ի վերայ աշխարհիս 'ի ներողութենէն Աստուծոյ, որք սառնացեալ[2] են 'ի գթոյ, և բորբոքեալ բարկութեամբ իբրև զհուր՝ որք բազում առնեն մարդասպանութեամբն արեան ճապաղիս, յորոց ոչ սակաւ քան զմի յերրորդ մասանց որպէս տեսաք՝ ապականեցաւ երկիր։ Իսկ զի՝ և զերկիր ասէ և զծառս, քանզի ապականին և սոքա ամայի եղեալ 'ի բնակչացն՝ որք տածէին և դարմանէին։ Այս առ այս եդաւ ըստ մերումս կարծեաց։

1 Բ Օրէն. Բնութիւն տարերացդ։ 2 Բ Օրէն. Սառուցեալ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վասն երկրորդ հրեշտակին, և սատակմանն՝
որ 'ի ծով՝ շնչոց։

"Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի ծով, և եղև երրորդ մասն ծովու արիւն. և սատակեցաւ երրորդ մասն լողակաց, և որ ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ"։ Եւ զծովու մաքրել[1] հրով բորբոքելով՝ յայտ առնէ 'ի կատարածի, թէ կամիցիս առնուլ. սակայն ըստ կարգի այսպէս իմանամք, թէ մերձ 'ի վախճանն՝ որպէս զերկիր Աստուած նուազեցուցանէ 'ի բնակչաց, այսպէս և զծով։ Իսկ լեառն հրդեհեալ՝ զբարկութիւնն Աստուծոյ որ 'ի վերայ նոցա՝ անուանէ։ Այլ զի և անդ եղև մի յերրորդ մասանցն արիւն, քանզի և 'ի կղզիս և 'ի նաւս այժմ տեսանի բազում սպանութիւն. և այս ամենայն սկիզբն է կատարածի, զոր օրինակ խստութիւն ձլմերան՝ զի առ սակաւ սակաւ զօրանոց, այսպէս և հասարակաց վախճանն։

1 Բ Օրէն. Եւ զծով մաքրեալ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վասն երրորդ հրեշտակին՝ և դառնութեան գետոցն և ջուրց։

"Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զղամբար, և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբերաց. և էր անուն աստեղն՝ դառնութիւն. և բազումք մեռան 'ի դառնութենէ ջուրց"։ Եւ զայս թէ կամիցիս առնուլ 'ի կատարածի 'ի վերայ տանջանաց մեղաւորացն, սակայն ինձ թուի ըստ կարգի բերել զարարածոց սպառումն, զի որպէս լեառն զծով, և հուրն զերկիր[1], այսպէս և զաստղս՝ որ է սաստն Աստուծոյ[2], ըզգետս և զաղբիւրս 'ի սովորական բնութենէն այլայլեաց. ոչ ասեմ յորակութենէ համոց՝ այլ 'ի բնութենէ, զի որք զկեանս տային՝ մահու եղեն առիթ ըմպողացն, և թէ որպէս լինի ճշգրտիւ՝ անհաս է. բայց սակայն ամենայն իրօք լինի, զի ոչ պահեն ջուրք մերձ 'ի վախճան զբնական սահմանն, այլ մինն յե-

1 Բ Օրէն. Լեառն զծով 2 Ա Օր. Որ է սատանայ։ և զհուր և զերկիր։

ընդն պակասէ զօրութիւն առողջարա-
րութեանն, և մահ ածէ մարդկան։

ԳԼ. ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն չորրորդ հրեշտակին, և խաւարման աստեղացն։

"Եւ չորրորդ հրեշտակն հարկանէր, և վիրաւորէր երրորդ մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և խաւարէր երրորդ մասն նոցա, և երրորդ մասն գիշերոյ նոյն-պէս"։ Հաւասար երկրային[1] տարերցս՝ և յերկնաւորսն լինի նուազութիւն, զի և նոքա են 'ի պաշտօն մարդկան, որք և ընդ մեզ եղծանելոց են և նորոգելոց. զի եթէ առ Դաւթիւ մաշէր երկիր և բնակիչք նորա, և առ Պօղոսիւ անցեալ էր վայելչութիւն աշխարհիս, ապա որ-չափ մերձ 'ի կատարածի այս եղիցի՝ որ-պէս ցուցանէ։ Սակայն կարծեմ և զայս, թէ այսու յայտ առնէ զանջրպետելն մարդկան 'ի խնամոցն Աստուծոյ՝ որով լուսաւորէին. այլ ոչ իսպառ, զի ոչ ա-նապակ և սաստիկ ածէ Աստուած ըղ-

1 Բ Օրէն. Երկրաւոր։

բարկութիւնն 'ի վերայ չարագործաց, այլ միայն թուլացուցանէ 'ի խնամոյն՝ զի վշտասցին և աղաչեսցեն, որպէս զի մի՛ արբցեն զբաժակն Աստուծոյ զանապակն։

"Եւ տեսի և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ 'ի մէջ երկնից՝ զի ասէր 'ի ձայն մեծ. վա՛յ, վա՛յ, վա՛յ՝ որ բնակեալ են յերկրի. յորժամ լիցի ձայն եւս երիցն փողոց, զոր կամիցին հրեշտակքն հարկանել"։ Եւ այսու զցաւակցութիւն և զմարդասիրութիւն սրբոցն հրեշտակաց ուսանիմք, որ կամին աստուածային գլթովն զդարձ մեղաւորացն. վասն որոյ՝ վա՛յ տայ այնոցիկ՝ որ բնակեալ են 'ի վերայ երկրի և խորհին զերկրաւորս, հող համբուրելով փոխանակ իւղոյն թափելոյ վասն մեր։ Բայց ընդէ՞ր վայ՝ առաւել յերիցն հրեշտակացն փողել՝, զի այս որ մինչև ցայժմ եկն 'ի վերայ երկրաւորացս՝ մարմնոյ միայն էր նեղութիւն, և պտուղ նորին ապաշխարութիւնն. իսկ այսուհետև ոչ այսպէս, այլ սատանայի յարձակումն և մեղաց փորձութիւն. վասն այսորիկ այժմ է վայ՝ յորժամ որք

'ի նեղութենէն պարտին՝ յաւիտենական
տանջանացն վիճակին։ Եւ այս լինի այնո-
ցիկ՝ որ մինչև յաստիս և եթ կալան զյոյս
իւրեանց և զհաւատ, և ոչ զերևելի
տանջանքս առին ապացոյց հանդերձե-
լոցն, յորում անխայէ[1] մատնել զմեզ բա-
րերար Տէրն, այլ զմարմինս միայն կամի
դատել ըստ աստուածայինն առաքելոյ,
եթէ «Դատեցարուք 'ի Տեառնէ և խը-
րատեցարուք»։ Արդ՝ զայսպիսի հար-
ուածքս որպէս բարեմիտ հիւանդք գո-
հութեամբ կրեսցուք 'ի բժշկէն հոգւոց
մերոց Աստուծոյ, զի և մեք հոգւով ա-
ռողջացեալք՝ ոչ լիցուք նիւթ գեհենին
ընդ աշխարհի դատապարտութեամբն[2],
այլ ընդ Քրիստոսի թագաւորեսցուք,
որում վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ յաւիտեանս. ամէն։

1 Բ Օրին. Անխնայէ։ 2 Մի օրի. Դատապարտեալ։

ԳԼ. ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

*Վասն հինգերորդ հրեշտակին, և իմանալի բազմա-
կերպարան մարախոյն։*

ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ

"Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. և տեսի զի աստղ մի անկանէր յերկնից 'ի յերկիր, և տուաւ նմա բանալի գլբոյն անդնդոց։ Եւ ելանէր ծուխ 'ի գլբոյն որպէս զծուխ հնոցի մեծի. և խաւարեցաւ արեգակն և օդք։ Եւ 'ի գլբոյն ելանէր մարախ 'ի յերկիր. և տուաւ նոցա իշխանութիւն իբրև զխայթոցս կարճի. և ասացաւ նոցա զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի, և մի՛ ամենայն ծառոց, բայց միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին զկնիք 'ի վերայ ճակատու իւրեանց։ Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի՛ սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ. և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ"։

Աստղ 'ի յերկնից իջեալ՝ ոմանք ասացին զդատաստանն՝ որ էջ 'ի հովիտն Յովսափատու։ Իսկ հրեշտակ աստուածային որ եբաց զդուբն, զգեհեանն և զոր 'ի

նմա տանջանացն մրրիկ։ Մարախ՝ զորդ-
նըն, որպէս ասաց Քրիստոս, "Որդն
նոցա ոչ մեռանի"։ ԵՒ ոչ զերկիր՝ այլ
զմարդիկ տանջէ, որք անձնիշխան կա-
մօք եղեն նմին արժանի։ Եւ հինգամ-
սեայ ժամանակն՝ ոչ եթէ սահմանեալ
է՝, այլ յաւիտենական։ Բայց ես զաստ-
զըն խոստովանիմ աստուածային գոլ հը-
րաման. իսկ թէ աստղ ասէ՝ ոչ է ոքան-
չելի, քանզի և 'ի Սինայ ամենայն ժողո-
վուրդն տեսանէին զբարբառ Աստուծոյ՝
որպէս ասացաւ. սա որ երևելովն յերկ-
րի՝ կապեաց զչար դիւացն զօրութիւնն,
մերձ 'ի կատարածն արձակէ դարձեալ
ներողութեամբ։ Եւ ծուխ կարծեմ գոլ
զչար խորհրդոցն զմեքենայս, որով խա-
ւարեցուցանեն զմարդիկ առ 'ի յոչ տե-
սանել զճառագայթս պատուիրանաց Ա-
րեգականն արդարութեան։ Իսկ մարա-
խըն որ տարածեցաւ՝ նոքին են դիւացն
բազմութիւն, որոց տուաւ խայթոց.
և ոչ թէ ոչ ունէին, այլ զի անգործ էր
եղեալ զօրութեամբ այնր՝ որ ետ իշխա-
նութիւն կոխել զօձս և զկարիճս։ Արդ՝
կամք նորա թուլացոյց դարձեալ թու-

1 Բ. Օրին. Սահման եղեալ է։

նիցն զօրանալ. և ասացաւ նոցա՝ զի մի՛ մեղիցեն երկրի և որոց 'ի նմա, բայց միայն մարդկան. այսինքն՝ զի նախ քան զայս այլովք հրեշտակօք զտարերքդ ե-հար, և ոչ զգաստացան մարդիկ, այժմ ասէ՝ որ մարտակիցդ էք նոցա, ընդ նո-սա միայն մարտիք։ "Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի՛ սպանցեն զնոսա, այլ չար-չարեսցեն ամիսս հինգ". այսինքն՝ մի՛ յան-հաւատութիւն մոլորեցուսցեն[1], քան-զի զայս ուսաք գոլ հոգւոյ մահ, այլ խոցոտեսցեն ընդ հինգ զգայարանս՝ մե-զանչելովն։ "Եւ չարչարանք նոցա իբ-րև զհարուածս կարճի". քանզի որպէս թոյնք կարճի զմարմինն մարմաջեցուցա-նէ, այսպէս և թոյնքն սատանայի զհո-գին 'ի խղճէ մտացն չարչարէ անդադար։

"Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և մի՛ գացեն. և ցանկան մեռանել, և փախիցէ 'ի նոցանէ մահ"։ Այնչափ ասէ յաճախեն մարդիկ 'ի մե-զըս[2], մինչև զանհաւատութիւն ունել փափագեն, և ծանր թուեսցի յաչս նո-ցա լոկ անուն աստուածպաշտութեան. ցանկան լինել անաստուածք, զի առանց

1 Բ Օրէն. Մոլորեցուցանէք։ 2 Ա Օրէն. Ի չարիս։

սագտանաց մտաց մեղիցեն՝ որպէս և
կռապաշտքն. սակայն այս ոչ լինի նոցա,
զի խափանեալ է սատանայ յայսմ մար-
տէ հրամանաւն Աստուծոյ։

"Եւ նմանութիւն մարախոյն՝ նմա-
նութիւն ձիոյ պատրաստելոյ 'ի պատե-
րազմ. և 'ի վերայ գլխոց նոցա իբրև ըղ-
պսակ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա
իբրև զերեսս մարդոյ, և հերք նոցա իբ-
րև զհերս կնոջ, և ատամունք նոցա իբ-
րև զառիւծու։ Եւ ունէին զրահս՝ իբ-
րև զզրահս երկաթիս"։ Պէսպէս կեր-
պարանք մարախիս՝ ասացին ոմանք թէ
զտանջողական աստուածային զհրեշտակ-
սըն ցուցանէ, որք և զիւրաքանչիւրսն
բացայայտեցին միտս[1] 'ի դէմս ահեղ
և զարմանալի երագ և փոյթ տանջանա-
ցըն։ Այլ ես որպէս ցուցի մարախ ըզ-
չար դևսն, այսպէս առնում և զայս.
և ասեմ նմանութիւն ձիոյ՝ զուժգնու-
թիւն նոցա 'ի մարտնչելն[2] ընդդէմ մեր
զօրութեամբ։ Իսկ պսակ ոսկի ունին՝ զոր
'ի վերայ մեր զյաղթութիւնն. քանզի
յաղթահարելն մեր 'ի հեշտութենէ ախ-
տիցն՝ պսակ է համարեալ նոցա։ Երեսք

1 Բ Օրէն. Ի միտս։ 2 Ա Օրէն. Ի մարտն։

նոցա՝ և հերքն[1] որ իբրև զկնոջ, ախտա-
լից պոռնկութիւնն՝ առ որ զմեզ ընկրղ-
մեն. իսկ ատամունքն զմահացու թու-
նալից խայթոցսն. և զրահն՝ զխստասրբ-
ութիւնն։

"Եւ ձայն թևոց նոցա իբրև զձայն
կառավար ձիոց բազմաց՝ որ արշաւեն
'ի պատերազմ. և ունին ագիս ըստ նը-
մանութեան կարճի, և խայթոց յագիս
նոցա. և ունէին իշխանութիւն չարչա-
րել զմարդիկ ամիսս հինգ. և ունին թա-
գաւոր 'ի վերայ իւրեանց զհրեշտակն
դժոխոց. և անուն նորա եբրայեցերէն
աղբագոն, որ կոչի 'ի հայ բարբառ՝ կո-
րուստ։ Ահաւասիկ վայ մի էանց և վայք
երկուք գալոց են"։ Արդարև վայ եղկու-
թեան անցեալս էած 'ի վերայ մարդկան.
զի թէ վասն ծիծաղելոյ՝ ճշմարտու-
թիւնն Քրիստոսի վայ ետ, ուր այս ա-
մենայն մարտս յառնէ 'ի վերայ տկար
մարմնոյ, զիա՞րդ ոչ վայէ զնա յարդար ի-
րաւանցն։ Այլ զձայն թևոց իմանալի
մարախին՝ զմտաւ ածեմք վասն յարու-
ցանելոյ[2] 'ի վերայ մեր երագ և փոյթ

1 Մի օրին. Երեսք նոցա իբրև զկնոջ։
իբրև մարդոյ, և հերք իբ-
2 Ա Օրին. Յարուցելոյ։

զպատերազմ, որպէս և ասէ սաղմոսեր-
դուն Դաւիթ։ Իսկ զի նման կարճի էր
ագին, զմեղացն զկատարումն ցուցանէ.
զի թէպէտ 'ի սկիզբն քաղցր է, այլ յա-
գի նորա, այսինքն 'ի վախճանն խայթոց
է՝ մահ հոգւոց. քանզի մեղք յորժամ
կատարի՝ ասէ, զմահ ծնանի։ Իսկ հինգ
ամիսն, քանզի կատարի այս հինգ զդայ-
արանօք, և կամ զհեշտութեան ժամա-
նակին փոքրկութիւնն[1] համեմատէ ընդ
հանդերձեալ փոխանակ այնորիկ տան-
ջանացն[2]։ Այսքան հասաք առ այս՝ որ-
պէս և գրեցաք։ Եւ թագաւոր նոցա է
բանսարկուն, քանզի կարգ է առ դևսն
մեծութեան և փոքրկութեան, որպէս
'ի խոստովանութիւնն Կիպրիանոսի ու-
սաք։ Սա ըստ պաղոյ գործոյն ունի զա-
նունն. քանզի ճշմարտապէս զհաւան-
եալսն իւր կորուսանէ, զոր ծանուցեալ՝
անհաշտ առցուք առ նա պատերազմ։
Անցեալ միոյ վայիս այսպէս վշտօք, սպառ-
նայ զերկուսն՝ որ յետ այսր գալոց են։

1 Ա Օրէ. Փափկութիւնն։ փոխանակ այնորիկ տան.
2 Բ Օրէ. Հանդերձեալսն. Ջանսն։

ԳԻ: ՔՍԷՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վասն վեցերորդ հրեշտակին՝ որ լուծանէ զ'ի վերայ Եփրատայ զհրեշտակսն:

"Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. և լուայ ձայն 'ի չորից կեն-դանեացն որ են առաջի սեղանոյն Աստուծոյ, զի ասէր ցհրեշտակն վեցերորդ որ ունէր զփողն. լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս 'ի վերայ գետոյն Եփրատայ: Եւ լուծան չորք հրեշտակքն պատրաստեալք 'ի ժամ և յօր և յամիս և 'ի տարի, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան. և համարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց և հազարք հազարաց լուայ զթիւ նոցա":

Զայս ասեն ոմանք զչորս հրեշտակսն՝ զՄիքայէլ գոլ և զԳաբրիէլ և զՈւրիէլ և զՌափայէլ, որ զսկզբնակապեալ հրեշտակսն յաստուածային տնօրէնութենէն, ուրախութեամբ՝ արձակեն յաւուրն դատաստանի յամբարշտացն դատապարտութի. և զերրորդ մասն, ասեն, 'ի նոցանէ ապականէ: Սակայն ես ասեմ

Ի Յօրին. Միոսմ. Յաստուածային տնօրէնութեանն ուրախութիւնն:

Իսկ Ա օրի. Յաստուածային տեսութեանն ուրախութիւն, արձակեն:

և զայս գոլ զչար դևսն, զոր կապեալ
էին չորք հրեշտակքն և արձակեցին. և
հրեշտակքն այսոքիկ են վերակացուք
աշխարհիս և նախախնամիչք մարդկան.
սոքա որք կային 'ի վերայ ամենայն[1] խոր-
հրդոց, և պարսպէին զարդարութիւնն,
որոյ է ապացոյց մեծն Եփրատ, այժմ
լուծանեն մարտնչել ընդ նոսա զօրաց
դիւացն: Եւ օր և ամ և ամիս՝ ասէ վասն
փոքրկութեան ժամանակի մարտին, զի
չափով է և սակաւ աւուր[2]: Իսկ զի ե-
զականապէս Եփրատ դնէ և ոչ բազմա-
ւորական, քանզի մի է ամենեցուն յար-
դարութիւնն խոկումն: "Եւ համարք
հեծելոցն էր բիւրք բիւրուց". մարդ-
կան անկար է բիւրս բիւրոց ժողովել 'ի
միասին, այլ դևքն ե՛ն և այլ առաւել, զի
ոմանք լի ասացին զօդդ նոքօք. սոքա կա-
պեալք էին 'ի ձեռն հրեշտակաց, և ար-
ձակեցան մարտնչել ընդ մարդկան և խը-
ռովեցուցանել զազգս, ոչ միայն 'ի վե-
րայ քրիստոնէից՝ այլ և ընդ միմեանս 'ի
յետին աւուրս, զի փորձքն և հաւա-
տարիմքն երևեսցին, և որպէս ցորեան
յերկնից արքայութիւնն շտեմարանեա-

1 Բ Օրէն. Ամենեցուն: 2 Ա Օրէն. Սակաւաւոր:

ցին ։ Իսկ յարգատեսակ ամբարիշտքն հողմով մարտին 'ի նոցանէ բաժանեսցին և լուցկի հրոյն[1] լինիցին ։ Դարձեալ կարծեմք պարզաբար, թէ վասն այնորիկ յիշատակէ զԵփրատ, զի յայտ արասցէ թէ յայնմ կողմանէ գալոց է հակառակ քրիստոսն, որ և բազմութիւն զօրաց ածէ ընդ իւր՝ որպէս ցուցանէ, և զբազումս 'ի մարդկանէ սատակէ ։

"Եւ տեսի ձիս 'ի տեսլեանն, և հեծեալս 'ի նոսա՝ որք ունէին զրահս հրեղէնս և յակինթս հրդեհեալս ծծմբով. և գլուխք ձիոցն իբրև զգլուխս առիւծուց. և 'ի բերանոյ նոցա հուր ելանէր և ծուխ և ծծումբ ։ Եւ 'ի հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ 'ի հրոյն և 'ի ծխոյն և 'ի ծծմբոյն, որ ելանէր 'ի բերանոյ նոցա. զի իշխանութիւն 'ի բերանս է նոցա և յագիս նոցա, և ագիք նոցա նմանութիւն օձի. և ունէին գլուխք՝ որովք սատակէին զանիրաւս" ։ Ամենեցուն ինձ թուի անմարթ առնուլ զայս 'ի վերայ մարմնաւոր զօրաց զձև կերպարանի, սակայն դիւաց 'ի դէպ է՝ որպէս ասացաք, զի հեծեալ

1 Բ Օրին. Հնոցին եղիցին ։

են 'ի վավաշոտս 'ի մարդկանէ որպէս 'ի ձիս։ Իսկ հրակերպն յակինթն և ծծումբն զայրեցողական զօրութիւն ցանկական խորհրդոցն գոլ նշանակ կարծեմ։ Այլ գլուխ առիւծուն՝ զուժգնութիւն յափշտակողութեանն[1], և հուրն և ծծումբն՝ զսաստկութիւն չարահոտ գազանութեանն։ Սոքա գործի առնուն ըզբարբարոսս, հեծանին 'ի խորհուրդս նոցա, և զերրորդ մասն մարդկան[2] սատակեն. սակայն մեք այժմ տեսանեմք ոչ զերրորդն միայն՝ այլ և ս առաւել։ Վայելչապէս և ագին որպէս օձի, և գլուխն որպէս առիւծու[3], և երկոքումբք առին իշխանութիւն 'ի վերայ մարդկան, զի երկու այս ախտիւս մարտնչին, պոռնիկութեամբն՝ որ ընդ պատրողական բանս խառնէ զթոյնսն սպանող, և ըսպանութեամբն՝ որ իբրև զառիւծ յափշտակէ և գիշատէ։ Յադին է հոգւոց մահու իշխանութիւն, և 'ի բերանն՝ մարմնոց։

"Եւ այլք 'ի մարդկանէ որ ոչ մեռան 'ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշխա-

1 Ա Օրին. Յափշտակութեանն։

2 Բ Օրին. Յաւելու՝ ասէ մարդկան։

3 Բ Օրին. Որպէս զօձի... զառիւծուն։

բեցին և ոչ դարձան 'ի գործոց ձեռաց
իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և
կռոց՝ յոսկեղինաց և յարծաթեղինաց՝ և
'ի պղնձոյ և 'ի քարէ և 'ի փայտէ, որք
ոչ տեսանել կարեն և ոչ լսել և ոչ գը-
նալ. և ոչ ապաշխարեցին՝ 'ի մարդաս-
պանութենէ և 'ի դեղատուութենէ և
'ի պոռնկութենէ և 'ի գողութենէ իւ-
րեանց»։ Տես զանմտութիւնն մարդկան,
զի որք ներողութեանն արժանացան՝ ոչ
խորհեցան թէ քաղցրութիւնն Աստու-
ծոյ կամի զնոսա յապաշխարութիւն ա-
ծել, այլ մնացին յիւրաքանչիւր չարիս
անապաշխար. յայտ է թէ զհարուածս
ընկերացն դիպուած ժամանակի կար-
ծեցին, և ոչ յամենահայեաց՝ կամացն
Աստուծոյ ածեալ իրաւամբք։ Այլ կը-
ռապաշտութիւն կարծեմ ասել զար-
ծաթսիրութիւնն՝ ըստ առաքելոյ։

Յայսպիսի մտաց եղիցի մեզ զար-
թնուլ շնորհօքն Քրիստոսի, և 'ի տե-
սանելն զպատուհաս այլոց՝ յանձինս մեր
հայել և իմաստնանալ. գործս վայելուչս
հաւատոցն Քրիստոսի ցուցանել, զի մի
լուիցուք զահեղ բարբառն որ ասէ.

"Ամէն ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ". այլ զքաղցրն զայն և զերանաւէտ կոչումն, "Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ"[1]. շնորհօք և մարդասիրութեամբ նորին տեառն Քրիստոսի՝ որ վասն մեր խաչի համբերեաց. ընդ որում Հօր և սուրբ Հոգւոյն՝ փառք պատիւ և երկրպագութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

ԳԼ: ՔՍԷՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վասն հրեշտակին որ զգեցեալ էր զամպն և զծիածանն, և զվախճանն նշանակէր.

ՃԱՌ ՏԱՍՆԵՐՈՐԴ

"Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկնից, և զգեցեալ էր ամպ, և ծիածան 'ի գլուխ նորա. և երեսք նորա իբրև զարեգակն, և ոտք նորա իբրև սիւն հրոյ": Հրեշտակիս՝ զոր ասէ ամպով ծածկեալ և ծիածանիւ պսակեալ, ըզմտաւ ածեմք զերկնայնոցն զանազան պա-

[1] Բ Օրէն. Եկայք օրհնեալ հօր իմոյ, որ ասէ:

տիւ և փառաց զվայելչութիւնն. իսկ ե-
րեսքն՝ որ իբրև զարեգակն, յայտ առնէ
զառաւելութիւն նորա իմացականու-
թեանն՝ տեսութեամբ[1] զաստուածային
իմաստութիւնն. և հրեղէն ոտքն՝ զա-
հեղ և զտանջողական գոլն 'ի վերայ այ-
նոցիկ՝ որք 'ի ծովու և 'ի ցամաքի գոր-
ծեն զանիրաւութիւն, ըստ որում և ետ
զոմն յերկիր և զոմն 'ի ծով, զի իւրա-
քանչիւր անիրաւելոցն[2] զդատապար-
տութիւնն 'ի վերայ ածցէ։

"Եւ ունէր 'ի ձեռին իւրում գըր-
կոյք մի բացեալ. և եդ զոտն իւր զաջ
'ի վերայ ծովու, և զձախն 'ի վերայ եր-
կրի. և աղաղակեաց 'ի ձայն մեծ, և գո-
չեաց իբրև զառիւծ. և յորժամ աղա-
ղակեաց՝ խօսեցան եւթն որոտմունք
յիւրեանց ձայնսն"։ Գրկոյքն փոքր՝ ըզ-
փղձկելոցն 'ի չարիս զառ յապա զպատու-
հասն ունէր գրեալ, զոր կրելոց են որք
'ի ծովու և 'ի ցամաքի գործեն զչարիս.
առ այս հայի և հրեղէն ոտքն՝ զոր ետ
'ի ծովու և 'ի ցամաքի։ Իսկ զգոչումն
հրեշտակին նմանեցուցանէ առիւծու՝

[1] Ա. Օրէն. Իմացականն տեսութեամբ։

[2] Ա. Օրէն. Յիւրաքանչիւրսն անիրաւելոց։ Մէս-
օրէն. Իւրաքանչիւրոց։

վասն ահեղ և անպատմելի սպառնալեա-
ցըն 'ի վերայ ամբարշտաց, որում վկայէ
Դանիէլ, որ ոչ կարաց զդէմս հրեշտա-
կին տեսանել, կամ զձայնն լսել։ Եւ զի
'ի սորա աղաղակելն խօսեցան եւթն ո-
րոտմունք յիւրեանց ձայնսն, այլ խոր-
հուրդ յայտնեցաւ[1] երանելոյս նախ քան
զկատարածին դիտութիւնն. և կարծեմ
զայս գոլ զերկնաւորաց բարեկարգու-
թիւնն, որք են յեւթն պարունակս ըստ
Իրենէոսի[2] և Եպիփանու սրբոցն, այս է
եւթն դասուցս սահման պաշտպանու-
թեանն Աստուծոյ, որպէս գրէ մեծն Դի-
ոնեսիոս. որոտաց յանձնիշխանականին
լսելիս յաւետարանչիս։

"Եւ յորժամ խօսեցան եւթն որոտ-
մունքն՝ կամէի գրել, և լուայ ձայն յեր-
կնից՝ զի ասէր. կնքեա զոր խօսեցան եւ-
թըն որոտմունքն և մի՛ գրեր"։ Յայտ է՝
թէ յԱստուածութենէ անտի եկն այս
ձայն, զի լուաւ՝ և ոչ ետես զոր խօսէր.
և ընդէ՞ր ասէ՝ թէ կնքեա և մի՛ գրեր.
կարծեմ թէ վասն անհաւատութեան
լսողացն, ըստ որում ասէր Քրիստոս,
"Եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ և ոչ

1 Բ Օրին. Ազդեցաւ։ տիր գրի՝ Իրենէոս, Երինիոս,
2 Յամէնայն օրի. անիւք- կամ Երինէոս։

հաւատայք, զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք »։

« Եւ հրեշտակն զոր տեսի՝ որ եդ զոտն իւր 'ի վերայ ծովու և զմիւսն 'ի վերայ ցամաքի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս. և երդուաւ 'ի կենդանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս՝ և որ 'ի նմա, և զերկիր՝ և որ 'ի նմա. զի ոչ եւս կայ այլ ժամանակ »։ Աստուած՝ զի մեծ է քան զամենայն, ոչ յոք երդնու՝ այլ յանձն իւր. հրեշտակք որպէս արարած՝ յարարիչն. և երդուաւ վասն զմեր անհաւատութիւնն հաւատարմացուցանել։ Ժամանակ ոչ գոյ այլ՝ որ արեգակամբ չափի, այլ կեանք յաւիտենից՝ թուոյ ժամանակի գերազանցեալ։

« Այլ յաւուրս ձայնի եւթներորդ հրեշտակին՝ յորժամ հարցէ զփողն, կատարեսցի խորհուրդն Աստուծոյ՝ որ աւետարանեցաւ 'ի ծառայից իւրոց մարգարէիցն »։ Յայտ է՝ թէ յետ կատարման եւթն դարուն և լինելոյ որ 'ի նըմա արհաւիրք՝ զոր ազդելոց է հրեշտակն, կատարեսցի խորհուրդն Աստուծոյ, հանդերձեալ փառքն և դատաստանն, զոր [1] նախ ցուցին մեղ հոգւոյ նախատե-

1 Բ. Օրին. Փառօքն, և դատաստանն՝ զոր։

սութեամբ սուրբքն՝ որ 'ի հնումն և 'ի նորումս. քանզի և զառաքեալսն ասէ մարգարէս, ըստ որում և յետ սակաւուզսոյն զաւետարանիչս կամի անուանել մարգարէ ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Զի զգրկոյսն ա՛ռ աւետարանիչս 'ի ձեռաց հրեշտակին ։

"Եւ ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսեցաւ ընդիս և ասէ. ե՛րթ ա՛ռ զգրկոյսն զոր ունի հրեշտակն բացեալ 'ի ձեռին իւրում, և կայ 'ի վերայ ծովու և ցամաքի" ։ Ըստուած՝ որ արգել 'ի նմանէ զգիտութիւն երկնայնոցն, հրամայէ զառ յապա լինելոցն յերկիր՝ առնուլ 'ի հրեշտակէն և ուսանել գրովքն ։

"Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի 'ի նմանէ. և ասէ ցիս, ա՛ռ զսա և կեր զդոյն, և դառնասցի յորովայն քո, այլ 'ի բերան քո է քաղցր իբրև զմեղր" ։ Քաղցր, ասէ, քեզ է հանդերձեալ վրտանգն աշխարհի՝ որ գրեալն է աստ, թուի՝ ընդ իմանալն. այլ յորժամ ծասքես 'ի խուզողականի դատմունս և իջուցանես 'ի մտացդ որովայն, դառնա-

ցեալ վշտանաս 'ի գիտելն զպատուհասն՝ որ գալոցն է 'ի վերայ աշխարհի։ Քանզի ցաւակից է սրբոցն բարք 'ի վերայ մեղաւորացն պատուհասի, որք ընդ խընդացեալսն խնդային, և ընդ վշտացեալսն վշտանային։

"Եւ առի զգրկոյսն բացեալ 'ի հրեշտակէն՝ և կլայ զնա. և էր 'ի բերան իմ որպէս մեղր. և յորժամ կերայ, դառնացաւ յորովայն իմ"։ Քաղցր է գիտութիւն գրոցն վասն պայծառութեան խորհրդոցն որ 'ի նմա, և ճգնելի՝ վասն որ 'ի վախճանի հարուածոցն։

"Եւ ասէ ցիս. հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ 'ի ժողովուրդս և 'ի հեթանոսս և 'ի լեզուս և 'ի թագաւորս երկրի"։ Այսինքն՝ գրովքդ զոր դու ճաշակեցեր ուսեալ՝ զխորհուրդն, այլոց ուսուցանես մինչև 'ի կատարած զդոյն մարգարէութիւն աստուածային յայտնութեան. և կամ թէ՝ զի 'ի վախճանի գալոց է ընդ Ենովքայ և ընդ Եղիայի զհակառակ քրիստոսին արգելուլ զընդունելութիւն։

1 Բ Օրին. Զոր գուշակեցեր ուսեալ զխորհուրդն։ Միսս օրին. Առեալ։

"Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւաղանի. և կայր հրեշտակն և ասէր ցիս. արի՛ և չափեա զտաճարն Աստուծոյ և զսեղանն և զերկրպագուսն որ 'ի նմա։ Եւ զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա և մի՛ չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և երկու"։ Ի ձեռն եղեգանս ցուցանէ զամենայն ինչ իմանալի գոլ որ յերկինս երևեցաւ իւր, և ոչ որպէս առ մեզ անշունչ տարր՝ սեղանն և աթոռն և այլն ամենայն։ Քանզի եղէգն իմանամք տուեալ նմա զհրեշտակական հանճարն, որով կարող լինէր առնուլ զհանգամանս երկնի՝ և որ 'ի նըմա փառաւորութեանցն։ Արդ՝ արի ասէ՝ չափեա, յայտ է թէ 'ի տկարութենէ իմաստութեանդ արի, և զօրացեալ առ զչափ երկնային խորանիս վայելչութեան, և զոր 'ի սմա սեղանոյս զՔրիստոսի, զի նա է նոցա իմացականն[1] կերակուր. Ծանիր և զգորա փառսն և զերկրպագուսն որ 'ի նմա, այսինքն զդասս արդարոցն և զհրեշտակացն, զորս և ետես յերկրպագութիւն. իմանալ, ասէ,

[1] Բ Օրէն. Իմացմանն։

զնոցա պայծառ դասակարգութիւնն։ “Եւ զգաւիթն մի՛ չափեր”, այսինքն զերկիրս մի՛ հաւասարեր երկնի, զի ալ-ւեալ է զնա հեթանոսաց սուտ քրիստոսին և նորա արբանեկացն։ “Եւ զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և երկու”. այսինքն՝ զնոր Երուսաղէմ զկաթուղիկէ եկեղեցի՝ որ ընդ այն ժամանակս յանօրինացն հալածական լինի. որ լինի, ինձ թուի, 'ի գալստեան սուտ քրիստոսին, քանզի հաւատացեալք երեք ամ և կէս չարչարելով հալածին։ Ոմանք տաճար Աստուծոյ զհին կտակարանսն իմացան, և արտաքոյ գաւիթ՝ զնորս, որ վասն բազմութեանն 'ի նա փրկելոցն՝ ոչ չափի։ Իսկ ամիսք՝ զժամանակին փոքրկութիւն, որ 'ի նորոյ ուխտէս մինչև յերկրորդ գալուստն Քրիստոսի։ Այլ մեք զնախասացեալսդ տեսաք։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

Վասն Ենովքայ և Եղիայի։

“Եւ տաց երկուց վկայից իմոց՝ և մարգարէասցին աւուրս հազար երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձ։ Սո-

քա են երկու ձիթենիքն և երկու ճը-
րագք, որ կան առաջի Աստուծոյ 'ի յեր-
կրի»։ Զսոսա զԵնովք և զԵղիա ասա-
ցին բազումք 'ի վարդապետաց, որք մար-
դարէանան զերեք ամ և զկէս, զի ա-
մըն երեք հարիւր և վաթսուն օր է թը-
ւեալ։ Իսկ քուրձ վերարկեալ՝ զտրտմու-
թիւնն և զսուգ զոր արժանապէս կրեն
'ի վերայ յանցուցելոցն, երևեցուցանէ։
Իսկ զի ըստ Զաքարիայի՝ ճրագաց և ձի-
թենեաց զնոսա օրինակէ, կարծեմ վասն
լուսաւորելոյ զխաւարեալ ժամանակն
մարգարէութեամբն իւրեանց[1]։

"Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր
ելցէ 'ի բերանոյ նոցա՝ և կերիցէ ըզ-
թշնամիս նոցա. և որք կամիցին մեղան-
չել նոցա՝ այսպէս սատակեսցին։ Սոքա
ունին իշխանութիւն փակել զերկինս՝ զի
մի՛ տեղասցէ զաւուրս մարգարէութեան
նոցա. և ունին իշխանութիւն 'ի վերայ
ջուրց՝ դարձուցանել զնոսա յարիւն, և
հարկանել զերկիր յամենայն հարուածս՝
քանիցս անգամ և կամիցին»։ Տես զաս-
տուածային բարերարութիւնն՝ թէ որ-
պէս առաքէ զնոսա մեծաւ զօրութեամբ

[1] Բ Օրէն. Իւրով։

վասն հոգւոց բժշկութեան. զի զամենայն նշանս և զարուեստս զոր 'ի դեղոց և 'ի կախարդական հնարից արասցեն սուտքն, սոքա եկեալ ճշմարիտ սքանչելագործութեամբքն նշաւակեալ ունայնացուցանեն ընթերակայութեամբ ճշմարտութեանն լուսոյ զխաւար ստութեանն փարատեալ, և զբազումս 'ի մոլորելոցն առ ինքեանս գրաւեալ. մանաւանդ և հարուածովք երաշտութեանն և տարերցն փոփոխմամբք բռնի ձգեն առ ստուգութիւնն, և հակառակ կան սուտ քրիստոսին մինչև 'ի վախճան մարդարէութեանն:

"Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղթեսցէ նոցա և սպանցէ զնոսա. և դի նոցա անկեալ կայցէ 'ի մէջ հրապարակաց քաղաքի նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն Սոդոմ և Եգիպտոս, ուր և տէրն նոցա խաչեցաւ": Յետ յանդիմանելոյն նոցա զհակառակ քրիստոսին խաբէութիւնն, 'ի խաւարին և 'ի խորին դժոխոցն, ասէ, ելանէ բանսարկուն, կամ թէ իւրովի, և կամ թէ որ-

պէս կարծեմ՝ զարբանեակն իւր զսուտ
քրիստոսն զինէ, և սպանանէ զնոսա թոյլ
տալովն Աստուծոյ. և դի նոցա անկեալ
կայցէ 'ի քաղաքն անթաղ՝ զոր Սոդոմն
կոչէ, և յելիցն յայտ առնէ՝ թէ Երու-
սաղէմ է, զի ասէ թէ "Ուր տէրն նոցա
խաչեցաւ"։ Տէրն այն որ եկաց 'ի նը-
մա թագաւոր ըստ նմանութեան Դաւ-
թի՝ որդի նորա ըստ մարմնոյ, որ ելից
զմարգարէութիւնն՝ որ ասէ. "Ցետ այ-
սորիկ դարձայց և շինեցից զյարկսն Դաւ-
թի զանկեալն, և զկործանեալն նորա վե-
րըստին շինեցից"։ Ի սորա գալստեանն,
որ եկն յանուն Հօր, անմիտ հրէայքն
մոլորեցան. և զայն որ յիւր անուն գայ՝
ընդունիցին, և զվկայս ճշմարտութեանն
սպանանիցեն։ Այլ Սոդոմ կոչէ զԵրու-
սաղէմ, կարծեմ թէ վասն յաճախելոյ 'ի
նմա հեշտախտութեանն յաւուրսն յայ-
նոսիկ։

"Եւ տեսցեն զնա ամենայն ցեղք և
ժողովուրդք, և ամենայն լեզուք և հե-
թանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ զե-
րիս աւուրս, և ոչ տացեն թաղել 'ի
գերեզմանս զոսկերս նոցա։ Եւ որ բը-
նակեալ են յերկրի՝ ուրախ լինին և խըն-
դան 'ի վերայ նոցա, մինչև ընծայս և

պատարագս տան տանել միմեանց. վասն զի սոքա երկոքեան մարգարէքս չարչարեսցեն զբնակիչս երկրի »։ Սաութիւն և պատրանք սուտ քրիստոսին զօրանայ, և անուն նորա անջնջելի գրեսցի 'ի սիրտըս հրէիցն և հեթանոսաց, վասն այսորիկ և թաղել զմարմինս սրբոցն որ հակառակ այսր մարտնչէին՝ արգելուն. քանզի ընդ զերծանելն 'ի չարչարանացն զոր վասն ապաշխարութեան կրէին՝ ուրախանան, անգիտացեալ՝ թէ "Զոր սիրէ տէր՝ խրատէ և տանջէ զամենայն որդի զոր ընդունի ». և զի՝ 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ճմլէին. որպէս զի մի մերձեսցի առ նոսա չարութիւն. այլ ընծայս և պատարագս տան սպանողաց սրբոց մարգարէիցն, իբր թէ նոցա մեռանելովն զերծան 'ի պատուհասակոծն լինելոյ ։

ԳԼ ։ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԻՆ

Զի սպանեալ սուրբք 'ի նեռնէն՝ դարձեալ յառնեն ։

"Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի յԱստուծոյ մտցէ 'ի նոսա. և յարիցեն կացցեն 'ի վերայ ոտից իւ-

բեանց. և ահ և երկիւղ մեծ անկաւ 'ի
վերայ ամենեցուն՝ որ սպանինն զնոսա։
Եւ լուայ ձայն մեծ՝ որ ասէր ցնոսա.
վերացիք ելէք ասա. և վերացան ելին
յերկինս ամպովք"։ Զայս ամենայն հը-
րեշտակն որ ետ զդիրսն յերանելին՝ պատ-
մեաց նմա նախ քան զմխելն 'ի տեսիլ
այսմ խորհրդոյ. և տես 'ի նոյնս՝ զի հա-
մաթիւ ամացն յորս մարգարէացան՝ ա-
ւուրս մնան մարգարէքս անթաղ. և ա-
պա աստուածային կամօքն յառնեն դար-
ձեալ, և յերկինս տէրունական նմանու-
թեամբ ամպովք վերանան, որով երկիւղ
և զարհուրումն սպանողացն որք տե-
սանենն՝ լինի։

"Եւ տեսին զնոսա թշնամիք նոցա.
և 'ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ ե-
ղև, և տասներորդ մասն քաղաքին ըն-
կըզմեցաւ, և մեռան 'ի շարժմանէն արք
եւթն հազար"։ Զգալի այս լինի՝ միան-
գամայն և իմանալի. քանզի և իմանալի
շարժումն ասացաք զփոխադրութիւն օ-
րինաց՝ որ եղեալ է յայնժամ. իսկ այս՝
զգալի շարժումն յաստուածային բար-
կութենէն վրէժխնդրութիւն 'ի վերայ
սպանողացն մարգարէից, որ զմի 'ի տասն
մասնէ քաղաքին ընկղմէ բնակչօքն, այ-

լոցն[1] ապաշխարութեան ապացոյց, սա-
կայն ոչինչ փոյթ առնեն ապրեալքն. և
թուի թէ 'ի հրէիցն լինիցին սոքա, որք
սուտ քրիստոսին հաւանեցան:

"Եւ յետ այնորիկ ահ մեծ եղև յա-
մենեսեան, և փառս տային Աստուծոյ
երկնաւորի: Ահաւասիկ վայն երկրորդ
էանց, և վայն երրորդ գալոց է վաղվա-
ղակի": Տանջին անհաւատքն և փառս
տան հաւատացեալք՝ որք լինիցին յայնմ
ժամու[2] պարուրեալ 'ի թաքստեան, և 'ի
տատանումն կան յերկիւղէ կարծեացն
եկելոց 'ի վերայ աշխարհի. յորժամ տե-
սանեն զճշմարտութեանն պայծառանա-
լն, զուարճանան և փառս տան Աստու-
ծոյ: Արդ՝ խոստանայ մեզ զերրորդ վայն
յետ երկրորդիս անցանելոյ, յայտ է թէ
զոր 'ի ձեռն եւթն փողոյն: Այլ մեք
մաղթեսցուք Քրիստոսի ասելով. դարձ
առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դար-
ձո զսրտմտութիւնս քո 'ի մէնջ. և մի
մտաներ 'ի դատաստան ընդ ծառայս քո,
որք դատեալք 'ի քէն մարդասէր տէր՝
խրատիմք. քանզի կամիս սակաւ վշտօք
'ի յաւիտենականն զերծուցանել տան-

1 Բ Օրէն. Որոյ: 2 Ա Օրէն. Յայնժամ:

ջանաց. ո՛վ որ առատդ ես գթութեամբ Քրիստոս Աստուած մեր, և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԻ։ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վասն եւթն փողոյն, և զի գովեն սուրբքն՝ զԱստուած սուրբն 'ի հանդերձեալ դատաստանին։

ՃԱՌ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ յորժամ եւթներորդ հրեշտակըն հարկանէր զփողն, եղև ձայն յերկինս՝ և ասէ. եղև թագաւորութիւն ամենայն տիեզերաց Տեառն մերոյ և Քրիստոսի իւրոյ. և թագաւորեսցէ 'ի վերայ ամենայնի յաւիտեանս յաւիտենից։ Եւ քսան և չորս երիցունքն որք նստէին յաթոռս իւրեանց առաջի Աստուծոյ, անկանէին 'ի վերայ երեսաց իւրեանց՝ և երկիր պագանէին տեառն Աստուծոյ, և ասէին. գոհանամք զքէն տէր Աստուած ամենակալ՝ որ է՛ն և ես, և առեր զզօրութիւն քո մեծ, և թագաւորեցեր։ Եւ հեթանոսք բարկացան, և եկն բարկութիւն քո և ժամանակ մեռելոց՝ զի դատեսցին"։ Աստ դարձեալ

սուրբ հրեշտակքն՝ և որք հրեշտակական քաղաքավարութեամբ մտին յերկինս, գոհանան զԱստուծոյ վասն դադարեցուցանելոյ զերկունս աշխարհի և զբընակչաց նորին, և ասեն. որ էնն և ես. զի էր որպէս զԱստուած ամենակալ. և եղև դարձեալ մերով բնութեամբս տէր ամենայնի։ Ընդ այս դևք և որք նոքօք վարին[1] հեթանոսք՝ բարկացան, որք մինչև ցայնժամ մարտնչէին ընդ ճշմարտութեանն։ Իսկ արդ նահանջեաց և եկն վրէժխնդրութեն Աստուծոյ ժամանակ, ըստ որում ասէ՝ "Եկն բարկութիւն քո և ժամանակ մեռելոց", այսինքն բարկութիւն յանցաւորացն և ժամանակ աստուածահաճոյ մեռելոցն յարութեան. զի ոմանց յարութիւն կենաց է, և ոմանց յարութիւն դատաստանաց[2]։

"Եւ տաս վարձս ծառայից քոց մարգարէից, և սրբոց երկիւղածաց անուան քո՝ փոքունց և մեծամեծաց, և ապականես զապականիչս երկրի"։ Ընորհես, ասէ, ըստ անսուտ խոստմանն՝ սիրելեաց քոց զհատուցումն, յորս[3] զերիսն զմտաւածելի է, որք զհարիւրն և զվաթսունն

1 Բ Օրէն. Վարէին։ դատեսցին։
2 Ա Օրէն. յարէ Զի 3 Բ Օրէն. Յորոյ։

և զերեսունն պտղաբերեցին։ Փոքր և մեծ ասէ՝ զառաւելութեամբ[1] գերազանցեալսն, և զնուազսն 'ի սրբոց՝ որք ըստ իւրաքանչիւր արժանեաց առնուն զպլսակն, և հանգչին 'ի բազում օթեվանս։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վասն խռովութեան եկեղեցւոյ, որ խսկզբանէ և որ 'ի ձեռն նեռինն։

"Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս, և երևեցաւ տապանակն Աստուծոյ 'ի տաճարն իւր. և եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք և շարժումն և կարկուտ մեծամեծ"։ Բանին երկինք ոչ զգայապէս՝ այլ իմանալի աչացն առաջի տեսութեան. և այս վասն այնորիկ՝ որպէս զի հալածեալ և անդամրացեալ զեկեղեցին անդրանկաց տեսցէ երանելիս։ Արդ՝ տաճար Աստուծոյ ասէ՝ զերկնային տանն վայելչութիւն, իսկ տապանակ Աստուծոյ 'ի նմա՝ զՔրիստոս աստուածացեալն մարմնով, որոյ ապացոյց եղև տապանակն. քանզի 'ի նո-

1 Մի օրին. Զզանազան առաւելութեամբ։

րա մարմնոյն տապանակ բնակեցաւ ա-
մենայն լրումն աստուածութեանն մար-
մնապէս. ուստի եղեալ փայլատակմուն-
քըն և ձայնքն զաշխարհի վախճանն նը-
շանակէ և զխռովութիւնն 'ի վերայ ամ-
բարշտացն որ գալոց է. և շարժումն՝
զփոփոխումն անկարգ նոցին օրինադրու-
թեանցն. իսկ կարկուտն՝ զպատուհասն։

"Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս.
կին մի արկեալ զիւրև զարեգակն, և
լուսին 'ի ներքոյ ոտից նորա. և 'ի վե-
րայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկո-
տասանից"։ Օ՝սա ոմանք զԱստուածա-
ծինն կարծեցին, վասն նորին իսկ աստ-
ուածածնողութեանն[1]. բայց մեծն Մե-
թոդիոս 'ի սուրբ եկեղեցի տարաւ ըզ-
խորհրդոյս զօրութիւնն. անյարմար ա-
սէ գոլ տէրունական ծննդեանն այս, որ
նախ բաղում ժամանակօք կատարեալ էր։
Բարիոք է զնոյն բանս երանելոյն Մե-
թոդիոսի յիշել, զոր ասացեալ է 'ի բանն
որ վասն արբեցութեան 'ի դիմաց Պը-
րոկղեայ կուսին՝ այսպէս։ "Կինն որ ըզ-
գեցեալ էր զարեգակն՝ է եկեղեցի. զի
որպէս մեղ զգալի լոյսս՝ նորա իմանալին,

1 Բ Օրին. Վասն նորա աստուածածնողութեանն։

և որպէս մեզ այս նշոյլք քաղցր, նմա
այն ճառագայթք. և որպէս մեզ ոսկի,
առ նա մաքրութիւն անաղտութեանն.
ունի և իմանալի քարինս պայծառս՝ որ-
պէս զաստեղս լուսաւորագոյնք և մաք-
րագոյնք"։ Եւ բերէ ըստ կարգի. "Ելեալ
էր 'ի վերայ լուսնի. զլուսինն հաւա-
տոյն օրինակ ասեմ, որ մաքրէ զապա-
կանութիւն 'ի ձեռն աւազանին. քան-
զի այս տարր յարմար է 'ի խոնաւուտ
գոյութիւնն. երկնէ այս մայր հոգևոր,
և վերստին ծնանի զշնչաւորս՝ հոգևորս
'ի տիպ պատկերի նմանութեանն Քրիս-
տոսի և 'ի լրումն չափոյ նորին հասակի"։
Եւ դարձեալ ասէ. "Ոչ է պարտ եզակա-
նապէս զՔրիստոս գոլ կարծել զծնեալն,
զի կանխաւ քան զյայտնութիւնս կա-
տարեցաւ խորհուրդ մարդանալոյ Աս-
տուծոյ բանին. և Յովհաննու ոչ վասն
անցելոցն՝ այլ վասն հանդերձելոցն ե-
րևի յայտնութիւն։ Եւ զի պարտ է հար-
կաւորապէս զեկեղեցի խոստովանել՝ որ
երկնեաց և ծնաւ զաղատութիւն մեր,
Եսայի ցուցանէ հոգւովն. "Երկնեաց,
ասէ, Սիոն և ծնաւ աղգ մի միանգա-
մայն"։ Ի ծնանելն փախեաւ ասէ, և ծը-
նաւ արու։ Ուստի փախեաւ. 'ի վիշա-

պէն ճշմարտապէս[1], զի եղիցի ամփոփեալ յիմանալին Սիոն. քանզի միշտ հալածին քրիստոնեայքն ընդ Քրիստոսի, և առ նա փութան։ Իսկ արու, վասն զի զչափ հասակի մարմնոյն Քրիստոսի լընուն, յորում ոչինչ է իգական վատթարութիւն. քանզի զիւրաքանչիւրս ծնանելով եկեղեցի քրիստոսեան՝ և քրիստոս ծնանի և մի մարմին նորա լինի[2], որպէս ասէ առաքեալն. զի որ ոք զգենու մկրտութեամբն զՔրիստոս, 'ի Քրիստոս միանայ, և լինի ամենայն և յամենայնի Քրիստոս"[3]։

Եկեղեցի զարդարութեան արեգակն զգեցեալ է, և զօրինական լոյսն՝ զգիշերոյն պայծառացուցիչն, որ իբրև զլուսին այլայլեցաւ յաշխարհական լուսոյն[4] 'ի յերկնաւորն[5], առ ոտսն ունի ստացեալ. և 'ի գլուխն առաքելական բանքն և առաքինութիւնքն կայ պսակ. նոյն և զի լուսինն միաւորի ընդ խոնաւուտ

1 Բ Օրէն. Ուստի՞, և փախեաւ 'ի վիշապէն ասէ ճշմարտապէս։

2 Բ Օրէն. Յղանալով եկեղեցի ... ծնանի մի մարմին նորա, որպէս։

3 Մինչև ցաստ Մեթոդիոսի է ասացեալ, իսկ հետագայ բանքս մինչև 'ի վերջ գլխոյս՝ Ադրիանեայ է խօսեցեալ, որպէս նշանակեն ամ օրինակք 'ի լուսանցսն։

4 Բ Օրէն. Յուսոյն։

5 Բ Օրէ. Ի յերկնաւորսն։

տարրն, սովաւ զմկրտութիւնն՝ որում ծովն 'ի հնումն եղև օրինակ՝ ուսաք, անցելոցն ընդ նա ազատութիւն և զհետ մտելոցն դիւաց ընկղմումն։

"Եւ էր յղի. և ճչէր յերկնելն, և բազում վշտօք մերձ էր 'ի ծնանել"։ Երկնել ասեմք զեկեղեցի յիւրաքանչիւրոցն ծնունդ՝ յորս կերպարանի Քրիստոս։ Եւ բազում վշտօք ասէ՝ մերձ էր 'ի ծնանել, ըստ առաքելոյ՝ որ ծնանէր զմանկունս սորա և ասէր. "Տկարութեամբ և ահիւ և դողութեամբ եղէ առ ձեզ"։ Քանզի միշտ եկեղեցւոյ վարդապետք ձայնեն առ Աստուած աղօթիւք 'ի ծընանելն, և պէսպէս վիշտս կրեն 'ի խրատելն և յուսուցանելն այնոցիկ՝ յորս կերպարանեն զՔրիստոս։ Իսկ ասա զայս վասն այնորիկ եբեր 'ի մէջ զտեսիլս, որպէս զի ցուցցէ՝ թէ իսկզբանէ աւետարանին մինչև 'ի կատարած աշխարհի մարտ եդ սատանայ ընդ եկեղեցի Քրիստոսի և ընդ ծնեալս 'ի նմա, և արդարութեամբ կրէ զդատապարտութիւնն 'ի հանդերձեալ տանջանսն հրամանաւն Աստուծոյ։

"Եւ երևեցաւ այլ նշան յերկինս, և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ

էին գլուխք եւթն և եղջիւրք տասն, և 'ի վերայ գլխոց նորա եւթն խոյրք"։ Երկին այժմ զօդն անուանել կարծեմ[1], և վիշապ հրեղէն զայն՝ որ 'ի Յոբն ասէ. "Ստեղծեալ խաղալիկ հրեշտակացն Աստուծոյ". հրակերպ սա՝ վասն 'ի վերայ սպանելոցն յինքենէ ուրախ լինելոյ, կամ թէ վասն հրեշտակատիպ գոյացութեանն անկեալ 'ի նոցանէ։ Եւթն գլուխ ասաց զեւթն չար զօրութիւնսն՝ և զընդդիմամարտմեր զօրութիւն, ըստ որում և յաւետարանն Քրիստոս ասաց՝ եւթն հոգի բնակեալ 'ի մարդ, զորս գտանէ 'ի գործոց բարեաց թափուր։ Նաև Սողոմօն, "Եթէ աղաչէ, ասէ, զքեզ թշնամին քո 'ի ձայն բարձր, մի՛ հաւատար նմա, զի եւթն չարիք կան 'ի սրտի նորա"։ Տասն եղջիւր է նորա՝ տասն օրինաւոր պատուիրանին յանցանքն, որով կարծէր կռուել ընդ մարդիկ, այն որ լուծաւ Քրիստոսիւ ըստ առաքելոյ. կամ թէ տասն թլուովս զբաժանեալ թագաւորսն որ 'ի վերջին աւուրսն լինելոց են՝ ցուցանէ. և կամ թէ զտասն թիւս առեալ՝ որ է կատարեալ, զկատարեալ զօրութիւն նորա

[1] Բ Օրին. Զօդ կարծեալ ասէ։

ցուցանէ՝ որով մարտեաւ ընդ եկեղե-
ցի, որում նշանակ է եղջիւրքն։ Իսկ եւ-
թըն խոյրքն 'ի գլուխ նորա՝ զդիւական
ներգործութեան յաղթութիւնն յայտ
առնէ, զի անտի զպսակս կրէ՝ որոց աշխա-
տութեամբք և քրտամբք է յաղթեալ,
առ որ ասէ Մեթոդիոս 'ի Ճառելն իւ-
րում այսպէս. "Վիշապն մեծ հրակերպ
եւթնագլուխ՝ որ քարշէր զերրորդ մա-
սըն աստեղացն, պատրաստեալ էր՝ զի
զոր երկնէ և ծնանի որդի՝ կլցէ. բան-
սարկուն էր այս"։ Եւ ըստ կարգի բերէ.
"Տարակուսի և սխալէ յորսալն 'ի վեր 'ի
բարձունս յափշտակելոցն. և յետ սակա-
ւուց երրորդ մասն աստեղաց կոչէ՝ զորս
ընդ իւրեաւ ապստամբ հրեշտակքն, որք
զթիւ երկնաւորաց դասուցն[1] սխալե-
ցին. զի մինչ[2] ոչ էին նոքա կործանեալ,
չորք կարգ էր իւրաքանչիւր դասուցն,
իսկ նա զմի յերից[3] մասանցն զչորրորդն
քարշեաց ընդ ինքեամբ և կործանեաց[4]
յերկիր"։ Նոյն և վասն փախստեանն ա-
սէ այսպէս. "Անապատն յորում փա-
խեաւ եկեղեցին՝ երկին է, զի անդ եդ

1 Բ Օրէն. Դասուն։
2 Ա Օրէն. Մինչդեռ։
3 Ա Օրէն. Յերրորդ։
4 Ա Օրէն. Կործանեցաւ։

զյոյս իւր՝ որ ամուլ է յապականութեան։ Եւ հազարն ասելով աւուրս՝ զտասնապատկելն և զբազմապատկելն ցուցանէ կատարմամբ թուոյս մինչև 'ի վախճան աշխարհիս, յորում լնու զչափ հասակին Քս̄ի անդամովք նորին"։ Ասէ և վասն պսակաց նորին, որք մրցին ջանիւ ընդդէմ բանսարկուին, և մեռուցանեն զնորա եւթն գլուխսն. զպսակն յաղթանակաց առաքինութեանն ժուժկալութեամբ յինքեանս[1] ընդունին։

"Եւ տուտն նորա քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից, և արկ զնոսա յերկիր"։ Ի ձեռն այսորիկ զերկուսն կարծեմ յայտ առնել, զառաջինն նորա անկանելն յերկնից՝ և որք ընդ նմա են ապստամբ հրեշտակքն, և վասն 'ի վերայ մարդկան շարժելոյ մախանօք, և զպայծառացեալսն 'ի մկրտութենէն որպէս զաստեղս՝ անհաստատ մտօք յերկնային խորհրդոցն 'ի ստորև քարշելոյ. զի այսպէս և Դանիէլ զԱնտիոքայ մարգարէացաւ, որ եղև տիպ սուտ քրիստոսին դալստեանն։

"Եւ վիշապն կայր առաջի կնոջն՝ որ

[1] Բ Օրէն. Յիւրաքանչիւրս։

հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն»։ Եղական անուամբ որդւոյս՝ զամենեսեան որք մարմին են Քրիստոսի՝ պարտ է իմանալ. սոցա միշտ ապստամբն հակառակ կայ, զի զծնեալսն 'ի յոյսն կենդանի՝ կլցէ 'ի չարութեան իւրոյ խորխորատ յիւրաքանչիւր ժամանակս։ Եւ ընդ եկեղեցւոյ ինքն Քրիստոս հալածի՝ որպէս Գլուխ եկեղեցւոյ. քանզի սովոր է միշտ ընդ եկեղեցւոյ [1] ընտանենալ, ըստ այնմ. "Սաւո՛ւղ Սաւո՛ւղ զի՞ հալածես զիս"։

"Եւ ծնաւ կինն որդի արու, որ հանդերձեալ է հովուել զամենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ"։ Հանապազ եկեղեցի 'ի ձեռն մկրտութեանն զՔրիստոս ծնանի՝ զառ 'ի նա կերպարանեալսն [2] մինչև 'ի լնուլ հոգևորն հասակի ըստ առաքելոյ։ Այս անդամքս հովուեն սաստկութեամբ որպէս երկաթեաւ, և դատին զանհաւատսն և զդևս՝ ըստ Քրիստոսի, "Նստիցիք յերկոտասան աթոռս դատաւորս". և առաքեալն՝

1 Բ Օրէն. Ընդ իւրում հաւատացելոցն։ 2 Բ Օրէն. Կերպարանելն։

"Ոչ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք". և փշրեն զնոսա որպէս զանօթս անպիտանս, որք զխորհրդական գինին ոչ տարան. հովուէ և այժմ 'ի ձեռն Հռովմայեցւոցն զօրութեան, որք են որդիք աւազանին սրբոյ երկանցն ծննդեան:

"Եւ յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած և առ աթոռ նորա": Համբարձաւ Քրիստոս հայրական փառօք 'ի հայրականն Աթոռ, և ընդ նմա մտին ամենայն անդամք նորա, այժմ յուսով և յետ մահու հոգւով, իսկ յետ յարութեանն հոգւով և մարմնով: Եւ զի այժմ հոգիք սրբոցն շուրջ են զաթոռովն Աստուծոյ, յայտ յառաջին տեսլենէս է, զի արկեալ էին զինքեամբ սպիտակս, և պարէին ընդ աթոռովն եկեալքն 'ի վըշտաց մեծաց, և լուացեալք արեամբ գառինն. զսոսա ջանայր մահաշունչ վիշապըն յօդս կլանել՝ և ոչ կարաց, որպէս ետես մեծն Անտոնիոս:

"Եւ կինն փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱստուծոյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար երկերիւր և վաթսուն": Այս լինի 'ի յետին ժամանակս, յորժամ ընդ հակառակ քրիստոսին ներգործէ բանսարկուն, և

'ի ձեռն նորա ընդդէմ եկեղեցւոյ զինի։ Քանզի որ 'ի նմա ընտրեալք են, զքաղաքական հեշտութիւն և զհանգիստ մարմնոյ քամահեն. և յանապատ փախիցեն ըստ Մեթոդիոսի ասելոյն, զի 'ի պատերազմող մարդկանէն դիւական թունօքն՝ թերևս կարասցեն այնու զերծանել, յայրս և 'ի ծերպս վիմաց ամրանան։ Իսկ աւուրքն հազար երկերիւր և վաթսուն՝ զերեք ամն դարձեալ յայտ առնէ և ըզկէսն[1], յորում բռնադատէ ապստամբութիւն նորա։ Ուստի փրկեսցէ ըզմեզ ամենեցուն Տէրն և մեծ զօրավիգն, առ 'ի յոչ տալ թոյլ ումեք փորձել առաւել քան զկար և զզօրութիւն իւր։ Պարգևեսցէ ժուժկալութի[2] խորհրդոց և ըզհակառակամարտին նետս ունայնացուսցէ, մրցել մեզ օրինօք ընդ իշխանս և ընդ պետս խաւարի, թերևս և օրինաւոր պսակացն արժանացեալք զարդարութեան յաղթանակն ընկալցուք 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, զի վայելուչ է նմա տկարօք յաղթել. որում յաղթութիւնն է և կարողութիւնն՝ զօրութիւն

1 Բ Օրին. Զերեք ամն յայտ առնէ. դարձեալ՝ և զկէսն։ Միւս օրին. Զերեք ամն և կէս յայտ առնէ, դարձեալ և զկէսն։

2 Բ Օրին. Զուժութիւն։

և փառք ընդ Հօր և սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

ԳԼ: ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վասն որ 'ի յերկինս պատերազմի սրբոյ հրեշտակին ընդ դիւաց, և կործանմանն սատանայի։

ՃԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ եղև պատերազմ յերկինս, Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին, և վիշապն պատերազմէր զօրօք իւրովք. և ոչ կարացին կալ ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։ Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին, որ անուանեալ կոչի Քէեղզեբուղ և սատանայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի. և հրեշտակք նորա ընդ նմա անկան"։ Է իմանալ զայս վասն առաջին բանսարկուին ամբարտաւանութեամբ և ամբարհաւաճութեամբ ամբառնալոյն՝ մախալով ընդ [1] Աստուած, սակս որոյ և գլորեցաւ 'ի հրեշտակական կարգէն։ Բայց սակայն յատկապէս առնլի է զասացեալս 'ի Տեառն դալրս-

[1] Բ Օրէն. Ամբառնալոյ նմա ընդ։

տեանն կատարել[1], ըստ որում վախճան
բանիցս ցուցանէ, թէ անկաւ չարախօ-
սըն եղբարց մերոց։ Վայելչական է յի-
շել և զՏեառն ասացեալն, թէ "Իշխան
աշխարհիս այսորիկ դատապարտեալ է",
և յառաջին կարողութենէն անկեալ. և
զայս իմանամք որպէս 'ի հարցն ցուցաւ.
զի դա որ յիմանալի աշխարհէն անկաւ,
զգալի աշխարհիս[2] որ է 'ի ներքոյ օդոյս՝
ա՛ռ հրաման իշխել, յորում և դատա-
պարտեալ մարդս եկն պանդխտել, որ-
պէս ասէ առաքեալն։ Եւ Պապիաս 'ի
խօսս իւր այսպէս. "Ոչ հանդուրժեաց
երկին՝ երկրաւոր[3] նորա խորհրդոցն. զի
լուսոյ ընդ խաւարի հաղորդել անմարթ
է։ Յերկիր անկաւ 'ի սա կենցաղավա-
րել, և եկեալ մարդոյն ասա՝ ուր ինքն
էր, ոչ ետ նմա բնական կրիւքն վարիլ,
այլ մոլորեցոյց 'ի բազում չարիս։ Իսկ
Միքայէլ և զօրք իւր՝ որ վերակացուք են
աշխարհի, օգնէին մարդկութեանս՝ որ-
պէս և Դանիէլ ուսաւ. զօրէնս ետուն
և զմարգարէսն իմաստնացուցին"։

Եւ այս ա՛մ մարտ էր ընդ վիշապին, որ

1 Բ Օրէն. Կատարեալ։ գալի աշխարհս։
2 Բ Օրէն. Անկաւ յըզ- 3 Ա Օրէն. Երկնաւոր։

դնէր զգայթակղութի՞ մարդկան[1]։ Արդ՝ յերկարեաց պատերազմ նոցա յերկինս[2] մինչև 'ի Քրիստոս. իսկ եկեալ Քրիստոս և զօրէնսն որ անհնար էր այլ ումեք, մարմնովն իւրով կատարեաց՝ ըստ առաքելոյն. զմեզսն նահանջեաց և զսատանայ դատապարտեաց, և զարդարութիւն իւր մահուամբն 'ի վերայ ամենեցուն սփռեաց։ Իսկ յորժամ այս եղև, յաղթութիւնն Միքայէլի և զօրաց իւրոց մարդկան վերակացուաց 'ի գլուխ ել. և վիշապն այլ ոչ կարաց կալ ընդդէմ, զի մահն Քրիստոսի նշաւակեաց զնա և յերկիր կործանեաց, ըստ որում և Քրիստոս ասաց. "Տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն". զորոյ միտս իմացան վարդապետք՝ ոչ զառաջին նորա անկումն, այլ զերկրորդս՝ որ խաչիւն. և այս ոչ է տեղական կործանմամբ՝ որպէս զառաջինն, այլ դատապարտութիւն և հանդերձեալ պատուհասին ակնկալութիւն[3]. մանաւանդ զի և անգործ եղև 'ի մարտէն, որպէս ինքն ասաց ընդ Անտոնի խոստովանեալ՝ զոր 'ի

1 Բ Օր. Դնէր ընդ մարդկութեանս գայթակղութի։

2 Ա Օր. պակասէ Յերկինս։

3 Ա Օր. Ակնարկութիւն։

վերայ իւր սաղմոսին զկատարումն, թէ
"Թշնամւոյն զէն պակասեաց մինչև իս-
պառ"։ Քանզի դատապարտել զնա Քս̅ի,
է նմին տիրապէս անկումն. զի մինչև ցայս
անկումն ուսաք 'ի վարդապետաց՝ թէ
յոյս ունէր դառնալոյ յառաջին փառ-
սըն, և յայսմանէ արտաքոյ անկաւ։ Ի
վերայ որոյ առնու Իրենէոս զբանս Յուս-
տիանոսի վկայի այսպէս. "Բարիոք ասաց
վկայն Յուստիանոս, թէ յառաջ քան ըզ-
գալուստ Տեառն մերոյ ոչ երբէք հա-
մարձակեցաւ սատանայ հայհոյել զԱս-
տուած, քանզի ոչ գիտէր նա ցայն վայր
զդատապարտութիւն [1] իւր. իսկ յետ
Քրիստոսի գալստեանն և նորա զգեհե-
նոյն [2] բացախօսութեանն, եհատ զյոյս
իւր, և յանդգնեցաւ 'ի հայհոյութիւն
Աստուծոյ. զի իւր միտ բարի էր [3] յա-
ռաջ, այլ քարացաւ յիմաստութենէ
սիրտ նորա վասն չարութեան և անա-
մօթութեանն, և անկաւ 'ի միջոյ քերով-
բէիցն, ըստ որում ասէ և Եղեկիէլ,
և մնայ յաւիտենական հրոյն։ Արդ՝ ե-
թէ յաւիտեան, զիա՞րդ վախճան ածեն

1 Բ Օր. Զպարտաւորութի։
2 Յա̅մ օրի. Զգեհեանն։
3 Ամենայն օրինակ ունին. Բարի էր անունն յառաջ։

տանջանաց ունայնախորհքն[1]. Թերևս կարծելով թէ 'ի հուրն մաքրեսցի, զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհել"։

"Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր. արդ եղև զօրութիւն և փրկութիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ, և իշխանութիւն օծելոյ նորա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ ըզտիւ և զգիշեր"։ Զայս և ինքն Քրիստոս ասէր, թէ "Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի", այս ինքն մարմնով տիրել նոցա. և անկաւ սատանայ 'ի յուսոյն իւրոյ, և յարդարանալոյն՝[2] 'ի չարախօսելն զմարդկանէ. և զի չարախօսէր զամենեցուն, յայտ 'ի Յոբայ է և 'ի Դաւթէ, որպէս ցուցանէ զայս 'ի բազում տեղիս 'ի սաղմոսն, ըստ այնմ. "Քանզի նստան իշխանք և չարախօսէին զինէն"։ Եւ կարծեմ չարախօսութիւն զայս, թէ մարդիկ ինքնայօժար կամօք բերին ընդ մեզս՝ և ոչ 'ի յիւրոց պատրանացն, զոր յամօթ արար

[1] Ա Օրէն. Ունայնախորհուրդք։

[2] Ա Օրէն. Յարդարացուցանելոյն։ Մի օրէ. Յարդարանալոյն 'ի հաւատս և 'ի չարախօսելոյն։

Քրիստոս մարմնով իւրով սրբով[1], և նըստեալ յերկինս մեզ բարեխօս՝ 'ի գլուխ եհան զմարդկան յաղթութիւն իւր քահանայագործութեամբն։

"Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ գառինն, և բանիւ վկայութեան նորա. և ոչ հաճեցան ընդ վիշապն մինչև 'ի մահ"։ Արեամբ գառինն, զի վասն մեր[2] պատարագեցաւ Քրիստոս, և եբարձ զմեղս աշխարհի։ Իսկ բանիւ վկայութեան նորա, զի 'ի փորձոյ իւրն մարմնոյ վկայեաց առաջի Հօր, թէ ոչ ինքնայօժար կամօք մարդիկ մեղանչեն՝ այլ սատանայի պատրանօք. և սոքա որ ծանեան զճշմարտութիւնն՝ ոչ հաճեցան ընդ բանսարկուին, այլ և մեռան յաղագս հանդերձեալ յուսոյն և սիրոյն Քրիստոսի[3] Աստուծոյ, և զնա չատելոյն[4], ըստ որում վկայքն երանելիք՝ և որք հանեն զանձինս 'ի խաչ կարեաց և ցանկութեց աշխարհի։

"Վասն այսորիկ ուրախ լիցին երկինք՝ և ամենայն որ բնակեալ են 'ի նմա։ Վայ երկրի և ծովու, զի անկաւ բանսարկուն առ ձեզ, որ ունի զցասումն բազում. և

1 Բ Օրէ. պաչասէ Սրբով։
2 Բ Օրէ. Փոխանակ մեր։
3 Բ Օրէ. չէ՛ Քրիստոսի։
4 Բ Օրէ. Ատելոյն։

կացցէ առ սակաւ մի ժամանակս ՞։ Ուրախութիւն է սուրբ հրեշտակացն՝ մարդկան փրկութիւն, ըստ որում և ասաց Քրիստոս յաւետարանին՝ և ասա ցուցանէ։ Իսկ բնակեալ յերկինս զայնոսիկ իմանամք. որք մարմնով ասա են, և հոգւով միշտ յիմանալիսն շրջին՝ զբարձացեալք ընդ շնորհսն Քրիստոսի։ Այլ վայ է այնոցիկ՝ որք 'ի բաց կացեալ յերկնէ՝ զերկրաւորս խորհին, զի նոքա 'ի նորա պատրանացն բազում անդամ ըմբռնին։ Ունի ցասումն բազում, զի յաղթահարեցաւ, և ինքն ընդ իւր կործանումն զայրացաւ։ Սակայն՝ սակաւ ժամանակս է մինչև 'ի լնուլ աւուրց այսըմ յաւիտենի. քանզի փոքր է առ հանդերձեալ կեանսն՝ այսր ժամանակի ընդարձակութիւն համարեալ։

"Կինն[1] որ արկեալ էր զիւրև զարեգակն և զլուսին՝ է երկիր, զոր զարդարէ արեգակն և լուսին ընթացիւքն[2] ընդ երկոտասան կենդանատեսակ աստեղսդ, պսակելով զամն՝ որպէս ասէ, "Ի գլուխ

1 Առաջիկայ հատուած բա- նիցս մինչև 'ի վերջ գլխոյս՝ է Մեթոդեայ։

2 Ա. Օրին. յորէ Ընթա- նալով։

նորա պսակ յերկոտասան աստեղաց »։ Սա յղի է ամենայն մարդկային ազգիւս՝ որք սերմանին յարգանդ նորա մահ-ուամբ, և ճչէ երկամբք՝ ծնանել զնո-սա յարութեամբ։ Քանզի՝ "Ամենայն ա-րարածք հեծեն և երկնեն, զի ազատես-ցին 'ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառաց Որդւոյն Աստու-ծոյ »։ Սորա ընդդէմ կայ բերանաբաց վիշապն հրեղէն՝ սատանայ, որ քարշեաց ընդ ինքեան զերիս կարգս յերկնային զօ-րացն դասուց, զի յորժամ ծնցի երկիր յարութեամբն զմարդկային ազգս, կըլ-ցէ զնոսա յաւիտենական մահուամբն՝ յաղագս դատակնքի նախահօրն մերոյ Ա-դամայ, և ամենեցուն ընդ մեղօք լինելոյ։

Իսկ կինն ծնաւ որդի արու, զՅի-սուս Քրիստոս յարուցեալ 'ի գերեզմա-նէն, զանմեղն և զանապականն, յորում ոչ ինչ դոյր իգական մեղաց վատթարու-թիւն։ Սա ա՛ռ իշխանութիւն հովուել զամենայն ազգս արդարութեամբ[1] իւ-րով՝ որպէս գաւազանաւ երկաթեաւ. և համբարձաւ յերկինս որպէս ասէ՝ առ Աստուած. և նստաւ մարմնով մերով յա-

1 Բ Օրին. Իշխանութեամբ։

թոռ նորա ։ Իսկ զի ասէ՝ թէ կինն փա-
խեաւ յանապատ, զի կերակրեսցի անդ
աւուրս հազար երկերիւր և վաթսուն,
բնակիչք երկրի ազգք մարդկան, որք
փախուցին զյոյս իւրեանց յերկինս՝ որ
անապատ է 'ի ներգործութենէ սատա-
նայի, և անդ կերակրին մարմնովն Քը-
րիստոսի, որ ետ զինքն մեզ հանապա-
զորդ կերակուր ։ Բայց թիւ աւուրցն՝
ամքէ. զի ամս հազար երկերիւր և վաթ-
սուն է ժամանակ աշխարհի՝ 'ի յարու-
թենէն Քս̄ի մինչև յերկրորդ գալուստն ։

Այլ պատերազմ որ եղև յերկինս վի-
շապին և Միքայէլի հանդերձ հրեշտա-
կօք, վասն մարդկան փրկութեան էր,
և յաղագս իւր դատապարտութեան՝
մարմնովն Քրիստոսի, և արտաքս անկա-
նելոյն յիշխանութենէն՝ ըստ Տեառն հը-
րամանին ։ Արդ՝ քանզի Միքայէլ և հրեշ-
տակք իւր են որ շրջին ընդ մարդկան,
և տեսանեն զսատանայի դաւաճանու-
թիւնն՝ որով խաբէ զսոսա, սոքա պա-
տերազմէին ընդ նմա, ոչ թէ սրով՝ այլ
բանիւ. և արդար ցուցանէին զՔրիս-
տոս՝ 'ի փրկելն՝ 'ի նոցանէ զմարդիկ և

Ի Օրէն. Արդարացուցանէին Քրիստոսի զփրկելն ։

յերկինս մուծանելն։ Իսկ վիշապն սա-
տանայ և զօրք իւր կռուէին՝ թէ ոչ է
արդար, այլ անիրաւութեամբ փրկեցան
մարդիկ, և մեք ելաք յիշխանութենէ և
փոխանակ նոցա դատապարտեցաք։ Եւ
զայսպիսի բանս պէսպէսս և զանազանս
որպէս նետս առ իրեարս ձգէին. Միքայ-
էլ և հրեշտակք իւր՝ զանմեղութիւն և
զակամայ գայթակղութիւն մարդկան նո-
ցա պատրանօքն՝ որոց տեսողք էին և
վկայ, և նոքա յիշէին զբազմաց կամաւ
մեղանչելն, և ինքնայօժար նոցին հե-
տևելն։ Բայց ոչ կարացին կալ ընդդէմ,
այլ յաղթեցին հրեշտակքն, և ցուցին
զնոսա ամենեցուն առ իթ մեղաց. և յայն-
ժամ տեղի ոչ գտաւ նոցա յերկինս, զի
երևեցան պարտապանք[1] փոխանակ մե-
ղաց մարդկան, և անկան 'ի յուսոյ եր-
կնից բնակութենէն և յիշխանութենէն
որ 'ի վերայ մեր, ըստ որում և ասաց
Քրիստոս. "Տեսանէի զսատանայ ան-
կեալ յերկնից իբրև զփայլակն. վասն ո-
րոյ ետու ձեզ իշխանութիւն կոխել ըզ-
նա"։ Սակս որոյ և մարդասէր հրեշտակ-
քն փառս առաքեցին Աստուծոյ յերկի-

[1] Ա Օրէն. Դատապարտք։

նըս. "Անկաւ չարախօսն եղբարց մե-
րոց", այսինքն սատանայ՝ որ չարախօ-
սէր զմարդկային քնութենէս՝ Աստուծոյ,
իբր թէ կամաւ և քնութեամբ բերին
ընդ մեղս՝ որպէս ինքն բերաւ, ըստ այ-
նըմ. "Նստան իշխանք և չարախօսէին
զինէն, այլ ծառայ քո խորհէր յիրա-
ւունս քո":

"Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ
դառինն, և բանիւ վկայութեան նորա":
Քանզի Քրիստոսի[1] մարմնոյն անմեղու-
թիւնն յաղթեաց նմա ընդ ամենեցուն,
և մահն որ վասն մեր՝ զամենեսեան ար-
դարացոյց. որ և միշտ կենդանի է լինել
բարեխօս վասն մեր, ըստ որում ասէ,
"Բանիւ վկայութեան նորա": Վասն
այսորիկ ուրախացան երկինք և սուրբ
հրեշտակքն[2]: Այլ վայ է երկրի և ծո-
վու, քանզի որ յերկիր ունին զցանկու-
թիւնս, դեռ և ս մարտնչել ունին ընդ
նմա:

Եւ զի ասէ՝ թէ "Զհետ եղև դար-
ձեալ վիշապն կնոջն՝ որ ծնաւ զմանուկն
արու". քանզի պատերազմի դեռ և ս ընդ
երկրաւորս եկեղեցի Քրիստոսի, յորոց

1 Բ Օրէ. չէ. Քրիստոսի. 2 Ա Օրէ. Հրեշտակք նորա:

և Քրիստոս։ "Եւ թեք տուաւ կնոջն արծուոյ՝ զի թռիցէ յանապատ տեղի կերակրել ժամանակ և ժամանակս և կէս ժամանակի"։ Քանզի եկեղեցւոյ իւր Քրիստոս, որք յուսով մտին յերկինս և մարմնով հալածին 'ի սատանայէ՝ որ իբրև զառիւծ գոչէ ոսոխն մեր և շրջի թէ զո՛վ կլանիցէ, ետ Քրիստոս երկու թևս զերծանիլ 'ի նմանէ յետ մահուանն, ըզհաւատս և զգործս, կամ զմկրտութիւն և զուխտ արեան[1] իւրոյ, որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ 'ի մարմնոյս՝ թռչին յանապատն 'ի մեզաց՝ յերկինս, կերակրիլ անդ յուսով, մինչև լինու թիւ կատարման աշխարհի։

"Եւ մինչդեռ գնայր, ասէ, եհեղ վիշապն առաջի կնոջն ջուր բազում, զի զնա ընկղմեսցէ. և օգնական եղև երկիր կնոջն, և արբ զջուրն"։ Երկրաւորս եկեղեցւոյ մանկանց ոգիք, որք փութան յերկինս յետ ելիցն 'ի մարմնոյս՝ թևօք հաւատոցն և գործոց բարեաց, ընդդէմ գայ իշխանն օդոյդ վիշապն, և հեղու առաջի նոցա ջուր, այսինքն զճառս պէս-պէս գայթակղութեանցն՝ որովք պատ-

[1] Բ Օրէն. Աւետարանին։

րեալ է զնոսա. և յայսոսիկ փութայ ընկըղմել, և ոչ թողուլ մտանել յերկինս, որպէս ասէ Պօղոս. "Պատերազմ ունիմք ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս օդոյդ"։ Այլ և Անտոնի առաջի հեղին զջուրն, և ոչ կարացին զնա ընկըղմել, զի թռեաւ վերոյ նոցա արդար գործովքն. բայց զբազումս ետես զի արգելոյր և ընկղմէր։

"Եւ օգնեաց երկիր կնոջն, և եկուլ զջուրն զոր եհեղ վիշապն", այսինքն երկրաւոր մարմինս. և սորա տկարութիւնն օգնէ հոգւոյն, զի սորա բնական կրիցն կարօտութեանն և ծանրութեանն որ 'ի վերայ հոգւոյս, ներէ Աստուած ըմպել զչարախօսութիւնն սատանայի. և ազատին 'ի բռնութենէ նորա հոգիք սրբոցն և մտանեն առ Աստուած յանապատն 'ի մեղաց՝ յերկնային խորանսն. նախ վասն Քրիստոսի անմեղութեամբ մարմնոյն և արեամբ սրբելոյն, և ապա վասն մերոյ մարմնոյս տկարութեանն։ Եւ են անդ զժամանակն և զժամանակս, և զկէս ժամանակին, որպէս ետես 'ի սկիզբն տեսլեանս զհոգիս սրբոցն սպիտակազգեաց շուրջ զԱստուծով։

"Օայս, ասէ, տեսեալ վիշապն՝ ցա-

սեաւ ընդ կնոջն, և գնաց պատերազ-
մել ընդ այլ զաւակս նորա »։ Յորժամ
տեսանէ զմանկունս եկեղեցւոյ թևօք
հաւատոցն և գործոց բարեացն՝ համ-
բարձեալս ընդ Քրիստոսի և առ Քրիս-
տոս, ցասնու և բարկանայ, որպէս և ե-
տես Անտոնն, զի կրճտէր զատամունս
'ի վերայ այնոցիկ՝ որք իբրև զաղաւնիս
օդապարիկս թռչէին վերոյ նորա յերկի-
նըս։ "Եւ գնաց պատերազմել ընդ այլ
զաւակս նորա », այսինքն ընդ որդիս ե-
կեղեցւոյ՝ որք դեռ ևս մարմնով են յաշ-
խարհի, զի հնարեսցի ըմբռնել զնոսա
'ի թակարդս անհաւատութեան և կա-
մակորութեան 'ի մեղս, և ստորաքարշ
առնել յայնմ ճանապարհէ։

Եւ այս պատերազմս է մինչև 'ի կա-
տարած աշխարհի, քանզի ասէ. "Որք
պահէին զպատուիրանս Աստուծոյ, և
ունէին զվկայութիւնն Յիսուսի »։ Եւ
է վկայութիւնն Յիսուսի՝ հաւատն, և
պատուիրանք Աստուծոյ՝ գործն. յայտ
է՝ թէ երկու թևքն զորս վերագոյնն ա-
սաց, զի յապաւել հնարեսցի[1] 'ի նոցա-
նէ։ Յաղագս որոյ և կացեալ 'ի վերայ

1 Բ Օրէն. Թէ յապաւել հնարեաց։

ծովու, այսինքն 'ի վերայ չար խորհրդոց[1] իւրոց, ստեղծանէ անտի զչար գազանն՝ զհակառակ քրիստոսն[2], որ է մարմնաւոր մարդ՝ զգեցեալ զամենայն զօրութիւն անմարմին վիշապին։ Յաղագս որոյ և այս չար թշնամիս՝ հակառակատիպ ճշմարիտ Քրիստոսին տեառն մերոյ, զմարտն՝ զոր եդ սատանայ աներեւութապէս ընդ եկեղեցի, առնէ մարմնաւոր[3] 'ի վերջին ժամանակս։ Եւ որպէս նա պատերազմեցաւ հազար երկերիւր և վաթսուն ամ, սա մարտնչի այնչափ աւուրս, որ լինին երեք ամք և կէս։ Իսմանէ փախստական լինի եկեղեցի թեւօք խնամոցն Աստուծոյ յերկրաւոր անապատ. և նա հեղու զհետ նոցա իբրև զջուր զբազմութիւն զօրացն, այլ օգնէ դժուարութիւն անապատին, և արգելու զնոսա, որք դառնան ապա ցասմամբ պատերազմել ընդ այնոսիկ՝ որք 'ի քաղաքս և 'ի գաւառս բնակին »։

1 Մի օրի. յաւելու Չար կամաց և խորհրդոց։

2 Բ Օրի. Զչար գազանն և զհակառակ քրիստոսն։

3 Բ Օրին. Սատանայ՝ աներեւութապէս առնէ ընդ եկեղեցի մարմնաւոր։

ԳԼ. ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Թէ ո՛րպէս վիշապն 'ի հալածելոյ զեկեղեցի ոչ դադարէր։

"Եւ յորժամ ետես վիշապն թէ ան-
կաւ յերկիր, զհետ եղև կնոջն որ ծնաւ
զմանուկն արու։ Եւ տուաւ կնոջն եր-
կու թևք արծուոյ մեծի, զի թռիցէ յա-
նապատ 'ի տեղի իւր. ուր կերակրէր
անդ՝ ժամանակ և ժամանակս և կէս ժա-
մանակի՝ յերեսաց օձին"։ Զհետ լինելս
եկեղեցւոյ բանսարկուին՝ 'ի Քրիստոսէ
մինչև 'ի նեռնն իմա. քանզի միշտ հա-
լածէ, երբեմն[1] 'ի ձեռն երևելի թշնա-
մեաց, և միշտ ինքն աներևութաբար.
սակայն պարտեալ նախ 'ի Քրիստոսէ 'ի
մկրտութեանն՝[2] յաղթեցաւ, նոյնպէս և
առ սրբովք առաքելովքն։ Քանզի ծան-
եան մարդիկ եթէ 'ի ձեռն մահու կեանք
գտանին, և զնորա մեքենայսն անգործ
արարին. զի զզօրութիւնս իւրեանց ոչ
'ի ձեռն հեշտախտութեանն ծախեցին,
այլ յուսովն և սիրովն առ Աստուած
բարձրացուցին։ Եւ եկեղեցւոյ տուաւ

1 Բ Օրէն. Երբեմն երբեմն։

2 Բ Օրէ. Ի մի մկրտութեն և յետ մկրտութեանն։

երկու թևք[1] թռչել նովաւ յանապատ, այսինքն՝ 'ի ձեռն բանականին և գործնականին։ Եթող զերկիր՝ և յանապատն 'ի մեղաց ել յերկինս, և այնու գիտութեամբն կերակրէր։ Եւ[2] դարձեալ իմանամք զայս պարզաբար կատարեալ՝ որպէս ասացաք բազում անգամ՝ 'ի հակառակ քրիստոսին[3] գալստեանն, որ տիրէ զժամանակ երից ամաց և կիսոյն, յորում 'ի զգալի անապատ և 'ի ծակս վիմաց թաքչին հաւատացեալքն։ Այլ զի խորհուրդս զայս որ 'ի սուտ քրիստոսին լինի ժամանակ՝ կամեցաւ յայտնել, համառօտ անցանէ ընդ այլ հարուածսն[4], և զայս ճշգրիտ հանդերձեալ բանիւս ցուցանէ։

"Եւ եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղմեսցէ զնա։ Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց երկիր ըղբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն 'ի բերանոյ իւրմէ"։ Յայսպիսի ջրոյս[5] մաղթէ Դաւիթ ապրել՝ յասելն. "Մի՛ ընկղմեսցեն զիս պտոյտք ջուրց"։ Քանզի յորժամ ետես սատանայ զեկեղեցի յու-

1 Բ Օրէն. Թևօք թռչել յանապատ։
2 Բ Օրէ. Այլ դարձեալ։
3 Բ Օրէ. Ի հակառակին։
4 Բ Օրէ. Հալածանսն։
5 Բ Օր. Յայսոսիկ 'ի ջրոյս։

սով յերկինս վերացեալ, եհեղ զհետ ընթացից մտաց նորա զպէսպէս խորհրդոց ջուրն, ընկղմել զնոյն նովաւ 'ի գործս չարեաց. և օգնեաց երկիր կնոջն, և եկուլ զջուրն, յայտ է՝ թէ խոնարհութիւն մարմնոյս, որպէս գրեն զաստուածայինն Անտոնի ասացեալսն. քանզի ամենայն չար խորհուրդ 'ի խոնարհութենէն սպառի, ասաց սուրբն՝ որ փորձ էր նոցա մարտին։ Դարձեալ՝ և փախչին եկեղեցւոյ մանկունք 'ի չար աւուրսն՝ որպէս ասացաք. իսկ անաստուածն 'ի բերանոյն հեղու ջուր զկնի, այսինքն 'ի հրամանացն զբազմութիւն անաստուածարանցն, խուել՝ զնոսա և չարչարել. և օգնեաց նոցա երկիր՝ կամ ճանապարհին հեռաւորութեամբ, կամ թէ աշխատութեամբ անջրդի վայրացն, փորձութեան գետն սպառի։

"Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն, և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք պահէին զպատուիրանս Աստուծոյ, և ունէին զվկայութիւնն Յիսուսի"։ Յորժամ 'ի խոնարհութենէ իմաստնոցն պարտի, ընդդէմ այլոց զմեքենայսն լա-

[1] Ա. Օրին. Խուզել։

րէ և ջանայ ընկղմել։ Նաև զայս յարեմք յասացեալսդ, զի լաւագոյնքն 'ի վարդապետաց եկեղեցւոյ՝ և որք 'ի վեր քան զերկիր տեսանեն, ոչ ընտրեն զփախըստական լինելն. և ընդ սոսա դառնայ 'ի մարտ սուտ քրիստոսն, որք սպառազինեալ են հաւատով և ճշմարտութեան յուսով, որոց 'ի դէպ է վկայական արեամբ պսակել վասն 'ի Քրիստոս հարազատ սիրոյն։

ԳԼ։ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վասն գազանին՝ և տասն եղջեր նորա և եւթն գլխոյն։

"Եւ կաց 'ի վերայ աւազոյ ծովու. և տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր գլուխս եւթն և եղջիւրս տասն"։ Ոմանք զգազանս զայս՝ երկրորդ ասացին գոլ զօրութի՝ սատանայի և դիւացն, որք իշխանութիւն առին՝ և յետ այնորիկ եկին առ հակառակ քրիստոսն։ Այլ սուրբն Մեթոդիոս և Հիպոլիտոս և այլք, զսուտ քրիստոսն՝ զայս գազանս ասացին գոլ, որ 'ի խռովասէր ծովէ կենցաղոյս բազում վրդովմամբ լի ելանէ։ Իսկ տասն եղջիւրն և խոյրն և եւթն գլուխքն՝ ըղ-

բանսարկուին առ նա զմիաւորութիւնն ցուցանէ։ Զայս ասա՝ ըստ որում և վերագոյնդ ասացաք՝ մեկնէ, եթէ տասն թագաւորք յառնեն յերկրի 'ի վերջին քակտումն շփոթմանցն, յորոց մի լիցի նա։ Իսկ եւթն գլուխք են որք նախ քան զնա եղեն չարութեան նորա զինուորակիցք. սոքա որք 'ի բամբասելոյ[1] զՔրիստոս ոչ դադարեցին մինչև 'ի մեծն Կոստանդիանոս, յետ որոյ և Յուլիանոս և Վաղէս չարաբանք 'ի վերայ Քրիստոսի եղեն։

"Եւ 'ի վերայ եղջերաց նորա տասն խոյր, և 'ի վերայ գլխոյ նորա անուն հայհոյութեան", գործակցացն չարութիւն. զի հաւասարի ընդ անօրինին 'ի սուտ քրիստոսին, որովք և պսակեալ զինքն վարկանի։

"Եւ գազանն զոր տեսի՝ նման ընձու, և ոտք նորա իբրև զարջու, և բերան նորա որպէս զառիւծու"։ Երբեմն ասացաւ ինձ՝ Հելլենացին, և արջ՝ Պարսիկն, և առիւծ՝ Բաբելացին, զորոց՝ 'ի տիրել հակառակ քրիստոսն՝ զամենեցուն բերէ յինքն զնմանութիւն գազանութեանն. զի առ Հռովմայեցւոց թագա-

1 Ա Օրին. Բամբասել։

ւորաւն եկեսցէ և զնորա իշխանութիւնն քակտեսցէ. և 'ի վերայ խեցեղէն մատանց, այսինքն՝ առ տկար և թոյլ թագաւորաւ զնոյն փշրեսցէ։

"Եւ ետ նմա վիշապն զզօրութիւն իւր և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ"։ Սա որ յերկնից կործանեցաւ իմանալի վիշապն սատանայ, տացէ հակառակ քրիստոսին զօրութիւն ամենայն սուտ նշանաց և արուեստից՝ անհաւատիցն 'ի կորուստ։

"Եւ մի 'ի գլխոց նորա վիրաւորեալ էր 'ի մահ. և վէր մահուան նորա ողջանայր"։ Գլուխ վիրաւորեալ՝ կարծեմ թէ ոք յիշխանաց նորին մեռանի, և 'ի ձեռն իւր կախարդութեանն և խաբեբայ արուեստին յարուցանէ, ըստ որում և Սիմոնն արար մոգ, և 'ի գլխաւորէ առաքելոյն յանդիմանեցաւ։

"Եւ զարմացաւ ամենայն երկիր ընդ գազանն, զի ետ նմա վիշապն զթագաւորութիւն իւր. և երկիր պագին վիշապին՝ որ ետ զիշխանութիւնն գազանին, և ասէին. ո՞վ իցէ նման գազանիս, կամ ո՞վ կարիցէ պատերազմել ընդ դա"։ Հակառակ քրիստոսն զսքանչելեացն ներգործութիւն՝ բանսարկուին վերաբերէ,

և 'ի ձեռն սորա նա երկրպագի. որով և այլ նշանաց երևոյթս կատարէ, մեռեալս յարուցանէ և հիւանդս բժշկէ, և զամենեսեան այսու պատրանօք յիւր հաւանութիւն ձգէ, և բանսարկուին երկրպագուս առնէ։

"Եւ տուաւ նմա բերան խօսել ըղմեծամեծս և զհայհոյութիւն. և տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառասուն և երկու։ Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած, և հայհոյեաց զանուն նորա՝ և զխորանն նորա, և զերկնային խորանն"։ Թոյլ տուաւ նըմա, ասէ, յԱստուծոյ՝ ամս երեք և կէս իշխանութիւն ունել զԱստուած բամբասել, և զսուրբս չարչարել։ Իսկ խորան Աստուծոյ՝ զառ 'ի մարմնոյ բանին զտաճարն, այսինքն՝ զմարդանալն և 'ի սուրբս զհանգչելն, որում ժպիրհն այն լինի այպանող. նաև երկնային խորանին՝ հրեշտակացն բնակութեան։

"Եւ տուաւ նմա իշխանութիւն 'ի վերայ ամենայն ազգաց և լեզուաց և ժողովրդոց, զի երկրպագեսցեն նմա ամենայն որ բնակեալ են ընդ երեսս երկրի, որոց ոչ են գրեալ անուանք նոցա 'ի դպրութիւն կենաց գառինն զենլոյ

'ի սկզբանէ աշխարհի »։ Առ ամենայն ազգս և լեզուս ասէ՝ զչար իշխանութիւնն ձգեալ, և ըմբռնէ զկամաւ վրիպեալսն 'ի կենաց գիտութենէն։

"Այք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն։ Զի են ոմանք՝ որ 'ի գերութեան վարեսցին, և են ոմանք՝ որ սրով մեռցին, և են ոմանք՝ որ անձամբ զանձինս սպանանեն. աստ է համբերութիւն և հաւատ սրբոց »։ Որք զմտաց ունկն բացեալ ունին, յառ յապա փորձութենէն[1] զգուշասցին. զի ոմանք գերին, այսինքն բռնութեամբ հաւանին, և են՝ որք ըղհոգևորն ընդունին մահ, յայտ է՝ թէ 'ի գործոց յաղթեալք և մեղաց[2] ծառայեալքն, որպէս ասէ մեծն Յակովբոս. և են՝ որք զանձինս սպանանեն, և կամաւ 'ի ճշմարիտ կենացն վրիպին։ Իսկ որ համբերութիւն անփոխադրելի և հաւատս գեղեցիկս ունին, անջինջ կենաց գրոյս լինին[3] արժանի։ Որոց և զմեզ ամենողորմ Աստուած հաղորդս արասցէ, զի արժանի լիցուք չարչարանօք ժամանակիս փառաց սրբոցն հաղորդս գտա-

1 Բ Օրէն. Առ յապա փորձութեանն։

2 Բ Օրէն. Ի մեղաց։

3 Բ Օրէն. Ունիցին... լինիցին։

նել, և փառս վերառաքել Քրիստոսի, ընդ որում Հօր՝ և սուրբ Հոգւոյն դոհաբանութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼ. ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վասն սուտ մարգարէին։

ՃԱՌ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս երկու նման գառինն, և խօսէր իբրև զվիշապն"։ Զգազանս զայս ոմանք զհակառակ քրիստոսն ասացին՝ և ոմանք զսուտ մարգարէն, որ ունի երկու եղջիւրս՝ զհակառակ քրիստոսին զզօրութիւնն՝ և ըզվիշապին, զոր ոչ անտեղեակ համարեցաք։ Այլ 'ի դէպ է զայս՝ զսուտ մարգարէին կարծել. զի վիշապն՝ սատանայ ասացաւ, և գազանն որ 'ի ծովէն ելանէ՝ հակառակ քրիստոսն, իսկ զայս թըւեցաւ երանելոյն Իրենէոսի զսուտ մարգարէն ասել. և յերկրէ ել, յայտ է՝ թէ երկրաւոր և գետնաքարշ քաղաքավարութեամբ։ Ունի և եղջիւրս նման գա-

ռինն, զի ստեւով ոչխարի ծածկեալ է գայ-
լն ապականող[1] և թաքուցեալ, և վասն
ասացելոյ բարեպաշտութեանն կերպա-
րանաց ասէ Իրենէոս զբանս զայս՝ զոր
ասացաւ։ Իսկ զի ասէ՝ թէ և խօսեցաւ
իբրև զվիշապն, զայն յայտ առնէ՝ զի
իշխանութիւն տայ նմա բանսարկուն՝
նշանս և արուեստս առնել առաջի սուտ
քրիստոսին, և նմա վկայ լինել և նախ-
ընթաց՝ որպէս և Փրկչին մերոյ Մկրտի-
չն. քանզի 'ի միոյ հոգւոյ բանսարկուին
են զօրացեալ՝ սա և սուտ քրիստոսն։

"Եւ զիշխանութիւն զամենայն զա-
ռաջնոյ գազանին գործէր առաջի նորա.
և առնէր զերկիր և զամենայն բնակիչս
նորա, զի երկիր պագանիցեն գազանին
առաջնոյ մինչև ողջասցի վէր մահու նո-
րա. և առնէր նշանս բազումս, և տայր
հրոյ իջանել յերկնից յերկիր առաջի
մարդկան"։ Զամենայն զասացեալս զայս
սուտ մարգարէն գործէ 'ի փառս և յա-
նուն սուտ քրիստոսին, զի աստուած
կարծեսցեն զսուտ քրիստոսն լինել՝ այս-
պիսի արուեստիցս և գործոցս վկայու-
թեամբ. և որպէս ասացաք՝ զձև առ-

1 Ա Օրէն. Սպանող։

նու զՄկրտչին Յովհաննու, որ 'ի փառս և 'ի հաւանութիւն ձգէր Քրիստոսի ըզմարդիկ։ Եւ ոչ է սքանչելի եթէ առ 'ի յապստամբիցն հուր տեսանեմք ածեալ, որպէս և 'ի Յոբն պատմի աստուածային ներոզութեամբն՝ զանասունս նորա հրաձիգ արարեալ ներգործութիւնն սատանայի։ Իսկ հարուածոց գաղանին բժշկութիւն՝ կարծեմ գոլ՝ թէ բաժանեալ լինին 'ի նմանէ թագաւորք և հակառակք, և սա սուտ մարգարէս խաբեբայ արուեստիւքն զնոսա 'ի հաւանութիւն ածէ։ Բայց զայս քննեա և միտ դիր, թէ որպէս ճանապարհ հորդէ սուտ քրիստոսին այս մոլորեցուցիչ, որպէս և Փրկչին մերոյ՝ կարապետն և մկրտիչն Յովհաննէս. և զի նա 'ի ծովէ ել սուտ քրիստոսն՝ 'ի սատանայական խորհրդոցն ծնեալ, և սա յերկրէ բնական օրինօք ծնեալ։

"Եւ մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկրի՝ նշանօքն որ տուեալ են 'ի ձեռս նորա առաջի գաղանին". այսինքն՝ զորս յերկիր հանապազորդեն ըղցանկութիւն սրտից իւրեանց. իսկ զորս յերկինս ունին զքաղաքավարութիւն՝ ոչ կարէ պատրել, զի կափուցեալ են

զզգայարանս նախագիտութեամբ կորստական գալստեանն։

"Ասեն ցնա բնակիչք երկրի. արա զպատկեր գազանին՝ որ 'ի վիրաց սրոյն եկեաց։ Եւ տուաւ նմա իշխանութիւն՝ զի տացէ հոգի պատկերի գազանին, և զի խօսեսցի պատկերն, և երկիր պագցեն նմա ամենայն բնակիչք երկրի. և որ ոչ երկիրպագցէ պատկերի գազանին՝ սպանցէ զնա։ Եւ արասցէ զամենայն՝ փոքունս և զմեծամեծս և զմեծատունս և զաղատրս և զաղքատս և զծառայս, զի տացէ նոցա դրոշմ յաջոյ ձեռին և 'ի վերայ ճակատու նոցա. և ոչ ոք կարասցէ գնել և վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմըն գրոյն և զանուն գազանին և զթիւ անուան նորա"։ Տես և զայս՝ զի հաւանեալքն չարին՝ հակառակամարտ խնդրեն 'ի սուտ մարգարէէն առնել փրկական խաչին և տէրունական պատկերին, զոր արարեալ ետ նմա հոգի՝ խօսել դիւական ներգործութեամբ, որպէս և պատմեցաւ բազում անգամ՝ խօսել պատկերաց կռոցն և ծառոց և ջրոց վասն Ապողոնի և վասն այլոց ուրուականաց՝ որպէս ընթերցաք[1]. ըստ այսմ լինի և այս պատ-

[1] Բ Օրէն. Ընթերցցուք։

կեր։ Բայց ինձ թուի թէ և մեռելոց՝ կարծիս ձգեն յարուցանելոյ, որպէս և Սիմոն մոգն երևեցոյց Հռովմայեցւոցն, զոր առաքեալքն սուրբք յանդիմանեցին։ Արդ՝ ասէ սպանանել՝ զոր ոչ երկիր պագցեն նմա, և զերկրպագուսն և զարհամարհողսն որոշէ 'ի միմեանց սատակիչ անուանն կնքով, արարեալ և զայս ընդդիմամարտ մկրտութեանն, ոմանց յաջոյ ձեռին՝ զի 'ի բարի գործոց նհանջեսցեն, և այլոց 'ի ճակատն՝ զի 'ի խաւարային մոլորութիւնն համարձակեսցին. այլ ոչ ընդունին որք զնշան աստուածային լուսոյն նկարեալ ունին 'ի հոգիս։ Զայս ամենայն առնէ սուտ մարգարէն առաջի սուտ քրիստոսին զամսն երեք և կէս, յորս և Ենովք և Եղիա՝ զորս վերագոյնն յիշեաց, իջանեն նոցա ընդդիմամարտք և յանդիմանեն՝ մինչև սպանանին։

ԳԼ: ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վասն անուան հակառակ քրիստոսին:

"Ըստ է իմաստութիւն, որ ունի միտըս՝ համարեսցի զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ, և թիւ նր է այս. ո կ զ[1]":
Ստուգութիւն թուոյս՝ որպէս և այլ գրեալքս՝ յայտնի եղև նոցա որք ունին զփորձ կրթութեան: Սակայն ոմանք ասեն 'ի վարդապետաց, զի թէ պարտ էր ստոյգ գիտել զսորա անունն, երևեալ յայտնի 'ի ձեռն նորա՝ որում տեսիլս յայտնեցաւ. այլ ոչ հաճեցաւ Հոգւոյն սրբոյ շնորհ 'ի գիրս սուրբս զկատաղի անունն նկարագրել. ապա թէ ոչ՝ կրթելոց 'ի բանս՝ բազումս է գտանել ըստ այսր համարոյ անուն. որպէս երանելին Հիպողիտոս դնէ զանունն յայտնապէս 'ի լատին բարբառն՝ լամպէտիս (Lambedis) տիտան (Didan). և այս երկու բայս՝ որպէս ասացաք Հիպողիտոսի՝[2] լատին է, որ ասի Բենեդիչտոս[3] (Benedictus,) որ թարգմանի օրհնեալ, կամ օրհնեալ ես. ուստի յայտ է, թէ ջանայ յափշտակել զա-

1 Բ Օրինակին յաւելուն և զյունական Թուագիրսն χξδ':

2 Բ Օրին. Ըստ Հիպողիտոսի:

3 Բ Օրին. Պենետէքտոս:

նուն ճշմարիտ օրհնելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Այսպէս յայտնի թիւ անուանակոչութեան[1] չար առաջնորդին և ճշմարիտ վնասակարին և հին մախացելոյն, դառինն անիրաւի և օրհնութեանն զլացողի, որ 'ի ճշմարտութեան քարոզողացն՝ մոլորեցուցիչ կոչեցաւ, և 'ի փառս իւր յամօթ լինիցի[2]։

1 Ա Օրին. Թուի անուանակոչութիւն։

2 Ա Օրինակն յաւելու և զհետագայ մեկնութիւնք անուան նեռինն, առեալ 'ի բանից հիպողիտեայ որպէս նշանակի 'ի լուսանցսն։ Գիրըս այս՝ ուրանամ ասէ. քանզի ըստ յունական գրոյ՝ ուրանամն (ἀρνοῦμαι) եւթն բան խօսի. առաջինն՝ ա ասէ, երկրորդն՝ ճ, երրորդն ծ, չորրորդն՝ հ, հինգերորդն՝ ն, վեցերորդն՝ խ, եւթներորդն՝ ե. որ է ո կ զ։ Ասէ ուրանամ զԱրարիչն երկնի և երկրի. ուրանամ զհաւատըս իմ և 'ի քեզ դաւանիմ, և 'ի քեզ հաւատամ։ Բազում անուանք գտանին այս համարովս, հարիւրեակք զ, և տասնեակք՝ զ, և միակք՝ զ. 'ի գլխաւորութիւն ամենայնիւ 'ի վեց հազարսն եղելոց ապստամբութեանն, զի ցորքան աւուրբք եղև աշխարհս, այնքան ամօք յանգ ելանէ »։

ԳԼ: ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վասն գառինն՝ և որոց ընդ նմա հարիւր քառասուն և չորս հազարացն։

"Եւ տեսի՝ և ահա գառն կայր 'ի վերայ լերինն Սիոնի. և ընդ նմա հարիւր քառասուն և չորս հազարք, որք ունէին զանուն նորա, և անուն հօր նորա գրեալ 'ի վերայ ճակատուց նոցա"։ Գառն՝ զՔրիստոս առանց ամենայն հակառակութեան խոստովանելի է. և 'ի լեառն Սիոն կայր, ոչ 'ի ստորինս՝ այլ յերկնայինն 'ի կենդանւոյն Աստուծոյ քաղաք։ Իսկ հարիւր քառասուն և չորք հազարքս սոքա՝ են այն զորս յառաջին տեսլեանն եցոյց կնքեալս յորդւոցն Իսրայէլի. և մեք ըստ կարի ցուցաք զխորհրդոյն զօրութիւն՝ թէ յառաքելական սերմանցն են, որք ընդդէմ սուտ քրիստոսին նահատակին, զորս և աստ յայտնապէս յիշէ՝ զնոյն թիւ 'ի կիր արկեալ. որով ուսանիմք՝ թէ նոքա են որք ոչ հաւանեցան առնուլ զանօրինին դրոշմ, և պէսպէս կտտանօք 'ի նմանէ նահատակեցան, որով ցուցանէ թէ յետ մահուանն ընդ Քրիստոսի եղեն 'ի վերինն Սիոն։ Եւ ոչ թէ սոքա միայն են ընդ

գառինն Աստուծոյ սուրբք, այլ քանզի զնախավախճանեալսն ետես յառաջագոյն, որպէս ցուցաւ յամենայն ազգաց՝ արկեալ զինքեամբք սպիտակս առաջի Աստուծոյ։ Իսկ զսոսա ասաց միայն՝ թէ կնքեաց հրեշտակն, և այժմ ցուցանէ՝ թէ կնքեալք սոքա ելին առաջի Աստուծոյ ընդ նախ սրբոցն կալ առաջի նորա օրհնութեամբ, որք 'ի սուտ քրիստոսին գրոշմէ զերծան, և 'ի նմանէ նահատակեցան։

"Եւ լուայ ձայն յերկնից՝ որպէս ըզձայն ջուրց բազմաց, և ձայն որոտման մեծի. և լուայ իբրև զձայն քնարահարաց, զի հարկանէին զքնարս իւրեանց. և երգէին զերգս նորս առաջի աթոռոյն՝ և առաջի չորից կենդանեացն՝ և առաջի երիցանցն"։ Ձայնի ջրոց և որոտման՝ զպայծառ և զանհամեմատ սրբոցն օրհնաբանութիւնն ջանայ նմանեցուցանել, որ անհաս է զգայարանաց. նոյն և քընարաց[1] զքաղցրութիւն և զհամաշընչութիւնն. քանզի ամենայն վայելչութիւն առ նոսա տեսանի յանդրանկացն եկեղեցի, 'ի մէջ նոցա որք զմեռելու-

1 Ա Օրէն. Քնարահարաց։

թիւն մարմնոյ ուղղեցին, և զայն կեանս ճշմարիտ սիրեցին, որոց որպէս բարեմիտ ծառայից՝ տէրունի խորհրդոյն զօրութիւն ցուցանի։

"Եւ ոչ ոք կարէ գիտել զերգս նոցա, բայց միայն հարիւր քառասուն և չորս հազարքն, որք ազատեալ են յերկրէ"։ Յերկրաւորացս և ոչ ոք կարէ գիտել զերգս նոցա, բայց միայն որք ազատեցան յերկրէ։ Եւ մի՛ կարծեր թէ զսոսա թի՛ւ դնէ երկնային քաղաքին բնակչաց, ուր ասաց նախ թէ՝ ետես բիւրս բիւրուց, այլ առ տեղեաւս վասն նոցին միայն խօսի, որք 'ի սուտ քրիստոսէն կատարեցան։

"Սոքա են որք ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. սոքա զկնի երթան գառինն ուր և երթիցէ. սոքա ընտրեցան 'ի մարդկանէ առաջի Աստուծոյ և գառինն. և 'ի բերանս նոցա ոչ գտաւ սուտ, զի անբիծք են"։ Այժմ պարտ է գիտել, թէ անմարթ է կարծել գոլ զսոսա յորդւոց հնոյն Իսրայէլի, առ որս սակաւ ուրեք գտանէր կուսութիւն. այլ եղեն 'ի նորս եկեղեցի. յորում և այս առաքինութիւն պայծառացաւ։ Արդ՝ կա՛մ են ըստ մարմնոյ կու-

սանք 'ի նմանէ չարչարեալք, կամ թէ
կոյսք են՝ որք ոչ պղծեցին զոգիս իւր-
եանց իգական[1] ցանկութեամբ և մար-
մնոյ հեշտութեամբ, և դրոշմի գազա-
նին ոչ հաւանեցան։ Ի բերանս նոցա ոչ
գտաւ ստութիւն, զի ոչ խոստովանե-
ցան զսուտ և զմոլորեցուցիչ անունն իբ-
րև զաստուած, այլ անբիծ մնացին 'ի
պատրանաց նորին. սակս որոյ և ընդ գա-
ռինն Աստուծոյ զուարճանան։ Եւ իմա
աստ զքաղցրութիւնն Աստուծոյ 'ի վե-
րայ փրկութեան մարդկան. զի ընդ ե-
րևելի պատերազմ սուտ քրիստոսին՝ և
զաներևոյթ փառս ճշմարտութեանն վը-
կայից եցոյց երանելւոյս[2], որպէս զի
ծանուցեալ զայս՝ յուսով յաղթանակացն
մարտիցեն եղեալ քն առ նովաւ աստուա-
ծապաշտք։ Որ և զմեզ մասին սրբոցն
մաղթեսցուք զի հաղորդս արասցէ Փըր-
կիչն մեր՝ ըստ բազում օթեվանացն խոստ-
ման, անտես արարեալ զյանցանս մե-
զաւորացս գթութեամբն որով յերկիր
խոնարհեցաւ, զի լուացեալ զբիծս մեր
պատուական արեամբն, մաքուրս կա-
ցուսցէ առաջի Աստուծոյ մեր և Հօր

1 Բ Օրէն. Եգ։ 2 Ա Օրէն. Երանելիս։

իւրոյ[1] փրկիչն և առաջնորդն մեր Յի-
սուս, շնորհօք սուրբ Հոգւոյն՝ որում
փառք և պատիւ յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ

Վասն հրեշտակին՝ որ լինէր երաշխաւոր հանդերձեալ
դատաստանին:

ՃԱՌ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ տեսի այլ հրեշտակ թռու-
ցեալ 'ի մէջ երկնից. և ունէր աւետիս
յաւիտենական՝ աւետարանել ամենայն
ազգաց և լեզուաց որ բնակեալ են յեր-
կրի. և ասէր 'ի ձայն մեծ. երկերուք
յԱստուծոյ՝ և տուք փառս նմա, զի եկն
ժամ դատաստանի նորա. և երկիր պա-
գէք Արարչին երկնի և երկրի և ծովու
և աղբերաց ջուրց": Այս լինի սքան-
չելի երևումնս յետ 'ի հակառակ քրիս-
տոսէն այսքան բազմութեանցս սպանա-
նելոյ. երևի հրեշտակս 'ի մէջ երկնից, յա-
մօթ առնելով զայնոսիկ՝ որք յերկրէ ընդ-

1 Բ Օրէն. Աստուծոյ հօր մերոյ:

դէմ երկնաւորին մարտնչին[1]։ Եւ այս լի-
նի զդայապէս՝ կամ թէ իմացականապէս՝
աստուածային երկիւղի ազդումն 'ի սիր-
տըս մարդկանն, յետ ճանաչելոյ զստու-
թիւն հանապազաստ[2] քրիստոսին։ Ու-
նէր աւետիս յաւիտենական, զի յաւի-
տենից կենաց յոյսն պայծառացուցանէ
զափշութեամբ[3] խաւարեալ միտս նո-
ցա, զի ծանիցեն թէ ոչ կարէ զհոգի
ընդ մարմնոյ նեռն սպանանել. և 'ի սա-
կաւ ժամանակն ժուժկալութ՚ մրցիցին։

ԳԼ։ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԻՆ

Վասն հրեշտակին՝ որ զանկումն Բաբելոնի քարոզէր։

"Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր ըղ-
հետ նորա և ասէր. անկա՛ւ անկա՛ւ Բա-
բելոն մեծն՝ 'ի գինւոյ արբեցութենէ,
'ի ցասմանէ և 'ի պոռնկութենէ իւրմէ,
որ արբեցոյց զամենայն հեթանոսս"։
Մեծ Բաբելոն ասէ՝ զնեռինն խռովու-
թիւն և զշփոթ, որ վախճան առնու 'ի
լրումն երից ամացն և կիսոյ։ Իսկ գինի

1 Բ Օրէն. Մարտնչէին։
2 Ա Օրէն. Զստութիւն նորա զսուտ։
3 Ա Օրէն. Զյաւիտենից կենաց ... 'ի յափշտակութեամբ։

ցասման կարդայ՝ ոչ միայն զկռտպաշ-
տութեանն մոլորութիւն, այլ և զամե-
նայն մեղաց և զյանցանաց արբեցու-
թիւն, որով ամենեքեան յԱստուծոյ պո-
ռընկեցան։ Կործանի այսպիսի[1] Բաբելոն
ստուգապէս յերևել վերինն Երուսաղէ-
մի, և քանդեսցի արմատախիլ ըստ անօ-
րէն գործոցն՝ առաքեալ 'ի հուրն յաւի-
տենից։ Սակայն պարտ է գիտել, թէ և
այս հրեշտակի երևումն յայնժամ՝ ոչ լի-
նի զգայապէս, այլ միայն ազդումն 'ի
գիտութիւն մտաց եղելոցն յաւուրսն՝
որպէս կարծեմ։

ԳԼ։ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վասն զդուշացուցանելոյ հրեշտակին ոչ ընդունել
զհակառակ քրիստոսն։

"Եւ այլ հրեշտակ երրորդ գայր ըզ-
հետ նոցա՝ և ասէր 'ի ձայն մեծ. ո՛վ ոք
երկրպագեաց գազանին և պատկերի նո-
րա, և կամ զդրոշմ նշանի նորա ա՛ռ 'ի
ճակատ իւր, և կամ 'ի վերայ աջոյ ձե-
ռին իւրում, այնպիսին արբցէ 'ի բա-

1 Բ Օրէն. Այսպէս։

ժակէ ցասմանն Աստուծոյ՝ արկելոյ յա-
նապակէ բարկութեան բաժակին. և
տանջեսցի հրով և ծծմբով առաջի Ա-
ստուծոյ և գառինն"։ Եթէ ոք, ասէ,
գազանացելոյ սուտ քրիստոսին հնազան-
դի, և զդժնդակ քաղաքավարութիւն
նորա ընդունի, և բանիւ կամ գործով
քարոզէ զնա աստուած, զոր նշանակէ
'ի ճակատն և 'ի ձեռն նշանն, արբցէ
յանապակէ բարկութեանն Աստուծոյ,
որ անխառն է 'ի գթութենէ։ Այսու
յայտ առնէ՝ թէ զանազան են տանջա-
նարանքն, և բարիոք է ըմպել նոցա ըզ-
ցասման գինին՝ որք յամբարշաութեանն
գինւոյ ոչ սթափեցան[1] իմաստնացեալք։
Իսկ հուր և ծծումբ կոչէ զգեհենոյն
տանջանքն։

"Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս
յաւիտենից"։ Ծուխ կոչէ զ'ի ներքին
խորոցն զհառաչանս տանջելոցն. յաւի-
տեանս ասէ՝ զի գիտասցուք թէ որպէս
արդարոցն փափկութիւնն է յաւիտեան,
այսպէս և մեղաւորացն տանջանք։

"Եւ ոչ ունին հանգիստ՝ որք երկիր
պագին գազանին 'ի տուէ և 'ի գիշերի,

[1] Բ Օրէն. Ոչ ևս թափեցան։

և որք երկիր պագին պատկերին, և ա-
ռին զդրոշմ և զանուն նորա"։ Տիւ և
գիշեր ոչ զարեգական բերումն կոչէ 'ի
հանդերձեալ յաւիտենին՝ ըստ այսր կեն-
ցաղոյս թուոյ, այլ տիւ՝ զսրբոցն ըզ-
կեանսն զմտաւ ածեմք, իսկ գիշեր՝ ըզ-
դարշելեացն զտանջանս. զի որպէս կեան-
քըն և տանջանքն է միշտ, այսպէս և
նոցա անհանգիստն լինել, որք զապստամ-
բըն պատուեցին և պատկերի նորա եր-
կրպագեցին։

"Եւ համբերութիւն սրբոցն ասա
է. այս որք պահեն զպատուիրանս Ա-
ստուծոյ և զհաւատս Յիսուսի"։ Ամբա-
րիշտքն ասէ՝ 'ի հանդերձեալ յաւիտե-
նին այսպէս տանջեսցին. և սուրբք որ
ասա զհամբերութիւն ժուժկալութեան
ցուցին, և 'ի հաւատոցն Յիսուսի ան-
կողոպտելի մնացին, այս է՝ իւրեանց փառ-
քըն՝ որպէս և ցուցաւ նմա ժողով նոցա
յիմանալին Սիոն։ Զայսքան առ յապա
պատուհաս անսրբոցն՝ եցոյց սուրբ հրեշ-
տակն երանելոյս։ Իսկ առ յապա երևի
այս իմացականապէս՝ եղելոց մարդկանն,

[1] Բ Օրէն. Այսքան է նո- քն է իւրեանց։
ցա իւրեանց։ Մէ օրէ. Այս

և ոչ զգայապէս տեսիլ հրեշտակի՝ որ զայս բարբառի, այլ՚ի սիրտս ամենեցուն խորհուրդ ամբարշտացն պատուհասի կերպարանի. իսկ պատիժն՝ յետ արդար դատատանին։

"Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. գրեա, երանի՛ մեռելոցն որք՚ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի. զայս ասէ հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա"։ Երանի տայ երկնային բարբառն մեռելոցն՝ որք՚ի սուտ քրիստոսէն նահատակեցան, և Քրիստոսի չարչարակցութեամբն ընդ նմա փառաւորեալք հանգեան յաշխատութենէ կենցաղականս մարտի, զի կորուսեալք զանձինս՝ գտին զհանգիստ[1]։ Իսկ սոքա որք զկեանս ախորժեցին ունել[2], և մոլորեցուցչին ծառայեցին և հաւանեցան, յայսքան տանջանս դժոխոց չարչարին. արդարև երանի է նոցա որք յաստուածայինն յայն՚ի լեառնն[3] գեղապարեն զօրհնութիւնս երգոց որպէս ընթերցաք. առ որս մեռաւ մահու յաղ-

1 Բ Օրէն. Ի հանգիստ։
2 Ա Օրէն. Առնուլ։
3 Բ Օրէն. Յայտնի լեառն։

թութիւն, որպէս աստուածայինն առաքեալ գրէ Պօղոս. որք տեսանեն ըզփառս չքնաղս յուսոյն իւրեանց Քրիստոսի՝ որում անձկացան։ Յորոց ձեռն մաղթեսցուք Աստուծոյ ասելով. զարթո զզօրութիւնս քո՝ և եկ 'ի կեցուցանել զմեզ. և դարձո զաչս ծառայից քոց՝ զի մի՛ տեսցեն զնանրութիւն սնոտի կենցաղոյս, զի կեցեալք գթութեամբ քո՝ փառս վերառաքեսցուք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼ. ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վասն նստելոյն յամպս՝ որ հնձէր զբոյսս երկրի գերանդւովն։

ՃԱՌ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ տեսի՝ և ահա ամպ սպիտակ, և 'ի վերայ ամպոյն նստէր նման որդւոյ մարդոյ, և 'ի գլուխ իւր պսակ ոսկի, և 'ի ձեռին իւրում ունէր գերանդի սրեալ"։ Յետ ասելոյ զվճիռ արդարոցն փառաց՝ որք 'ի սուտ քրիստոսէն նահատակեցան, և զպատիժ յանցաւորացն՝ որք

նմին հաւանեցան, ապա ուսանի և ըզ-
խորհուրդ կատարածի աշխարհի։ Եւ
ամպ՝ զմտաւ ածեմք գոլ զհրեշտակական
զօրութիւնսն, ըստ որում ասէ սաղմոս-
երգուն. "Ել 'ի քրովբէս և թռեաւ,
սլացաւ նա 'ի թևս հողմոց"։ Իսկ նման
որդւոյ մարդոյ է Քրիստոս նստեալն 'ի
նմա, որպէս և յառաջին տեսլենէն ու-
սաք։ Ունէր 'ի գլուխն պսակ ոսկի, որ
նշանակէ զթագաւորութիւն երևելի և
աներևոյթ զօրութեանց. այլ ոսկի, զի
առ մեզ նիւթս այս է՛ պատուականա-
գոյն։ Իսկ գերանդին՝ է հրաման կատա-
րածին, ըստ որում ինքն Տէրն[1] հունձք
զվախճան աշխարհի կոչեաց։

"Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից,
աղաղակէր 'ի ձայն մեծ՝ և ասէր. որ նըս-
տիսդ 'ի վերայ ամպոյդ՝ առաքեա զգե-
րանդիդ քո և հնձեա, զի եկն ժամա-
նակ հնձոց, և հասեալ են հունձք եր-
կրի"։ Հրեշտակին աղաղակելն մեծա-
ձայն՝ յայտ առնէ զպաղատանս ամենայն
երկնային զօրացն վասն կատարածի աշ-
խարհի, զի հանգիցեն արդարքն յաշխա-
տութեանց, և կարճեսցին մեղաւորքն

[1] Բ Օրին. Ըստ որում Հայրն։

յամբարշտութեանց ։ Իսկ ասելն՝ թէ հասեալ են հունձք երկրի, յայտ առնէ թէ տկարացան արդարքն 'ի հաւատոց, և յագեցան ամբարիշտքն չարեօք. հընձեա զնոսա մահուամբ, և կասեա արդար դատաստանաւ, և որոշեա ճշմարտութեան հեծանոցաւն զյարդն լուցկի գեհենոյն՝ և զցորեանն շտեմարանի արքայութեանդ ։

ԳԼ ։ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վասն հրեշտակին՝ որ կթէր զդառնութեան այգին ։

"Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի տաճարէն որ յերկինս, և ունէր և սա գերանդի սրեալ" ։ Քանզի և Քրիստոս անուանեցաւ մեծի խորհրդոյ հրեշտակ Հօր. այլ այս է 'ի պաշտօնէից զօրութեանցն՝ որպէս 'ի կարգիս ցուցանէ, որ զամբարշտութեանն կթէր զայգի ։

"Եւ այլ հրեշտակ ել 'ի սեղանոյն, որ ունէր իշխանութիւն 'ի վերայ հրոյ. և աղաղակեաց 'ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին սրեալ, և ասէր. կթեա զողկոյզս յայգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի դմա" ։ Եւ

այսու ուսանիմք զհրեշտակական զօրու-
թիւնսն կարգեալ 'ի վերայ արարածոցս,
ոմն 'ի ջուր՝ և ոմն 'ի հուր. և էր սա 'ի
վեհագունից հրեշտակացն, սակս որոյ և
հրաման տայր այնմ որ ունէր զգերան-
դին՝ կթել զողկոյզս երկրի, այսինքն՝ զամ-
բարիշտսն, որք զսրտմտութիւն վիշա-
պացն՝ որպէս զգինի արբին։ Հասեալ է
խաղող նորա, ըստ այնմ՝ թէ "Լցաւ
չափ մեղաց ամուրհացւոցն"։

"Եւ արկ հրեշտակն զգերանդի իւր
յերկիր, և կթէր զխաղող նորա, և ար-
կանէր 'ի հնձանն Աստուծոյ"։ Թէպէտ
և զգայապէս ասէ, սակայն իմանալի խոր-
հրդով կատարի յայնժամ. զի գերանդի
է հրեշտակին զօրութիւն, որով վախ-
ճան ածէ ամբարշտացն յաստի կենացս.
և զայս նախ քան զհասարակաց կատա-
րածն կարծեմ, զի բազումք և յամբա-
րշտացն 'ի սպառմանէ արարածոցս մե-
ռանին։ Հնձան Աստուծոյ ասէ զդժոխ-
սըն՝ ուր ամբարիշտքն ճմլին, և մեծ՝ վասն
բազմաց որ 'ի նմա տանջին։

"Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ քա-
ղաքին, և ելանէր 'ի հնձանէն արիւն

մինչև 'ի սանձս ձիոյն. և երկայնութիւն նորա հազար և վեց հարիւր ասպարէզ"։ Արտաքոյ երկնային քաղաքին Երուսաղէմի[1] ասէ՝ տանջանացն է տեղի, որում նոքա եղեն[2] արժանի. ձի՝ որ զսանձսն ունէր՝ զպատժող հրեշտակն անուանէ, ըստ Ամբակումայ. "Ելեր դու 'ի կառս քո. և ահա երիվարք հրեղէնք վերացուցին զԵղիա"։ Իսկ սանձք են նորա՝ աստուածային իշխանութեանն հնազանդութիւն, ընդ որով նուաճի։ Արդ՝ արիւն կոխելոցն հասանէր 'ի հազար և 'ի վեց հարիւր ասպարէզ, մինչև 'ի սանձս ձիոյն, այսինքն՝ ողբք և հառաչանք չարչարելոցն 'ի տանջող հրեշտակէն՝ այնչափ բարձրացաւ, մինչ զի աստուածային հրեշտակն խափանեցաւ 'ի յևս առաւել չարչարելոյ ղնոսին. իսկ հազար և վեց հարիւր ասպարէզն զանչափ[3] բացարձակութիւնն ցուցանէ ընդ դժոխսն՝ և ընդ հանգիստ արդարոցն։

1 Բ Օրէն. Արտաքոյ քաղաքին Եէմի երկնայնոյ։

2 Ա Օրէն. Են։

3 Բ Օրէն. Զայնչափ։

ԳԼ. ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն եւթն հրեշտակացն՝ որ ածին 'ի վերայ մարդկան զհարուածսն նախ քան զվախճան աշխարհիս, և վասն ապակեայ ծովուն։

"Եւ տեսի այլ նշան յերկինս մեծ և սքանչելի. հրեշտակս եւթն՝ որք ունէին եւթն վէրս զկնի, զի նոքօք կատարէր բարկութիւն Աստուծոյ"։ Այս բարկութի՝ Աստուծոյ՝ զոր նշանակեն հրեշտակքս, գալոց է 'ի կատարածի, որ դադարեցուցանէ զսուտ քրիստոսին զանօրէնութիւն։ Այլ տես՝ զի ամենայն ուրեք զեւթըն թիւս առնու 'ի կիր ըստ եւթն դարուս յորս մեղան, կամ թէ ըստ եւթըն հոգւոյն զօրութեան, և կամ թէ ըստ այլ խորհրդոյ՝ որ 'ի մէնջ անհաս է։

"Եւ տեսի որպէս ծով ապակեղէն խառնեալ հրով. և որք յաղթեցին գազանին՝ և պատկերի նորա՝ և թուոյ անուան նորա՝ և դրոշմի նորա, նոքա կային 'ի վերայ ծովուն ապակեղինի, և ունէին զքնարս Աստուծոյ"։ Ապակեայ ծովըն նշանակէ մաքուր և ամենապայծառ սրբոցն հանգստեան[1]. և զի խառնեալ էր

[1] Բ Օրին. Նշանակէ ըզ- սրբոցն հանգիստ։
մաքուր և զամենապայծառ

ընդ նա և հուր՝ ըստ առաքելոյ, "Իւրա-
քանչիւր գործն զինչ և իցէ՝ հուրն փոր-
ձեսցէ". որով կարելի է իմանալ՝ թէ
մաքրոց և անաղտիցն ոչ կարէ սա տի-
րել, քանզի այրող է մեղաւորացն, և
լուսաւորիչ արդարոցն, որպէս զմտաւ-
ածէ մեծն Բասիլիոս. քանզի հրով երե-
ւեցաւ Մովսէսի Աստուած, նաև կենա-
րար Հոգին որպէս հրեղէն լեզուօք բա-
ժանեցաւ յառաքեալսն։ Արդ՝ զորս 'ի
լեառն ասաց ընդ Աստուծոյ՝ զյաղթողս
գազանին, այժմ 'ի յայս ծով որ 'ի հրոյ
և 'ի լուսոյ՝ ցուցանէ թէ կային. քանզի
որքան զպէսպէս հարուածս յաղթահա-
րելոցն կամեցաւ երկրորդել, այսքան և
զփառս յաղթողացն։ Իսկ քնարքն որպէս
ասացաք՝ զձայնակցութիւն առաքինեա-
ցըն ցուցանէ 'ի վայելուչ օրհնութիւն-
սըն Աստուծոյ։

"Եւ երգէին զերգս Մովսէսի առա-
ջի Աստուծոյ, և զերգս գառինն՝ ասե-
լով, թէ մեծամեծ և սքանչելի են գործք
քո տէր Աստուած ամենակալ. արդար և
ճշմարիտ են ճանապարհք քո, թագա-
ւոր ամենայն հեթանոսաց. և ո՞վ ոք ոչ
երկիցէ և փառաւորեսցէ զսուրբ անուն
քո. զի դու միայն ես սուրբ՝ և արժա-

նի երկրպագելոյ. զի ամենայն հեթանոսք եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո տէր, յորժամ արդարութիւն քո յայտնեսցի"։ Մովսէսի երգովն նշանակէ զորս նախ քան զշնորհսն արդարացան, և որք զգառինն՝ զորս յետ Քրիստոսի գալըստեանն սրբութեամբ քաղաքավարեցին մինչև յազգսն յետին՝ առաքեալքն սուրբ և առ 'ի նոցանէ աշակերտեալքն։ Սոքա մեծացուցանեն զանունն Աստուծոյ, և վկայեն թէ 'ի հանդերձելումն յամենեցունց երկրպագի, յորժամ զիւր բնական փառքն երևեցուցանէ աշխարհի։

"Եւ յետ այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն խորանին վկայութեան՝ որ էր 'ի յերկինս. և ելանէին եւթն հրեշտակք՝ որք ունէին եւթն հարուածս. և զգեցեալ էին 'ի տաճարին՝ կտաւս մաքուրս և պայծառս. և գօտևորեալք էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս"։ Խորան աստ ասէ 'ի յերկինս՝ ըստ որում նմանութեան Մովսէս զներքին խորանն կազմեաց։ Աստի ելանեն հրեշտակքն որք ունէին զհարուածսն, և զգեցեալ էին մաքուրս՝ վասն որ և պարզ էութեանն

իւրեանց ունակացեալն քնութեան։ Եւ առ ստինսն գօտիս ոսկիս[1], վասն քնական կարողութեանն և գերապատուութեանն. այլ զի և ընդ իշխանութեամբն Աստուծոյ 'ի պաշտօն սպասաւորութեան են անդադար։

"Եւ 'ի չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշտակացն՝ եւթն սկաւառակս լի ցասմամբն կենդանւոյն Աստուծոյ, յաւիտեանս յաւիտենից"։ Այս՝ ըստ այնմ է զոր Եզեկիէլն պատմէ, որով ցուցանի թէ միշտ յառաջին դասուցն իջանէ գիտութիւնն Աստուծոյ 'ի յերկրորդսն, որպէս ասէ մեծն Դիոնէսիոս։

"Եւ լցաւ տաճարն ծխով փառացն Աստուծոյ և զօրութեան նորա"։ Ի ձեռն ծխոյն զահաւոր և զսարսափելի ըզտանջողական Աստուծոյ զբարկութիւնն ուսաք։ Իսկ զի լցաւ տաճարն, ծանուցանէ՝ զի զյանցանս անարժանիցն որք սուտ քրիստոսին հաւանեցան՝ այլ ոչ տանի ներողութիւն դատաստանացն Աստուծոյ[2]. այլ լցաւ, և յաղթահարի ողորմութիւնն յարդարութենէն, ըստ ո-

1 Բ Օրէ. Գօտի ոսկեզէն։
2 Ա Օրէ. Այլ ոչ ունի։
Բ օրէ. Այլ ոչ տանի նե-
րողութիւն դա՝ 'ի դատաստանացն Աստուծոյ։

րում 'ի կարգիս ցուցանէ։

"Եւ ոչ ոք կարէ մտանել 'ի տաճարն՝ մինչև կատարեսցին եւթն հարուածքն յեւթն հրեշտակացն։ Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր ցեւթն հրեշտակսն. երթայք հեղէք զեւթն ըսկաւառակսդ ցասմանն Աստուծոյ 'ի յերկիր"։ Որպէս ասացաք՝ ելից իբրև ըզծուխ աղաղակ յանցաւորացն զտաճարն Աստուծոյ, և հառաչանք արդարոցն որք 'ի չար աւուրսն յերկիր պանդխտին. յորոց ոչ ոք կարէ մտանել 'ի տաճարն, այսինքն՝ ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ոչ մեղաւորացն որ 'ի տանջանս հառաչանք, մինչև այս կատարեսցի հարուածք բարկութեանն Աստուծոյ 'ի վերայ երկրի, որով փորձին արդարք և մեղաւորք. և ապա տացի սրբոցն վերին տաճարին բնակութիւն։ Եւ այս հարուածքս հեղու 'ի մարդասիրէն Աստուծոյ ողորմութեամբ, որպէս զի տանջեալք մարմնով և զզջացեալք՝ փրկեսցին յանվախճան տանջանացն։ Եւ ածի այս որպէս կարծեմ "'ի ձեռն Ենովքայ և Եղիայի մարգարէիցն հրամանաց, սպառմամբ օդոց և այլայլութեամբ տարերաց։ Այլ մեք ասաս-

ցուք առ Տէր. ոչ գոյ բժշկութիւն մար-
մնոյ մեր յերեսաց բարկութեան քո.
սուրբ արա զմեզօք աղտեզեալ պատ-
մուճան մեր մարմնոյ՝ ցօղով ողորմու-
թեան քո, որով լուացեալ և քան զձիւն
ոպիտակացեալ՝ 'ի հարսնարանդ վերին
արժանի լիցուք 'ի սէր փեսայիդ վայե-
լել ընդ քեզ[1] Քրիստոս Աստուած մեր, որ
ես փառաւորեալ այժմ և միշտ և յաւի-
տեանս. ամէն:

ԳԼ: ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վասն հրեշտակին՝ որ զառաջին սկաւառակն հեղու,
և հարուածք ապստամբացն:

ՃԱՌ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ գնաց առաջին հրեշտակն, և
եհեղ զսկաւառակ իւր յերկիր. և եղև
հարուածք չարաչար 'ի վերայ մարդկան՝
որ ունէին զդրոշմ գազանին, և երկիր
պագին պատկերի նորա": Ընդ առաջա-
կայս՝ երիցս եղև եւթն եւթն հրեշտա-

1 Ա Օրին. պակասէ Ընդ քեզ:

կացս պատուհասելն զերկիր. նախ՝ որ 'ի Քրիստոսէ մինչև 'ի Կոստանդիանոս և 'ի կատարած. երկրորդն՝ յաւուրս յետինս մինչև 'ի նեռնն. իսկ երրորդս այս՝ 'ի ժամանակս նորին ապստամբին կատարի։ Այլ սկաւառակ աստ՝ զբաժակ հրամանին որ զտանջանսն արբուցանէ՝ անուանէ։ Իսկ հարուածք չարաչարք, զի 'ի սիրտս նոցա ստգտանք դատապարտութեան տնկեսցի, յորժամ 'ի սպառնալեացն Աստուծոյ տանջին երկրպագուք գազանին, և ոչ 'ի միոյ յարարելոցն աստուածոց գտանեն օգնութիւն. յայնժամ լինի հարուած նոցա մարմնոյ տանջանքն, և լինի հարուածք սրտիցն ստգտանք վասն 'ի սնոտիսն մոլորելոյ և ոչ օգտելոյ։

ԳԼՈՒԽ
ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Հարուածք յերկրորդէն որոց 'ի ծով։

"Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զըսկաւառակ իւր 'ի ծով, և դարձան ջուրքն յարիւն մեռեալ. և ամենայն շունչ կենդանի որ էր 'ի ծովու՝ սատակեցաւ"։

Մեծ է աստուածային զօրութիւնն 'ի յանդիմանութիւն սուտ քրիստոսին ալ-կարութեան և խաբեբայ և դիւրին գը-նացիցն՝ 'ի ձեռն սուրբ մարգարէիցն Ե-նովքայ և Եղիայի, զի դարձուցանեն յա-րիւն զծով, որպէս և 'ի հնումն յԵգիպ-տոս եղև 'ի ձեռն Մովսէսի՝ 'ի յանդի-մանութիւն խստութեանն Փարաւոնի։ Եւ այս լինի՝ զի հաւատարիմքն հաս-տատեսցին, և անհաւատքն[1] երկիցեն, տեսեալ զի և արարածքս հակառակին կատաղութեան նոցա ընդդէմ։ Ի դէպ է 'ի ձեռն ասացելոցս՝ նշանակ պատե-րազմաց և խռովութեան 'ի նորին գա-լըստեանն կարծել, յորժամ Գոգ և Մա-գոգ շարժեսցին 'ի չորից մասանց տիե-ղերացս, և զապստամբ թագաւորսն իւ-րեանց ամենայն կառօք և զօրօք խորտա-կեն, և սպանումն յամենայն տեղիս լինի-ցի, այլ և 'ի ծով նաւակռիւք. և գետք 'ի բազմութենէ սպանելոցն 'ի նորին 'ի գոյն[2] արեան դառնան, զի արհաւիրք մեծ ածեն 'ի խրատ ապստամբացն երանելի սուրբ մարգարէքն։

[1] Բ Օրէն. Անհաստատքն։ 'ի նոսա և բազմութիւնք
[2] Բ Օրէն. Նաւակռիւք՝ սպանելոցն 'ի գոյն։

ԳԼ: ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Զի 'ի ձեռն երրորդ հարուածոցն գետք յարիւն դարձան։

«Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի գետս և յաղբիւրս ջուրց, և եղև արիւն։ Եւ լուայ 'ի հրեշտակէն՝ զի ասէր. արդա՛ր է՝ որ էնն և է՛, և սուրբ 'ի գործս իւր, զի այսպէս դատեցաւ. վասն զի զարիւն սրբոց և զարիւն մարգարէիցն հեղին ամբարիշտք, վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն»։ Մի է այս 'ի հրեշտակացն՝ որ 'ի վերայ տարերցս կարգեալ են, ըստ որում և ասացաք. զի 'ի վերայ ջրոյ են և 'ի վերայ հրոյ, և 'ի վերայ այլոց տարերցս։ Օրհնէ զԱստուած[1] որ 'ի վերայ արժանաւորացն ածէ ըստ մեղացն[2] ըզպատիժսն, զի զձեռս իւրեանց շաղախեցին[3] արեամբ՝ արիւն ետ նոցա յարբումն. յայտ է՝ թէ բազումք 'ի ժամանակին յայնմիկ հաստատուն գտանին 'ի հաւատս, և մարտիրոսական պսակաց արժանաւորին։ Նա՛ կարծելի է, թէ լինին

1 Բ Օրէ. Օրհնեալ է Ա՞ծ։ մեղացն։
2 Ա Օրէ, պակասէ Ըստ 3 Բ Օրէ. Շաղախեալ էին։

և Յեբրայեցւոցն բազումք որք դառնան[1] 'ի խստութենէ սրտից իւրեանց 'ի քարոզութենէ սրբոց մարգարէիցն։

"Եւ լուայ 'ի սեղանոյն զի ասէր. այո՛ տէր Աստուած ամենակալ, արդար և ճշմարիտ են դատաստանք քո"։ Զսեղանն՝ երբեմն զՔրիստոս յայտ արարաք, զի 'ի նմա մատուցանեմք առ Հայր զբանաւոր պատարագն, կատարելով զնոյն 'ի ձեռն առաքելոցն վարդապետութե՛, ուր հրեշտակական զօրութիւնքն վերաբերեն զաղօթս մեր և զընծայս հոգևոր. զի սոքա յայս գործ սպասաւորեն այնոցիկ՝ որ ժառանգելոց են զփրկութիւն։ Լուաք 'ի յայս նուիրական սեղանոյս, զի ձայն ետ արդարացուցանել զամենայն մտաց և բանի գերազանցեալ Աստուծոյ դատաստանն. ուսաք այսու և զտօնելն ընդ մեզ իմանալի զօրացն, որք ուրախ լինին ընդ փրկութիւն ապաշխարողաց ըստ սրբոյ աւետարանին. Նա և տրաում էին 'ի վերայ այնոցիկ՝ որք յուզիզ ճանապարհէն մոլորեցան[2]. գոհանան զԱստուծոյ՝ վասն զյանցաւորսն ընդ

1 Բ Օրին. Գտանէին ... և լինէին ... դառնային։ արժանաւոր լինէին ... թէ 2 Բ Օրին. Թիւրեցան։

իւր սուրբ պատուիրանն՝ տանջելոյ, զի հաւասար պարտուցն արար զտանջանսն։

Այլ մեք փութասցուք 'ի դարձն որ առիթն է ցնծութեան և ուրախութեան, զմտաւ ածեալ թէ զկնի շրջին իւրաքանչիւրոցս[1] աստուածային հրեշտակք, անճառ իմն բանի զկենցաղական գործս մեր թուելով. որոց 'ի լսել մեր խորհրդակցութեանն՝ ուրախանան, և 'ի հետևել մեր կամաց չարին՝ տրտմին, ըստ որում և լուաք 'ի հոգեշահ պատմութենէ անտի հարցն։ Այր ոմն, ասէ, ներկեալ բազում յանցանօք, յորժամ մտանէր յեկեղեցին, տխուր զիւր հրեշտակն 'ի հեռաստանէ և զազրացեալ յիւրմէ տեսանէր. զոր ծանուցեալ՝ զղջացաւ, և ըզբարեգութ տեսիլ հրեշտակին հռչակէր առ ամենեսին՝ իւրն ապաշխարութեան առիթ. իսկ յորժամ ապաշխարեաց, տեսանէր զհրեշտակն պայծառազգեաց ընթերակայ իւր, և զչար դևն ամօթով 'ի հեռաստանէ։ Լիցի և մեր պարկեշտ քաղաքավարութիւնն դիւաց տրտմութիւն և հրեշտակաց ուրախութիւն, զի թերևս ընդ նոսին հասարակեալ 'ի

1 Ա Օրէն. Իւրաքանչիւր գործոցս։

յարկան ցնծութեան, տօնեսցուք ուրա-
խութեամբ զՔրիստոս[1] Աստուած մեր,
ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք՝
միանգամայն և պատիւ, այժմ և միշտ
և յաւիտեանս. ամէն։

ԳԼ. ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Զի 'ի չորրորդ հարուածոցն տանջեսցին մարդիկ։

ՃԱՌ ԵՕԹՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

"Եւ չորրորդ հրեշտակն եհեղ 'ի
սկաւառակէ իւրմէ 'ի վերայ արեգա-
կան. և տուաւ նմա խորշակահար առ-
նել զմարդիկ հրով. և տապացան մար-
դիկ 'ի տապ մեծ, և հայհոյեցին զԱս-
տուած՝ որ ունի իշխանութիւն 'ի վե-
րայ հարուածոցս այսոցիկ. և ոչ ապաշ-
խարեցին 'ի փառս Աստուծոյ"։ Հաւա-
սար իմանալւոյն կարծելի է և զգալի ա-
րեգական բոցակիղելն. և յայնժամ տա-
պասցին մարդիկ, զի 'ի մարդասիրէն[2] Ա-
ստուծոյ 'ի սանձս ճմլին և 'ի դանդանա-

1 Ա Օրէն. Ի Քն։ 2 Ա Օրէ. Ի մարդասիրին։

ւանդս կզակք նոցա, որք առ նա ոչ կամեցան զմերձենալն[1], որպէս զի ապաշխարութեամբ մերձեսցին, և տիրեալք 'ի ցաւոցն՝ թերևս զմայր այնորիկ զմեղսն սրբեսցեն[2]. այլ անզգամութիւն թշուառականացն փոխանակ այնորիկ ետ նոցա զլեզուսն զերկնաւ ածել, և հայհոյութիւնս առ Բարձրեալն խօսել[3]: Զայս այժմ տեսանեմք առ բազումս որ շուրջ զմեւք են՝ և սքանչանամք, զի զանճառ դժնդակութիւնս 'ի բարբարոսացն կրելով՝ յԱստուած հանեն զպատճառսն՝ յայսպիսի չարչարանս զազգս մեր մատնելոյ, զանձանց մոռացեալ արժանաւ որ պատուհասին չար զգործսն:

ԳԼՈՒԽ ՅԻՄՆԵՐՈՐԴ

Զի հինգերորդ հրեշտակն հարուածէ, և զթագաւորութիւն գազանին խաւարէ:

"Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէն իւրմէ 'ի վերայ աթոռոյ գազանին, և եղև թագաւորութիւն

1 Բ Օրէն. Մերձենալ:
2 Ա Օրէն. Ատեսցեն:
3 Բ Օրէ. Բերել խօսիւք:

նորա խաւարեալ. և ծամէին զլեզուս
իւրեանց յախտէ ցաւոցն, և հայհոյէին
զԱստուած երկնից 'ի ցաւոց իւրեանց և
յախտէ դառնութեն, և ոչ ապաշխարե-
ցին 'ի գործոց իւրեանց»։ Հեղուլն զըս-
կաւառակն յաթոռ գազանին, նշանակէ
զթագաւորութիւն հակառակ քրիստո-
սին. զի այսքան բարկութիւն հեղու 'ի
վերայ նորա՝ մինչ զի յիմարեալ տկարա-
նայ յամենայն արհեստից և 'ի զօրութե-
նէն որով պատրէր զմարդիկ, և քօղ դիւ-
թութեան նորա մերկանայ, և ինքն 'ի
լուսաւորութենէ իմաստից[1] խաւարի։
Իսկ լեզուացն ծամելն՝ զգերազանցութի
վշտին յայտ առնէ, որով պատրեալք 'ի
նմանէ՝ չարչարին, որով ճանաչեն՝ թէ
խաբեբայ էր որ 'ի մէնջ աստուած փա-
ռաւորէր, զի այժմ ոչ կարէ ձեռնտու
լինել 'ի վտանգս. քայց սակայն 'ի հա-
ւատոցն Աստուծոյ տկարանան. և մա-
նաւանդ որք հայհոյէին, որպէս հանդեր-
ձեալ է և վասն տաղանդեայ կարկտին
հարելոցն ասել։ Եւ այս լինի նոցա 'ի
սատանայական յուսահատութենէն, որ
վրէժխնդրութիւն մեղացն տայ վարկա-

[1] Բ Օրին. չէ՝ իմաստից։

նել զպատուհասն Աստուծոյ՝ և ոչ առիթ ապաշխարութեան. սակս որոյ և հայհոյէին[1], և 'ի չար գործոցն ոչ զղջացան[2], և անձնիշխան կամօք ոչ ախորժեցին զփրկութիւն 'ի յաւիտենական տանջանացն ։

ԳԼ ։ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԻՆ

Զի հեղլով վեցերորդ հրեշտակին զսկաւառակ իւր՝ ճանապարհ տայ 'ի վերայ գետոյն Եփրատայ ելից արևու թագաւորութեանցն ։

"Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ գետոյն մեծի Եփրատայ, և ցամաքեցան ջուրք նորա, զի պատրաստեսցի ճանապարհ թագաւորի ելիցն արևու"։ Ի դէպ է գետոյն Եփրատայ ըստ թոյլ տալոյն Աստուծոյ սակաւանալ, և հեթանոսաց թագաւորին ճանապարհ տալ՝ միջերկրեայցս մարդկան գալ 'ի սատակումն. յորում և 'ի Սկիւթացւոց կողմանցն Գոգ և Մագոգ՝ որպէս յիշատակէ՝ ելանեն ։ Ոմանք կարծեցին և զնոյն ինքն զսուտ քրիստոսն գալ

[1] Ա Օրէն. Հայհոյեն ։ [2] Ա Օրէն. Զղջանան ։

յարևելից կողմանէն, և ծնանել յաղգն Պարսից՝ 'ի ցեղէն Դանայ, որ և բերէ ընդ ինքեան[1] զԹագաւորս ժառանգակիցըս. ընդ Եփրատ գետ անցանեն, և զմարմնական մահ կորստեամբ ոգւոց ածեն մարդկան 'ի վերայ, ոմանց վասն հաւատոյ և ժուժկալութեան, և ոմանց վասն անարի լինելոյ և թուլութեանն։

"Եւ տեսի՝ զի ելանէր 'ի բերանոյ վիշապին և 'ի բերանոյ դազանին և 'ի բերանոյ սուտ մարգարէին՝ ոգիք երեք անսուրբք իբրև զգորտս"։ Եւ այսու ցուցանէ զբանսարկուն որպէս զվիշապ, անուանէ և զհակառակ քրիստոսն որպէս զգազան, և զսուտ մարգարէն որպէս զմարդ, ընդ նոսին յիշատակեալ յորոց ելին ոգիքն որպէս զգորտս, զի հոտն նորա անմաքուր՝ և ինքն տղմասէր և տղմակերպ։ Որոց նմանին խոնաւուտ հեշտութեանց արարողք դևքն, որ ըզբանսարկուին և զիւրեանց գործակցաց զկամս 'ի սիրտս անմեղ մարդկան սերմանեն խաբեբայ նշանօք՝ որպէս յաջորդըս ցուցանէ. քանզի այլ է բանսարկուն՝ և այլ է հակառակ քրիստոսն, և այլ սուտ մարգարէն։

[1] Ա Օրին. Բերէ յինքեան։

«Քանզի նոքա էին ոդիք դիւականք՝ որք առնէին զնշանս, և երթային առ թագաւորս ամենայն երկրի ժողովել զնոսա 'ի պատերազմ՝ յօրն մեծ տեառն Աստուծոյ ամենակալի»։ Իսկ ասէ՝ ներողութեամբն Աստուծոյ գործեն նշանս, որով հաւանեցուցանեն զտեսողսն գալ պատերազմել ընդ Աստուծոյ, այսինքն՝ ընդ սուրբ մարգարէսն՝ որք յաղթեն[1] սուտ քրիստոսին նշանօքն ճշմարտիւք։ Իսկ զի ասէ՝ յօրն մեծ, յորում պատուհասակոծ լինին անհաւատքն։

«Քանզի այսպէս ասաց Տէր. ահա՛ գամ իբրև զգող. երանի՛ որ իցեն արթունք, և պահեսցեն զհանդերձս իւրեանց, զի մի՛ մերկ շրջեսցին, և երևեսցին ամօթանք իւրեանց։ Եւ ժողովեցից զնոսա 'ի տեղի մի՝ որ կոչի եբրայեցերէն արմաքեդոն»։ Հսկելն և պահելն զհանդերձս՝ յայտ առնէ զարթունսն բարի գործովք, զի այս է սրբոցն հանդերձ, յորմէ որք զրկին՝ հարկ է զի մերկ և լի ամօթով շրջիցին։ Արմաքեդոնն՝ կտրեալ թարգմանի՝ կամ կտրած. անդ հեթանոսք ժողովեսցին կոծել, զի

[1] Բ Օրէն. Յաղթահարեն։

'ի բանսարկուէն ընդդէմ մարդկան զին-
ուորին 'ի սոցանէ՝ որք ընդ մարդկային
արիւնս ուրախանան. և աստուստ ըղ-
ձանան առաքինութեան հանդերձին մը-
կըրտութեամբն, որք են ըստ աւետա-
րանական առակին՝ հարսանեացն արտա-
քոյ, և զի յայնմանէ զրկեցան՝ իմա-
նան[1]: Նաև զառաքելականն յիշեմք զա-
սացեալն, զի թէ զառաքինութիւնն ըզ-
գեցեալ էին՝ ոչ մերկք գտանէին:

Այլ մեք բազկատարած աղաչես-
ցուք զՏէր՝ լուանալ զպատմուճանս ո-
գւոց մերոց, և ցօղով ողորմութեան իւ-
րոյ սպիտակացուցանել քան զձիւն, զի
մի՛ լուիցուք զահեղն զայն զձայն. ընկե՛ր՝
զիա՞րդ մտեր այսր, չունելով հանդերձս
հարսանեաց: Այլ ըստ իմաստնոյն Սողո-
մօնի՝ եղիցի յամենայն ժամ զգեստ մեր
սպիտակ, այսինքն՝ հոգւոյ անաղտու-
թիւն և պայծառ լապտեր առաքինի քա-
ղաքավարութեան. զի այսպէս հարսնա-
ցեալ հոգիք մեր՝ հաճոյասցին փեսային
Քրիստոսի, և վայելեսցեն ընդ նմին ըզ-
յարազուարճ ուրախութիւնն 'ի փառս
Հօր և ամենասուրբ Հոգւոյն, յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

[1] Ա Օրէն. Ի մանանայէն:

ԳԼ: ՅԻՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Զի յեւթներորդ սկաւառակէն կարկուտ և շարժ 'ի վերայ մարդկան լինէր։

ՃԱՌ ՈՒԹԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

"Եւ եւթներորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ յերկնից, և յաթոռոյն՝ ասելով. եղև։ Եւ եղեն փայլատակմունք, ձայնք և որոտմունք. և եղև շարժումն մեծ՝ որպիսի չիք եղեալ 'ի սկզբանէ յորմէ հետէ եղև մարդ 'ի վերայ երկրի՝ այնպիսի շարժումն մեծ"։ Հրեշտակական ձայն, ասէ, յերկնից ել, այսինքն՝ աստուածային կատարեալ հրամանն. իսկ փայլակն և որոտումն՝ մերձեցելոյ կրկին Քրիստոսի գալստեանն է նշանակ, ըստ որում և եղեն 'ի հնումն յիջանելն Աստուծոյ 'ի Սինայ։ Իսկ շարժն՝ եղելոցս վերափոխման է նշանակ՝ ըստ առաքելոյ. և այսպիսի շարժումն ոչ է լեալ արդարև, զի 'ի ժամանակ ժամանակ յօրինաց յօրէնս շարժեցաւ աշխարհս, և ոչ թէ յապականութենէ 'ի նորոգումն, որպէս և այժմ լինիցի։

"Եւ եղև քաղաքն մեծ յերիս մասն,

և քաղաքք ազգացն անկան »։ Քաղաք մեծ՝ զԵրուսաղէմ գիտեմք, ոչ վասն բազմութեան շինուածոցն, այլ վասն իսկըզբանէ լինելոյ փարթամ աստուածպաշտութեամբ. և զի մեծացաւ Քրիստոսի որ 'ի նմա չարչարանօքն։ Յերեք մասն լինի այսպէս, զի բաժանին 'ի միմեանց հաւատացեալքն՝ և 'ի սուտ քրիստոսէն մոլորեալքն՝ և հրէայքն։ Իսկ քաղաքք ազգաց՝ ամենեին զկնի սնոտեացըն մոլորեալ անկանին 'ի ճշմարտութենէն. վասն զի հրէայք և սամարացիք՝ որք այժմ յերկիւղէ բարեպաշտ թագաւորաց զանխլացուցանեն զաղանդս իւրեանց, յայնժամ համարձակութիւն առնուն. և որք սոսկ ունին զանուն քրիստոնէութեան՝ 'ի նեղութեանցն փորձեալ պառակտին, և բարեպաշտութեամբ մեծացեալ քաղաքն յերիս մասունս քակտի։

"Եւ Բաբելոն մեծն յիշեցաւ առաջի Աստուծոյ, տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկութեան նորա »։ Եւ Բաբելոն մեծն յիշեցաւ ասէ, այսինքն՝ քաղաքն զոր հանդերձեալ է առակաւ ցուցանել զկնի՝ բանիւդ, պոռնիկն որ նոտէր 'ի վերայ ջուրց բազմաց, զոր ե-

ցոյց նմա հրեշտակն։ Ընուանէ զնա Բա-
բելոն՝ վասն անկարգ 'ի նմա խառնա-
կութեանն[1] մերձենալոյ. իսկ յիշեցաւ 'ի
հրեշտակացն՝ որպէս աղաղակ Սոդոմայե-
ցւոցն, թէ լցաւ չափ մեղացն և եհաս
ժամ պատուհասի։

"Եւ ամենայն կղզիք փախեան, և
լերինք 'ի միջոյ բարձան"։ Կղզիք՝ եկե-
ղեցիք, և լերինք՝ որ 'ի նմա հաւատն և
բարեկարգութիւնն։ Եկեղեցիքն 'ի հա-
լածանացն փախչին և բարեկարգու-
թիւնն քակտի, զի ըստ Տեառն՝ նեղու-
թիւն մեծ լինի, որպիսի ոչ եղեալ 'ի
սկզբանէ աշխարհի, ոմանց՝ ըստ մեղաց
տանջանք, և ոմանց՝ առաքինութեանց
հանդէսք. ոչ միայն 'ի հակառակ քրիս-
տոսէն նեղութիւնն, այլ և 'ի ծերպս և
'ի լերինս փախստեամբքն վիշտք և տա-
ռապանք։

"Եւ կարկուտ մեծ իբրև կշիռ տա-
զանդի միոջ իջանէր յերկնից 'ի վերայ
մարդկան. և հայհոյեցին մարդիկ զԱս-
տուած յերկինս՝ վասն հարուածոց կար-
կտին, զի մեծ էր հարուածն և սաստիկ"։
Ոչ զգալի կարկուտ զայս իմանամք, այլ

[1] Ա. Օրէն. Խառնակութեամբ մեծանալոյ։

զանխառն 'ի ջերմութենէ ողորմութեան՝ զսաստ արդարութեանն Աստուծոյ։ Իբրև կշիռ տաղանդի միոջ, այսինքն՝ հաւասարաչափ լրութեան մեղացն եկեսցէ և հարուածն[1], զոր թշուառականքն ոչ առնուն նիւթ ապաշխարութեան, այլ բամբասանաց Աստուծոյ՝ կարծր և խստացեալ սրտիւքն, ըստ որում և Փարաւոնն առնէր։ Քանզի խաւարեալ են 'ի հանդերձելոցն յուսոյ, և ընդ աստեացս նեղութեան՝ 'ի ձեռն որոյ այնըմ[2] հասանեն ապաշխարութեամբն, դժուարանան[3] և հայհոյեն զԱստուած։

ԳԼ։ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վասն ցուցանելոյն միոյ յեւթն հրեշտակացն երանելոյն Յովհաննու՝ զպոռնիկ քաղաքն և զքակտումն, և վասն եւթն գլխոցն՝ և տասն եղջերացն։

"Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացըն՝ որք ունէին զեւթն սկաւառակսն. խօսեցաւ ընդ իս՝ և ասէ. Եկ այսր և ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռընկին՝ որ նստի 'ի վերայ ջուրց բազմաց.

[1] Ա Օրէն. Պատուհասն։ [3] Բ Օրէն. Դժուարին։
[2] Բ Օրէն. Այժմ.

ընդ որում պոռնկեցան թագաւորք երկրի, և արբեցան բնակիչք երկրի 'ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա։ Եւ ա՛ռ տարաւ զիս յանապատ հոգւով. և տեսի կին մի՝ զի նստէր 'ի վերայ կարմիր գազանի, և լի էր անուամբ հայհոյութեան. և գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս եւթն և եղջիւրս տասն"։ Զայս քաղաքս ոմանք զհինն Հռովմ ասացին գոլ, որ է 'ի վերայ եւթն լերանց բազմեալ. և եւթն գլուխն զոր ունէր գազանն՝ զեւթն թագաւորսն ասէ զամբարիշտս, 'ի Դոմետիանոսէ մինչև ցԴիոկղետիանոս, որք զեկեղեցի հալածեցին։ Իսկ մեք որ ըստ կարգի զբանս մինչև ցաստ ածաք, զայս եզական անունըս 'ի վերայ յոգունց թագաւորաց աշխարհի առնումք, որք 'ի Կոստանդիանոսէ մինչև 'ի գալուստ հակառակ քրիստոսին 'ի թագաւորեալ քաղաքն լինիցին։ Քանզի հին Հռովմ 'ի բաղում ժամանակաց անկեալ է 'ի թագաւորական կարողութենէն, զոր թէ դնեմք վերըստին իշխան՝ ոչ է. այլ առնումք 'ի վերայ սորա՝ յորմէ քակելոց է ինքնակալութիւնն, որով այսօր Ճոխանայ Կոստանդնուպօլիս. 'ի վերայ որոյ ըստ կար-

գի զնեղութիւնսն որ պատահելոց է՝ ա-
սասցուք ։ Այն որ ասէ՝ թէ ածայ հո-
գւով յանապատի, անապատ ասէ[1] զա-
մայացեալն յօրինօք քաղաքավարութե-
նէն ։ Կին ետես զքաղաքն վասն էգ և
վատթար որ 'ի նմա հեշտութեանցն ։
Ի վերայ կարմիր գազանի, յայտ է՝ թէ
'ի բանսարկուն սպանող, որ ընդ ար-
բումն արեանց հեշտութեամբքն[2] հանգ-
չի ։ Լ ի էր անուամբ հայհոյութեան,
այսինքն՝ 'ի յաճախութենէ տեսողակա-
նութեանն առանց երկիւղի. քանզի՝
սկիզբն իմաստութեան երկիւղն է ։ Այլ
զեղջիւրսն և զգլուխսն՝ 'ի նոյն ինքն յաս-
տուածային հրեշտակէն ըստ կարգի բա-
նիւքս ուսանիմք ։ Իսկ զի ասաց[3] նախ՝
թէ ցուցանեմ քեզ զայն որ նստի 'ի վե-
րայ ջուրց[4], 'ի զգալի ծովուցն մէջ. զի
նստեալ և յիմանալի խորհրդական ի-
մաստութեան[5] ջուրսն գիտութեան,
պոռնկեցան թագաւորք ընդ որ 'ի նմա
փափկութիւնքն, և արբեցան 'ի հեշ-
տութեանց մարմնական գոյիցն՝ զոր մա-
տակարարեաց աշխարհի ։

1 Բ Օրէն. Կոչէ ։
2 Բ Օրէն. Հեշտախտու-
թեամբքն ։
3 Ա Օրէ. Իսկ զասացեալն ։
4 Բ Օրէ. Նստի 'ի ջուրս ։
5 Ա Օրէ. Իմաստասիրութ ։

"Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս, և զարդարեալ ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականօք"։ Կարմիրն և ծիրանին՝ զիշխանութեամբ տիրելն ամենեցուն օրինակէր. 'ի նոյնն հայի մարգարիտն և ակունքն և փարթամութիւնն որով պերճանայր[1]։

"Ունելով բաժակ ոսկի 'ի ձեռին իւրում, և լի էր գարշելի և անմաքուր պոռնկութեամբ"։ Բաժակն՝ հրամանաց է օրինակ, որով վարէ զաշխարհս, և ոսկին՝ զպատուականն առ ամենեսեան զհրամանն[2]։ Իսկ զի լի էր գարշելի պոռնկութեամբ, յայտ է՝ թէ հոգեկան պոռնկութեամբ, ըստ այնմ. "Զիա՞րդ եղև պոռնիկ քաղաքն հաւատարիմ Սիօն". զոր արբուցանելոց է ամենեցուն յաւուրս յետինս պատուական հրամանաւն զգարշ մեղսասիրութեանն օրէնս, և զպոռնկելն յԱստուծոյ պղծութեամբ։

"Եւ 'ի ճակատ նորա գրեալ անուն խորհրդով. մեծն Բաբելոն՝ մայր պոռնկաց և գարշելեաց երկրի"։ Ճակատ իմանամք զթագաւորն քաղաքին՝ զտիրող

1 Բ Օրէն. Ի մարգարիտն և ակունքն և փարթամութիւն։ Ա Օրէն. Ի փարթամութիւն։

2 Բ Օրէն. Եւ ոսկին առ ամենեսեան զպատուական զհրամանն։

նմին[1], որ զամենեցուն յանցանքն բարձեալ կրէ 'ի վերայ իւր անուամբն. և է սա խորհրդով՝ մեծն Բաբելոն, և մեծ՝ յանցանօք. քանզի Բաբելոն խառնակութիւն թարգմանի, որ և արդեամբք 'ի սմա կատարի։ Մայր պոռնկաց, քանզի որպէս քաղաքացն մայր է վասն մեծութեանն, այսպէս և յանցանօք ծնօղ է՝ վասն զնոսին ինքեամբ 'ի չարիս դաստիարակելոյ. զի եղև մեղաց վարդապետ՝ ընդ իշխանութեամբն անկելոյ քաղաքացն, որք զգարշելիս Աստուծոյ զանօրէնութիւնս ծնանին։

ԳԼ։ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Զի հրեշտակն որ եցոյց զխորհուրդս՝ մեկնեաց։

"Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոցն, և յարենէ ամենայն վկայիցն. և զարմացայ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ։ Եւ ասէ ցիս հրեշտակն. ընդէ՞ր զարմացար, ես ասացից քեզ ըզխորհուրդս կնոջն և զգազանին՝ որ բարձեալ ունի զնա, որ ունի զեւթն գլու-

[1] Ա Օրէ. Իմանամք քաղաքին զտիրող նմին զթագաւորն։

խըս և տասն եղջիւրս »։ Ուսանել արժան է՝ թէ վասն էր, զի ահա ամենայն քաղաքք արբեցան յարենէ սրբոցն, ըղսա միայն առեալ 'ի մէջ դատապարտէ, և պոռնիկ կոչէ, գիտելով զի և այլքն պոռնկեցան, ըստ որում կոչէ զքաղդէացւոցն Բաբելոն մարգարէն՝ պոռնիկ ջնարահար. նոյն և հինն Երուսաղէմ պոռնիկ անուանեցաւ, և երէցն Հռոմ՝ Բաբելոն անուանեցաւ 'ի Պետրոսէ՝ 'ի թուղթն։ Եւ թէ այսպէս է այս, էր վասն աւետարանիչս եզականապէս միում դընէ զպոռնիկն անուն. ինձ թուի՝ թէ որպէս զմի մարմին եզականապէս առնու զամենայն թագաւորութիւնս աշխարհի. զի ըստ որում 'ի մեղսն և յարեանց սրբոցն հեղումն համաձայն գտան թագաւորքն՝ հինքն և նորք, այսպէս և 'ի ժամ պատուհասին զնոսին անձնաւորապէս որպէս զմի դնէ։ Քանզի ահա և 'ի հինն Բաբելոն չարչարեցան սուրբքն, և 'ի Քրիստոսէ մինչև 'ի Դիոկղետիանոս արբին թագաւորքն Հռովմայեցւոց՝ զարիւնս նոցա, երբեմն սաստիկ և երբեմն նուաղ։ Նաև 'ի Պարսից տանջեցան ան-

[1] Բ Օրէն. Հռոմոց։

թիւք, և 'ի Յուլիանոսէ և 'ի ժամանակս արիանոսացն՝ որք ընդդէմ ուղղափառացն համարձակեցան 'ի նորն Հռովմ, որպէս ցուցանեն պատմութիւնքն ընթերցողացն։

"Եւ գազանդ զոր տեսեր, որ էր՝ և չէր, և հանդերձեալ է ելանել 'ի դժոխոց և 'ի կորուստ երթալ"։ Գազանըս այս որպէս ասացաք՝ բանսարկուն է, որ շրջի խնդրէ թէ զո՛ կլանիցէ։ Սա սպանաւ խաչիւն Քրիստոսի, և դարձեալ 'ի վախճան ժամանակի կենդանանայ. զի ներգործէ նշանս և արուեստս մոլորութեան առ 'ի զՓրկիչն ուրանալ։ Սա՝ որ զօրացեալն էր նախ քան զխաչն, 'ի փրկական չարչարանացն հարաւ և անկաւ յիշխանութենէն. ամբոխի մերձ 'ի վախճանն՝ որպէս ցուցաւ վերագոյն, և ելանէ 'ի դժոխոց, այսինքն 'ի տկարութենէ՝ յորմէ խաչիւն Քրիստոսի դատապարտեցաւ, դարձեալ ներողութեամբն Աստուծոյ թուլութիւն գտանէ. և որ էր նախ քան զխաչն, և ոչ էացաւ յետ խաչին, դարձեալ զարթչի[1], և զհակառակ քո՛ն գործակից առեալ՝ սակաւ ժա-

1 Բ Օրէն. Զարթնու։

մանակ մրցի, և յետ այնորիկ 'ի հանդեր-
ձեալ յաւիտենական կորուստն երթայ։

"Եւ զարմացան ամենեքեան որ բը-
նակեալ են 'ի վերայ երկրի, որոց ոչ էր
գրեալ անուանք իւրեանց 'ի գիր կե-
նաց իսկզբանէ աշխարհի. զոր տեսա-
նէիր զգազանն, զի է՛ր՝ և չէ՛, և մերձ է"։
Զարմանան ամենեքեան որք զմիտս յեր-
կիր ունին հակեալ՝ և ոչ են վարժեալ
Քրիստոսի կանխասացութեամբն, յոր-
ժամ տեսանեն 'ի բանսարկուէն 'ի ձե-
ռըն սուտ քրիստոսին զայնքան նշանս
կատարեալ։

"Ա՛ստ է իմաստութիւն՝ որ ունի մի-
տըս"։ Հոգևորն իմաստութիւն պիտոյ
է և ո՛չ աշխարհական՝ առ 'ի յիմանալ
զասացեալս։

"Եւթն գլուխն՝ եւթն լերինք են,
ուր կինն նստեալ էր 'ի վերայ նոցա. և
նոքին թագաւորք են եւթն"։ Եւթն
գլուխն նոյնն է՝ և որ եւթն լերինք.
իմանամք գոլ զմասունս աշխարհի, որք
բարձրացան և երևելի եղեն թագաւո-
րօքն՝ որք նստան 'ի նոսա յիւրաքանչիւր
ժամանակս։

ա. Յորս առաջինն Նինուէ է՝ Ասո-
րեստանեայց իշխանութիւնն։

Բ. Երկրորդ՝ Եկբատան՝ Մարաց [1] իշխանութիւնն, ինքնակալութիւնն Վարբակու, յորում զթագաւորն Սարդանաբաղոս եսպան Վարբակոս։

Գ. Երրորդ՝ յետ այսորիկ Բաբելոն՝ ինքնակալութիւնն Քաղդէացւոց, յորում Նաբուգոդոնոսոր թագաւորեաց։

Դ. Եւ յետ նորա կործանմանն՝ եկեալ թագաւորութիւնն Պարսից՝ 'ի Կիւրոսէ [2] նորոգեցաւ։

Ե. Եւ յետ այնորիկ Աղէքսանդր Մակեդոնացւոց թագաւորն. և յետ նորա երիցունք Հռովմայ՝ 'ի Հռովմ տիրեցին։

Զ. Եւ յետ նոցա Օգոստոս կեսարու առաջին թագաւորին միահեծան իշխանութիւնն, ընդ որով և ամբարիշտ թագաւորքն մինչև 'ի Կոստանդիանոս կալան զաթոռն։

Է. Եւ սա եւթներորդ Կոստանդիանոս քրիստոսասէր առաջին թագաւոր, որ 'ի նոր Հռովմ փոխեաց զիշխանութիւն։

1 Յա՛մ օրինակս Թուի սը-խալմամբ եդեալ Յեկբատան Հնդկաց։ Նոյնպէս և անունը Վարբակոս ունին ա՛մ օրինակ՝ Արբակոս. մի օրինակ և եթ՝ Վարբակոս. իսկ Ա օրին. և միւս այլ՝ ունին, Յորում թագաւորն Սարդանաբաղոս կամ Սարդիանաբալոս եսպան զԱրբակոս։

2 Ա Օրէ. Որ 'ի Կիւրոսէ։

Զայս տեսաք մեք եւթն գլուխ կը-
նոջն՝ որ է կենցաղս, և լերինք՝ իւրա-
քանչիւր աշխարհս, և գլուխս՝ զորս 'ի
նոսին թագաւորս, զի սոքօք կառավա-
րեցաւ աշխարհս, որպէս և մարմինն
գլխովն՝ 'ի նախասացեալ եւթն գաւառ-
սըդ։ Բայց պարտ է գիտել, զի ըստ հել-
լենացի բարբառոյ՝ զեւթն գլուխսն ի-
գական ասաց, և զեւթն լերինսն չէզոք.
Էր վասն, կարծեմ թէ ո՛չ զթագաւորսն՝
այլ զփառս նոցին անուանեաց. և ոչ
զաշխարհն յատկապէս՝ այլ զիշխանու-
թիւնսն որ 'ի նոսին. և այսմ պարտ էր
այսպէս դնել, իբր թէ Նինոս՝ Ասորիք.
Վարբակոս՝ Մարք. Նաբուգոդոնոսոր՝
Բաբելացիք. Կիւրոս՝ Պարսիկք. Աղէք-
սանդր՝ Մակեդոնացիք. Ռոմելոս՝ Հռով-
մայեցիք. Կոստանդիանոս՝ նոր Հռովմ։

"Եւ թագաւորք եւթն գոլով, հին-
դըն անկան, և մինն եկաց, և մինն ոչ է
եկեալ, և յորժամ գայ՝ սակաւ մի ժա-
մանակ ունի"։ Երանելին Հիպոզիտոս
'ի վերայ եւթն դարուս զասացեալս կար-
ծեաց, յորոց զհինգն անցեալ ասաց՝ որ-
պէս էր ըստ այնմ ժամանակի, և զայլն
գալոց, յետ որոց վախճանն. և մեզ ա-
սացեալս ընդունելի է, ըստ որում և

Իրենէոս եւթն յաւիտեան ասէ, եւթն երկին, և եւթն 'ի նոսա պարս հրեշտակաց. բայց մեք յառաջին կարգ բանիցն յարմարեմք և զայս։ Արդ՝ ցուցաք եւթն գլուխ՝ զեւթն տիեզերակալ թագաւորսդ, յորոց հինգն անկեալ էր 'ի ժամանակս աւետարանչին, Ասորւոցն, Մարացն, Բաբելացւոցն, Պարսիցն, Մակեդոնացւոցն. և ունէին յայնմ ժամանակի Հռովմայեցիքն, ըստ որում ասաց՝ թէ մինն կայ և միւսն ոչ ևս է եկեալ, այսինքն՝ նորս Հռովմայ իշխանութիւն՝ և որոց 'ի սմա թագաւորաց, զի դեռ ևս ոչ էր եկեալ, որ 'ի գալն ասէ՝ սակաւ ժամանակ ունիցի։ Եւ ճշմարտապէս, քանզի 'ի գլուխ հազար ամին ոչ կարծեմք զսորայն տէրութիւն ժամանել. և վասն այնորիկ վերագոյնն ասացաք՝ թէ ամենաղարդն Բաբելոնի բանն տիրապէս 'ի վերայ այսր քաղաքի կատարեսցի. վասն զի այլքն առին զպատիժն՝ և չեն 'ի միջի, սա որ անփորձ է[1] մինչև ցայսօր, հանդերձեալ է գրեցելովք պատուհասիւքս վտանգիլ և փորձիլ։

"Եւ գազանն՝ որ էր և չէ, և նա

[1] Ա Օրէն. Անփորձն էր։

ութերորդ է. և է յեւթանց անտի, և 'ի կորուստ երթալոց է"։ Գազանն ի-մացաք զստատանայ, որ էր նախ քան ըզ-խաչն, և ոչ էացաւ՝ տկարացեալ յետ խաչին. ութերորդ յառնէ, քանզի նա 'ի ձեռն սուտ քրիստոսին յաջորդէ 'ի Հոռոմոց, ըստ առաքելոյ՝ "Մինչև բարձ-ցի որ այժմդ ունի, և ապա եկեսցէ մարդն անօրէն"։ Սա ութերորդ լինի, յետ որոյ կորուստն գայ ստատանայի՝ 'ի կրկին գալստեանն արդար իրաւամբք 'ի հուրն յաւիտենից դատապարտեալ։

"Եւ տասն եղջիւրն զոր տեսեր, տասն թագաւորք են. որոց չև ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝ և կան իշխանք 'ի մի ժամ. և առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազանին"։ Այս տասն եղջիւրս է՝ ըստ որում և Դա-նիէլ ետես, յորոց միջի երևեցաւ փոք-րիկ՝[1] հակառակ քրիստոսն և զերիսն խը-լեաց, վասն զի այլքն հնազանդեցան նղո-վելոյն. քանզի որպէս կարծեմք՝[2] Հոռո-մոց թագաւորութիւնն պառակտեալ բաժանի. և յայնժամ 'ի մէջ տասն մա-սանցն[3] բաժանելոց անօրէնն երևի, զե-

1 Բ Օրէ. պաչասէ փոքրիկ։ 3 Բ Օրէ. Ի մէջ տասանցն։
2 Ա Օրէ. Կարծեցաք։

բիսն բառնայ, և եւթն իւր մոլորութեանն հաւանին։ Իսկ մի ժամ ասէ՝ զերեք ամացն սակաւ ժամանակն, յորում առաւել լինի սուտ քրիստոսին հնազանդութիւնն։

"Սոքա մի կամս ունին, և զզօրութիւն և զիշխանութիւն գազանին տան. և ընդ գառինն պատերազմին. և գառնն յաղթէ նոցա, զի տէր է նոցա և թագաւոր թագաւորաց. և որք ընդ նմա կոչեցեալք են՝ ընտրեալք և հաւատացեալք"։ Արդարապէս ոչ որք երկուց տերանց ծառայել կարէ, վասն զի որք հակառակ քրիստոսին հնազանդեցան, և 'ի սատանայէ գերեցան, ճշմարտութեանն Քրիստոսի գառինն Աստուծոյ մրցակիցք եղեն՝. այլ յաղթահարին՝ յորժամ զյետին թշնամին զմահն խափանէ տէր մեր. և յաղթեն նմա ընտրեալքն սուրբք, որք 'ի սուտ քրիստոսէն վկայական նահատակութեամբ կատարին։

"Եւ ասաց ցիս. և զջուրն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են և բազմութիւնք և ազգք և լեզուք. և տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին,

նոքա տեսցեն զպառնիկն՝ և ատեսցեն
զնա, և զմարմին նորա կերիցեն՝ և այ-
րեսցեն զնա հրով. քանզի Աստուած եդ
'ի սիրտս նոցա առ 'ի լինել նոցա մի կա-
մըս, և տալ զթագաւորութիւն գաղա-
նին՝ մինչև կատարեսցի բանն Աստուծոյ:
Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ
ունի զթագաւորութիւն 'ի վերայ թա-
գաւորութեանց երկրի": Ի հրեշտակէն
ստուգապէս այս մեկնեցաւ և առաւե-
լապէս յայտնեցաւ, այսինքն կինն՝ թա-
գաւորական քաղաքն, և ջուրքն շուրջ
զնովաւ՝ ազգքն և գաւառքն որոց իշխէ.
իսկ տասն եղջիւրքն՝ տասն թագաւորքն
յորս պառակտի Հոռոմոց[1] թագաւորու-
թիւնն 'ի վախճան ժամանակի. զորմէ[2]
ասէ՝ թէ ատեն զքաղաքն և ուտեն ըզ-
մարմին նորա, այսինքն զի՝ պատերազմին
'ի վերայ նորին, և իւրաքանչիւր ոք յին-
քըն ջանայ գրաւել. և յայնժամ զաշ-
խարհն՝ որ է մարմին գլխոյ քաղաքին՝ ա-
ւերեն, զի զայս՝ ուտելն ցուցանէ, և
այրեն հրով: Զայս՝ Աստուած ասէ եդ 'ի
միտս նոցա, ոչ թէ զի յԱստուծոյ շար-
ժին 'ի յանցանսն, այլ զի թողեալ լիցին

1 Ա Օրէն. Հռովմայ: 2 Ա Օրէն. Զորս:

արտաքոյ խնամոցն վասն չարութեանն. ուստի և 'ի սուտ քրիստոսն դառնան ամենեքեան յետ զարքունական քաղաքն հրձիգ առնելոյ, քանզի յայնժամ 'ի մէջ շփոթմանց նոցին երևի նա։ Երկրորդէ դարձեալ կին գոլ զթագաւորական քաղաքն, որ ընդ այն ժամանակն առաւելապէս անառակի 'ի գիճութիւն պըղծութեան, մինչ զի այսմ մեծի պատժոցըս պարտական գտանել։ Յորմէ մարդասէրն Աստուած փրկեսցէ զհաւատացեալս իւր, և 'ի վերինն Երուսաղէմ հանգուսցէ շնորհօք ողորմութեան իւրոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼ։ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն այլոյ հրեշտակի որ զանկանելն Բաբելոնի յոյտ առնէր, և զերկնային զձայնն՝ որ 'ի քաղաքէն փախչել պատուիրէր. և վասն անցանելոյ ստացեալ վայելչութեանն։

ՃԱՌ ԻՆՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

"Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, և երկիրս լուսաւորեցաւ 'ի փա-

ռաց նորա"։ Յայտ է թէ 'ի գերագունից հրեշտակացն էր սա, քանզի առաջնոցն իշխանութիւնն մեծ է քան զերկրորդիցն։ Լուսաւորեաց զերկիրս, քանզի առաւել է ներգոյացեալ պայծառութիւն հրեշտակացն՝ [1] քան զճառագայթս լուսաւորացդ։

"Եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. անկաւ Բաբելոնն մեծ, որ եղեալ էր բնակութիւն դիւաց, և արգել ամենայն այսոց պղծոց, և բանտ պահպանութեան ամենայն ոգւոց անսրբից և ատեցելոց։ Վասն զի 'ի բարկութենէ գինւոյ պոռնկութեան նորա արբին ամենայն ազգք և թագաւորք երկրի՝ որք ընդ նմա պոռնկեցան"։ Ազաղակէ հրեշտակս զանկանել քաղաքին, և զպատժոցն պատճառ՝ զյանցանսն, քանզի օթևան [2] եղև անմաքուր այսոց։ Իսկ գինի պոռնկութեան՝ ասէ ընդ հեշտութեանն և զագահութիւնն, որոյ իշխանքն կաշառակրծութեամբն ընդ ամենայն ազգս պոռնկեցան։

"Եւ վաճառականք երկրի 'ի նորա զօ-

1 Բ Օրէն. Առաւել են գոյութիւն հրեշտակաց։

2 Բ Օրէն. Օթարան։

բութեն յօրանալոյ մեծացան ”։ Զգե-
բազանցութիւն առաւել հեշտութեանն
ասէ, զի յաւելաւ յիւրմէ ստացուած-
քն, և զվաճառականսն մեծացոյց։

“Եւ լուայ ձայն յերկնից՝ զի ասէր.
ելէք 'ի միջոյ դորա ժողովուրդ իմ, զի
մի հաղորդ լիցիք մեղաց դորա ”։ Ա յս-
պէս ասաց՝ և առ Զովտ հրեշտակն՝ և
Եսայի. “Ելէք 'ի միջոյ դոցա, և մեկ-
նեցարուք ”։ Քանզի պատահէ յամե-
նայն ժամ պատուհասին արտաքոյ լինել
հաւատացելոցն, և 'ի ներքոյ Աստուծոյ
խնամոցն ապրել։

“Եւ մի զհարուածս դորա ընդու-
նիցիք. զի հասին կցեցան մեղք դոցա
մինչև յերկինս. և յիշեաց Աստուած
զամբարշտութիւնս դորա ”։ Եհաս մին-
չև յերկինս՝ որպէս զաղաղակ Սոդոմայե-
ցւոցն 'ի պահապան հրեշտակացն. յի-
շեաց Աստուած զամբարշտութիւն մար-
դասիրութեամբն, զի այժմու պատու-
հասիւ զհանդերձեալն կարճեսցէ, և
զիւրագոյն արասցէ նոցա զօրն դատաս-
տանի։

“Եւ հատուցանէ դմա՝ որպէս և

հատոյցն մեզ, և առցէ դա երկպատիկ ըստ գործոց իւրոց. և զբաժակն որով խառնեացն՝ խառնեցէք դմա կրկին. և որչափ փառաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հատուցէք դմա սուգ »։ Օ ըրկեալն, ասէ մարգարէն, աղաղակէ զձէնջ առ Աստուած. զայսպիսեացս ասէ հրեշտակն՝ թէ հատոյց մեզ զինքն ընդ աղքատսն կարդելով, որք 'ի թագաւորական բռնութեանցն զղուեցան. որպէս և Քրիստոս զողորմածսն սոցա՝ [1] ինքեան ասէր առնել։ Բաժակ խառնեաց ամենեցուն զանիրաւելն և զկողոպտելն, արբցէ և ինքն զհրձիգն լինել. փառաւորեաց զինքն պէսպէս զարդուք, մրացէ 'ի սուգ տապալելովն, ըստ այնմ. "Ճանապարհք Սիոնի սգան առ 'ի չգոյէ տօնիցն տարեկանաց »։

"Օ ի 'ի սրտի իւրում ասէր. թէ յամենայն ժամ նստայց ես թագուհի, և այրի ոչ ես եղէց »։ Օ այսպիսի ամբարտաւան բանս սովորութիւն է յօրացելոցն 'ի փափկութիւն՝ զօղանջել. քանզի յաճախութեամբ հեշտութեանն մոռանան զբնութիւնս ապականացու։

1 Մի օրին. Ողորմածացն ասէր սոցա՝ ինքեան առնել։

“Վասն այնորիկ 'ի միում աւուր եկեսցեն 'ի վերայ դորա հարուածք՝ մահ, և սուգ, և սով, և 'ի հուր այրեսցի. զի հզօր է տէր Աստուած՝ որ դատեցաւն զդա”։ Մի օր՝ զյանկարծադէպ[1] և ըզփոքր ժամանակն ասէ, յորում սրով և սովով սուգ նոցա եղիցի, և թէ՝ սրով ապականեսցին և հրով այրեսցին. 'ի միում աւուր ընթացակիցք լինին սոքա՝ զորս մարգարէացաւ նոցա, հարուածք և բազմատեսակ մահուց օրինակք։

“Եւ լայցեն և կոծեսցին թագաւորք երկրի 'ի վերայ դորա՝ որք ընդ դմա պոռնըկեցան և խաղացին. և հեծեսցեն յորժամ տեսցեն զծուխ կիզման դորա. 'ի հեռաստանէ կացցեն վասն երկիւղի տանջանաց դորա՝ և ասասցեն. վայ՛ քաղաքիդ մեծի Բաբելոնի. քաղա՛ք հզօր՝ զի՞ 'ի միում ժամու եկին հասին դատաստանք քո”։ Թագաւորս ասա համարիմ ասացեալ՝ զորս ընդ ձեռամբ իւր են իշխանք, որք կցորդեցան նմին 'ի հեշտախտութիւնսն։ Սոքա յիւրաքանչիւր աշխարհս յորժամ լսեն զկործանումն մեծ քաղաքին, վայ՛ս տան նմին, և սքանչա-

1 Բ Օրէն. Զյանկարծակի։

նան ընդ յանկարծադէպ պատուհասն ։

"Եւ վաճառականք երկրի ողբասցեն և սգասցեն 'ի վերայ քո, զի զբեռն նոցա ոչ ոք գնէ. և շահք որ 'ի քէն՝ ոչ և ս իցէ, ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և որդան"։ Որք 'ի վաճառուցն շահոյ տեղւոյն զրկեցան, ողբան՝ ոչ վասն ողորմելոյն նմա, այլ վասն պակասելոյ յինքեանց շահուցն։ Եւ դու տես զփարթամութիւն քաղաքին, թէ ո՛րքան զայս պատուական նիւթս առատացուցանէր յերկիր ։

"Եւ ամենայն փայտ խնկոց՝ և ամենայն անօթ փղոսկրեայ, և ամենայն անօթ 'ի փայտէ պատուականէ և 'ի պղընձոյ և յերկաթոյ և 'ի կճոյ. և կինամոմոն, և ամենայն խունկ, և իւղ և կնդրուկ, և գինի և ձէթ, և նաշիհ և ցորեան, և ստացուածք ամենայն, արջառ և ոչխար"։ Տես թէ ո՛րքան է քաղաքն այն 'ի սովորական հեշտութեան[1], այսքան պէսպէս նիւթովքս փարթամացեալ. և կամ ո՛վ է որ միտս ունի, և

1 Ա Օրէն. Հեշտախտութեան ։

վասն սակաւ այս հեշտութեանս փու-
թայ զրկել յանեզրական փափկութեցն։

"Եւ երիվարաց և կառաց՝ որ վայել
է մարմնոց և ոգւոց մարդկան"։ Սոցա
պէտքն են ասէ՝ սակաւ, այլ փափկու-
թիւնն արար անչափ[1]։ Կառքն 'ի հռով-
մայեցի[2] լեզուն՝ Եդում անուանի, և 'ի
յունական լեզուն՝ կառք. այս բազմա-
ւորականս՝ անդ եզական եդաւ վասն
կարճառօտութեանն։

"Եւ ամենայն ցանկութիւն անձին
քոյ գնաց 'ի քէն, և ամենայն լուսափայլ
վայելչութիւնն, պարարտն և գէրն և ըս-
պիտակն գնաց 'ի քէն, և ոչ ևս այլ գըտ-
ցես զայդ"։ Ոչ զանձինս մարդկան այ-
նուհետև ծառայեցուսցես ազատու-
թեան քո, և ոչ զհին վայելչութեանն
կալցես զգերութիւն։

"Եւ ամենայն շահավաճառք այսո-
քիւք մեծացեալք 'ի քէն 'ի բաց կաց-
ցեն վասն երկիւղի տանջանաց քոց, լա-
լով և սուգ առնելով՝ ասասցեն. վայ
վայ քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բե-
հեզս և ծիրանիս և որդան, և ոսկէզօ-
ծըս՝ և քարինս պատուականս՝ և մար-

1 Բ Օրէն. Ա յնչափ։ 2 Ա Օրէ. Ի հռովմայեցւոց։

գարիտս. զի՞ 'ի միում ժամու ապակա-
նեցաւ այսչափ մեծութիւն քո"։ Իտե-
սութիւն ածէ զԲաբելոնի զայսպիսի կի-
րըս, և զորս վասն նորա ողբք մեծամեծք՝
զոր կրելոց է, որ[1] յառաջագոյն պարծէր
'ի թագաւորական իշխանութիւնն։

"Եւ ամենայն նաւավար՝ և ամենայն
որք 'ի տեղիս տեղիս նաւեն, և նաւաղք,
և որք միանգամ ուռկանաւ գործեն՝ 'ի
հեռաստանէ կայցեն լալով, և աղաղա-
կեսցեն՝ տեսանելով զծուխ կիզման նո-
րա, ասելով. ո՞ նմանէ քաղաքիս այսմիկ
մեծի։ Եւ արկցեն հող 'ի վերայ գլխոց
իւրեանց, և գուժալով ձայնիւ մեծաւ՝
և լալով և սգալով ասասցեն. վա՛յ վա՛յ
քաղաք մեծ, որով ամենեքեան մեծա-
նայաք, որք ունէաք զնաւս 'ի ծովս՝ վասն
պատուականութեան քո, զի՞ 'ի միում
ժամու ապականեալ կործանեցար"։ Թէ-
պէտ և ծովն օրինակէ զայս բազմալի
կենցաղս, և որք 'ի նմա վաճառականք՝
երթան որք 'ի կենցաղականս որպէս ձու-
կըն մտանեն 'ի պտոյտս, այլ արդարա-
պէս և որք ասա չարչարին՝ բազում սուգ
առնու 'ի վերայ նոցա ծով. և որք 'ի նաւ

1 Ա. Օրէն. Զոր։

նաւարկեն, սուգ նոցա վասն իւրեանց[1] շահուն պակասելոյն լինիցի, զոր կրեն հարկաւորապէս։ Եւ զամենազարդն Քաբելոնի շփոթմամբ կատարումն վաճառականքն տեսեալ՝ ողբասցեն անմխիթար, որք 'ի հեշտութեանն գործակցէ բաժանեցան, մանաւանդ և խոյթին 'ի խղճմտութենէ գործոց իւրեանց։

"Ուրախ լերուք 'ի վերայ նորա երկինք՝ և սուրբ առաքեալք և մարգարէք. զի դատեցաւ Աստուած զդատաստան ձեր 'ի դմանէ"։ Ուրախ լինի երկինք, յայտ է թէ երկնաւորացն բանակըք, մարգարէքն և առաքեալք, որք ըղվրէ ժխնդրութիւն իւրեանց տեսանեն. զի բազում անգամ անարգեցան 'ի նոցանէ վասն աստուածային սիրոյ[2] պատուիրանաւն խրատելոյ, և ոչ թէ ուրախանան ընդ մանկանցն վշտալից նեղութեամբ մեռանելն, այլ որպէս զի զանբաւ ցանկութեամբ մեղանչելոյն զտանջանսն ընկալան. զի որք աստ չարչարին՝ 'ի հանդերձեալն տանջանք[3] մասնաւորաբար պատուհասին։

1 Բ Օրէն. Ինքեանց։
2 Մէ օր. Ա էթ ունի Սիրոյ։
3 Ա Օրէ. պակասէ Տանջանք։

. "Եւ ա՛ռ հրեշտակն հզօր՝ քար մի
իբրև զերկան մեծ, և ընկէց 'ի ծով ա-
սելով. այսպէս յարձակմամբ անկցի Բա-
բելոն մեծ քաղաք, և այլ ոչ ևս գտցի.
և ձայն քնարերգաց և երաժշտականաց՝
արուեստականաց՝ և փողահարաց՝ և
թմբկի այլ ոչ ևս լուիցի 'ի քեզ. և լոյս
ճրագի և ձայն երկանի՝ այլ ոչ ևս երե-
ւեսցի 'ի քեզ. և ձայն փեսայի և հար-
սին՝ այլ ոչ ևս լուիցի 'ի քեզ. և ոչ վա-
ճառականք քո փառաւորք և մեծամեծք
երկրի, որ զուարճացեալ էին 'ի քեզ.
վասն զի կախարդութեամբ դեղատու-
ութեան քո մոլորեցան ամենայն ազգք.
և 'ի քեզ ամենայն արիւն մարգարէից
և սրբոց գտաւ, և ամենայն գրելոց յեր-
կրին կենդանեաց" : Արար զքար երկա-
նին ապացոյց ստուգապէս կործանմանն,
որպէս և մարգարէիցն էր սովորութիւն.
զի Եսայի մերկ և բոկ գնայր, և Եզեկի-
էլ նպատակ արար զաղիւսն Երուսաղէ-
մի հանդերձեալ հինին օրինակ. և զայս
ոչ եթէ վայրապար առնէր հրեշտակն,
այլ որպէս զի մեր ծանուցեալ զանհրա-
ժեշտ պատուհասն՝ երկիցուք 'ի մեղան-
չելոյ, և խնդրեսցուք յԱստուծոյ զնե-
րումն : Այլ թէ էր վասն պակասէ ձայն

քնարին և թմբկին և ամենայն փառք, զպատճառ արդարապէս պատուհասելոյն՝ զկնի բերէ, զի մոլորեցուցեր, ասէ, զազգս կախարդութեամբ, և զարիւնն արբեր զմարգարէիցն։ Եւ այս ոչ եթէ եղականապէս 'ի վերայ այսր քաղաքի դընի, այլ որպէս յառաջագոյն ասացաք, զամենայն տիեզերս որպէս զմի մարմին առնու. և զնա դնէ գլուխ՝ առ որով վախճանն հասանելոց է, որով և ընդ ամենեսեան խօսի, որ զարիւն առաքելոցն և զմարգարէիցն արբին. զի "Թէ արդարքն հազիւ կեցցէ, ասէ, իսկ մեղաւորն և ամբարիշտն ո՞ւր երևեսցի"։ Եւ թէ այս՝ որ ատուածպաշտութեամբ յօրացեալ է, այսքան վշտանայ, որք կռապաշտք էին և սպանողք՝ և ոչ ատ պատուհասեցան, զի՞նչ ոչ պատահէ նոցա 'ի հանդերձեալն. քանզի որպէս մի դաս և մի քաղաք ասելով՝ զլրումն ամենայն՝ պարունակէ, այսպէս և թագաւորութիւն մի և քաղաք մի՝ զբազում քաղաքս առակօք դնէ միով անուանն յիշատակաւ։

1 Բ Օրէն. Ամենայնի։

ԳԼ: ՅԻՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վասն սրբոցն օրհնաբանութեանց երեքկին ալէլուօք՝ զոր 'ի քակտումն Բաբելոնի երգէին:

"Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս՝ ասելով. ալէլուիա, փրկութիւն և փառք և պատիւ և զօրութիւն Աստուծոյ մերում. զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա, զի դատեաց զպոռնիկն մեծ 'ի պոռնկութեան իւրում, և խնդրեաց ըզվրէժ արեան ծառայից իւրոց 'ի ձեռաց նորա: Եւ կրկին անգամ օրհնեցին և ասացին. ալէլուիա. և ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից: Եւ անկան քսան և չորք երիցունքն և չորք կենդանիքն, և երկրպագեցին Աստուծոյ՝ որ նստէրն յաթոռն փառաց, ասելով՝ ամէն, ալէլուիա": Ալէլուն՝ զԱստուծոյ օրհնութիւնն նշանակէ, իսկ ամէնն՝ եղիցի եղիցի. և այս՝ ըստ եբրայեցի բարբառոյն, որ հասարակաբար երգի յերկնաւորացն և յերկրաւորացս 'ի փառս Աստուծոյ: Երիցս ալէլուն՝ 'ի պատիւ երից անձնաւորութեան Աստուածութեանն, զոր տան Աստուծոյ վասն դատելոյ զյանցաւորսն ասա, և տանջանօքն

բարեխնամելոյ[1]։ Իսկ ծուխն որ ելանէր՝ կամ զհանապազորդ տանջանացն սպառնալիքն ցուցանէ, կամ թէ չափով աստ տանջեցան, և չափով են զհանդերձեալ պատիժն կրելոց։

"Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. օրհնեցէք զԱստուած մեր ամենայն ծառայք նորա, և որք երկնչիք 'ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք"։ Աթոռն ձայն հանէ, քանզի բանական է և ոչ անբան, ըստ որում զանիւսն կենդանի հոգւով ետես Եզեկիէլ. հրամայէ օրհնել զԱստուած, ոչ միայն կատարելոցն յառաքինութիւն, այլ և փոքունցն և յերկրորդ աստիճանն եղելոց։

"Եւ լուայ ձայն բազմութեան մեծի՝ իբրև զձայն ջուրց բազմաց, և իբրև զձայն հզօր որոտմանց՝ ասելով. ալէլուիա. վասն զի թագաւորեաց Աստուած մեր ամենակալ։ Խնդամք և ցընծամք և տամք փառս նմա, զի եկն հարսանիք գառինն"։ Ջուրց նմանեցուցանէ զպայծառ երգաբանութիւն հրեշտակական զօրացն, որոց վայելչութիւնն 'ի վեր է քան զհասումն զգայարանաց,

1 Ամենայն օրինակք ունին՝ Քարեխնամեաց։

և երգեն զմարմնով թագաւորելն Աստուծոյ, այնմ՝ որ ըստ աստուածութեանն միշտ է թագաւոր, զի բարձաւ սատանայի իշխանութիւնն յերկրէ, և լինելոց է հարսանիք գառինն. այսինքն եկեղեցւոյ միաւորութիւն ընդ Քրիստոսի, յորժամ յօդեալ միանան անդամք ղանազան առաքինութեանցն[1] ընդ հասակ մարմնոյն Քրիստոսի՝ ըստ առաքելոյ, և լինի Աստուած ամենայն յամենայնի։

ԳԼ: ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վասն խորհրդաւոր հարսանեաց՝ և ընթրեաց գառինն։

"Եւ կինն հարսն նորա պատրաստեաց զինքն. և տուաւ նմա զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս, որ է բեհեզն արդարութիւն սրբոցն։ Եւ մի յերիցանցն ասէ ցիս. գրեա զայդ, երանելիք են ամենեքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս հարսանեաց գառինն"։ Բեհեզն՝ որ է զգեստ եկեղեցւոյ, յայտ առնէ զպայծառ առաքի-

1 Բ Օրէն. Առաքինեացն։

նութիւնն և զմտածութիւնն անօսր և
զբարձրագոյն տեսութիւնն՝ յոր յայս
կենցաղս կրթեցաւ, և 'ի հանդերձե-
լումն արժանի գտաւ։ Արդ՝ անճառ բա-
րեացն վայելողացն՝ հրամայէ մի յերի-
ցանցն՝ յերանութիւն գրել. և երէց զայս
կարծեմ որ յառաջագոյն եհարց ցնա
վասն սպիտակազգեստիցն[1] թէ ո՞յք են,
և ելոյծ զխնդիրն ասելով. սոքա գան 'ի
վշտաց մեծաց։ Արդարև երանելիք են
անճառ բարեացն վիճակեալք, զոր վասն
անհասութեանն՝ երբեմն արքայութիւն
անուանեմք վասն պատուականութեան,
երբեմն դրախտ՝ ըստ բարեացն պէսպէս
զանազանութեան, երբեմն գոգ Աբրա-
համու՝ վասն ընդ հօրն հաւատոյ որ-
դւոցն հանգչելոյ, երբեմն փեսայ և հար-
սանիք՝ վասն անտրտում ուրախութեա-
նըն. այլ մանաւանդ և վասն Աստուծոյ
անճառ ընդ ծառայս իւր սիրով միու-
թեանն, այնքան՝ որքան զանմարմնոցն
գերազանցեալս, որպէս և լոյս քան ըզ-
խաւար, և իւղոյ անուշութիւն քան
զգարշութիւնս։

"Եւ ես անկեալ առաջի ոտից նորա,

1 Բ Օրէն. Սպիտակազգեցիցն։

երկիր պագի նմա. և ասէ ցիս. անսա՝ մի՛ անկանիր առաջի իմ, քանզի և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝ որք ունին զվկայութիւնն Յիսուսի Քրիստոսի. տեառն Աստուծոյ միայն երկրպագեա. քանզի հաստատութեամբ Յիսուսի է տեսիլդ, և հոգի մարգարէութեանըդ, զի վկայութիւն Յիսուսի է՝ Հոգւովըն սրբով՝ որ 'ի մարգարէսն էր". Մի՛ երկիրպագաներ ինձ՝ ասէ աստուածային հրեշտակն, քանզի 'ի Քրիստոս դաւանութիւնն՝ որ է վկայութիւնն, նա՛ է պարգևող հոգւոյ մարգարէութեան. այլ վկայութիւն Յիսուսի է, զի հաստատէ զխորհուրդ մարդանալոյ նորա, և զաստուածութեանն՝ որ 'ի սրբոցն վըկայեցաւ. և նոյն հոգի է 'ի հինսն և 'ի նորս՝ միոյ խորհրդոյ ուղղիչ, ըստ որում դրէ Պետրոսն: Արդ՝ մի՛ ծառայակցի երկիր պագաներ, այլ այնմ՝ որ ամենայնի իշխէ: Այլ սքանչանալ արժան է ընդ աստուածային հրեշտակիս խոնարհութիւնն, թէ որքան հակառակամարտ է բանսարկուին ամբարտաւանութեանն:

Եղիցի և մեզ առ իրեարս ստանալ զնոյն շնորհս, որով լնու յանձինս մեր տէրունական հրամանն՝ որ ասէ. "Ուսա-

՝րուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրբ-
տիւ ». որով և հանդերձեալ հանգըս-
տեանն հաւատացուք լինել ժառան-
գաւոր առագաստին, ուստի ցաւք և
տրտմութիւնք փախուցեալ են, ուր զը-
ւարճացելոցն խնդութիւն է՝ 'ի պայ-
ծառանալն լուսով երեսաց Քրիստոսի
ճշմարիտ Աստուծոյն մերոյ և յուսոյ, ո-
րում վայելեն փառք երկրպագութիւն՝
համանդամայն ընդ Հօր և ամենասուրբ
Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ԳԼ: ՅԻՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վասն տեսանելոյ աւետարանչիս ՂՔրիստոս յերիվարս
հանդերձ հրեշտակօք և զօրութեամբ բազմաւ։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ

"Եւ տեսի զերկինս բացեալ, և ա-
հա ձի սպիտակ, և որ հեծեալն էր 'ի
նմա՝ հաւատարիմ և ճշմարիտ, և ար-
դարութեամբ դատի և պատերազմի.
և աչք նորա բոց հրոյ, և 'ի վերայ գլ-
խոյ նորա պսակս բազումս"։ Այս դար-
ձեալ այլ տեսլեան սկիզբն է, յորմէ ու-

սանիմք զխորհուրդ Քրիստոսի կրկնակի գալստեանն, յորում բանի երկին ճըշմարտապէս։ Իսկ ձիաւորեալն 'ի սպիտակն երիվար՝ է նոյն ինքն Աստուած բանն, որ գայ այժմ ոչ խոնարհութեամբ՝ այլ մաքուր զօրութեամբ արքայութեան՝ իւրոյ։ Սա գայ յերկիր, և արդարութեամբ դատի զիւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց. պատերազմ տայ ընդ անհաւատսն բանիւ բերանոյ իւրոյ, և մատնէ 'ի տանջանս։ Աչք նորա՝ ասէ զամենահայեաց տեսութիւնն, որ բաժանէ որպէս զհուր զարդարսն 'ի մեղաւորաց, զոմանս կիզէ՝ և զոմանս լուսաւորէ։ Իսկ բազում պսակք՝ են նորա ամենակալ թագաւորութիւնն՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, զոր ստացաւ 'ի տնօրէնութեան խոնարհութիւն. և յաղթելովն առեալ զյաղթանակն՝ փառաւորեցաւ նովաւ, որպէս և գրեալ է յաւետարանին։

"Եւ ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ինքն"։ Ընդ իտելի անունն՝ զէութեանն նորա նշանակէ զանհասութիւն. քանզի ըստ տնօրէնու-

թեանն բազմանուն է, որպէս բարե-
րար, որպէս հովիւ, որպէս արեգակն,
որպէս կեանք։ Իսկ անանուն է 'ի մէնջ
ըստ բնութեանն անսահմանի, և միայն
իւր և Հօրն գիտելի։

"Եւ արկեալ զիւրև հանդերձ ներ-
կեալ արեամբ. և կոչէր անուն նորա՝
Բան Աստուծոյ"։ Հանդերձ՝ արեամբ
ներկեալ՝ Բանին Աստուծոյ մարմինն, զոր
ընկալաւ 'ի զանգուածոյն Ադամայ, ո-
րով գայ դատել զերկիր, ըստ այնմ զոր
հրեշտակքն ասացին. "Այս Յիսուս՝ որ
վերացաւն 'ի ձէնջ, սոյնպէս և եկեսցէ
զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկի-
նըս"։ Բայց սքանչանամ թէ ընդէ՞ր զան-
գիտելի անունն աստ Բան Աստուծոյ կո-
չէ. սակայն լուեալ և զայս՝ ոչ և այն-
պէս կարեմք զբնութիւնն սահմանել,
այլ միայն զ'ի Հօր էութենէն անախտա-
բար յառաջ գալն այսու գիտեմք, իսկ
թէ ո՛րպէս՝ անհաս է։

"Եւ զօրավարք երկնից և զօրք եր-
կնից զհետ երթային նորա ձիովք՝ զգե-
ցեալք բեհեզս սուրբս և սպիտակս"։

1 Բ Օրէն. Հանդերձ՝ Աստուծոյ մարմինն։
է արեամբ ներկեալ բանին

Որպէս ինքն ասաց Քրիստոս. "Եկեսցէ որդի մարդոյ յերկնից, և ամենայն հը-րեշտակք ընդ նմա". և Դանիէլ ե-տես եթէ հազարք հազարաց պաշտէին զնա։ Արդ՝ գան յերկիր զհետ Քրիս-տոսի ամենայն երկնային զօրքն՝ որպէս և ետես։ Իսկ ձիք՝ են ինքնագոյակ՝ զօ-րութիւնք իւրեանց, ըստ որում ան-ուանին 'ի մարդարէէն՝ զօրք զօրու-թեանց։ Եւ բեհեղեայ պատմուճանքն նշանակէ զանօսր էութիւն նոցա և ըզ-պայծառութի՞ և զբարձրահայեցողու-թիւնն, և կարծրութեամբ առաքինու-թեան՝ Աստուծոյ զնմանութիւնն։

"Եւ 'ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկա-թեաւ. և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման բարկութեան Աստուծոյ ամե-նակալի"։ Սուրս յայտ առնէ զդատաս-տանին իրաւունք, որով բաժանին ամ-բարիշտքն և արդարքն բանիւ աստուա-ծեղէն բերանոյն։ Իսկ երկաթի գաւա-զան՝ է անեզր տանջանքն որով իսպառ հովուին մեղաւորքն նհանջեալքն 'ի չա-

րութեանցն. աստի սուրբքն մեան ան-
փորձ, զի ոչ թողու տէր զգաւազան
մեղաւորաց 'ի վիճակս արդարոց, որպէս
սաղմոսէ Դաւիթ։ Այլ հնձան գինւոյ՝
զբարկութեանն Աստուծոյ կոխէ սա.
քանզի "Հայր ոչ դատի զոք, այլ զամե-
նայն դատաստանն ետ որդւոյ իւրում".
քանզի որպէս 'ի հնձան ամբարեալ է 'ի
գիտութիւնն Աստուծոյ մեղաւորացն
պատիժ, զոր յայնժամ որդի զեղեալ հե-
ղու 'ի վերայ նոցին արդարն իրաւամբք։

"Եւ ունէր 'ի վերայ պատմուճանի
իւրոյ, և 'ի վերայ անդամոց իւրոց գիր
գրեալ. Թագաւոր թագաւորաց և տէր
տերանց"։ Պատմուճան նորա է մարմինն,
և անդամք՝ եկեղեցի սուրբ։ Սմա՝ որ
կերպարան է Հօր և ունայնացաւ 'ի ծա-
ռայի կերպարանս և հնազանդեալ Հօր՝
խաչեցաւ, շնորհեցաւ 'ի Հօրէ անուն
թագաւորութեան, որ ինքնագոյ թա-
գաւորէր ընդ նմա ըստ աստուածու-
թեանն, վասն այսորիկ և ասէր. "Տուաւ
ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և
յերկրի"։ Յայս վայելեն և ժառանգա-
կիցք նորա՝ անդամքն, ըստ առաքելոյ՝
"Եթէ համբերեմք՝ ընդ նմին և թա-
գաւորեմք", յայտ է թէ վեհագոյն

ամենայն թագաւորաց՝ և հրեշտակական զօրութեանց, ըստ այնմ՝ "Թէպէտ և իցեն անուանեալ աստուածք յերկինս և յերկրի"։

ԳԻ: ՅԻՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Զի 'ի գեհեանն արկաւ հակառակ քրիստոսն և որք ընդ նմա։

"Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր 'ի վերայ արեգական, զի աղաղակեաց 'ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով"։ Ի վերնագունից հրեշտակացն զսա գոլ կարծեմ, որ հրաման ետ ամենայն երկնային զօրաց[1] իջանել յերկիր. քանզի ինքն էջ յօդդառ արեգակամբ[2], և նոցա որ յերկինսն են՝ աղաղակէ[3] իջանել 'ի ստորև։ Այլ հաւուց նմանեցուցանէ զնոսա վասն երագութեանն և վասն վերնայինն գոլոյ։

"Եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ. և կերիջիք զմարմինս թագաւորաց, և զմարմինս հզօրաց, և ըղ-

1 Բ Օրին. Հրեշտակացն։ դակամբ։
2 Բ Օրին. Յօդս արե-- 3 Բ Օրի. Էին՝ աղաղակէր։

մարմինս երիվարաց՝ և ամենայն հեծե-
լոց 'ի նոսա, և զմարմինս ազատաց և ծա-
ռայից՝ մեծի և փոքու »։ Ընթրիս ասէ
Աստուծոյ՝ զդատաստանին հանդէս, ուր
ժողովին ամենայն հրեշտակք. իսկ կե-
րակուր անմարմնոցն ոչ թէ զգալի մար-
մինք, այլ նոցա դատաստանին տեսու-
թիւնն և գիտութիւնն[1]. քանզի իմանա-
լեացն կերակուր՝ իմացութիւնն է։ Արդ՝
ուտեն անմարմինքն՝ մարմինք, այսինքն
զգիտութիւն ամենայն մարմնաւորացս
դործոց, որ մերկապարանոց լիցի 'ի դա-
տաստանին. ուստի և զամենեսեան թը-
ւէ զթագաւորս և զիշխանս, զմեծա-
մեծս և զփոքունս. քանզի ամենեքեան
են դատելոց։ Երիվարք են՝ հեշտախ-
տութեան իգութեանն ծառայք։

«Եւ տեսի զդաղանն և զթագաւորս
երկրի և զզօրս նոցա ժողովեալս առնել
պատերազմ ընդ այնմ՝ որ հեծեալն էր
'ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա »։
Զ. ընթացս բանիս՝ պարտ է ամբողջ ու-
նել, զի յայտնութիւն է անմարմնոցն գի-
տութիւն՝ և չև ևս եղելոցն տեղեկու-
թիւն։ Արդ՝ ասէ, թէ տեսի զՔրիստոս

1 Բ Օրին. Տեսութիւնն 'ի գիտութիւն։

և զհրեշտակս նորա, և այժմ թէ զգա-
զանն ընդ նմա՝ զօրօք իւր մարտակից. և
այս ոչ եթէ զգալապէս՝ լիցի, այլ այս-
պէս պարտէ իմանալ. ոչ ասաց՝ թէ տե-
սի զհեծեալն 'ի ձին սպիտակ իջեալ յեր-
կիր, այլ թէ միայն՝ տեսի, քանզի մերձ
'ի կատարածն խորհուրդ լինի իջանելոյն
Քրիստոսի յերկիր. և այս աւետարանի
ամենայն երկնային զօրացն, և յայնժամ[2]
սուտ Քրիստոսին մարտն սաստկանայ
յերկիր։ Արդ՝ հեծաւ Քրիստոս 'ի զօ-
րութիւն իւր, և սուրբ հրեշտակքն.
և հրաւիրեցան ամենայն երկնաւորքն ի-
ջանել յերկիր[3], բայց դեռ ոչ են իջեալ։
Յորժամ յերկինս այս խորհրդածի, սա-
տանայ զսուտ քրիստոսն և զամենայն հա-
ւանեալսն իւր՝ բորբոքեալ ամբոխէ ընդ-
դէմ եկեղեցւոյ, և 'ի հայհոյութիւն
անուանն Աստուծոյ. և այս է պատե-
րազմ գազանին, զի եկեղեցւոյ մարտն
Քրիստոսի է համարեալ, "Սաւո՛ւղ, ա-
սէ, զի՞ հալածես զիս"։

"Եւ ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ
նմա սուտ մարգարէն՝ որ առնէր ընշանս

1 Բ Օրէն. Զգայապէս։ 3 Բ Օրէն. Հրաւիրեցան
2 Ա Օրէն. Յայս ժամս։ երկնաւորքն յերկիր։

առաջի նորա, և զորս մոլորեցոյց և ետ առնուլ զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատկերի նորա »։ Բմբռնել նոցա ասէ՝ զհասարակաց վախճանն, որ յետ զամենայն չարիսն գործելոյ՝ հասանէ աստուածային բարկութիւնն 'ի վերայ։

« Եւ կենդանւոյն արկին զնոսա 'ի լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով »։ Բմբռնիլն է հասարակաց մահն[1]. իսկ կենդանւոյն արկանելն 'ի լիճ հրոյն՝ հանդերձեալ հուր գեհենին[2], ուր մատնին չար գործովք դատապարտքն նմին։ Եւ կենդանւոյն ասէ, զի միշտ անմահ են 'ի յաւիտենական տանջանսն։

« Եւ այլքն մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի վերայ ձիոյն, յորոյ բերանոյ ելանէր սուրն. և ամենայն թռչունք յագեցան 'ի մարմնոց նոցա »։ Դարձեալ և այս մահ որ 'ի սրոյս՝[3] հասարակաց վախճանն է, որ պատահէ և ամենայն մարդկան ընդ նոսա. իսկ յագիլ թռչնոցն՝ հանդերձեալ[4] դատաստանին քննութիւնն՝ որպէս ասացաք։

1 Բ Օրէն. Բմբռնիլն ասէ զհասարակաց մահն։
2 Բ Օրէն. Գեհենոյն։
3 Ա Օրէն. Ի սրոյս է։
4 Ա Օրէն. Զհանդերձեալ։

ԳԼՈՒԽ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ

Թէ որպէս սատանայ կապեցաւ 'ի Քրիստոսի խաչելութենէն մինչև 'ի վախճանին ժամանակն. և վասն հազար ամին։

"Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից, և ունէր զփականս դժոխոց և շղթայս մեծ 'ի ձեռին իւրում. և ըմբռնեաց զվիշապն զօձն առաջին՝ որ է բանսարկուն և սատանայ, և կապեաց զնա զհազար ամ. և արկ զնա յանդունդըս դժոխոց, և փակեաց և կնքեաց ըզնա՝ զի այլ մի՛ ևս մոլորեցուսցէ զազգս, մինչև կատարեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ"։ Դարձեալ և այս այլ իմն խորհրդոյ յայտնութիւն է երանելոյս. զի և այլ հրեշտակ էջ և ցուցանէր, զոր քննեալ իմացաք կապանս սատանայի՝ զոր խաչիւն կապեցաւ 'ի ձեռն Քրիստոսի, և արձակելոց է մերձ 'ի վախճան աշխարհի։ Բայց զի ասէ՝ թէ կապեաց, ոչ է պարտ կարծել՝[1] թէ յայնժամ կապի, այլ զկապելն յիշէ այժմ այնր ազագաւ՝ վասն զի և զարձակումն է հան-

1 Բ Օրինդ. Ասել։

դերձեալ ցուցանել, ապա թէ ոչ՝ սատանայ յայնժամ կապեցաւ՝ յորժամ 'ի խաչն նշաւակեցաւ. և մարդիկ իշխանութիւն առին 'ի Քրիստոսէ 'ի վերայ նորին օձի գնալ, որպէս 'ի վերայ կապելոյ՝ որոց ոչ կարէր մեզանչել։ Զի կապելն նորա՝ նշանակէ զկռապաշտութեն բառնալն, և տաճարաց կռոցն զքակտումն, և 'ի բագինսն զհեղման արեանցըն զպակասութիւնն, և զամենապայծառ աստուածային կամացն զգիտութիւնն. ըստ որում ասէ և վկայն Յուստիանոս, թէ նախ քան զխաչն 'ի կարծիս էր սատանայ իւրում դատապարտութեանն, և ապա ստուգեաց։

Արդ՝ այսպէս կապեցաւ սատանայ 'ի մոլորեցուցանելոյ զաղգս, և տիեզերս ծաղկեցաւ աստուածպաշտութեամբն. և զի 'ի դժոխս կապեալ էր, գիտէին և դևքն՝ որ աղաչէին զՔրիստոս ոչ առաքել և զնոսին յանդունդս։ Այլ զՀրղթայսն իմանամք զհրեշտակացն իշխանութիւն 'ի վերայ նոցին, առ 'ի յանգործ առնելոյ 'ի պատերազմելոյ ընդ մարդիկ։ Հազար ամ ոչ թէ ճշդիւ թիւն է, այլ վասն կատարեալ թուոյն որ 'ի տասնեակ հարիւրէն։ Այլ մեք հազար ամն ասեմք

զժամանակն որ 'ի միջի է, 'ի մարդանա-
լոյն Քրիստոսի մինչև 'ի նեռնն. և ար-
ձակի սատանայ յայնժամ, յորում 'ի ձե-
ռըն սուտ քրիստոսին մոլորեցուցանէ[1]
զաշխարհս. քանզի տեսանէ զիւր տան-
ջանացն զժամանակ մերձեցեալ՝ և մոլի:
Յորոյ դաւաճանութենէն ամէնոզորմ
Աստուած զմեզ աղատեսցէ, և կցորդս[2]
սրբոց իւրոց 'ի յաւիտենական բարու-
թիւնսն արասցէ, զի արժանի լիցուք
փառաւորել զամենասուրբ զԵրրորդու-
թիւնն՝ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ԳԻ: ՎԱԹՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԻՆ

Վասն պատրաստեալ բազմականացն այնոցիկ՝ որ ճնացին
անապթաքելի 'ի Քրիստոսի խոստովանութիւնն:

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԻՆ

"Եւ տեսի աթոռս, և նստան 'ի վե-
րայ նոցա. և դատաւորութիւն տուաւ
նոցա՝ ընտրել զհոգիս չարչարելոցն վասն
վկայութեանն Յիսուսի և վասն բանին

1 Ա Օրէ. Խռովեցուցանէ: 2 Բ Օրէն. Հաղորդս:

Աստուծոյ. և զորս ոչ երկիր պագին գա-
զանին, և ոչ առին զդրոշմ նորա 'ի ճա-
կատս իւրեանց, և ոչ 'ի վերայ աջոյ ձե-
ռին իւրեանց, և կացին՝ և թագաւո-
րեցին ընդ Քրիստոսի մինչև 'ի հազար
ամ»։ Այլ և այլ տեսութեանցս՝ քըն-
նութեամբ պարապեալ՝ զմի իմանամք
խորհրդոյ զօրութիւն, ըստ որում է այս
մարդարէական հոգւոյ սովորութիւն։
Արդ՝ սոքա զորս ասէ դատաստանաւ
ընտրեալ և թագաւորեալ ընդ Քրիս-
տոսի հազար ամ, նոքա են զոր 'ի սկզբա-
նէն ետես շուրջ զաթոռովն Աստուծոյ՝
զգեցեալ հանդերձս զոր սպիտակացու-
ցին արեամբ գառինն։ Քանզի յորժամ
կապեցաւ սատանայի զօրութիւնն, և
լուծաւ իշխանութիւնն, հոդիք սրբոցն
և արդարոց կատարելոցն՝ ընդ Քրիստո-
սի բարձրացան յերկինս. և անդ 'ի վե-
րին խորանսն հանգչին մինչև 'ի միւս
անգամ նորայն գալուստ, զոր ասէ հա-
զար ամ, այսինքն՝ մինչև 'ի վախճան աշ-
խարհիս, ըստ որում և Դաւիթ ասէ.
«Ընդ ելցեն ազգք Տեառն վկայութիւն
Իսրայէլի, (այսինքն՝ 'ի վերինն Երուսա-

1 Բ Օրին. Տեսութեանս։

զէմ՝ քաղաք Տեառն և 'ի տուն ամենա-
կալի [1].) անդ արկեալ են աթոռք դա-
տաստանի, աթոռս արկեալ 'ի տան Դաւ-
թի ՝՝ ։ Այլ թէ ասէ՝ որք ոչ երկիր պա-
ֆին դազանին, մի՛ կարծեր թէ զորս 'ի
ժամանակ սուտ քրիստոսին միայն դնէ,
քանզի այս է անուն բանսարկուին, նաև
զնոսին որք առ սուտ քրիստոսիւն առա-
քինանան՝ է տեսանել կարգեալ ընդ
նոսին ։

ԳԼ. ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Զի՞նչ է առաջին յարութիւնն, և զի՞նչ երկրորդ մահն։

“Եւ յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ ոք
եկաց, մինչև 'ի կատարել հազար ամին.
այս է յարութիւն առաջին։ Երանի սըր-
բոցն՝ որք ունիցին բաժին 'ի յարու-
թեանն առաջնում. 'ի վերայ սոցա եր-
կրորդ մահն ոչ ունի իշխանութիւն. այլ
եղիցին քահանայք Աստուծոյ՝ և տեառն
Յիսուսի Քրիստոսի. և թագաւորես-
ցեն ընդ նմա հազար ամ՝՝ ։ Յետ այսո-

1 Ա Օրին. Նորա իմանալի ։

րիկ ասէ՝ 'ի մեռելոց ոչ ոք եկաց, այս-
ինքն՝ 'ի մեռելոցն մարմնով և վերա-
ցելոցն հոգւով առ Աստուած՝ ոչ ոք ե-
կաց յերկիր դարձեալ մարմնով, կամ յա-
րեաւ 'ի մեռելոց՝ մինչև կատարեցաւ
հազար ամն, զոր ասացաք գոլ զժամա-
նակն՝ որ 'ի կապելոյն սատանայի խաչի-
ւն մինչև 'ի նեռնն և յերկրորդ գա-
լուստն ։ Յետ որոյ ասէ, այս է յարու-
թիւն առաջին. և ճշմարիտ է, քանզի
առաջին յարութիւն է սրբոցն՝ 'ի կա-
պանաց մարմնոյս աղատելն և առ Ա-
ստուած մտանելն, ըստ այնմ, "Հոգիք ար-
դարոց կատարելոց" ։ Իսկ երկրորդ յա-
րութիւն՝ վերստին զմարմինսն զգենուլ
և նոքօք պսակել ։ Յետ որոյ յաւելու.
"Երանի սրբոցն որք ունիցին բաժին 'ի
յարութեանն առաջնում", այսինքն՝ որք
սրբեցին զմիտս և զմարմինս, և բարձրա-
ցեալ քան զիշխանութիւն օդոյդ՝ մտին
առ Աստուած ։ Երանելիք են, զի երկրորդ
մահն՝ այսինքն դատաստանին երկիւղ
ոչ ունի իշխանութիւն 'ի վերայ նոցա.
քանզի սուրբքն ոչ մտանեն 'ի դատաս-
տան, այլ զայլս դատին, որպէս ասէ ա-
ռաքեալն, սրբոցն յարութիւն կենաց
է՝ և ոչ դատաստանաց, իսկ որոց ոչ

այնպէս՝ դատաստանաց։ Սոքա քահա-
նայք են այժմ Աստուծոյ, և ընդ նմա
թագաւորեալք, որպէս և ետես զքսան
և չորս երիցունսն և զայլսն։ Իսկ հա-
զար ամն է՝ մինչև յերկրորդ գալուստն
և 'ի նեռնն, յորում՝ լուծանի սատանայ
մոլորեցուցանել զբազում ազգս հեթա-
նոսաց. և ոչ եթէ այժմ ելեալ է 'ի մո-
լորեցուցանելոյն իշխանութենէ, սակայն
յայնժամ և՛ս հաստատագոյն ստանայ,
այսինքն՝ 'ի կարճ ժամանակին սուտ քը-
րիստոսին. յետ որոյ եկեսցէ հանդեր-
ձեալ յաւիտեանն, և առնու զդատա-
պարտութեանն վճիռ, յորում սուրբք
վայելեն յերկրորդ յարութեանն, և մար-
մնով ժառանգեն զարքայութիւնն։

ԳԼ։ ՎԸԹՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վասն Գոգայ և Մագոգայ։

"Եւ յետ հազար ամին լուծցէ զսա-
տանայ՝ և հանցէ 'ի բանտէ անտի. ելցէ
և մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ
չորս կողմանս երկրի. և զԳոգ և զՄա-

1 Բ Օրէն. Յորժամ։

գոգ առցէ 'ի ձեռս՝ ժողովել նոքօք զա-
մենայն զօրս 'ի պատերազմ, որոց թիւ
նոցա իբրև զաւաղ ծովու ։ Զայս հա-
զարամեայ ժամանակս վարդապետք այլ
և այլ տեսին. քանզի ոմանք ոչ գիտեմ
թէ առ ինչ հայելով՝ զերեք և զկէս ամսն
ասացին գոլ, որ 'ի մկրտութենէն Քրիս-
տոսի մինչև 'ի վերանալն յերկինս, յետ
որոյ զարձակել[1] բանսարկուին կարծե-
ցին ։ Եւ այլք թէ՝ յետ լրման հազար
ամին՝ յեւթներորդին 'ի վախճանի աշ-
խարհիս յարութիւն լինի միայն արքա-
ցն. և կապի սատանայ զհազար ամ. և
ապա փոքր ինչ ժամանակ արձակի, յետ
որոյ հասարակացն լինի յարութիւն.
Որոգինէս ։ Իսկ այլք ասացին՝ թէ զայն
հազար ամն յերկրի յայսմիկ յորում ըղ-
ժուժկալութի՝ կրեցին սուրբքն, փափ-
կութիւն և փառս ժառանգեսցեն, յետ
որոյ հասարակացն յարութիւն. Իրենէոս[2] ։
Բայց զի զայս ոչ ընկալաւ եկեղեցի[3],
թերի է ասացեալս. մեք հաւանիմք Տեա-
ռն առ Սադուկեցիսն ասացելոյ[4], թէ յա-

1 Ա Օրէն. Զ յարձակել ։
2 Զանուանս հեղինակացն՝
զորոց զկարծիսն ածէ 'ի մէջ.
Ա օրինակն և եթ ունէր նը-
շանակեալ 'ի լուսանցսն ։
3 Բ Օրէն. Բայց զի ընկալաւ զնա ոչ եկեղեցի ։
4 Բ Օրէն. Ասելոյ ։

րուցեալքն 'ի մեռելոց են իբրև զհրեշ-
տակս Աստուծոյ. և առաքեալն գրէ.
"Ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերա-
կուր և ըմպելի"։ Վասն այսորիկ և 'ի
վերայ աւետարանական քարոզութեանն
առեալ զհաղար ամն, ցուցաք վերագոյն՝
մինչև 'ի վախճան աշխարհի, յորում որ-
դին կորստեան՝ մարդն անօրէնութեան
եկեսցէ, ըստ որում գրէ[1] առաքեալն.
և յայնժամ արձակի սատանայ որպէս ա-
սացաւ, և ելանէ 'ի բանտէն իւրմէ մո-
լորեցուցանել զազգս։ Այլ զԳոգ և ըզ-
Մագոգ լինել ոմանք զՍկիւթացւոց ազ-
գըն կարծեցին հիւսիսոյ, որոյ անուն կո-
չի Նիկի, այսինքն յաղթօղք, և են եր-
կրաւոր[2] թագաւորք, բազմամարդ և
պատերազմողք, միայն յԱստուծոյ յաղ-
թահարեալք. սոքա ըմբռնեն զտիեզերս
մինչև 'ի բանսարկուին յարձակումն։ Ո-
մանք զԳոգայ ժողովելն և զՄագոգայ՝
ասեն, թէ յեբրայեցի բարբառոյն ա-
սացաւ այս անուն, վասն անուանեալ ժո-
ղովոյն հեթանոսաց։ Գիտելի է և այս,
զի Եզեկիէլ զայս հեթանոսս մարգարէա-
ցաւ՝ թէ յԻսրայէլէ խորտակեսցի, և

1 Ա Օրէն. Գրեաց։ 2 Բ Օրէն. Երկրաւորք։

զեւթն ամ ասաց՝ թէ զբեկորս զինուցն
այրեսցեն. որ եղև յետ դարձին առ Զօ-
րաբաբելիւ և Եղրիւ, յորժամ զԵրու-
սաղէմ կամեցան վերստին շինել օգնու-
թեամբ[1] Կիւրոսի և Դարեհի պարսից
թագաւորացն։ Եւ ոմանք Գոգ և Մա-
գոգ՝ զԱնտիոքայ որ առ Մակաբայեցով-
քըն՝ ասացին, որ մանաւանդ նմա պատ-
շաճի վասն 'ի վերջին ժամանակսն լինե-
լոյ։ Արդ՝ այս Գոգ և Մագոգ որ եկն,
վերստին դարձեալ եկեսցէ առ սուտ
քրիստոսիւն. և առաջինն այսմ ապա-
ցոյց է։

"Եւ ելցեն 'ի լայնութիւնս երկրի,
և պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն,
և զքաղաքին սիրելւոյ։ Եւ իջցէ հուր
յերկնից առ 'ի յԱստուծոյ՝ և կերիցէ
զնոսա, և զզօրագլուխն նոցա զսատա-
նայ՝ որ մոլորեցոյց զնոսա. և արկցէ ըզ-
նոսա 'ի ծովն հրոյ և ծծմբոյ՝ ուր էր
գազանն և սուտ մարգարէն. և չարչա-
րեսցին զտիւ և զգիշեր"։ Որպէս յոր-
ջոց իւրեանց գազանք վայրենիք, այս-
պէս և նոքա յիւրեանց տեղեացն 'ի ձե-
ռն բանսարկուին զինուորին և 'ի յեր-

1 Բ Օրէն. Օգնականութեամբ։

կիր արձակին, զի ղբանակս սրբոց՝ այս-
ինքն զեկեղեցի, որ 'ի չորս ծագս տի-
եզերաց հաստատեալ են՝ քակտեսցեն,
անդիտացեալք՝ թէ ոչ մի հրեշտակ, այլ
բաղումք են շուրջ զերկիւղածովք Ա-
ստուծոյ՝ որպէս ասէ սաղմոսն. "Բանա-
կըք հրեշտակաց Տեառն շուրջ են զեր-
կիւղածովք իւրովք, և պահեն զնոսա"։
Առժամայն[1] և 'ի սուրբ քաղաքն Երու-
սաղէմ ձեռն արկանեն, ուստի աստուա-
ծային օրէնքն 'ի ձեռն առաքելոցն ընդ
ամենայն տիեզերս սփռեցան, ուր և ըզ-
հակառակ քրիստոսն ուսաք[2] յառաքելոյ՝
'ի տաճարն նստել։ Այլ ոչ ընդ երկար
թողու զնոսա ներողութիւնն Աստուծոյ,
զի հուր իջանէ 'ի վերայ նոցա, եթէ ե-
րևելի՝ որպէս յիսնապետացն առ Եղիայ-
իւ եղև, և եթէ Քրիստոս 'ի փառա-
ւոր իւր գալստեանն սպանանէ զնոսա
հոգւով բարկութեան իւրոյ, և տանջին
յաւիտենական հրովն՝ որ պատրաստեալ
է սատանայի և հրեշտակաց նորա։

Այլ մեք աղօթեսցուք ոչ մտանել 'ի
փորձութիւն, և մի երբէք զփորձ առ-
նուլ սուտ քրիստոսին նեղութեան, և

1 Ա Օրէն. Առժամն։ 2 Բ Օրէն. Լուաք։

զընդ նմա շարժելոց հեթանոսացն, և ոչ զվիշտս 'ի Քրիստոսի հաւատոցն բրոնադատողացն. այլ զվկայութիւն խղճի մտաց մերոց պահել ըստ կարի անյաղթելի, և առ տէր մեր զմտերմութիւն ցուցանել գործովք բարութեան, որ ըզյաւիտենական կենացն եդ[1] զյոյս առաջի. որոյ հանդիպել մեզ լիցի շնորհօք Փրկչին մերոյ Քրիստոսի, ընդ որում Հօր՝ միանգամայն և Հոգւոյն սրբոյ վայելեն փառք իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

ԳԼ: ՎԼԵԹՄՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Վասն նստելոյն յաթոռն, և հասարակաց յարութեանն՝ և դատաստանին։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

"Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, և 'ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախչէին երկինք և երկիր. և տեղի ոչ գտաւ նոցա"։ Դարձեալ այլ տեսիլ վասն խորհրդոյ հասարակաց յարութեանն. այլ 'ի ձեռն սպիտակ աթո-

1 Ա Օրէն. Որք զյաւիտենական կենացն եդաք։

ռոյն ապացոյց տայ զյարուցելոցն փա-
ռացն զպայծառութենէ[1]. իսկ երկնչել[2]
փախչելն արարածոց՝ ոչ թէ զյոչէու-
թիւն[3] դառնալն, այլ զևս առաւել պայ-
ծառանալն նոցին արտադրէ[4] մեզ. և այս
լինի 'ի միւսանգամ գալստեանն, ըստ
սրում ասէ առաքեալ, "Յորս տեղի ա-
ռաջին անվայելուչ նկարագրին ոչ գտցի,
զի արարածս ընդ մեզ ապականեալ՝ ընդ
մեզ նորոգեսցի յազատութիւն փառաց
որդւոյն Աստուծոյ". որպէս երանելեա-
ցըն թուեցաւ Իրենէոսի և Անթիպատ-
րոսի և այլ սրբոցն: Զ՝ի երանելին Իրե-
նէոս ասէ. "Ոչ էութիւն և ոչ գոյու-
թիւն արարածոցս ոչ աներևութանայ[5],
այլ և'ս սերտ և կարծր հաստատի. այլ
կերպ էիցս փոփոխի՝ զոր 'ի յանցանելն
ընկալաւ. զի հնացաւ մարդն 'ի դմա,
և ընդ դմա[6] և' բնակութիւնս իւր":
Ի սոյն միտս[7] և Մեթոդիոս 'ի յարու-
թեանն Ճառի եդ այսպէս. "Ոչ է հա-
ճելի այն՝ որ ասեն, թէ յանկարծակի կո-

1 Ա Օրէն. Իպայծառ փա-
ռաւորութենէ:
2 Բ Օրէն. Չոանէ Երկնչել:
3 Ամենայն օրէնակս ցնէն
Զոչէութիւն:
4 Բ Օրէն. Արտադրէ:
5 Ա Օրէ. Աներևութանան:
6 Ա Օրէն. Նմա:
7 Բ Օրէն. Զայն միտս:

բուսանէ զամենայն. և երկին և երկիր
և օդ ոչ ևս եղիցի, այլ հրձիգ լինի[1],
և նորոգին ամենայն տիեզերք հրով"։
Եւ զի ոչ 'ի կորուստ և յապականու-
թիւն գրաւի, Պօղոս ստուգապէս վը-
կայէ ասելով. "Ակնկալութիւն արարա-
ծոցս յայտնութեան որդւոյն Աստուծոյ
սպասէ. զի ընդունայնութեան արարածք
հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ
վասն այնորիկ որ հնազանդեցոյցն յու-
սով, զի և ինքեանք իսկ արարածք ա-
զատեսցին 'ի ծառայութենէ ապակա-
նութեան՝ յազատութիւն փառաց որ-
դւոյն Աստուծոյ"։ Եւ նախ քան զերա-
նելիքս սուրբն Դաւիթ սաղմոսեաց առ
Տէր՝ ասելով. "Առաքես զոգի քո և ստա-
նաս զնոսա. և նորոգես զերեսս երկրի".
և Եսայի ասէ՝ "Եղիցի երկին նոր և երկիր
նոր. և ոչ յիշեցից զառաջինն. և ոչ ել-
ցէ 'ի սիրտս նոցա. այլ ուրախութիւն
և ցնծութիւն գտցեն 'ի նմա"։ Ճշմար-
տութեամբ է այս, զի գերազանցեալ
ուրախութիւն և անդադար ցնծութիւն
'ի նմա սրբոցն տացի՝ մրցանակ ճգնու-

1 ԲՕՐԷՆ. Հրձիգ լիցի առ գումն ամենայն տիեզերք 'ի մաքրութիւն և 'ի նորո- հրով։

թեանցն։ Եւ այլուր ասէ. "Զոր օրի-
նակ երկին նոր՝ և երկիր նոր, զոր ես
արարից կալ առաջի իմ". զի վասն մեր
եղեալ արարածքս ընդ մեզ 'ի լաւագոյնն
առցէ զփոխադրութիւն, և ոչ թէ յոչ-
էութիւն դառնայ, որպէս և ոչ մեք
յետ մահու։

"Եւ տեսի զմեռեալս՝ զմեծամեծս և
զփոքունս, որ կային առաջի աթոռոյն.
և գրեանք բանային. և այլ գիրք բա-
ցաւ կենաց, և դատեցան մեռեալք 'ի
գրելոցն ըստ գործոց իւրեանց"։ Մե-
ռեալս ասէ զամենայն մարդիկ համան-
գամայն՝ որ մարմնոյ ախտիւքն մեռան
Աստուծոյ, ըստ մեծի և փոքու յանցա-
նաց՝ մեծամեծք և փոքունք անուա-
նեալք. սոքա դատին յայնմ աւուր ըստ
իւրաքանչիւր գործոց յարդարակշիռ ի-
րաւանցն Աստուծոյ։ Իսկ գրեանս բա-
ցեալ իմանամք զիւրաքանչիւրոցն խըղճ-
մտութիւն, որ բերէ նոցա 'ի յիշատակ
զառաջին գործսն, և արդար դատաս-
տանին Աստուծոյ վկայէ, զոր Քրիստոս
ոսոխ անուանեաց յաւետարանին։ Իսկ
մի գիրք կենաց՝ ուր սրբոցն է գրեալ
անուանք։

"Եւ ետ ծով զմեռեալս իւր, և մահ

և դժոխք զիւրեանց մեռեալս. և դա-
տեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւ-
րեանց »։ Իւրաքանչիւր մարմին յոր ինչ
և լուծաւ՝ անտի՝ վերստին նորոգի, ե-
թէ՛ յերկրի՝ և եթէ 'ի ծով մատնեալ է։
Մահ և դժոխք՝ ոչ կենդանիք են շընչա-
ւորք, որպէս յոմանց գրեցաւ, այլ մահ
է՝ բաժանումն հոգւոյ 'ի մարմնոյ. իսկ
դժոխք՝ է տեղի մեղ աներևոյթ, որ ըզ-
հոգիսն ընդունի, որք երթան անդ մե-
ղօք հոգիք մեռեալք՝ անտի արտաքս բե-
րին[2]. այլ արդարոցն հոգիք 'ի ձեռին
Աստուծոյ աւանդեցաւ, և ոչ մերձե-
նայ 'ի նոսա չար։

"Մահ և դժոխք մատնեցան 'ի լիճ
հրոյն. և որ ոք ոչ գտաւ 'ի գիրն կենաց
գրեալ, արկաւ 'ի լիճ հրոյն »։ Յայտ է
այսու գրեցեալն յառաքելոյ, "Վերջին
թշնամին խափանի մահ »։ Բայց կար-
ծեմ այսու անուամբ ասել զբանսարկուն
զօրօք իւր. զի որպէս քաղաքի անուամբ
զքաղաքացիսն նշանակեմք, այսպէս մահ
և դժոխք անուանէ զառիթն մահու և
դժոխոց. քանզի գրեալ է՝ թէ Աստուած

1 Բ Օրին. Անդ։
2 Բ Օրին. Անդ մեռեալ հոգիք մեղօք անդ արտաքս բերին։

զմահ ոչ արար, և ամենայն որ 'ի նմանէ եղև՝ բարի է։ Արդ՝ որպէս Աստուած բարւոյ արարիչ՝ բարի և կեանք, այսպէս և բանսարկուն առիթ մահու՝ մահ և դժոխք։ Եւ որպէս առ Աստուած օթեւանք փրկելոցն բազում, այսպէս և 'ի կորուստ մատնելոցն զանազան են տեղիք տանջանացն, որովք ոչ արժանացեալքն կենաց գրոյն՝ փորձին [1]։

ԳԼ. Վ. ԸԹՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն նոր երկնի և երկրի, և վերինն Երուսաղէմի։

"Եւ տեսի երկին նոր և երկիր նոր. քանզի առաջինն երկինք և երկիր էանց. և ծով ոչ գոյր"։ Եւ աստ զնորոգումն՝ և ոչ եթէ զոչէանալն արարածոցս պատմէ. քանզի ազատին 'ի ծառայութենէ ապականութեն՝ գրէ առաքեալ, այսինքն զի՝ 'ի հնութենէն և յաղտոյն մաքրին։ Ի՛ այս և մեր սովորութիւն, զի լաւագոյն լեալ 'ի վատթարութենէն՝ այլայլեալ կոչեմք, որով պատշաճ է գիտել, թէ ասացեալն՝ էանց, փոխանակ փոխա-

1 Ա. Օրէն. Մերձեսցին,

դրելոյն է եդեալ, զի և մեք զհանդի-
պեալսն[1] մահու՝ փոխադրեալս կոչեմք։
Եւ վասն ծովու ասէր, թէ ծով ոչ ե-
րևէր. 'ի սոյն միտս և զայս իմասցուք,
զի այս տիպ որակութեան ծովու՝ յևս
վայելչութիւն պայծառանայ։ Դարձեալ
զխռովական կեանս և զբազմալիս՝ ծովու
նշանակէ անուամբ, ոչ գոլով այնու հե-
տև. նաև ո՛չ նշխար խռովութեան կամ
երկիւղի սրբոցն յայնժամ մնասցէ։

"Եւ զքաղաքն սուրբ զնորն Երու-
սաղէմ տեսի՝ զի իջանէր յԱստուծոյ և
յերկնից՝ զարդարեալ և պատրաստեալ
որպէս հարսն՝ առն իւրոյ"։ Յայտ առ-
նէ[2] և աստ նոր անուամբս զփոխադրելն
'ի պայծառութիւն՝ սրբոց նորա, զի քա-
ղաք սուրբ և նոր Երուսաղէմ իջեալ
յերկնից՝ իմանամք զոգիս արդարոցն կա-
տարելոց, որ 'ի սրբոցն շինեցաւ բնա-
կութիւն Աստուծոյ, վասն որոյ գրեալ
է. "Քարինք սուրբք թաւալեցան յեր-
կրի նորա"։ Դլուխ անկեան և հիմն
ասյր քաղաքի՝ է Քրիստոս Աստուածն
մեր. և ասին քաղաք սոքա մի, զի թա-
գաւորական և երկրպագելի սուրբ Եր-

1 Բ Օրէ. Զհանդերձեալսն։ 2 Ա Օրէն. Յայտնէ։

բորդութեանն բնակութիւն եղեն, յո-
րում բնակի և շրջի՝ ըստ որում խոստա-
ցաւ [1]։ Հարսին նմանեցուցանէ վասն
անձառ և ծայրագոյն սիրոյն, որով միա-
ւորի Քրիստոս ընդ եկեղեցի՝ ըստ ա-
ռաքելոյ, և զարդարեալ ըստ ներքին
մարդոյն, որպէս ասէ սաղմոսերգուն.
“Ամենայն փառք դստեր թագաւորի 'ի
ներքուստ”, այսինքն՝ 'ի ծաղկել հոգե-
կան առաքինութեանցն։

“Եւ լուայ ձայն յերկնից որ ասէր.
ահաւասիկ խորանն Աստուծոյ 'ի մէջ
մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա. և
նոքա ժողովուրդ նմա, և սա Աստուած
նոցա. և ջնջեսցէ զամենայն արտօսր յա-
չաց նոցա”։ Ի յերկնից ձայնն ուսու-
ցանէ զայս գոլ խորան, որոց Մովսէսին
նկարագիր և ստուեր, մանաւանդ զի
նախատպին այսօր պատկեր և տիպ՝ ե-
կեղեցի եղև. յայս անձեռագործ խորա-
նըս ոչ գոյ ողբք և ոչ արտասուք, զի
մշտնջենաւոր ուրախութեանն պարգե-

1 Քաղաք սուրբ՝ որով ըդ-
հոգիս արդարոցն իմանայ ա-
ստէն մեկնիչս, է նոյն ինքն
խորհրդական եկեղեցին հա-
ւատացելոց, որոյ և գլուխ
և հիմն կոչէ զնոյն ինքն Քս՝
և ոչ զայլ ոք. որ աներևու-
թաբար միաւորեալ է միշտ
ընդ հարսին իւրում սուրբ
եկեղեցւոյ, որպէս խոստա-
ցաւն։ Ըստ որում բացայայտ
եւս ցուցանէ 'ի ստորև։

ւիչ տեսանելի եղև սրբոցն, ուստի և ցնծութիւն անդադար։

"Եւ մահ ոչ ևս գոյ, ոչ սուգ և ոչ աղաղակ, ոչ ցաւք և ոչ աշխատանք ոչ ևս գոյ, զի առաջինն էանց"։ Այս է գրեալն՝ թէ կեանք է հանդերձեալն. ուստի փոխուցեալ են ցաւք և հեծութիւն և տրամութիւն. և որ ասէ՝ թէ առաջինն էանց, նշանակէ զսրբոցն չարչարանս և զամբարշտացն զդոռողութիւնն, զի եզր է առ իւրաքանչիւրոցն ընթացք, հանգիստն 'ի նեղութիւն՝ և նեղութիւնն 'ի հանգիստ։

ԳԼ. ՎԼԹՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վասն ասացուածոյ այնր՝ որ յաթոռն նստէր։

"Եւ ասաց ցիս՝ որ նստէրն 'ի վերայ աթոռոյն, ահաւասիկ առնեմ զամենայն նոր. և ասէ ցիս, գրեա. այս բանք ճշմարիտ և հաւատարիմք։ Եւ ասէ ցիս, եղէ ես ալփա և ով, սկիզբն և կատարած"։ Ճշմարիտ բանք, վասն զի 'ի ճշմարտութեանն Հօրէ ասացաւ, ոչ 'ի ձեռն օրինակի, այլ ելք իրացն նախազդեցաւ։ Սկիզբն և կատարած է Քրիս-

տոս, որ առաջին էր աստուածութեամ-
բն, և վերջին եղև ըստ մարդկութեանն
բանի, որ և զսկիզբն էիցս և զկատա-
րած՝ ունի 'ի ներքոյ իւր ամենահաս դի-
տութեանն բաւանդակեալ։

"Եւ ծարաւելոցն տամ յաղբերէ ջը-
րոյ կենաց ձրի"։ Ծարաւելոց արդա-
րութեան տալ խոստացաւ զշնորհս կե-
նարար Հոգւոյն, զոր և հաւատացելոցն
ինքն խոստացաւ յաւետարանին։ Ձրի
ասաց, զի ոչ են արժանի չարչարանք ժա-
մանակիս՝ փառացն որ սրբոցն 'ի հան-
դերձեալսն յայտնեսցի։ Դարձեալ ձրի,
զի ոչ նիւթով՝ այլ բարեպաշտութեամբ
է զայն բարիսն 'ի մարդասիրէն ստանա-
լի. "Քանզի ոչ 'ի գործոց՝ այլ 'ի հաւա-
տոց, զի մի՛ ոք պարծեսցի"։

"Որ յաղթէ՝ ժառանդեսցէ զայս ա-
մենայն. և ես եղէց նոցա Աստուած, և
նոքա եղիցին ինձ որդիք"։ Այսինքն՝ յա-
ներևոյթ դևսն պատերազմի որ յաղ-
թէ՝ բարութեանցս այսմ հանդիպեսցի,
որդիս Աստուծոյ լինել, և զյուսով որ-
դիութեանն պատիւ արդեամբք սեփա-
կանել։

"Եւ ծուլացն և անհաւատիցն՝ սպա-
նողաց և պոռնկաց՝ և կախարդաց և կռա-

պաշտից՝ և դեզատուաց և ամենայն սը-
տոց՝ ամբարշտաց, որոց բաժինն իւրեանց
'ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով. որ է
մահն երկրորդ ՝՝ = Այս է արդարև մահ՝
երկրորդս՝ որ յաւիտենական է, և ոչ մար-
մնականն՝ որ յուսով յարութեն որպէս
ղքուն համարեալ է. ուստի Աստուած՝
որ ծարաւի է փրկութեան մերում, և
կամի զմեզ ազատել, վասն այնորիկ ըզ-
քաղցրութիւն հանգստեանն և զերկիւղ
վշտացն նախ առաջի դնէ. զի տենչումն
յաւիտենական փառացն, և կամ երկիւղ
անեզր ամօթոյն 'ի ժամանակեայ աւու-
րըս[1] յորդորեսցէ զմեզ գործել զբարիս
ընդ այլ կոչեցեալսն: Իսկ որք ծուլու-
թեամբ և արհամարհութեամբն հրա-
ժարեցան՝ յաղթահարեալք 'ի բանսար-
կուէն, 'ի ներքոյ եղեն դատապարտու-
թեան երկրորդ յաւիտենական մահուն:
Այլ որ ոչ կամի զմահ մեզաւորին՝ ողոր-
մածն Աստուած, մաղթեսցուք զի զօ-
րացուսցէ զմեզ 'ի գործս բարեաց, ո-
րով և հանգստեանն լիցի հանդիպել:
Ո՛վ որ չարչարիլ վասն մեր ոչ անարժան
համարեցաւ, զի և յօթևանացն խոս-

1 Ա. Օրէն. Օրս:

տումն մասնակից 'ի լոյս սրբոցն զգնեալս
պատուական արեամբն իւր ընկալցի. և
մի՛ անձնիշխան կամօք յանցուցելոցս՝ ըզ-
բժշկութիւնն արգելցէ, այլ օր ըստ օրէ
ուղղեսցէ զմեզ 'ի ճանապարհ երկնիցն
մտից. զոր և խոստացեալ բարեացն լի-
ցուք ժառանգաւոր շնորհօք ողորմու-
թեան իւրոյ, նմին փրկչին Յիսուսի Քը-
րիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն:

ԳԼ: ՎԱԹՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վասն հրեշտակին որ ցուցանէր նմա զսուրբ քաղաքն
հանգերձ դրամբքն չափեալ:

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

"Եւ եկն առ իս մի յեւթն հրեշ-
տակացն, որք ունէին զեւթն սկաւա-
ռակսն լցեալս եւթն վախճանաւ կատա-
րածովք, խօսեցաւ ընդ իս և ասէ. եկ՝
ցուցից քեզ զհարսնն և զկին գառինն":
Ցուցանէ այսու՝ ոչ միայն հարուածոցն
ունել իշխանութիւն սուրբ հրեշտակ-
քն, այլ իբրև զբժիշկ իմաստուն՝ եր-

բեմն հարկանէ. և երբեմն ողջացուցանէ. Արդ՝ յայնժամ զհարուածսն ըստ արժանեացն ածէ, և այժմ զերանելի սրբոցն եկեղեցի ցուցանէ: Եւ բարիոք զհարսն գառինն՝ կին ասաց, զի յորժամ որպէս զորոջ զենաւ Քրիստոս, յայնժամ զեկեղեցի իւրով արեամբն հարսնացոյց. քանզի որպէս 'ի ննջելն Ադամայ ստեղծաւ կինն 'ի կողից նորա պակասեալ, այսպէս և Քրիստոսի մահուամբն 'ի խաչին՝ 'ի կողահերձ վտակացն շինեցաւ եկեղեցի, և չարչարանացն խորհրդով ընդ նա միաւորեցաւ յօդակապութիւն սիրոյն:

"Եւ ա՛ռ տարաւ զիս 'ի լեառն մի բարձր և մեծ՝ հոգւով. և եցոյց ինձ զքաղաքն մեծ և սուրբ՝ Երուսաղէմ, զի իջեալ էր յերկնից առ 'ի յԱստուծոյ, և ունէր զփառս Աստուծոյ": Ածիլն հոգւով՝ յայտ առնէ զի յերկրէ համբառնալն իմացականին 'ի ձեռն հոգւոյն առ երկնային իմանալիսն: Լեառն մեծ ասէ բացեալ՝ զգերաշխարհիկ սրբոցն կեանս, յորում կին գառինն է 'ի վերինն Երուսաղէմ՝ զարդարեալ և փառաւորեալ: Եւ տես՝ զի զայս յետ դատաստանին եցոյց նմա. քանզի յորժամ արդար իրաւամբքն մեղաւորքն 'ի լիճ հրոյն մատ-

նին, արդարքն 'ի յաւիտենական կեանսն
այնպէս փառաւորին ։

"Եւ էր 'ի նմա լուսաւորութիւն,
նմանեալ ականց պատուականաց՝ քար
յասպիս սառնատեսակ և կենդանի" ։
Լուսատու եկեղեցւոյ Քրիստոս է. և
զի՝ ասէ սառնատեսակ յասպի, որպէս
մշտասաղարթ կենսաբուխ և մաքուր. և
այլ ընդ այլում ստորագրէ, զի ոչ միով
օրինակաւ է առ մեզ նորա բարերարու-
թեն նախախնամութի՝ այլ բազմադիմի ։

"Եւ էին պարիսպք նորա մեծ և
բարձր, և ունէր դրունս երկոտասան.
և յերկոտասան դրունսն՝ երկոտասան
հրեշտակս, և անուանք իւրաքանչիւր
'ի վերայ դրանցն գրեալ էին՝ ըստ եր-
կոտասան ցեղիցն Իսրայէլի" ։ Ի վերայ
հիմանն Քրիստոսի պարիսպ շինեցաւ-
յիւրաքանչիւր ազդաց հաւատացեալք՝
ըստ առաքելոյ, այս է քաղաք բնակու-
թեան Աստուծոյ և տեղի հանգստեան
նորա՝ բանական հոգիք մարդկան յօդա-
կապեալք հաւատովն ։ Եւ որ 'ի նմա եր-
կոտասան դրունքն՝ սուրբ առաքեալքն
են, 'ի ձեռն որոց զշնորհսն ընկալաք և
զմատչելն առ Հայր. և սոքա գործակից
ունէին զհրեշտակսն երկոտասան, որք

յառաջ ընթանային և յաւէտ մերձե-
ցուցանէին առ Աստուած ղմարդիկ, հա-
ւանական արարեալ նոցա զբանսն. մա-
նաւանդ զի և ըստ իւրաքանչիւր հաւա-
տացելոյ՝ հրեշտակս պահապանս լուեալ
հաւատացաք, ապա որչափ և ս առա-
ւել հիմնարկողքն սրբոյ եկեղեցւոյ, և
աւետարանական բանին քարոզքն[1] 'ի հր-
եշտակաց առաջնորդէին, որք գործա-
կից լինէին յաւետարանական քարոզու-
թիւնն՝ իմանալի զհետ երթալովն։ Ա-
նուանք ազգաց իմանալին Իսրայէլի՝ ա-
սէ յառաքելական[2] 'ի դրունսն գրեալս,
զորս ածին ընդ սեամս հաւատոց իւր-
եանց ընդ երկնային քաղաքն, ըստ ո-
րում հնոյն 'ի հնոյ քահանայիցն զդեսա
նկարագրեալ՝ յապացոյց բառնալոյ ըղ-
մեղս նոցա քահանային 'ի ձեռն ան-
ուանցն, այսպէս և այս զառաքելական
զվշտակցութիւնն ցուցանէ հաւատա-
ցելոյն, ըստ այնմ զոր առաքեալն Պօղոս
գրէ. "Ունիմք զհոգս ամենայն եկեղե-
ցեաց". և սիրտ նորա ընդարձակեալ
էր զամենեսեան տանել, զորս ինքն 'ի
ձեռն աւետարանին ծնաւ։

1 Բ Օրէ. Քարոզողքն։ 2 Բ Օրէ. Յաւետարանական։

"Յարևելից կողմանէն դրունք երեք, և 'ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք, և 'ի հարաւոյ կողմանէ դրունք երեք, և յարևմտից կողմանէ դրունք երեք"։ Չորեքկուսի ձևք դրանցն՝ և երիցն բանալն՝ զչորեքծագեան տիեզերացս զերկրպագութիւնն գիտութեան Երրորդութեանն յայտ առնէ, զոր 'ի ձեռն կենարար խաչին առաք ըստ խաչաձև տեսակի դրանցն դրութեան։ Սմին՝ երկոտասան եզինքն որ 'ի Սողոմօնէ արարաւ ղծովն բառնալ՝ նկարագիր էր, երրորդից առաքելոցն սուրբ Երրորդութեանն քարոզ լինելոյ, և զչորից աւետարանացն զտարածումն 'ի չորեքծագեան աշխարհս, որք յիմանալի ծովն՝ զոր ճշմարիտն Սողոմօն շինեաց, լուացեալ զազգս մարդկան սրբեցին 'ի մեղաց։

"Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, և 'ի նոսա երկոտասան անուանք՝ երկոտասան առաքելոց գառինն"։ Հիմունս ասէ երանելիս պարըսպին՝ զառաքեալսն, որոց գործքն և բանքն՝ Քրիստոսի եկեղեցւոյս հիմն կառուցաւ. գրեցաք և զիւրաքանչիւրոց անուանսն զկնի՝ յընթերցումն ուսումնասիրաց։

"Եւ որ խօսէրն ընդ իս՝ ունէր եղէգն ոսկի 'ի ձեռին իւրում, զի չափեսցէ զքաղաքն և զդրունս նորա և զպարիսպս նորա"։ Ոսկի եղէգն՝ նշանակէ մաքուր և անապական իմաստութիւն հրեշտակին՝ որով չափեաց զքաղաքն, յայտ է թէ զբազմութիւն սրբոցն, որ թուելի է մաքուր և պարզ իմաստութեանն գերաշխարհիկ զօրութեանցն։ Նաև զփառացն և զվայելչութեանն անհամեմատութիւն 'ի ձեռն չափոյս ընդարձակութեան կամեցաւ ցուցանել։

"Եւ էր քաղաքն քառակուսի. և որչափ երկայնութիւն նորա, նոյնչափ և լայնութիւնն՝ և բարձրութիւնն հաւասար"։ Չորեքկուսի գոլ ասէ՝ վասն հաստատուն գոլոյն և կարծր. 'ի նոյն չափ առնու զխորութիւնն և զլայնութիւնն, զի արտաքոյ է անզուգութեան՝ սրբոցն ժողով և անհարթութեան։

"Եւ էր չափ երկայնութեան նորա՝ երկոտասան հազար ասպարէս, և լայնութիւն նորա և բարձրութիւնն միաչափ՝ կիվօս"։ Ա. յսինքն զի՝ առաւել քան զաւազ ծովու ասացաւ 'ի Դաւթայ՝ թէ բնակիչք նորա բազմասցին. և այս յերկոտասան առաքելոցն թուոյ բազմա-

պատկեալ, և մինն զբաղմութիւն աշտ-
կերտացն հազարս ծնեալ, որ է թիւ կա-
տարեալ։

"Եւ չափեաց զպարիսպն նորա հա-
րիւր քառասուն և չորս ասպարէզս, չափ
մարդոյ՝ որ է հրեշտակի"։ Չափ այս խո-
րութեան պարսպին՝ զառաքելական վար-
դապետութեանն ընդարձակութիւն ե-
րևեցուցանէ, յորմէ այնքան բաղմացան
ծնեալքն։

"Եւ էր շինուած պարսպաց քաղա-
քին յասպիս. և քաղաքն էր ոսկի մա-
քուր՝ նման սուրբ և սպիտակ ապակւոյ"։
Պարսպին շինուածն՝ զի ասէ գոլ յաս-
պիս, զկանաչագեղ և զանթառամ կետ-
նըս սրբոցն ցուցանէ, որպէս բազում
անգամ ասացաւ. մաքրութիւն ոսկւոյն
և ապակւոյն՝ զճառագայթելն առաւել
զպայծառ բնութեանն երևեցուցանէ։

"Եւ հիմունք քաղաքին յամենայն ա-
կանց պատուականաց"։ Երկոտասան հի-
մըն՝ երկոտասան ակն էին պատուական,
որոյ թիւն 'ի բանակ քահանայապետին
էր 'ի հնումն, որպէս զի երևեցուսցեն
զձայնակցութիւն հնոյն և նորոյս օրի-
նաց. քանզի որպէս այն զնահապետացն
անուանք, այսպէս և այս զամենահամ-

բաւ առաքելոցն ունի նկարագրութեան ապացոյց ։

“Հիմն առաջին պարսպին՝ յասպիս”. Պետրոս ։ Յասպոյ որակութիւն գունոյ՝ կանաչ է որպէս զմրուխտ. և յիրաւի սա զգլխաւոր առաքելոցն զՊետրոս նշանակէ, որ զմեռելութիւնն Քրիստոսի եբարձ 'ի մարմնի իւրում, և զմիշտ կենդանի սաղարթեալ սէրն առ նա փթեաց, որով և հովուեաց զմեզ 'ի տեղի դալարւոջ, ըստ որում ա՛ռ հրաման ։

“Երկրորդն՝ շափիւղայ”. Պօղոս ։ Այս քար նման է երկնային օդոյն, զոր ասեն դոլ կապուտակ գունով որպէս զլազվարդ. երանելոյն Պօղոսի լեալ ապացոյց, որ մինչև յերրորդ երկինսն համբարձաւ, և յերկս աւետարանին որպէս զօդ փոփոխական արար զվարս[1] իւր, ընդ հրէայսն հրէայ եղեալ, և ընդ հեթանոսս՝ հեթանոս, և յամենայնի ամենայն՝ որով և զամենեսին շահեցաւ ։

“Երրորդն՝ պղնձագոյն”. Անդրէաս ։ Այս քարս 'ի քահանայական բանակն ոչ էր, այլ՝ կայծ, որ աստ ո՛չ եդաւ. բայց կարծեմ թէ զայս անուանեցին սուրբքն

1 Ա Օրէն. Զկամս ։

կայծ, որ է նոյն ինքն Անդրէաս՝ բորբո-
քեալն հոգւով, և ընդ Քրիստոսի խա-
չեալ և զանձն 'ի վերայ սիրելւոյն պա-
տարագեալ։

"Չորրորդն՝ զմրուխտ". Յովհաննէս։
Զմրուխտ կանաչ է գունով, և ձիթով
սնանի, որ զպայծառ գեղեցկութի՞ նորին
յայտ առնէ. զաւետարանչին Յովհաննու
կարծեմ յայտ առնել զքարոզութիւնն,
զի օծ զմեզ շնորհօք Հոգւոյն 'ի ձեռն ա-
ւետարանական ճառիցն, և կենդանա-
ցոյց յուսով յաւիտենական կենացն։

"Հինգերորդն՝ եղընգնաքար". Յա-
կովբոս։ Մարդկային եղընգան գունով
է քարն, և յիրաւի հայի առ Յակովբոս,
որ նախ քան զամենեսեան ընդ Քրիս-
տոսի զմարմնոյ մեռելութեան զբաժակն
ընկալաւ՝ որպէս և ուխտեաց։

"Վեցերորդն՝ սարդիոն". Փիլիպպոս։
Սարդիոն որպէս զհրոյ զգոյն ունի պայ-
ծառ, և բժշկական ունի զօրութիւն. զի
կարող է որպէս ասեն ոմանք՝ զհատեալս
'ի սրոյ բժշկել։ Ի սա Փիլիպպոսի նկա-
րագրի առաքինութիւն, զի հրով ա-
ստուածայնով մաքրէր զկռապաշտութի՞
'ի մտաց մարդկան, և զհիւանդացեալս
հոգւով բժշկէր։

"Եւ թներորդն՝ ոսկեքար". Բարդողովմէոս։ Ոսկեքարս այս ունի զնմանութիւն ոսկւոյ փայլելոյ, Բարդողովմէոսի տուեալ զապացոյց՝ որ իբրև զճշմարիտ անապականն Քրիստոս մաքրութիւն անձին ստացաւ։

"Ութերորդն՝ բիւրեղ". Թովմաս։ Այս քարս ծովատիպ է՛ և օդակերպ. ընդ յակինթն լծակցի, որ և Թովմասու է պատկեր, այն որ Հնդկացն եղև քարոզ աւետարանին, և վերածեաց զնոսին առ Քրիստոս հաւատովն։

"Իններորդն՝ տպազիոն". Մատթէոս։ Տպազիոնս կարմիր է՛ի նմանութիւն կայծակի, և աչացաւացն յորժամ ցուցանի՝ առողջացուցանէ։ Ի սա երանելին Մատթէոս նկարագրի. որ ցուցեալ զկայծակն՝ աւետարանական ճառիցն, զխաւարեալ իմանալի աչս նովաւ լուսաւորեաց։

"Տասներորդն՝ քրիւսոպրասոս". Թադէոս։ Այս քար խորագոյն գոյն ունի քան զոսկւոյ, յորում և ցուցանի Թադէոս, այն որ զցանկալին քան զոսկի և քան զականս պատուականս զհաւատն Քրիստոսի՝ Թագաւորին Եդեսեայ Աբ-

դարու 'ի ձեռն իւրոյն շնորհեաց բանի և քարոզութեան։

"Մ՝ետասանն՝ յակինթ"։ Սիմօն։ Յակինթս և սա զօդոյ ունի զորակ, զՍիմօն զնախանձաւորն Քրիստոսի շնորհացըն՝ որ զերկնայինն ունէր զխորհուրդ՝ նշանակէ։

"Երկոտասանն՝ ամեթովս"։ Մատաթիա։ Այս քարիս կերպարանն ծիրանի է, որ զՄատաթիա նշանակէ, որ զթիւն ելից, և 'ի բաժանել լեզուացն հրեղէն՝ մասնակից գտաւ, և ընդ այլսն և սա թագաւորեաց գումարեալ 'ի վերայ երկրի Սաղիմ՝ ըստ սաղմոսերգողին։ Այս որբոյն Եպիփանու է վասն քարանցն ասացեալ[1], զոր 'ի վերայ նահապետացն Իսրայէլի յարմարեաց. սակայն ճշմարտութիւն[2] օրինակին ասա քննեալ ցուցաւ 'ի յայտնութեանս. քանզի էին առաքեալքն ճշմարտապէս հիմն հաւատոյ և քարինք պատուականք, ոմն այսպէս և ոմն այնպէս՝ զտաճարս Աստուծոյ բանականս եկեղեցի 'ի վերայ ինքեանց հաստատեցին։ Իսկ զի պէսպէս որոշ-

1 Ա Օրէն. Այս 'ի որբոյն ասացեալ էր։
Եպիփանէ վասն քարանցն 2 Յա՝ օրէն. ճշմարտութիւն։

ցաք 'ի վերայ նոցա զառաքինութիւնսն, մեղադրողացն մաղթեմ ներել. քանզի յատկութիւնքն զմիասնականն նոցա նոյնութիւն յայտ արարաք, ըստ նմանութեան հիւսուածոց ընդ միմեանս յեռեալս։

"Եւ էին երկոտասան դրունք յերկոտասան մարգարտաց՝ միաձև. և իւրաքանչիւրոցն դրունք էին մի մի դուռն 'ի միոյ միոյ մարգարտաց"։ Երկոտասան դրունքն յայտ առնեն զՔրիստոսի զաշակերտսն, որք զճանապարհ և զդուռն երկնից բացին. իւրաքանչիւր որք էր մարգարիտ՝ վասն ողորկութեան և պայծառութեան և մաքրութեան վարուցն։

"Եւ ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս զապակի պայծառ"։ Թէպէտև առ միտս առնում զձևն և ըզդոյնսն և զչափն, սակայն և զայս ոչ վարկանիմ աւելորդ ասել, թէ ձև և որակութիւն գունոց՝ մարմին գոլ 'ի բնախօսիցն ասացաւ։ Եւ զայսպիսի վայելչութիւն պայծառութեան գունոց՝ որ զուարճացուցանէ զմեզ, 'ի մարմնոց նիւթոցն է տեսանել. աննիւթ և անմարմին գոյնս յանմարմնոցն կայանս[1], մանա-

1 Բ Օրէն. Գոյն յանմարմնականս։

ւանդ և և՛ս գերազանց և բազմակատար և սքանչելագեղ այնմ տեղւոյ պայծառութիւն, քանզի ահա քան զոսկի մաքուր և սառնատեսակ երևեցաւ։ Եւ զայսպիսի գոյնս 'ի մարմնական նիւթս 'ի միասին խառնել մեզ անկարելի է, որով ուսանիմք՝ թէ պայծառութի՛ վերինն իմացական քաղաքին դերազանցեալ է հայեցողութեան և լսելութեան մտաց։

"Եւ տաճար ոչ տեսի 'ի նմա, քանզի տէր Աստուած ամենակալ տաճար էր 'ի նմա՝ և Գառնն"։ Տուն վասն յօդոցդ պահելոյ զտկարութիւն մարմնոյս. իսկ իմանալի հոգին բնակէ յԱստուած հայեցողութեամբն, որպէս և նա 'ի սմա՝ նախախնամութեամբն, ըստ այնմ. "Կացէք դուք 'ի յիս՝ և ես 'ի ձեզ"։ ապա զի՞նչ պիտոյ էր նոցա տաճարն, բնակելոցն յԱստուած տռփմամբ սիրոյն՝ որով կեամբ և շարժիմք և եմք։ Իսկ գառն է որ վասն մեր զենաւ Քրիստոս, զոր յայտառնէ գոյութեամբ մարմնոյ ընդ կենդանարար աստուածութե՛ն երևեալ։

"Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա, քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ. և ճրագ 'ի նմա

գառնն »։ Որպէս զգայարանացս՝ ճառա-
գայթ արեգական, իմացականին՝ գի-
տութիւնն լոյս է. և ասի՝ գիտութիւն
փառացն Աստուծոյ լուսաւորէր զքա-
ղաքն. և արդարութեան արեգակն Քը-
րիստոս՝ էր 'ի նմա ճրագ, ըստ որում
մաղթեաց 'ի Հօրէ. « Կամիմ զի ուր ես
իցեմ, և սոքա ընդ իս իցեն, զի տես-
ցեն զփառս իմ զոր ետուր ինձ »։

« Եւ գնային հեթանոսք 'ի լոյս նո-
րա. և թագաւորք երկրի լուսազգեաց
լինէին 'ի փառաց նորա։ Եւ դրունք նո-
րա ոչ փակէին 'ի տուէ և 'ի գիշերի.
այլ բա՛ց կային հանապազորդ »։ Փրկեալ-
քըն 'ի հեթանոսաց 'ի Քրիստոս հայե-
լով մտանեն յերկինս. և որք թագաւո-
րեցին յերկրի 'ի վերայ մարմնական ախ-
տից՝ զփոխարէն առաքինութեանցն ըզ-
փառս 'ի նմանէ ընդունին։ Ոչ փակել
դրանցն՝ յայտ առնէ զառաքելական վար-
դապետութեանն ուսումն, թէ բա՛ց է
ամենեցուն կամեցողացն ուսանել, թէ
'ի գիշեր մեղացն իցեն որպէս զԿիպրի-
անոս, կա՛մ 'ի տիւ առաքինութեանն՝
իբրև զԿուռնելիոս[1]։

1 Բ Օրէն. Որպէս և Կիպրիանոս ... ոչ և Կուռնելիոս։

"Եւ գիշեր ոչ եւս լինէր 'ի նմա, այլ փառք և պատիւ ազգաց. և ոչ մտցէ անդ ամենայն չարակամ և պիղծ և սլտութիւն, բայց միայն որք գրեալ են 'ի դպրութիւն կենաց գառինն"։ Փառք և պատիւ ժառանգեն անդ հաւատացեալքն 'ի Քրիստոս յիւրաքանչիւր ազգաց. իսկ որք վերջացան յայսմանէ՝ արտաքոյ մնան, քանզի՝ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի։

ԳԼ։ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վասն մաքուր գետոյն՝ որ յԱթոռոյն արտաքս հոսեցաւ։

"Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ սառնատեսակ, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ և գառինն. և գնայր ընդ մէջ հրապարակաց քաղաքին"։ Ոմանք յաստի եկեղեցւոյս հոսեալ ասեն զգեան, այսինքն՝ զվերստին ծնեցելոցն մկրտութիւն, որ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ ներգործի։ Սակայն մեք յիմանալիսն տեսանեմք զնորին երկրպագելի Հոգւոյն ներգործութիւն, ըստ սրբոյն Գրիգորի աստուածաբանին. քանզի իջանէ 'ի գերագոյն էութիւնս անմարմնոցն՝ զորս ա-

Թոռս Աստուծոյ անուանէ, և անտի լա-
տորահեղու և լնու զհրապարակ սրբոյ
քաղաքին, որպէս գրէ մեծն Դիոնէսիոս։

"Եւ զեզերբ գետոյն աստի և ան-
տի ծառս կենաց, որք բերէին պտուղս
երկոտասան, ըստ միոյ միոյ ամսոյ տայ-
ին զպտուղս իւրեանց"։ Դետ Հոգւոյն
որբոյ ազդմանն արբուցանէ[1] զանկեալս
'ի նմա զսուրբս, զորս փայտ կենաց ան-
ուանեաց։ Երկոտասան պտուղս կոչէ,
քանզի՝ ոչ է անդ ձմեռն մեղաց, այլ
հանապազ զպտուղ անճառելի 'ի մէջ
առաքինութեանցն պտղաբերեն արժա-
նացեալքն այնմ բնակութեան։ Դար-
ձեալ կարելի է և այլով օրինակաւ առ-
նել այսմ վայրի զքննութիւնս, զի դի-
տէ կենարար[2] Հոգւոյն շնորհ՝ որպէս և
ասացաւ։ Իսկ ծառ կենաց՝ Քրիստոս,
որ միշտ անօրինաբար զօրանայր 'ի Հո-
գւոյն. 'ի նմանէ պտղաբերեցան երկո-
տասան առաքեալքն յամն և յամիսս մար-
մնով երևելոյն։

"Եւ տերև ծառոյն՝ էր բժշկութիւն
հեթանոսաց"։ Տերև է կենացն փայտի՝
Քրիստոսի աշխարհակեցոյց վարդապե-

1 Ա Օրինն. Արբուցանէր։ 2 Բ Օրինն. Կենդանարար։

տութիւնն. 'ի ներքոյ նորին զովացան ա-
մենայն ազգք, և յիւրաքանչիւր հոգե-
կան վիրացն՝ բժշկեցան։

"Եւ նզովք անդ ոչ և ս էին"։ Նզովք՝
որոշումն ասի, և յատկապէս որոշեալ
է 'ի բարկութենէն Աստուծոյ բանսար-
կուն, որ յայն օրհնութեան հանգիստն
ոչ մտանէ իւր խռովտրար կամօքն։

"Եւ աթոռն Աստուծոյ և գառին
նորա էր 'ի նմա. և ծառայք նորա պաշ-
տէին զնա. և տեսանէին զերեսս նորա.
և անուն նորա գրեալ էր 'ի ճակատս
նոցա"։ Ով երանելի պաշտպանութեն՝
որ շուրջ լինի զաթոռովն երկնաւոր թա-
գաւորին 'ի հաւատարիմ ծառայիցն, որք
դէմ յանդիման տեսանեն զնա, ոչ օրի-
նակաւ՝ այլ ճշմարտութեամբ, որպէս
սուրբ առաքեալքն 'ի լերինն, յորոց 'ի
որտիցն ճակատ ապաւորեալ է անունն
Աստուծոյ։

"Եւ գիշեր ոչ անդ, և չէ ինչ անդ
պէտք ճրագի և լուսոյ արեգական, վասն
զի տէր Աստուած լուսաւորէր զնոսա.
և թագաւորեսցեն յաւիտեանս յաւի-

1 Բ Օրէն. Եւ իւրաքան-
չիւր 'ի վիրացն։

2 Ա Օրէն. Պաշտպանու-
թիւնն։

տենից ։ Դիշեր՝ ոչ զգալի և ոչ մեղաց
է անդ. ոչ մտանէ, զի իբրև զարեգակն
ծագին արդարքն յարքայութեան եր-
կնից, ըստ որում ասաց Քրիստոս. յա-
րում և յաւիտեանս թագաւորեսցեն
ընդ նմա ըստ առաքելական յուսոյն,
"Եթէ համբերեմք, ասէ, ընդ նմին և
թագաւորեմք"։

ԳԻ։ ՎԸԹՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Զի Աստուած է մարգարէիցն Քրիստոս՝ և տէր
հրեշտակաց։

"Եւ ասէ ցիս. այս բանք հաւա-
տարիմ է և ճշմարիտ"։ Մինչև ցասա
հրեշտակն զտեսիլն զոր եցոյց՝ սփռեաց
և եդ առաջի երանելւոյս, այսու հետև
յինքենէ խօսի, և կնքէ զասացեալս և
զերևեալս։ Հաւատարիմ է ասէ՝ և ճըշ-
մարիտ, զի 'ի ճշմարտութեանն Հօրէ
յայտնեցաւ. և ոչ է դիւական երևմունք
և պատրանք՝ որպէս և սովոր են նոքա։
"Եւ տէր Աստուած մարգարէից սըր-
բոց՝ առաքեաց զհրեշտակ իւր ծառայ-
իգ իւրում ցուցանել զոր լինելոց է վաղ

վաղակի ։ Օ՛ի Աստուած մարգարէիցն
է Քրիստոս՝ ահա հաստատէ. նա առա-
քեաց զհրեշտակ իւր և եցոյց Յովհան-
նու զտեսիլս՝ որ լինելոց է վաղվաղակի.
զի հազար ամն յաչս տեառն որպէս օր
երեկի՝ զի անց։ Ուրեմն ոչ անգիտանայ
Քրիստոս ո՛չ զժամն և ոչ զօրն հանդեր-
ձելոյ գալստեանն, զի 'ի նմա ամենայն
գանձք իմաստութեան և գիտութեան
ծածկեալ կան, յորոյ դիմաց պատգամա-
ւորի աւետարանիչս՝ հրեշտակ ասելով։
"Ահա գամ վաղվաղակի. երանի՛ որ
պահէ զբան մարգարէութեանս զայս"։
Սովորութիւն է մարգարէիցն, զի որ-
պէս յիւրեանց դիմաց բազում անգամ
զպատգամս Աստուծոյ ասացին։ Այլ
վաղվաղակի գալն՝ յայտ առնէ զփոքրը-
կութի՛ կենցաղոյս համեմատութեամբ՝
առ հանդերձեալն յաւիտեան, զի իւ-
րաքանչիւր վախճանիւ յանկարծակի և
համառօտ է կատարումն. քանզի ոչ
գիտեմք թէ յո՛ր ժամ գող օրհասական
մահուն եկեսցէ. վասն որոյ հարկ է ար-
թնութեամբ հսկել, զմէջս պնդել 'ի
գործս բարեաց, և զճրագ մտաց լու-

ցանել տեսողական հայեցողութեամբ, և աստուածային քաղաքավարութեամբ և խոնարհ սրտիւ զտէր աղաչել, զի փրկեսցուք յորոց հալածենն զմեզ։ Մի ըզբազմամբ երկրաւոր իրացս պաշարեսցին անձինք մեր՝ և յանճառ յուսոյն բաժանեսցին. այլ դարձցուք 'ի կամաց չարին, և գնասցուք զհետ հրեշտակացն վերակացուաց՝ ճգնութեամբ. վերելս 'ի սրտի դնել, և ողբալ զհեղգութիւնսըն, մանաւանդ և խորհել 'ի Դաւթեան երգն. "Պատրաստեցայ և ոչ խռովեցայ 'ի պահել զպատուիրանս քո". որք 'ի պահելն լուիցուք 'ի բարի Տեառնէն". "Ազնիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն տեառն քում". յորում փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

1 Բ Օրէն. Խոնարհել։

ԳԼՈՒԽ ԵՕԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ

Զի արժանահաւատ է տեսիլ առաքելոյս։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

"Եւ ես Յովհաննէս լուայ և տեսի զայս ամենայն. և յորժամ լուայ և տեսի, անկայ և երկրպագի հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն։ Եւ ասէ ցիս. մի՛ անկանիր առաջի իմ՝ և երկիր պագաներ. քանզի և ես ծառայակից քո եմ և եղբարց քոց՝ որ պահեսցեն զբան մարգարէութեան գրոյս այսորիկ. Աստուծոյ երկիր պագ"։ Այս է առաքելոյս սրբոյ սովորութիւն, հնքել զպատմեալսն իւրով վկայութիւն, քանզի այսպէս ասաց և յաւետարանն. "Այս աշակերտ է՝ որ վկայեաց վասն այսորիկ, որ և գրեաց իսկ զայսոսիկ"։ Նայնպէս և 'ի տեսլեանս կատարումն վկայէ, թէ ես լուայ և տեսի իմանալւոյն աչօք և ունկամբ. և հաստատէ թէ առանց կարծեաց՝ իւր է տեսիլս աւետարանչին։ Բայց դու տես զհրեշտակն՝ թէ որպէս 'ի բաց հրաժարէ յերկրպագութենէ առաքելոյս երկիւղիւ. այսպէս արար և առ Դանիէլ՝ Գաբրիէլ. քանզի ծառայ-

ակիցք են մեր ճշմարտապէս, որպէս և խոստովանին. Նա՛ և ընդ մեզ երկրպագուք Աստուծոյ. երկրպագելի է միայն տրարիչն 'ի ստեղծուածոցս՝ 'ի մէնջ և 'ի նոցանէ.

ԳԼՈՒԽ ԵՕԹԷՆԵՄՆԵՐՈՐԴ ԵՌԵՋԻՆ

Զի ոչ հրամայեցաւ նմա կնքել, այլ քարոզել զտեսիլս:

"Եւ ասէ ցիս դարձեալ. մի կնքեր զբանս մարգարէական գրոցս այսմիկ. քանզի ժամանակս մերձ է"։ Քանզի՝ վասն այսորիկ ասէ ծանեար, զի և այլոց յայտնեսցես զոր 'ի սմա պատիժ ամբարըշտաց՝ և զփառս արդարոցն։

"Որ ամբարշտելոցն է՝ ամբարշտեսցի, և որ աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, և որ արդարանալոցն է՝ արդարասցի, և որ սրբելոցն է՝ սրբեսցի. ահա ես գամ վաղվաղակի, և վարձք իմ ընդ իս՝ հատուցանել իւրաքանչիւր ըստ գործըս իւրեանց"։ Սովորութիւն է մարդկան զբարին սիրել և 'ի չարէն հրաժարել՝ յորժամ ճանաչեն զնոսա։ Արդ՝ ցու-

ցեալ զամբաբշտութեանն վարձս՝ ըզ-
տանջանս, և զարդարութեանն՝ զփառս.
'ի կամս այնուհետև ապաստան առնէ
զընտրողութիւնն, և զիւրն փութանա-
կի զգալուստն խոստանայ։

"Ես եմ ալփա և ով, սկիզբն և կա-
տարած, առաջին և վերջին"։ Ոչ յա-
ռաջ քան զիս Աստուած գոլ, և ոչինչ
քան զիս՝ որոյ սկիզբն ծերագոյն, և ոչ
աստուածային թագաւորութեանս և
իշխանութեանս է վախճան. ասացաւ
վերագոյնդ բազում անգամ՝ և 'ի վերայ
Քրիստոսի ըստ տնօրէնութեանն։

"Երանելիք են որ պահեն զպատ-
ուիրանս նորա. նոքա ունին իշխանու-
թիւն ուտել 'ի փայտէն կենաց՝ և մը-
տանել ընդ դրունս քաղաքին"։ Ո՛շմար-
տապէս երանութեան արժանիք են այս-
պիսիքս, և իշխանութիւն ունին յանանց
կեանսն հանգչել ընդ փայտին կենաց Քս̃ի
Աստուծոյ մերոյ, և մտանեն ատ ընդ դը-
րունս առաքելական վարդապետուե̃ցն։

"Այլ ելցեն արտաքս շունք, և դե-
զատուք, սպանողք, և կռապաշտք, և
ամենեքեան ոյք սիրեն զստութիւն"։
Շուն ասէ՝ ոչ միայն զամօթալի գործ-
սն, այլ և զապականեալ ցանկութիւնսն

յիրաց կենցաղոյս՝ որ զինչ և իցէ զբաղ-
մանց. ընդ սոսա ելցեն և սիրողքն սը-
տութեան և ունայնութեան աշխարհի։

ԳԼ. ԵՕԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Զի եկեղեցի և որ 'ի նմա հոգին՝ ընդունի զՔրիստոսի յայտնութիւնն. և վասն անիծից՝ որոց յաւելուած 'ի գիրս մուծանեն։

"Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ"։ Հրեշտակն 'ի դիմաց Քրիստոսի խօսի. քանզի պատգամաւոր է նորին հրամանացն։ Ձեզ ասէ եկեղեցեացդ, այսինքն՝ եւթիցն առ որս 'ի սկզբանն խօսեցաւ, և նոքօք ամենայն աշխարհի։

"Ես եմ արմատ և սեռ 'ի Դաւթայ"։ Արմատ Դաւթի Քրիստոս՝ որպէս Աստուած, և սեռ նմա՝ զի ըստ մարմնոյ 'ի նմանէ բուսաւ։

"Ես աստղ պայծառ առաւօտին"։ Աստղ ինքն է առաւօտին, որ ընդ առաւօտն ծագեաց յերրորդ աւուրն. և յեա երեկոյի այսմ կենցաղոյս՝ ընդ առաւօտն հասարակաց յարութեն՝ սրբոցն երևեսցի, և 'ի տիւ ածէ զմեղ յանվախճան։

"Ես հոգի՝ և փեսայն՝ որ գալոցն

եմ. և որ լսէ՝ ասելով թէ ե՛կ ։ Հոգին
սուրբ զոր ընկալաք 'ի նմանէ՝ այսինքն 'ի
Քրիստոսէ, հարսնացոյց զմեզ նմա, և
միշտ սպասեմք գալստեանն, և աղօթեմք
ասելով՝ "Եկեսցէ արքայութիւն քո ։

"Եւ որ ծարաւի իցէ՝ եկեսցէ, և որ
ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի ։
Ծարաւի գիտութեան և ճշմարիտն կե-
նաց հաւատոյ, որ ոք եկեսցէ աստի ըմ-
պել՝ զմայլի և ուրախանայ՝ անճառիցն
իմաստութեան հաղորդեալ ։

"Վ կայեմ ես ամենայնի՝ որ լսէ ըզ-
բանս մարգարէութեան գրոցս այսմիկ.
թէ ոք յաւելցէ 'ի սա՝ յաւելցէ Աստ-
ուած 'ի վերայ նորա զեւթն հարուած-
ոն գրեալս 'ի գիրս յայս ։ Եւ եթէ ոք
պակասեցուսցէ 'ի բանից մարգարէու-
թեան գրոցս այսմիկ, պակասեցուսցէ
և հատցէ Աստուած զբաժին նորա 'ի
ծառոյն կենաց, և 'ի քաղաքէն սրբոց՝
որ գրեալ է 'ի գիրս յայս ։ Ի դէպ է
լինել ոմանց հերձուածողաց յայնմ ժա-
մանակի՝ որ զայս առնէին. կամ թէ մար-
գարէական հոգւով զկնի եկելոցն զգու-
շացաւ, որպիսի եղև Արտեմոն՝ և իւրն
ժողով, և չարքն Մանիքեցիք՝ որ եղծա-
նէին՝ զբանս սուրբ գրոց. վասն այսո-

րիկ և զահաւորս եդ կնիք բանիցս զըս-
պառնալիս. քանզի յանդուգն է այսպի-
սի չարագործութիւնս, և մոլորութեան
պատճառ զկնի եղելոցն, զոր քա՛ւ լիցի
մեզ յանցանել, և 'ի ներքոյ այսմ վկայ-
ութեանս դատել, 'ի ձեռն պակասե-
ցուցանելոյն՝ կամ առաւելացուցանե-
լոյն։ Այլ արարաք միայն զգրոցն յատ-
կութիւնն և զկարգադրութի՛ բանիցն՝
դիւրահաս. քանզի այսպէս ուղղութիւն
հայեցողն 'ի գիրս՝ արտաքոյ մնայ դա-
տապարտութեանս։ Այլ մանաւանդ և
որպէս զհաւատարիմ տնտես՝ որ տայ
ծառայակցացն 'ի ժամու զկերակուրն,
առ տէրն մտցէ. զի բազում միջոց է մեր
գիտութեանն՝ և նոցա, և քննել զգիրս
ամենայն՝ 'ի տեառնէ առաք հրաման։

"Ասաց՝ որ վկայեացն զայս. գամ ես
վաղվաղակի. ամէն։ Եկն տէր Յիսուս Քը-
րիստոս։ Շնորհք տեառն մերոյ Յիսուսի
Քրի 'ի վերայ ամենայն սրբոց. ամէն"։
Վկայեաց Քրիստոս ասացելոցս՝ թէ յին-
քենէ է յայտնութիւնս. և նա գայ վաղ-
վաղակի որպէս խոստացաւ՝ ատ 'ի յան-
դիմանութիւն անհաւատիցն և 'ի պար-
ծանս հաւատացելոցն։ Եւ զի ասաց՝
"Եկն տէր Յիսուս Քրիստոս"։ զև՛ս հա-
ւատարմութիւն գալստեանն հաստա-

ան, զի յուսովն եկեալ է՝ որ արդեամբք
գալոց է. որպէս և մեք՝ զի յուսով ան-
մահ եմք, սպասելով մարմնական մա-
հուն, ակն ունելով պատրաստեալ բա-
րեացն ժառանգութեան՝ յոր վայելեն
սիրողքն Աստուծոյ և պատուիրանի նո-
րին կատարողք։ Իսկ սէրն ծնանի 'ի
սրբեալ սիրոս խոնարհութեամբ և հե-
զութեամբ և երկայնմտութեամբ, և 'ի
սիրոյն ծնանի աղօթք անպղտոր և խա-
ղաղութիւնն ընդ Աստուած։ Իսկ մեր-
կացեալ հոգւոյն յերկրաւոր իրացս, և
մերձ եղելոց յերկնայինսն աղօթիւքն և
սիրով, առաջի կայ մարտ և պատերազմ
'ի հակառակամարտ թշնամեացն. քան-
զի սովոր է յառնել 'ի վերայ այնոցիկ՝
որք առ Աստուած պաղատանօք զսիրտս
իւրեանց մերձեցուցին, զապականարա-
րըն 'ի նոսա արկանել զսերմն, և յաս-
տուածայնոյն ջանալ քեցել 'ի միաւորու-
թենէ, զի մի 'ի սաղմոսելն՝ հուր սիրոյն
բորբոքեսցի առ 'ի կիզել զնորին մեքե-
նայսն. սակայն "Աստուած մեր հուր
ծախիչ է". և որքան պղտոր առ նա խոր-
հին խորհրդով, թէպէտ և առ փոքր մի
առին զհարուածս մեղաց, ջերմ և հրա-
կերպ դիմօքն զխռիւս մեղացն 'ի նոցա-

նէ կիզեալ մաքրէ. զոր օրինակ զարեդակնէ ասեն, թէ 'ի վերայ ջրով լցեալ ապակւոյ[1] 'ի սաստիկ ծագելն՝ հուր արտաքս արծարծէ։

Արդ՝ մեք ամանն եմք կենդանի ջրոյ սուրբ Հոգւոյն, մաքրեալ հաւատովս որպէս զապակի, միշտ առաջի կացցուք աղօթիւք արդարութեանն Արեգական, զի ծագմամբ ճառագայթի իւրոյ՝ արծարծէ 'ի մէնջ զհուր երկիւղի և սիրոյ՝ զկիզիչս մեղաց։ Այլ որ զամենեցուն կամի զփրկութիւն և 'ի գիտութիւն ճշմարտութեան զհասանելն, ծագեսցէ 'ի սիրտս ամենեցուն զլուսաւորութիւն գիտութեան փառացն իւրոց՝ շնորհօք Քրիստոսի իւրոյ, ընդ որում Հօր ամենակալի՝ և կենդանարար սուրբ Հոգւոյն վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

1 Բ Օրէն. Ի վերայ ջրոյ լցեալ ապակի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա.*

Ա՛ՅՍ յայտնութիւն աստուածաբան աւետարանչին Յովհաննու՝ սրբոց հարցն մերոց վարդապետութեամբ պատուեալ 'ի պէտս վկայութեանց, զերծաւ 'ի դայթակղութենէ կարծեաց ոմանց՝ որ այլանդակս իմացան զսմանէ: Քանզի մեծն Դիոնէսիոս յաստուածաբանական ճառսն հիւսեաց զվկայութիւն սորա, և Իրենէոս Մեգաղու եպիսկոպոսն, Գըրիգոր աստուածաբանն 'ի հրաժարական ճառսն, Գրիգոր Նիւսեայ՝ յեպիսկոպոսացն ժողով, և մեծն Կիւրեղ, Մեթոդիոս, և Հիպոզիտոս, նաև անփորձն Որոգինէս. զոր պատուեալ է եկեղեցի՝ ըստ նոցին հաւանութեանն տարացուցի դասեաց 'ի կարդ աստուածաշունչ նորոց կտակարանացն: Որոց եղեալ և մեք ընթացակից՝ 'ի սուրբ եկեղեցւոյ մանկունս աւանդեցաք զսոյն 'ի դասակարգութիւն առաքելական մատենիցս, որպէս արդարև զառաքելական յայտնութիւն. և ստուգաբան արարաւ վերըստին երիւրեալ 'ի հելլենացւոցն իմով նուաստ Ներսիսի թարգմանութեամբ,

* Բ Օրինակքն և եթ ունին զառաջին յիշատակա, բանս զայս:

ընդ որ և զքննութեամբ մեկնութիւն
սորին ածի յեկեղեցիս Հայոց ։

Արդ՝ որք յետ մեր լինիք սմին ընթեր-
ցօղք, և պայծառութեան աստուածա-
բան մատենիս վայելօղք, տացէ ձեզ
շնորհ սուրբ Հոգւոյն քաղցրութեամբ
առնուլ 'ի քիմս մտաց հոգւոյ զբանս Աս-
տուծոյ՝ որ ախորժ է քան զմեղր բերա-
նոյ ։ Քանզի՝ արդարև յիմանալն 'ի ոլ-
մանէ՝ թիկունս դարձուցանէք ատելու-
թեամբ ըստ երգողին՝ յամենայն ճանա-
պարհաց չարաց, այլ թէ և առ մեզ ողոր-
մութիւն ցուցանէք մաղթելով 'ի Տեառ-
նէ քաւութիւն, և ձեզ լիցի թողու-
թիւն ըստ հրամանի իրաւախօսին, որ
վարեցաք զաշխարհս 'ի ժամանակիս՝ յո-
րում էանց սորին վայելչութիւնն ։

Քանզի՝ ակներև աչաց մերոց՝ սուրբ
և աստուածակոխ քաղաքն Երուսաղէմ
յափշտակեցաւ 'ի սպասաւորութէ՞ քը-
րիստոնէից՝ սրով Իսմայէլացւոցն 'ի ՈԼՉ
թիւն Հայոց. 'ի վերայ որոյ բազում ար-
եանց հեղմունք եղև Լատինացւոց բազ-
մացեղ ազգաց, որք դաս դաս առագաս-
տեալ նաւօք և քաջապինդ հաւատով
և սրտաջան արութեամբ հասին 'ի Պա-
ղեստին, և անդ դիակնացեալք շուրջ
զքաղաքաւն ըստ երգոյն՝ և ոչ սք էր

որ թաղէր. և մեք մնացաք նախատինս դրացեաց մերոց մինչև 'ի լրումն թուիս, ՈԽԷ. յորում ամի վերապատուեցաւ թագաւոր Հայոց Լևոն՝ որ յՌուբինեանց, բարեպաշտ և յաղթօղ Աստուծով. որոյ հռչակ արութեանն շարժեաց զմեծ ինքնակալսն հին Հռովմայ՝ զՀենռի (Ենրիկոս)[1] և նոր Հռովմայ՝ զԱլէքս. որք պըսակեցին զսա քարամբք պատուականաւ յեկեղեցին Տարսոնի՝ որ իմ անարժանութեամբս հովուի։ Զսա Քրիստոս Աստուած մեր շնորհեսցէ մեզ երկայնութեամբ աւուրց և անվանելի յաղթութեամբ, և 'ի փոխելն աստի՝ սրբոց թագաւորացն արասցէ պսակակից և խորանակից 'ի լուսեղէն յարկսն. և նըմա փառք յաւիտեանս. ամէն։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ.

Յիշատակ տառիս գտողի՝ Տեառն Ներսիսի գերահռչակ վարդապետի, զոր գտեալ 'ի մեծն Անտիոք՝ գրեաց զսա 'ի լուսաւորութիւն հոգւոց։

Ես Ներսէս նուաստս 'ի Քրիստոս և տարտամս յուսումնասիրաց, վերջին և նուազեալ ժամանակի ծնունդ, յըն-

1 Օրինակ մի ունի միայն որում եդաքս։ զՀենրիկ. իսկ միւսն՝ ըստ

թեռնուլն զՅայտնութիւնն Յովհաննու՝ տագնապէի յանձն իմ առ 'ի յոչ գիտել զլուծումն բանից սքանչելեաց. և այսր և անդր խուզելով զմեկնութիւն նորին 'ի մերս բարբառ՝ ոչ գտի։ Յետ որոյ եհաս ինձ ընթանալ 'ի մեծն Անտիոք, և շրջելով յորս անդ վանորայք Հոռոմոց և Փռանգաց, այս տենչումն բորբոքէր 'ի միտս իմ. ուստի և քննեալ գտի 'ի գրեանս հռչակաւոր ուխտի սրբոյն Պօղոսի 'ի քաղաքի անդ զմեկնութի՝ Յայտնութեանս 'ի լունպարտ բարբառ, 'ի նոյն գիր՝ որով վարին Փռանգք, երկուց մեկնչաց արարեալ (Անդրէի և Արետասայ)[1]. և փափագելով թարգմանել՝ ոչ գտի զոք որ յայսմ բարբառոյ 'ի հայս կարէր յեղաշրջել։ Ապա ելեալ արտաքոյ քաղաքին 'ի սուրբ լեառնն՝ որ 'ի հիւսիսոյ կողմն անդր, 'ի մի վանորէիցն Հռոմոց՝ որում անուն էր Բէթիաս, առումն արգելական միայնակեաց՝ որոյ անուն Բասիլ, կնքեալ գտի զցանկալին 'ի հելլենացի բարբառ և 'ի գիր, ուղղաբան և վայելուչ, որ լեալ էր Աթանասի պատրիարգի նորին քաղաքի։ Եւ խնդրեալ աղաչանօք 'ի բարեմիտ առնէն՝

1 Մի օրինակ և ելն ունի նուանս մեկնչաց։
'ի փաչագծի յաւելեալ զա-

առեալ փութացայ դրովքն 'ի Հայրա-
պետական աթոռն, առ տէրն իմ Կաթո-
ղիկոս՝ սուրբ Գրիգորիոս. զոր ծանու-
ցեալ՝ ուրախ եղև յոյժ, և հրամայեաց
թարգմանել 'ի ձեռն մետրապօլտին Յե-
րապօլսի՝ Կոստանդեայ, որ անդ 'ի ներ-
քոյ սրբոյ Հայրապետին հովանւոյ հանգ-
չէր. և սկսեալ օգնականութեամբն Ա-
ստուծոյ և սրբոյ տանն՝[1] նա 'ի թարգ-
մանել և ես 'ի գրել, վերընծայեցաք ե-
կեղեցւոյ Հայաստանեայց ուսումնասէր
մանկանց զայս սքանչելի և աստուածայ-
ին Յայտնութեանս մեկնութիւն:

Աղաչեմ զընթերցողսդ և իմաստու-
թեան զսիրողսդ, յիմանալ զխորս իմաս-
տիցն Աստուծոյ քննութեամբս՝ զսուրբ
Հայրապետն Հայոց զտէրն իմ զԳրիգոր,
զբարեմիտն և զբարեսէրն և զառիթն
թարգմանութեանս և զհրամայող, մաղ-
թեցէք 'ի Քրիստոսէ յաստիս խաղաղու-
թեամբ պահել, և 'ի հանդերձեալն սրբ-
բոց իւրոց յերկնից արքայութիւնն ժա-
ռանգակից ընդունիլ. այլ և զԿոստան-
դին մետրապօլիտն՝ որ թարգմանեաց, և
զՔասիլ կրօնաւոր՝ որ զօրինակս ետ, Քը-

1 Բ Օրին. ո-նին Ցնն: Մի օրին. Ցանն:

բիստոս ողորմութեան իւրոյ արժանացուսցէ աղօթիւք ձեր։

Թարգմանեցաւ ա̃ծային Յայտնութեանս մեկնութիւն 'ի Թուիս Հայոց ՈՒԸ, 'ի սուրբ և 'ի հայրապետական Աթոռն՝ որ կոչի Հոռոմկլայ, շրջապատեալ յադենական աղբերէն Եփրատայ, որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս խնամօքն Աստուծոյ՝ ընդ հովանեաւ աստուածընկալ նշանին Վանկոյ, և այլ սքանչելի սրբոցն՝ որ հանգուցեալ են անդր 'ի փառս Աստուծոյ։ Իսկ սրբաբանեցաւ 'ի նշանագրութենէն քերթողական արհեստիւ 'ի յապահով անապատս 'ի սուրբ Գէորգ, 'ի մէջ լերինս Տորոսի՝ որ է 'ի Գահ Կիւլիկիոյ և 'ի սկիզբն Պամփիւլեայ, ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսոնի՝ տառապելոյս Ներսիսի, շնորհօք և ողորմութեամբ Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։